

1

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԱՍԸ ՀԱՏՈՐՈՎ

(Վերախմբագրված հրատարակություն)

84.581

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ա 11/10621 5

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԵՐԵՎԱՆ 2018

ՀՏԴ 821.19-1Թումանյան
ԳՄԴ 84(5Հ)-5
Թ 950

Թումանյան Հովհաննես
Թ 950 Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով/
Հովի. Թումանյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի
անվան գրականության ինստիտուտ, 2018.
Հատոր առաջին: Բանաստեղծություններ.- 786 էջ:

ՀՏԴ 821.19-1Թումանյան
ԳՄԴ 84(5Հ)-5

ISBN 978-9939-1-0723-3
© ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2018
Հատորը հրատարակվում է Հ. Թումանյանի թանգարանի ֆինանսավորմամբ

Հովհաննես Թումանյանի տասը հատորով երկերի լիակատար ժողովածուի վերահրատարակման խմբագրական կոլեգիայի կազմը

(ցանկը բերվում է այբբենական կարգով)

Խմբագրական խորհրդի նախագահներ՝ Դևրիկյան Վարդան, բ.գ.դ., Թուխիկյան Նարինե, տեղակալ՝ Կիրակոսյան Վլադիմիր, բ.գ.դ., պրոֆ., պատասխանատու քարտուղար՝ Եղիազարյան Անի, բ.գ.թ.

Աբեղյան Հասմիկ, բ.գ.թ., Ավետիսյան Ջավեն. բ.գ.դ., պրոֆ., Եղիազարյան Ազատ, բ.գ.դ., պրոֆ., Իսահակյան Ավետիք, բ.գ.դ., պրոֆ., Հովհաննիսյան Սուսաննա, բ.գ.դ., Մարգարյան Միրանուշ, բ.գ.թ., դոցենտ, Մնացականյան Եվա, բ.գ.թ., դոցենտ, Մուշեղյան Ալբերտ, բ.գ.դ., Մուրադյան Սամվել, բ.գ.դ., պրոֆ., Որսկանյան Հերիքնազ, բ.գ.թ., Սուվարյան Յուրի, ակադեմիկոս

Վերահրատարակության բնագրերը պատրաստեցին՝ Վլ. Կիրակոսյանը, Ա. Եղիազարյանը և Ի. Վարժապետյանը Ծանոթագրեցին՝ Վլ. Կիրակոսյանը և Վ. Դևրիկյանը

Հատորի խմբագիր՝ Վլ. Կիրակոսյան

ԳՄԴ 84.21
Թ 950

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա

էդ. Մ. Ջրբաշյան *(գլխավոր խմբագիր)*, Հ. Մ. Գյուլնազարյան, Թ. Հ. Թումանյան, Լ. Մ. Կարապետյան, Լ. Հ. Հախվերդյան, Գ. Հ. Հակոբյան, Հ. Կ. Հովհաննիսյան, Ս. Ն. Սարինյան

Բնագրերը պատրաստեցին և ծանոթագրեցին
Հ. Մ. Գյուլնազարյանը և Մ. Մ. Մելիքյանը

Հատորի խմբագիր՝ էդ. Մ. Ջրբաշյան

ОВАНЕС ТУМАНЯН
ПОЛНОЕ СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ
в десяти томах
Том первый
Стихотворения
(на армянском языке)
Издательство АН Армянской ССР
Ереван, 1988

© *Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1988*
Ստեղծագործությունների համար

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հովհաննես Թումանյանի ստեղծագործական ժառանգությունը բացառիկ կարևոր տեղ է գրավում հայ բազմադարյան գրականության և ողջ հոգևոր մշակույթի պատմության մեջ: Ինչպես իր գեղարվեստական երկերով, այնպես էլ գրական-քննադատական և հրապարակախոսական գործունեությամբ Թումանյանը XIX դարի վերջի և XX դարի առաջին տասնամյակների հայ գրականության և ամբողջ հասարակական կյանքի խոշորագույն, կենտրոնաձիգ դեմքերից մեկն է, որի շուրջն էին համախմբվում հայրենի մշակույթի բոլոր առողջ և առաջադեմ ուժերը:

Թումանյանի նշանակությունը վաղուց դուրս է եկել իր ապրած և ստեղծագործած պատմական ժամանակի սահմաններից, այն չի կարող պարփակվել մեկ առանձին շրջափուլի մեջ: Իր երկերի համազգային և համամարդկային բովանդակությամբ, գեղարվեստական վիթխարի ընդհանրացումներով Թումանյանն ավելի, քան մեկ ուրիշը, նվաճել է հայ ժողովրդի ազգային մեծ գրող, «ամենայն հայոց բանաստեղծ» կոչվելու իրավունքը: Նրա ստեղծագործությունը դարձավ հայրենիքի անցյալի և ներկայի, նրա հոգևոր ուժերի և գեղարվեստական ավանդույթների լավագույն, ամենախոր մարմնավորումը: Այդ իրողությունը գիտակցվել է դեռևս Թումանյանի կենդանության ժամանակ: 1914 թ. Վահան Տերյանը նրան բնութագրել է իբրև «մեծ գեղարվեստագետ և ժողովրդական հոգու իմաստուն ու վսեմ թարգման», իսկ Վալերի Բրյուսովը երկու տարի անց գրել է. «Ամբողջությամբ վերցրած՝ Թումանյանի պոեզիան ինքը Հայաստանն է՝ հնադարյան և նոր, հարություն առած և դրոշմված բանաստեղծական տողերում մեծ վարպետի

ձեռքով»:

Անցած տասնամյակներին հասարակական և գրականագիտական միտքը, չնայած առանձին շեղումներին, ընթացել է Թումանյանի ժառանգության համաժողովրդական նշանակությունը և գեղարվեստական անմրցելի մեծությունը ավելի ու ավելի խոր, բազմակողմանիորեն ըմբռնելու և իմաստավորելու ճանապարհով: Դրա ամենից ցայտուն արտահայտությունը պետք է համարվեն մեր մեծ բանաստեղծների պատկերավոր բնութագրումները: Թումանյանի մահվան թարմ տպավորության տակ գրած հոդվածում (1923) Ավ. Իսահակյանը նրա պոեմներն ու լեգենդները համարեց «մեր գրի անմահ փառքն ու գոհարակերտ բարձունքը, որից այն կողմ չի անցել մեր թռիչքը»: Դրանից ճիշտ մեկ տասնամյակ անց Ե. Չարենցն այդ նույն միտքն ամփոփեց բևավոր բանաստեղծական բանաձևի մեջ. «Թումանյա՛նն է անհաս Արարատը մեր նոր քերթության»:

Վովհ. Թումանյանի ստեղծագործության համազգային նշանակությունը, նրա անփոխարինելի դերը հայ գրականության մեջ ռեալիզմի և ժողովրդայնության սկզբունքների զարգացման գործում, ինչպես նաև նրա առնչությունները ՍՍՀՄ ժողովուրդների գրականության, նոր ժամանակների համաշխարհային գրական պրոցեսի և գեղարվեստական որոնումների հետ, բացահայտվել և մեկնաբանվել են գիտական բազմաթիվ ուսումնասիրություններում: Այդ հարցերը լայնորեն լուսաբանվեցին հատկապես մեծ բանաստեղծի 100-ամյակի համաժողովրդական տոնակատարության ժամանակ, որը մեծ շուքով ու հանդիսավորությամբ անցկացվեց 1969 թվականին: Թումանյանի անունը լիակատար իրավունքով մտել է նոր ժամանակների համաշխարհային խոշորագույն

բանաստեղծների՝ Գյոթեի և Բայրոնի, Պուշկինի և Լերմոնտովի, Միցկևիչի և Շևչենկոյի, Նեկրասովի և Լոնգֆելլոյի անունների շարքը, որոնց ժառանգությունը պատկանում է ամբողջ մարդկությանը:

Ավելորդ է ապացուցել, թե ինչքան կարևոր է ինչպես Թումանյանի երկերի մասսայական հրատարակությունների ու թարգմանությունների, այնպես էլ, մանավանդ, նրա գրական ժառանգությունը բնագրագիտության նորագույն սկզբունքներով տպագրության պատրաստելու գործը: Դա հայ գրականագիտության առաջնահերթ խնդիրներից է և ունի ոչ միայն գրական, այլև հասարակական և ընդհանուր մշակութային մեծ արժեք ու նշանակություն: Ներկա հրատարակությունը կոչված է լինելու կարևորագույն քայլ այդ խնդրի իրականացման ճանապարհին:

Թումանյանի երկերի գիտական հրատարակության համար սկզբնաղբյուրի արժեք ունեն, ամենից առաջ, նրա կենդանության ժամանակ լույս տեսած ժողովածուները, ինչպես նաև չափածո և արձակ բազմաթիվ գործերի տպագրությունը առանձին գրքույկներով: Սկսած 1890 թվականից մինչև 1922 թ., ավելի քան երեսուն տարվա ընթացքում Թումանյանը հրատարակել է հինգ համեմատաբար ծավալուն ժողովածու (1890, 1892, 1903, 1908, 1922), բոլորն էլ «Բանաստեղծություններ» ընդհանուր վերտառությամբ: Այդ ժողովածուներն ամփոփում են քնարական բանաստեղծություններ, պոեմներ և բալլադներ, ինչպես նաև թարգմանություններ: Մի քանի անգամ էլ Թումանյանը լույս է ընծայել չափածո երկերի ժողովածուներ՝ կազմված ժանրային կամ թեմատիկ սկզբունքով՝ «Դաշնակներ» (1893, 1896), «Լեգենդներ» (1904), «Հայրենիքիս հետ» (1916), «Քառյակներ» (1920):

Հովհ. Թումանյանի անդրանիկ ժողովածուն («Բանաստեղծություններ», առաջին հատոր, Մոսկվա, 1890) իր պարունակած քնարական գործերով և պոեմներով («Լոռեցի Սաքոն», «Մեհրի», «Ալեք») հեղինակի անունը դասեց արևելահայ առաջատար բանաստեղծների շարքը: Երկու տարի անց (1892) տպագրվեց «Բանաստեղծությունների» երկրորդ հատորը, ուր, ի թիվս այլ երկերի, տեղ գտան ևս երեք պոեմ («Անուշ», «Մերժած օրենք», «Մարոն»): Այս երկու հատորները, չնայած ուսումնասիրության և որոնումների շրջանում գտնվող հեղինակի նկատելի թուլություններին (որոնք հետագայում մղեցին նրան էական վերամշակման ենթարկելու հիշյալ երկերից մի քանիսը), կարևորագույն նշանակություն ունեն Թումանյանի ստեղծագործական ուղու առաջին փուլը ճիշտ հասկանալու և գնահատելու համար:

Մեր դարի սկզբին Թումանյանն իր գեղարվեստական զարգացման մեջ հասավ վարպետության և խորության նոր, շատ ավելի բարձր աստիճանի: Այդ ժամանակ էլ ծագեց նրա չափածո ստեղծագործության լավագույն մասը մեկ ստվար հատորով հրատարակելու միտքը, որի իրականացումը եղավ 1903 թ. Թիֆլիսում տպագրված «Բանաստեղծություններ» ժողովածուն: Այդ գրքով առաջին անգամ հասարակությանը ներկայացավ «նոր Թումանյանը»՝ նախորդ տարիների գեղարվեստական թերություններից իսպառ ազատագրված և ռեալիստական պոեզիայի բարձունքներին հասած բանաստեղծը: Կարելի է ասել, որ հենց այդ գրքով էր, որ Թումանյանը դարձավ արևելահայ բանաստեղծության խոշորագույն, առաջատար դեմքը: Նրա դասական շատ երկերի, մանավանդ հանրահայտ պոեմների ու բալլադների հիմնովին վերամշակված, բարձրագույն գեղարվեստական մակարդակի հասցված բնագրերը առաջին անգամ երևան

եկան 1903 թ. ժողովածուի մեջ: Այդ գրքի նշանակությունը մեծանում է հատկապես նրանով, որ դա Թումանյանի ժողովածուներից միակն է, որի տպագրության ընթացքին նա հնարավորություն է ունեցել սկզբից մինչև վերջ հետևելու անձամբ և ամենայն ուշադրությամբ («Բանաստեղծություններ» վերտառությամբ մյուս չորս գրքերը տպագրվել են Մոսկվայում, Բաքվում, Կ. Պոլսում, և Թումանյանը դրանց հրատարակությանը անձամբ և անմիջականորեն հետևելու կամ վերահսկելու հնարավորություն չի ունեցել):

Հինգ տարի անց՝ 1908 թ. Բաքվում հրատարակվեց Թումանյանի «Բանաստեղծություններ» նոր ժողովածուն, որն իր կազմով և բնագրով զգալիորեն տարբերվում էր նախորդից: Բնագրերի մեջ մտցվել են բազմաթիվ փոփոխություններ և լրացումներ, հանվել են մի շարք երկեր և ավելացվել նորերը (օրինակ՝ «Թմկաբերդի առումը»): Սակայն այն հանգամանքը, որ այս ժողովածուն տպագրվեց առանց հեղինակի անմիջական վերահսկողության, պատճառ է դարձել մի շարք վրիպակների և աղճատումների (դրանց մի մասը Թումանյանը նշել է գրքի հեղինակային օրինակների վրա):

Նույնը զգալի չափով վերաբերում է նաև Թումանյանի կազմած վերջին ժողովածուին («Բանաստեղծություններ», Կ. Պոլիս. անվանաթերթի վրա նշված է 1922, իսկ շապիկի վրա՝ 1923, քանի որ գիրքը լույս է տեսել 1923 թ. սկզբին): Այս հատորն ամենից ծավալունն ու բազմազանն է Թումանյանի կենդանության ժամանակ հրապարակված ժողովածուներից և շատ կողմերով արտահայտում է հեղինակի վերջին կամքը: Գրքի վերջում զետեղված՝ հրատարակչի (Կ. Քեշիշյան որդի) փոքրիկ ծանոթագրության մեջ նշվում է. «Ներկա հավաքածուն պատրաստած է պ. Հովհաննես Թումանյան,

1921-ին» (պետք է ենթադրել, որ գիրքը կազմվել է նախքան 1921 թ. հոկտեմբերին Կ. Պոլիս մեկնելը և անձամբ հանձնվել հրատարակչին)։ Նույն ծանոթագրությունից իմանում ենք նաև, որ հեղինակն «այս հատորեն հապաված է նախապես հրատարակված իր բանաստեղծություններեն ոմանք, իր իսկ բառերով իբր իր հոգիին անհարազատ արտահայտություններ, և մյուսներուն վրա կատարած է սրբագրություններ, կրճատումներ և փոփոխություններ»։ Այս առումով Կ. Պոլսի ժողովածուն, անշուշտ, շատ կարևոր աղբյուր է Թումանյանի չափածո երկերի (մանավանդ պոեմների և բալլադների) վերջնական բնագրերը որոշելու համար։ Սակայն այդ գրքի տպագրությունը նույնպես իրականացվեց առանց հեղինակի անմիջական մասնակցության (1922 թ. և 1923 թ. սկզբին Թումանյանը հիվանդ վիճակում գտնվում էր Թիֆլիսում և ապա՝ Մոսկվայում, ուր և վախճանվեց)։ Այդ պայմաններում գրքի մեջ տեղ են գտել բազմաթիվ վրիպակներ, բառերի սխալ գրություններ (դրանց մի մասը հետևանք էր արևմտահայ գրական լեզվի ձևերի և ուղղագրության ազդեցության)։ Ժամանակակիցների և հարազատների վկայությամբ՝ Թումանյանը հիվանդ վիճակում նկատել է այդ սխալների մի մասը, օտտիսկների վրա նշել և ուղարկել է Կ. Պոլիս, բայց, ըստ երևույթին, դրանք ժամանակին տեղ չեն հասել և տպագրությունից առաջ չեն ուղղվել (միայն գրքի որոշ օրինակների վրա կան տպագրությունից հետո արված մի շարք ուղղումներ, որոնք, պետք է ենթադրել, մտցվել են Թումանյանի նշումների հիման վրա)։

20-30-ական թվականներին ետմահու լույս տեսան Թումանյանի երկերի մի քանի ժողովածուներ (օրինակ՝ «Երկերի ժողովածու. ժողովրդական հրատարակություն», Երևան, 1926, «Երկեր. մի հատորյակ», կազմեց՝ Ն. Թումանյան,

Երևան, 1938, և այլն), եղան առանձին երկերի բազմաթիվ հրատարակություններ: Սակայն իրենց բովանդակությամբ և գրական-հասարակական նշանակությամբ հիշատակության են արժանի հատկապես հետևյալ երկու գրքերը:

1934 թ. լույս տեսավ Հովհ. Թումանյանի «Գեղարվեստական երկեր» մեծադիր ժողովածուն Եղիշե Չարենցի խմբագրությամբ և նկարիչ Տաճատ Խաչվանքյանի շքեղ ձևավորմամբ: Դա մեկ հատորի մեջ Թումանյանի գրեթե ամբողջ գեղարվեստական ստեղծագործությունը ի մի հավաքելու փորձ էր: Այդ հրատարակությանը, բացի խմբագրից, գործուն մասնակցություն է բերել նաև բանաստեղծի դուստր Նվարդ Թումանյանը: Ինչպես նշված է խմբագրի առաջաբանում, այդ հատորը ծնվել է Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի նախապատրաստման ընթացքում, մի հրատարակություն, որը պետք է կազմված լիներ երեք մեծադիր հատորից (I – ավարտուն գեղարվեստական երկեր, II – վաղ շրջանի երկեր, սևագիր և անավարտ գործեր, տարբերակներ, III – հոդվածներ և նամակներ), ունենար համապատասխան գիտական ապարատ: Այդ ծրագիրը հետագայում փոխարինվեց լայն ընթերցող շրջաններին հասցեագրված մեկ հատորյակով, որը ներկայացնում է Թումանյանի գրական ժառանգությունը՝ ըստ հիմնական ժանրերի (պոեմներ, լեգենդներ և բալլադներ, երգեր, քառյակներ, պատմվածքներ, հեքիաթներ, բարգմանություններ և փոխադրություններ): Բացի ավարտուն երկերից, այս գրքում առաջին անգամ հրապարակվեցին նաև մի քանի տասնյակ անտիպ բանաստեղծություններ, սևագիր հատվածներ «Հառաչանք», «Անուշ», «Սասունցի Դավիթը», «Հազարան ըլբուլ» պոեմներից: «Գեղարվեստական երկեր» գիրքը իր հարուստ բովանդակության և գեղեցիկ ձևավոր-

ման շնորհիվ լայն տարածում գտավ, ևվաճեց բազմահազար ընթերցողների սերը: Չարենցն իր խմբագրած ժողովածուն համարում էր «որոշ անխուսափելի էտապ մեր մեծագույն բանաստեղծի երկերի իդեալական, այսինքն ակադեմիական հրատարակության ճանապարհին,– մի նպատակ, որ, ինչպես փորձը ցույց է տալիս, կարող է մարմնավորվել միմիայն մեր բոլոր լավագույն գրական-գիտական ուժերի կոլեկտիվ, մանրակրկիտ, համառ ու բազմամյա աշխատանքով»:

1939 թ. հրատարակվեց Նվարդ Թումանյանի կազմած «Թումանյանը քննադատ» ժողովածուն: Այստեղ առաջին անգամ ի մի հավաքվեցին մամուլի էջերում ցրված թումանյանական հոդվածների ու ելույթների մի զգալի մասը, հատվածներ նրա անտիպ նամակներից: Նյութերը դասավորված են ժամանակագրական կարգով՝ ամեն մի տարեթվի տակ առանձնացնելով հոդվածներն ու նամակները: Ժողովածուն, որն առ այսօր իր տեսակի մեջ մնում է միակը, մեծ դեր խաղաց Թումանյանի գեղագիտական և քննադատական ըմբռնումներն ընթերցող լայն շրջանների սեփականությունը դարձնելու գործում:

1930-ական թթ. կեսերին ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի (Արմֆան) Գրականության և լեզվի ինստիտուտում սկսվեցին Հովհ. Թումանյանի երկերի առաջին գիտական հրատարակության աշխատանքները, որոնք 1943 թ. հետո շարունակվեցին և ավարտվեցին ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտում:

Երկերի ժողովածուի վեց հատորները (սկզբնապես նախատեսված հինգի փոխարեն) լույս տեսան հետևյալ ժամանակագրական հաջորդականությամբ և կազմով. 1940 թ. – հ.II (պոեմներ), 1947 թ. – հ.V (նամակներ), 1949 թ. – հ.III (պատմվածքներ և հեքիաթներ), 1950 թ. – հ.I

(բանաստեղծություններ), 1951 թ. – հ.IV (քննադատություն և հրապարակախոսություն), 1959 թ. – հ.VI (լրացուցիչ՝ գեղարվեստական երկեր, հոդվածներ և ուսումնասիրություններ, նամակներ)։ Հատորների բնագրերը տպագրության պատրաստելու և ծանոթագրելու բարդ և դժվարին աշխատանքը իրագործվել է մի խումբ գրականագետների, բայց ամենից ավելի՝ Նվարդ Թումանյանի և Արամ Ինճիկյանի ջանքերով։ Նրանք, Միմակ Սահակյանի (պատասխանատու խմբագիր) և Ստեփան Զորյանի հետ միասին, եղել են նաև խմբագրական կոլեգիայի անդամներ։

Հովհ. Թումանյանի երկերի առաջին գիտական հրատարակությունը նշանակալի երևույթ էր ոչ միայն թումանյանագիտության, այլև ընդհանրապես սովետահայ բնարագիտության պատմության մեջ։ Ճիշտ է, 1920-30-ական թթ. եղել էին առանձին հայ դասականների երկերի ժողովածուներ, որոնք իրենց բնույթով մոտենում էին գիտական հրատարակության սկզբունքներին ու պահանջներին, ինչպես Վահան Տերյանի երկերի քառահատորյակը՝ Պ. Մակինցյանի խմբագրությամբ (1923-25), Միսաք Մեծարենցի երկերի լիակատար ժողովածուն մեկ հատորով՝ Վ. Ալազանի և Վ. Նորենցի խմբագրությամբ (1934), Հակոբ Պարոնյանի երկերի լիակատար ժողովածուն 11 հատորով, որի հրատարակությունն սկսվեց 1931 թվականից։ Թումանյանի երկերի հրատարակության հետ գրեթե միաժամանակ սկսվեց Միքայել Նալբանդյանի Երկերի լիակատար ժողովածուի տպագրությունը չորս հատորով (1940-1949)։ Սակայն, առանց չափազանցնելու, կարելի է ասել, որ Հովհ. Թումանյանի երկերի առաջին գիտական հրատարակությունը հատկապես բարդ և դժվարին գործ էր։ Առաջին անգամ էր հայ նոր գրականության բնագրագիտությունը գործ

ունենում քանակով այդքան շատ ու բազմազան տպագիր ու ձեռագիր (այն էլ՝ մեծ մասամբ սևագիր) նյութերի հետ, որոնց հավաքումը, վերծանումն ու համակարգումը կապված են հսկայական դժվարությունների հետ: Թումանյանի երկերի բնագրերը հրատարակության են պատրաստվել ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրների ստուգման և համեմատության հիման վրա: Բացի հիմնական (կանոնիկ) բնագրերից հրապարակվել են նաև նրանց նախնական տարբերակները, զանազան հրատարակությունների ու ձեռագրերի մեջ եղած տարբերությունները: Այս ճանապարհով վեցհատորյակի մեջ առաջին անգամ հավաքվեցին ու հրատարակվեցին բազմաթիվ ավարտված երգեր ու հատվածներ, ձեռագրային այլ ընթերցումներ (հատկապես առաջին և երկրորդ հատորներում): Ծանոթագրությունների մեջ տրված են տեղեկություններ երկերի ստեղծագործական պատմության, հիմնական հրատարակությունների և պահպանված ձեռագրերի մասին:

Այսպիսով, վեց հատորյակն առաջին անգամ ներկայացրեց հայ ազգային մեծ բանաստեղծի գրական ժառանգությունը իր բոլոր կողմերով, նրա գրեթե ամբողջական ստեղծագործական դիմապատկերը: 40-ական թվականներից ի վեր այդ հրատարակությունը դարձավ Թումանյանի ստեղծագործության ուսումնասիրության հիմքը:

Սակայն, իր գրական և գիտական խոշոր արժանիքներով հանդերձ, Թումանյանի երկերի այդ առաջին ակադեմիական հրատարակությունն ուներ մի շարք բացթողումներ և թերություններ: Ամենից առաջ, այն ըստ ամենայնի լիակատար չէ: Օբյեկտիվ և սուբյեկտիվ կարգի տարբեր պատճառներով՝ նրանից դուրս են մնացել չափածո և արձակ ոչ քիչ թվով ավարտուն և անավարտ երկեր, բազմաթիվ հոդվածներ ու

նամակներ: Կազմողները միշտ չէ, որ հնարավորություն են ունեցել հաշվի առնելու բանաստեղծի բոլոր ձեռագրերը, որի հետևանքով հրատարակության մեջ տեղ չեն գտել որոշ երկերի (մանավանդ՝ պոեմների) սևագիր տարբերակների մի զգալի մասը, հետևաբար և ըստ ամենայնի չի ներկայացվել հեղինակի կատարած ստեղծագործական աշխատանքի լրիվ պատկերը: Մի շարք հոդվածներ, ելույթներ, նամակներ, նույնիսկ բանաստեղծություններ, տպագրվել են կրճատումներով: Թեև 1959 թ. տպագրված լրացուցիչ VI հատորն զգալի չափով հարստացրեց հրատարակության կազմը, սակայն չէր կարող լիովին վերացնել նշված բացերը: Պետք է ավելացնել, որ վեցհատորյակի ծանոթագրությունները ևս, ընդհանուր առմամբ, խիստ կարճառոտ են, իսկ երբեմն (մանավանդ IV հատորում) չեն պարունակում նույնիսկ ամենաանհրաժեշտ տվյալները:

Հետագայում հրատարակված Թումանյանի երկերի մի քանի ժողովածուներ (օրինակ՝ «Ընտիր երկեր», 1953, «Երկեր. Երկու հատորով», 1958 և այլն) բնագրային առումով հենվում էին վեցհատորյակի վրա և որևէ նորություն չէին պարունակում: Նույնը վերաբերում է նաև բանաստեղծի երկերի բազմաթիվ առանձին հրատարակություններին:

1969 թ. Թումանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ տպագրվեց նրա երկերի ժողովածուն չորս հատորով (խմբագրությամբ Ա. Ինճիկյանի և Էդ. Ջրբաշյանի), հետևյալ բովանդակությամբ. հ. 1 – պոեմներ և բալլադներ, հ. 2 – բանաստեղծություններ, հ. 3 – պատմվածքներ և հեքիաթներ, հ. 4 – հոդվածներ և նամակներ: Այս հրատարակության մեջ փորձ արվեց վերստուգելու Թումանյանի երկերի բնագրերի հետ կապված մի շարք հարցեր, սկզբնաղբյուրների հիման վրա բնագրերի և ծանոթագրությունների մեջ մտցվեցին բազմա-

Ա 10213

թիվ ճշտումներ և լրացումներ: Սակայն քառահատորյակի մասսայական բնույթը, բնականաբար, հնարավորություն չէր տալիս լուծելու այն բոլոր հարցերը, որոնք պետք է տեղ գտնեն գրողի ժառանգության գիտական հրատարակության մեջ (այսպես, հատորներում չկան տարբերակների և բնագրային տարբերությունների բաժիններ, խիստ սեղմ են ծանոթագրությունները և այլն):

Հետագայում հրատարակվեցին Թումանյանի երկերի ժողովածուներ մեկ (1978), երկու հատորներով (1985), որոնց կազմող Լ. Հախվերդյանը հենվել է 1969 թ. քառահատորյակի բնագրերի վրա:

Դեռևս 60-ական թթ. սկզբին, երբ հանրագումարի էին բերվում Թումանյանի երկերի առաջին գիտական հրատարակության արդյունքները, պարզ դարձավ, որ այն շատ կողմերով թերի է, և մոտ ապագայում պետք է դրվի բանաստեղծի գրական ժառանգության նոր, իսկապես լիակատար և ակադեմիական հրատարակության խնդիրը: Բայց դրա իրագործմանը կարելի էր ձեռնարկել միայն երկարատև ու բազմակողմանի նախապատրաստական աշխատանքից հետո: 1962 թվականից սկսվեցին պարբերաբար գումարվող թումանյանական ընթերցումները, որոնք կազմակերպում են ՀՍՍՀ ԳԱԱՄ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը և Հովհ. Թումանյանի թանգարանը: Այդ ընթերցումների հիման վրա 1964 թ. լույս տեսավ «Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ» մատենաշարի առաջին գիրքը, որին (ճիշտ է, երբեմն մեծ ընդմիջումներով) հաջորդեցին երկրորդ (1969), երրորդ (1983) և չորրորդ (1985) հատորները: Այդ գրքերում, բացի Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարբեր կողմերի լուսաբանմանը նվիրված հոդվածներից, հրապարակվում են նաև գրողի

ժառանգության բազմաթիվ անծանոթ էջեր, ինչպես նաև ժամանակին մամուլում տպագրված, բայց հեղինակի կազմած ժողովածուներում տեղ չգտած մի շարք նյութեր: Գիտական և գրական շրջանների սեփականությունը դարձան «Հառաչանք», «Դեպի անհունը» պոեմների սևագիր հատվածներ, «Հազարան բլբուլի» հետ կապված բազմաթիվ նյութեր, «Դեպի հայրենիք» անավարտ վիպակի ծավալուն սկիզբը, ավարտուն և անմշակ շատ ուրիշ երկեր, տարբերակներ, սևագրություններ և հատվածներ, ստեղծագործական և ինքնակենսագրական գրառումներ, նամակներ, Թումանյանի հասարակական գործունեության հետ կապված փաստաթղթեր: Այդ հրապարակումները, առանց որոնց չի կարելի պատկերացնել թումանյանագիտության հետագա զարգացումը, զգալի չափով կմտնեն նաև գրողի երկերի ակադեմիական նոր հրատարակության մեջ:

Նախորդ տասնամյակներում Թումանյանի ստեղծագործության գիտական հրատարակության ուղղությամբ կատարված աշխատանքները, ինչպես նաև թումանյանագիտության ակնառու նվաճումներ, Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտին հնարավորություն տվեցին ձեռնամուխ լինելու մեծ բանաստեղծի գրական ժառանգության այս նոր ժողովածուի հրատարակությանը, որը պետք է, ըստ ամենայնի, համապատասխանի ժամանակակից բնագրագիտության չափանիշներին ու պահանջներին: Թումանյանի Երկերի լիակատար ժողովածուն ծրագրված է հրատարակել տասը հատորով և հետևյալ բովանդակությամբ.

1 – Բանաստեղծություններ,

2 – Քառյակներ, բալլադներ, թարգմանություններ,

3 – Պոեմներ,

4 – Պոեմներ (այդ թվում՝ թարգմանական),

5 – Գեղարվեստական արձակ,

6 – Գրական-հրապարակախոսական հոդվածներ (1887-1912),

7 – Գրական-հրապարակախոսական հոդվածներ (1913-1921),

8 – Ուսումնասիրություններ, զանազան հատվածներ և գրառումներ (այս հատորում կտրվի նաև Թումանյանի բոլոր երկերի այբբենական ցանկը),

9 – Նամակներ և գրություններ (1885-1904),

10 – Նամակներ և գրություններ (1905-1922):

Հատորներում նյութերը դասավորվում են ժամանակագրական կարգով, իսկ տվյալ ժանրի ներսում բաժանվում են երկու մասի՝ 1) ավարտված երկեր, 2) սևագրություններ և հատվածներ: Եթե որևէ երկի ստեղծման ճիշտ տարեթիվը հայտնի չէ, հիմք է ընդունվում առաջին տպագրության թվականը: Հեղինակի կենդանության ժամանակ չտպագրված այն երկերը, որոնց գրության ճիշտ տարեթիվը հնարավոր չէ պարզել, զետեղվում են մոտավոր թվագրությամբ (1890-ական թթ., 1900-ական թթ. և այլն):

Սույն հրատարակության հատորները կունենան նաև տարբերակների բաժին: Այստեղ տրվում են երկի ստեղծման տարբեր փուլերում գրված և վերջնական խմբագրությանը նախորդած ամբողջական կամ հատվածային այն տարբերակները, որոնք գեղարվեստական հատկանիշներով և լեզվաոճական մշակման առումով տարբերվում են իրարից և ունեն որոշակի ինքնուրույն արժեք: Եթե տողի մեջ փոխվել է նույնիսկ մեկ բառ, ապա բերվում է ոչ թե միայն փոխված բառը, այլ ամբողջ տողը՝ ընթերցողին հնարավորություն տալով ընկալելու տողի նախնական ձևն իր ամբողջության

մեջ (փոփոխված բառը կամ արտահայտությունը տրվում է ոչ թե շղագիր, այլ սովորական տառերով)։ Ելնելով ստեղծագործության մշակման ուղղությամբ կատարված աշխատանքի բնույթից՝ հրատարակության մեջ կիրառվել են բնագրային տարբերությունների մատուցման տարբեր եղանակներ։ Փոքրածավալ չափածո երկերի (բանաստեղծություններ, քառյակներ) ձեռագրերի և հրատարակությունների մեջ եղած տարբերությունները ցույց են տրվում ըստ առանձին տողերի։ Իսկ մեծ ծավալի երկերի (պոեմներ, բալլադներ) մեջ կատարված փոփոխությունները բերվում են համեմատաբար ամբողջական հատվածներով և ըստ աշխատանքի փուլերի՝ առանձին-առանձին ներկայացնելով ձեռագրերի և տպագրությունների պատկերը, նրանց տարբերությունները հիմնական բնագրից։ Այն դեպքում, երբ տվյալ ձեռագրում այս կամ այն տողն ունեցել է մշակման մի քանի աստիճան, դրանք նույնպես դասավորվում են ըստ ստեղծագործական աշխատանքի փուլերի և, զանազանվելու համար, համարակալվում հայկական այբուբենի տառերով՝ ա, բ, գ, և այլն։ Եթե սևագրության մեջ հեղինակը որևէ բառի կամ արտահայտության համար գրել է երկու կամ ավելի տարբերակ, նրանց միջև վերջնական ընտրություն չկատարելով, ապա այդ զուգահեռ ձևերից առաջինը բերվում է հիմնական բնագրում, իսկ մյուսները տարվում են տողատակ։

Հեղինակի տված բացատրություններն ու ծանոթագրությունները, ելնելով նրանց բնույթից ու բովանդակությունից, տեղադրվում են կամ հիմնական տեքստի հետ, կամ էլ տարբերակների և ծանոթագրությունների բաժիններում։ Իսկ բնագիրը պատրաստողների կազմած ծանոթագրությունները զետեղված են հատորի վերջում։

Հոդվածների, ուսումնասիրությունների, գրառումների և նամակների համար կազմված ծանոթագրությունների տեղը բնագրում նշվում է արաբական թվերով: Բացատրվող բառը կամ արտահայտությունը, անհրաժեշտության դեպքում, բերվում է նաև տվյալ ծանոթագրության սկզբում: Գեղարվեստական երկերի՝ բացատրություն պահանջող տեղերը ծանոթագրությունների մեջ մատնանշվում են տողերի համարակալման թվերով:

Յուրաքանչյուր ժանրի ծանոթագրություններից առաջ տրվում է ընդհանրացնող հոդված տվյալ բնագավառում Թումանյանի ստեղծագործական վաստակի հիմնական գծերի, հայրենի գրականության պատմության մեջ նրա գրաված տեղի և յուրահատկության մասին: Ծանոթագրությունները, բացի ձեռագրերին և տպագրություններին վերաբերող փաստերից, պարունակում են նաև տեղեկություններ երկի մշակման հիմնական փուլերի, կենսական և գրական ազդակների մասին:

Նովի. Թումանյանի ձեռագրերը, ճնշող մեծամասնությամբ, հավաքված են ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրության Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում (ԳԱԹ), իսկ նրանց լուսապատճենները՝ Թումանյանի թանգարանում: Բնագիր պատրաստողները օգտվել են նաև ուրիշ արխիվներում, Թումանյանի ընտանիքի կամ մասնավոր անձանց մոտ գտնվող նյութերից:

Թումանյանի լեզվական անդադրում որոնումները և վառ արտահայտված յուրահատկությունը, գրական և բարբառային տարրերը զուգակցելու մշտական ձգտումը արտահայտվել են նաև այն բանում, որ ոչ միայն ստեղծագործական զարգացման տարբեր փուլերում կամ տվյալ երկի մշակման տարբեր աստիճաններում, այլև երբեմն միաժամանակ

(նույնիսկ միևնույն ձեռագրի մեջ կողք կողքի) բանաստեղծն օգտագործել է զուգահեռ ձևեր, ինչպես, օրինակ, այս – ես, այն – էն, ձայն – ձեն, մայր – մեր, հայր – հեր, վերա – վրա, նորա – նրա, դժվար – դժար, կանաչ – կանաչ, ջահել – ջահիլ, տալիս – տալի, լալիս – լալի և այլն: Ինչքան էլ սա լեզվական որոշ անհետևողականության տպավորություն ստեղծի, ներկա հրատարակության մեջ նույնությամբ պահպանվել են բանաստեղծի օգտագործած այդ կրկնակի ձևերը, որպես Թումանյանի լեզվական որոնումների ուղղակի վկայություն: Պահպանվել են նաև միևնույն բառի գրության տարբեր ձևերը, եթե դրանք պայմանավորված են ընտրված նյութով կամ արտահայտված տրամադրությամբ: Օրինակ, Թումանյանի երկերի տարբեր տպագիր և ձեռագիր աղբյուրներում կարելի է հանդիպել ոչ միայն աշխարհ, այլև աշխարհիք, աշխարք, աշխար գրություններ, որոնցից ամեն մեկն արդարանում է տվյալ կոնկրետ բովանդակությամբ կամ հանգաբանական նկատառումներով: Գրության այդ տարբեր ձևերը մնացել են անփոփոխ: Այլ դեպքերում, երբ միևնույն բառի գրության անմիօրինակությունը գեղագիտական կամ կառուցվածքային որևէ դեր չի խաղում, այլ բխում է անցյալում որոշ ուղղագրական նորմերի չկարգավորված լինելուց (օրինակ՝ ճամբա – ճամփա – ճանապա, բաղդ – բախտ, թագուն – թաքուն, աղջի – ախչի, բղխել – բխել և այլն) ընտրվել են ներկայումս ընդունված գրության ձևերը:

Չափածո երկերում, գաղտնավանկերի մեջ ամենուրեք պահպանված է Թումանյանի դրած ը ձայնավորի գրությունը, որը կարևոր նշանակություն ունի ոտանավորի ռիթմը ճիշտ ընկալելու համար: Ըստ հնարավորին՝ հարազատորեն պահպանված են նաև Թումանյանի երկերի կետադրական առանձնահատկությունները (բացի այն դեպքերից, երբ

տպագրվածի մեջ սպրդել են կետադրական ակնհայտ սխալներ, և կամ սևագրության մեջ բանաստեղծն ինչ-որ պատճառով չի դրել անհրաժեշտ կետադրական այս կամ այն նշանը):

Ներկա հրատարակության տարբերակների և ծանոթագրությունների մեջ ընդունված է պայմանական նշանների և հապավումների այն համակարգը, որը կիրառվել է նաև Թումանյանի երկերի վեցհատորյակում:

Խեղինակի փակագծերը պահպանվում են նույնությամբ՝ կլոր ( ):

Ձեռագրում ջնջված բառերը վերականգնելիս դրված են ուղղանկյուն [ ] փակագծերի մեջ:

Խմբագրության կողմից ավելացված կամ ենթադրաբար վերծանված բառերը դրված են սուր < > փակագծերի մեջ: Խեղինակի կողմից բաց թողնված և չգրված բառերն արտահայտվում են սուր փակագծերի մեջ առնված բազմակետերով <.....>, իսկ անընթեռնելի և չվերծանված բառերը՝ նույնպիսի փակագծերում՝ նշելով դրանց քանակը <1 անընթ.>, <2 անընթ.> և այլն:

Չափածո երկերն ընդգրկող հատորներում հիմնական բնագրի և տարբերակների տողերը համարակալվում են (բանաստեղծությունները և բալլադները 5, 10, 15, 20, իսկ պոեմները՝ 10, 20, 30 սկզբունքով), որի հիման վրա և նշվում են բնագրային տարբերությունները:

Յուրաքանչյուր հատորի ծանոթագրությունների սկզբում կտրվի այդ հատորի մեջ օգտագործված աղբյուրների և նրանց հապավումների ցանկը:

Թեև ներկա հրատարակությունը կոչվում է Երկերի լիակատար ժողովածու, բայց այն, բնականաբար, չի կարող ամփոփել բանաստեղծի գրչի տակից դուրս

եկած անխտիր բոլոր տեքստերն ու նյութերը: Բազմաթիվ օրագրային և այլ բնույթի գրառումներ, հոդվածների պատառիկներ, նշումներ և ցանկեր, ինչպես նաև Թումանյանի ստորագրած պաշտոնական գրություններ, դուրս կմնան այս հրատարակությունից, քանի որ դրանք ունեն սոսկ մասնագիտական արժեք և ընթերցող լայն շրջաններին հասցեագրվել չեն կարող: Այդ բոլոր նյութերը հաջորդաբար կզետեղվեն «Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ» մատենաշարի հերթական հատորների մեջ, որոնց տպագրությունը զուգահեռաբար կիրականացնի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը: Այսպիսով, հիշյալ մատենաշարի ինչպես նախորդ, այնպես էլ նոր հատորները շատ կողմերով կլրացնեն ներկա տասնհատորյակը, կամբողջացնեն Թումանյանի գրական ամբողջ ժառանգության հավաքման և տպագրության, այն գիտական շրջանառության մեջ մտցնելու խնդիրը:

Հովհաննես Թումանյանի Երկերի լիակատար ժողովածուն կոչված է ամփոփելու թումանյանագիտության շուրջ հարյուրամյա ճանապարհի ձեռքբերումները, դառնալու կայուն հիմք՝ հայ ազգային մեծ բանաստեղծի երկերի նոր մասսայական հրատարակությունների և թարգմանությունների, նրա կյանքի և ստեղծագործության գիտական ուսումնասիրության կարևորագույն խնդիրների լուծման համար:

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հովհաննես Թումանյանի երկերի 10-հատորյա լիակատար ժողովածուի (1988-1999) վերահրատարակությունն իրականացվում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի և Հովհ. Թումանյանի թանգարանի գիտական խորհուրդների համատեղ որոշմամբ:

Վերահրատարակության միտքը ծագել է բանաստեղծի ծննդյան 150-ամյակի կապակցությամբ: Իհարկե, նախորդ հրատարակության վերջին հատորի տպագրությունից դեռ երկու լրիվ տասնամյակ էլ չի անցել, և թվում է՝ հարկ չկար մտածելու վերահրատարակության մասին: Բայց այդ ընթացքում շատ բան է փոխվել: Արմատական փոփոխություններ են կատարվել նաև անցյալի մշակութային արժեքների վերաիմաստավորման ու վերագնահատման սկզբունքներում ու չափանիշներում, որոնք քննական հայացք են պարտադրում շատ կողմերով հիրավի մեծարժեք այդ հրատարակության հանդեպ: Ամենից առաջ դրանով է հիմնավորվում վերահրատարակության անհրաժեշտությունը: Պետք է նկատի ունենալ նաև, որ այդ հրատարակությունն իրականացվել է դժվարին պայմաններում, և հնարավոր չի եղել ապահովել մեծ բանաստեղծին վայել տպագրական որակ:

Վերահրատարակության մեջ ամբողջովին պահպանվում են նախորդ հրատարակության կառուցվածքը և հատորների բովանդակությունը՝ միայն մասնակի խմբագրումներով ու սրբագրումներով:

Նույնությամբ պահպանվում են նաև Թումանյանի բանաստեղծություններին, քառյակներին, բալլադներին,

պոեմներին, գեղարվեստական արձակին, քննադատական և հրապարակախոսական ժառանգությանը, ինչպես նաև 8-րդ հատորի խառը նյութերին վերաբերող ուսումնասիրություն-հոդվածները՝ հարկ եղած դեպքում կատարելով անհրաժեշտ վերապահումներ, լրացումներ և ճշգրտումներ:

Մյուս բաժիններում խմբագրական ու սրբագրական միջամտությունները հետևյալ կարգի են՝

1) Բնագրերի բաժնում երբեմն հարկ է եղել կատարել որոշ տեղափոխություններ՝ հատորների ժանրային միասնականությունն ու ամբողջականությունը հստակեցնելու նկատառումով: Օրինակ՝ «Հայկական բանակը» (1920) բանաստեղծությունը, հանգամանքների բերումով, զետեղվել է 4-րդ՝ պոեմների հատորի հավելվածում: Վերահրատարակության մեջ տեղափոխվել է 1-ին՝ բանաստեղծությունների հատոր:

2) Կան նաև ժողովածուից առհասարակ դուրս մնացած ոտանավորներ, որոնք հանդիպում են նամակներում, գրքերի ընծայագրեր են կամ անհայտ են եղել կազմողներին: Օրինակ՝ Վերնատան կողմից Ժենի՝ Աղբալյանին և Դեմիրճյանին ուղղված չափածո կատակ-նամակը՝ «Ես՝ Օհաննես, Ավօն, Լևոն...» ստորագրությամբ, որի ձեռագիրը պահվում է Թումանյանի թանգարանում:

Դրանք զետեղվել են 1-ին հատորում՝ իրենց համապատասխան տեղերում:

3) Բացթողումներ կան նաև Գրողների ընկերության, Հայկազյան ընկերության, Հայրենակցական միությունների միության ժողովներում կամ այլ առիթներով Թումանյանի ելույթներում: Օրինակ՝ 1917 թ ապրիլի 27-ին ՀԳԿԸ տարեկան ընդհանուր ժողովին ներկայացրած ընդարձակ հաշվետվությունը՝ ընկերության՝ 1914-1916 թթ. գործու-

նեության մասին, որի ինքնագիրը պահվում է բանաստեղծի թանգարանում:

Այդ բացթողումները վերացված են ձեռքի տակ եղած վավերական նյութերով:

4) Բնագրերում հանդիպում են տպագրական վրիպակներ կամ ձեռագրերի առանձին բառերի ու արտահայտությունների սխալ ընթերցումներ:

Դրանք սրբագրվել են:

5) Նկատելի բացեր ու անճշտություններ կան հատկապես ծանոթագրություններում: Դրանց պատճառները երկու կարգի են՝ մամուլում և այլ աղբյուրներում եղած տեղեկությունների ոչ բավարար իմացություն կամ գաղափարական կաշկանդումներ: Վերջին դեպքում, օրինակ, ծանոթագրողները պարզապես շրջանցում են ակնհայտ, բայց ժամանակի պաշտոնական գաղափարախոսության համար անընդունելի վկայությունները:

Վերահրատարակության խմբագրությունն աշխատել է վերացնել այդ բացերն ու անճշտությունները, որքանով դա հնարավոր է եղել բանաստեղծի կյանքի և ստեղծագործության մասին այսօրվա իմացություններով:

6) Անհրաժեշտ սրբագրումներ են կատարվել նաև տարբերակների ու բնագրային տարբերությունների բաժնում:

7) ԳԱԹ-ում, Թումանյանի թանգարանում և այլ արխիվներում պահվող նյութերի ֆոնդային հին համարները փոխարինվել են նորերով:

8) Բնագրերը վերստին համեմատվել ու ճշգրտվել են պահպանված բնագրերի կամ տպագիր սկզբնաղբյուրների հետ:



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեռներ, ներշընչված դարձյալ ձեզանով,
Թընդում է հոգիս աշխուժով լըցված,
Եվ ջերմ ըղձերըս, բախտից հալածված,
Ձեզ մոտ են թըռչում հախուռն երամով։

Ձե՛զ, ձեզ վերըստին, ամպամած լեռներ,
Կյանքի տխրության ամպերի տակից
Ես ձայն եմ տալիս ու ծանրաթախիծ
Հոգուս ձայները ձեզ բերում նըվեր։

Քեզ մոտ եմ գալիս, իմ հի՛ն տրտմություն,
Վեհափառ դայակ մանուկ օրերիս,
Այնժամ էլ, չէիր ինձ հանգիստ տալիս՝
Սըրտիս ականջին խոսելով թաքուն...

Ո՛վ, որ կանչում ես գիշեր ու ցերեկ
Հազար ցավերով, հազար ձևերով,–
Ոգևորության հըզոր թևերով
Քեզ մոտ եմ գալիս, հայրենի՛ք իմ հեգ։

Գալիս եմ, բայց ոչ ուրախ երգերով
Քո ծաղիկներին ծաղիկ ավելցնեմ,
Այլ դառն հեծության հառաչանքներով
Էդ անդընդախոր ձորերըդ լըցնեմ։

Ձորե՛ր, ա՛յ ձորեր, սև, լայնաբերան,
Սըրտիս էս խորունկ վերքերի նըման.
Աստծու հարվածի հետքերն եք դուք էլ,
Ձեզ մոտ եմ գալիս, ուզում եմ երգել։

Դուք էլ խոսեցե՛ք, դուք էլ պատմեցե՛ք,
Ձեր անդունդներով եկեք չափվեցե՛ք,
Դուք ի՛լ եք, տեսնեմ, էնքան մեծ ու խոր,
Ինչքան իմ հոգու թախիծն ահավոր...

* * *

Հոգուս հատոր
Սրտիս կըտոր,
Դասիս համար
Դու մի հոգար,
Թե կան դասեր
Կա նաև սեր,
Եվ ինչ զարմանք,
Իմ ազավնյակ,
Որ կենդանի
Մի պատանի
Սերը սրտում
Դաս է սերտում:

ԱՂՈՒՔ

Սողոմոնի պես, տեր,
Ես խելք չեմ ուզում,
Ինձ երկար օրեր
Եվ փող տուր բազում։

Մի ձեռք էլ շոր,
Միայն մոդնի, տեր,
Մին էլ մի հաստ փոր,
Տրոստ, ակնոցներ։

Եվ բավական է,
Դու վերեն դիտե,
Թե ինչեր կանե,
Այդ ծառադ գիտե...

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Արի՛, գութան, վարի՛, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Ահա շուտ տուր, խոփիդ զուրբան,
Օրհնյալ է Աստված, հորովե՛լ:

Քաշի՛, եզը, ուսիդ մատաղ,
Քաշի՛, քաշենք, վար անենք.
Ճիպաին ա՛րա, քըշի՛, հոտաղ,
Մեր սև օրին ճար անենք:

Պարտքատերը գանգատ գընաց,
Քյոխվեն կըգա, կըծեծի,
Տերտերն օրհնեց, անվարձ մընաց,
Կըրարկանա, կանիծի:

Էն օրն եկան Թովջի արին,
Հարկ են ուզում տերությյան.
Ինչ տամ կոռին ու բեգյառին...
Վարի՛, վարի՛, իմ գութան:

Զևըս պակաս, ուժըս հատած,
Հազար ու մի ցավի տեր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ:

Արի՛, գութան, վարի՛, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Ահը շո՛ւտ տուր, խոփիդ զուրբան,
Օրհնյա՛լ է Աստված, հորովե՛լ:

ԱՄԱՌՎԱ ԳԻՇԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Լուսընկա գիշեր,
Երկինքը պայծառ,
Անհամար աստղեր
Յոլցլում են վառ։

Քընած է արդեն
Հովտի մեջ գյուղը,
Մըթնած ու լուռ է
Գյուղացու հյուղը։

Հոգնած գյուղական
Ընտանիքն ահա
Սրահում, կալում,
Կամ կըտրի վրա։

Երկընքի դիմաց
Գրկված են քընած,
Վերևիցն, ասես,
Ժըպտում է Աստված։

Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ,
Իրենց հասակի կարգով ծալապատակ,
Միասին բազմած,
Մի շըրջան կազմած,
Քեֆ էին անում
Եվ ուրախանում
Մեր հրեակա պապերն ու մեր հայրերը՝
Դյուղի տերերը:

Մենք, առույգ ու ժիր գեղջուկ մանուկներ,
Երեք դասընկեր,
Նրանց առաջին գըլխաբաց կանգնած,
Ձեռքներըս խոնարհ սըրտներիս դըրած,
Ջիր, ուժեղ ձայնով նըրանց ըսպասում –
Տաղ էինք ասում:

Երբ զրվարթաձայն մեր երգը լըռեց,
Մրոտյալ Թամադեն բեխերն ոլորեց,
Նըրա հետ վերցրին լիք բաժակները
Բոլոր մեծերը
Ու մեզ օրհնեցին. – «Ապրե՛ք, երեխե՛ք,
Բայց մեզ պես չապրե՛ք...»

Ժամանակ անցավ, նըրանք էլ անցան,
Զըվարթ երգերըս վըշտալի դարձան.
Եվ ես հիշեցի մեր օրը լալիս,
Թե մեզ օրհնելիս
Ինչու ասացին. – «Ապրե՛ք, երեխե՛ք,
Բայց մեզ պես չապրե՛ք...»

Խաղաղությո՛ւն ձեզ, մեր անբա՛խտ պապեր,
Ձեզ տանջող ցավը մե՛զ էլ է պատել։
Այժըմ, տըխրության թե քեֆի ժամին,
Մենք էլ՝ օրհնելիս մեր զավակներին՝
Ձեր խոսքն ենք ասում. – «Ապրե՛ք, երեխե՛ք,
Բայց մեզ պես չապրեք...»

1888

ՆԱՀԱՏԱԿ

I

Փարթամ Կովկասի պարզ երկնքի տակ,
Երկնարերձ լեռան գահավայրի կրծքին,
Հանդչում է վաղուց մի սուրբ նահատակ,
Կուսական և թաւ ծմակի միջին:

Քանդված է մատուռն, քարերը ցրված,
Եվ ավերակի վերա սպառած,
Կանաչ բաղեղով խստապինդ գրկված
Նիրհում էր ուռին ճյուղերը փռած:

Հոնարհված էր խաչն յուր պատվանդանից
Եվ բնկած հեռու սուրբ ավերակից,
Իսկ գերեզմանը մեծ նահատակի
Մամռոտ նայում էր խաշամի տակից:

Գիշերներն այնտեղ կանթեղ չէր վառվում,
Այցելում էին նրան երեները,
Եվ միշտ հանգստյան երգ էր հորինում
Քամին, շարժելով լայն տերևները:

II

Այդ լուռ ու խաղաղ վայրում մենացած,
Երկար ժամանակ Աստուծո մարդու
Անշուք շիրիմը մարդկանցից մնաց
Անհայտ և անզարդ, առանց այցելու:

Մինչև որ մի օր Աստուծո հրամանով,
Երազ եկավ մի արդար մարդու մոտ,-
Թե այս ինչ տեղը թաղված է մի սուրբ,
Յավերով լիքը երկրին անծանոթ:

Այսպիսի հրաշքով նա հայտնվեցավ
Մարդկային ազգի փրկութեյան համար,
Եվ հռչակավոր ուխտատեղ դարձավ,
Բարձրացավ խորան գեղեցկակամար:

III

Նա անտրտունջ, ասում է հին բանը,
Ինչպես քրիստոնյա բարեպաշտ և քաջ,
Պահելով Տիրոջ սուրբ պատվիրանը,
Գլուխը թեքեց թշնամու առաջ:

Եվ արդար մարդիկ տեսել են աչքով,
Ասում է նույնպես ավանդութեյունը,
Որ լույս է իջել երկնային հրաշքով
Եվ բժշկում է հիվանդութեյունը:

Հաճախ բերանովն արժանավորի
Հայտնել է երկրին Աստըծո կամքը,
Եվ ժողովուրդը գլխովին տեղի
Ջոնում է նրան իրան հարգանքը:

Բայց և շատ անգամ յուր զորութեյունը
Նա ցույց է տվել մի պատժով արդար,
Քանդելով մեկի ողջ տեղ ու տունը,
Մարդկանցն անհայտ մեղքերի համար:

Նա է մեղավորին տալիս պատիժը,
Արժանավորին ուզած բարիքը.
Նա է սահմանում, գործքին համեմատ,
Մահկանացուի գլխի գալիքը:

Ահա թե ինչու հայ ժողովուրդը,
Խաչ կամ նահատակ անունը տալով,
Ջուր է համարում մարդկային չանքը,-
Նրա մեծ գործի վերա հուսալով:

Կամ երբ որ տերտերն յուր տուփը ձեռքին
Հայտնվում է նրան կրկին և կրկին,
Առատ շահելով, հանուն սուրբ խաչին,
Նա հավատում է թե՝ փրկեց հոգին:

IV

Անցնում է անցվոր այն մատրան մոտից
Երկյուղածությամբ և խաչակնքում,
Զարատանչ օրով դառնացած սրտից
Այսպես լիասիրտ աղոթում մտքում.-

«Ո՛վ սուրբ Նահատակ, գլխովդ պտույտ գամ,
Դուն հասցնես ինձ ապրուստ օրական,
Քո մեծ գործովդ, անգութ, անզգամ
Թշնամուս ջնջես և առնես կոխան»:

* * *

Հայոց ժողովուրդն ահա խռնված
Հետևում է յուր ծերուկ տերտերին՝
Խաչից խնդրելու, որ բռնված

Երկինքը խնայե իրան արտերին։
Թե մի վարակիչ ցավ է տարածված,
Մարախն ուտում է գյուղացու ցանը,
Այս «երկնառաք պատուհասի» դեմ
«Օրհնած հողն» է միակ դարմանը։

* * *

Արևը կրակ է թափում վերից.
Հայուհին ընկած խաչի առաջին,
Արյուն արցունք է չափում աչերից,
Օգնություն հայցում, – հիվանդ է որդին։

Եվ զարդարում է ջերմեռանդ սրտով
Ծառի ճյուղերը յուր կտրած մազով.
Ուխտում է երկար պաս ու ծոմ պահել,
Ինչպես ազդել է խաչը երազով։

* * *

Ահա մի ծեր կին մաղախն ուսին,
Որդի չի ծնում մանկատի հարսին,
Պիտի յոթն գյուղ «խաչի սեր» ման գա,–
Ամուլ արգանդին խաչը պտուղ տա։

Տատի ետևից քողը երեսին,
Ոտքերը բոբիկ, կուչ ու հուպ գալով
Գնում է հարսը գրավը ձեռքին,
Իրավ չըգործած մեղքերը լալով։

* * *

Ահա ուխտավորն ահով ու դողով
Խմբված լսում է պատգամավորին*,
Որ պատմում է, իրան ծեծելով,
Ինչ է կատեցել երկինքը որին:

Սրան մուրազը, նրան աշխարանք,
Կամ պահանջում է գոհեր ծանրագին.
Մյուսին ցեղե-ցեղ նզովք, բանադրանք,
Որ հայհոյել է յուր ընկնավորին:

V

Փարթամ Կովկասի պարզ երկնքի տակ,
Ուր չոր քարն էլ է ծլում, կանաչում,
Տեղացու սիրտը միաժամանակ
Մի պաղտնի երկյուղ հալում է, մաշում:

Նա իրան ուժին դեռ չէ հավատում,
Նա դեռ իրանից դուրս է որոնում
Բարօրութիւնն յուր չարքաշ կյանքի
Եվ գոհացումն հասած զրկանքի:

---

*Պատգամավոր կամ ընկնավոր, շատ տեղ «նզավոդ» են ասում, որովհետև դեռ Դելֆի պատգամախոսի նման ուշաբարձվում է, ապա փրփրած, իրան ծեծելով հայտնում «ազային» – խաչի կամքը: (Այս ծանոթագրության մի մասը պահպանվել է նաև ինքնագրում-խմբ.):

* * *

Երանություն էր խոստացել հույսս ինձ,
Բայց ես չըգտա նրան կյանքի մեջ,
Եվ քաջալերված պատիր խոստմունքից,
Կյանքի դեմ իզուր վարեցի ես վեճ։

Կարծում էի, թե մարդիկ անհամբեր
Ուրախությամբ ինձ սպասում էին,
Եվ ամեն քայլում խղճմտանք ու սեր
Մարդոց սրտերը միշտ հուզում էին։

Կարճատե՛ց նորք, որ անցար արագ,
Ինչպես մի քամի, առավել չընչին,
Եվ ահա ընկած իբրև մի նավակ,
Որ կամեր լողալ ավազի միջին։

Դուն անցար, այո՛, դարձյալ աշխարհը
Կառավարվում է յուր օրենքներով,
Եվ դիմակ առած մեծ բարերարը
Մարդիկ է սպանում գաղտնի զենքերով։

Մահացու ախտով վարակվածն ահա
Անարատության հագած վերարկու,
Եվ խավարասեր ամբոխը նրա
Ջազիր գործերին կանգնած խնկարկու.

Եվ հազարավոր անմեղ հոգիներ
Հալածված են չար կրքերից անսանձ,
Եվ, ի նախատինս բանականության,
Արդար է միայն զորեղը մարդկանց։

Ահա դեռնաքարշ և չարախնդում
Խումբերըն անսիրտ մարդ-հրեշների
Վխտում են անվախ՝ հրապարակներում,
Իբրև առաջնորդ մարդոց մտքերի:

Ահա, խնդության ձայներ են թնդում,
Իբրև արձագանք չարության խոսքի,
Ինչ են կամենում, էլ ինչ են խնդրում
Պատուհասները մարդկային ազգի:

– Ինչ եք կամենում դուք, մարդիկ ատոր,
Մա՞հր, կործանո՞ւմն արժանավորի.
Եվ այդ բոլորը միայն մի կատր
Հացի համար. սակայն, ո՛վ գիտի,

Գուցե խավարը ձեզ տվեց պաշտոն
Բանականության բռնավորների,
Եվ դուք, անմիտներ, ամբողջ մարդկության:
Ձեզ հավիտենական կարծում եք գերի:

Նեղճե՛ր, նայեցե՛ք, ահա ձեր դիմաց,
Առանց նայելու ձեր կատր հացին,
Բանականության զավակը կանգնած,
Սպասում է նա մոտ լուսաբացին:

Երանություն էր խոստացել հույսս ինձ.
Սակայն չըգտա նրան կյանքի մեջ.
Բայց չեմ վհատել. անսպառ մեկ իղձ
Դեռ ինձ մղում է դեպ հառաջ անվերջ:

Հառա՛ջ, կռվելով, և կըգա մի օր,
Որ կընկնի ներկան վատշվեր, դաժան,
Նրա ավերի վերա փառավոր
Ապագան լուսո կըկանգնի նշան:

ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԸ

Հեռո՛ւ, ո՛վ սուրբ խաղաղություն,
Մենք քեզ համար չունենք անկյուն
Մեր հալածված հայրենիքում
Եվ մեր ցաված սրտի խորքում։

Գնա դեպի այն լեռները,
Ուր որ հովիվն ու գառները
Ապահով են պատառողից,
Մենք ազատ չենք ահ ու դողից։

Գնա՛, հանգիր այն դաշտերում,
Ուր որ իրար էլ չեն տիրում
Եղբայր-մարդիկ, և հերկելով
Քեզ օրհնում են սուրբ երգերով։

Գնա դեպի երանավետ
Այն վայրերը, ուր կյանքի հետ
Խաղ չեն անում զվարճության
Կամ հեշտության համար միայն։

Իսկ մենք ցավով լեցուն սրտով
Անկարող ենք միշտ անվրդով
Եվ քուրդերի լուծը տանել,
Եվ քեզ օրհնել, փառաբանել։

Հեռո՛ւ, ո՛վ սուրբ խաղաղություն,
Մենք քեզ, իբրև մի լոկ անուն,
Երանությամբ միշտ հիշելով
Պիտի կռվենք մեռցնող սրով։

* * *

Ինչ ես կատարել անմեղ արարքից,
Միամիտ ամբոխ, ես ինչ արեցի.
Ուզում ես անհնար քշել աշխարքից,
Որ ես իմ պարտքը միայն կատարեցի:

Արժանավորի առաջ խոնարհած
Ես պատարագ եմ մատուցանում,
Եվ չար նախանձից ահա կուրացած
Դուն ինձ քարկոծել ես ցանկանում:

Հապա քո ասածը որտեղ է բնակվում,
Այնտեղ արդյոք, ուր դուն էլ չըգիտես,
Նա՞ է որ միայն սարսափ է գարկում,
Այդպիսի աստված ով քարոզեց քեզ:

Միամիտ ամբոխ, մոլորված ես դուն,
Ես անպիտույքամբ կուռք չըպաշտեցի.
Ես այն մարդու մեջ տեսա Աստծուն,
Ահա ՅԻ ինչու երկրպագեցի:

* * *

Ես նայում եմ. իմ առջև
Ահա տիրոջ աշխարքը.
Բերրի դաշտերը մինչև
Հեռու լերանց այն շարքը:

Լայնարձակ, դալարագեղ
Տարածվում են և կորչում
Մշուշի մեջ, իսկ այնտեղ
Ճոխ անտառն է կանաչում:

Ուր որ ազատ շրջելով
Ապրում են երե, գազան,
Եվ թռչունքը ճախրելով
Երգ են ասում գոհութ֊յան:

Ահա, շքեղ դաշտի միջով
Գալարվում է և անցնում
Հանդարտ գետը մրմունջով.
Հեռո՛ւ, հեռու է գնում:

Նրա դալար ափերում
Մինը հազար է բերում.
Սակայն ահա, մյուս կողմում
Կապույտ ծովն է մեղմ ծփում:

Ինչքա՜ն ճոխ է, հրաշալի
Այս աշխարհը լայն, արձակ,
Ամեն մի շունչ աչքը լի
Կապրի այստեղ համարձակ:

Ես նայում եմ, և մի միտք
Հղանում է ինձանում.
Ինչո՞ւ համար են մարդիկ
Իրար զրկում, սպանում:

Երբ որ գարշելով տեսնում եմ շուրջս
Մոլեգնած կյանքի պատկերը ցավոտ,
Հաճախ, մանկություն, խոսված հոգուս
Ներկայանում ես ինչպես առավոտ:

Եվ մանկան նման արտասվում եմ ես,
Երբ այս օրերում, չարությամբ լցված,
Քնդ, սուրբ մանկություն, հիշում եմ ինչպես
Երազի տեսիլք անհետ չքացած:

Ինչպես արևի ճաճանչը վերջին
Թռչում է հանկարծ, սիրում է խավար,
Այնպես շողացիր և անցար կրկին,
Մնացի անզոր, ցոփ կյանքին ավար:

Թե հնար լիներ մի անգամ դարձյալ
Դառնալ քո վիրկը... ա՛խ, ինչ եմ ասում,
Այդ անհնար է.– արդեն հանդերձյալ
Կյանքի ճամփան է իմ առջև բացվում:

Բայց մինչև այնտեղ, սոսկալի՛ ուղի,
Ահա րոնություն, պատիվ անարգած,
Ահա դառաչանք, արտասուք աղի,
Ահա սև նախանձ և սեր սակարկած...

Կմնանեմ և ես այս ցավերի տակ
Ինձ հետ տանելով շատ իղձ ու փափագ,
Իսկ այս աշխարհից և ոչ մի պսակ –
Միայն քո անմեղ, քո սուրբ հիշատակ:

Մի տխրատեսիլ գուցե գերեզման
Անցվորականից խնդրե մի բերան
Ողորմի ասել... ո՞վ գիտե, և այն
Կլինի՞ արդյոք, կընայե՞ն նորան...

* * *

Ների՛ր, ո՛վ կույս, որ հուզեցի
Խաղաղ կուրծքդ կուսական,
Մեղսոտ սրտով ես չուզեցի
Կործանել քո ապագան։

Այն մի անմեղ խաղ էր, հոգի՛ս,
Պատանեկան հասակի,
Որ անցնելով պատճառ դարձավ
Քո աչքերիդ արցունքի։

Ես գուշակել չըկարացի
Կյանքի վճիռն անարդար,
Անգիտությամբ ես հարուցի
Այդ փոթորիկն անդադար։

Ների՛ր, ո՛վ կույս, բուռն եռմունքին
Պատանեկան կրքերի,
Ների՛ր, հոգիս, որ մատնեցին
Քնքուշ սիրտդ վշտերի։

ԿԱԼԻ ԵՐԳ

(Լոռեցոնց)

Կալ արա, գնանք,
Մ եզը ջան.
Հորովել,
Հո՛ րո՛ վելա՛:

Արի՛, ման արա,
Այ քեզ մեռնեմ,
Գարման արա,
Ղադեղ առնեմ:

Ոսիդ արա,
Ոսիդ ղուրբան,
Ուսիդ արա,
Այ ախպեր ջան:

Էլել ա, էլել,
Կալն էլել ա,
Հարել ես, հալել,
Հորովելա:

* * *

Երբ ես տխուր, հուսահատ,
Ինձ կորած եմ համարում,
Շուրջս մեռած, անապատ,
Սրտիս երկյուղ է տիրում։

Մահու ձայնը դառնալուր
Հասանում է ականջիս,
Մարդիկ մնում անհամբույր
Եվ խլանում են կանչիս։

Մի զորություն հզորեղ
Ինձ հուսադրում է հանկարծ.
Եվ զգում եմ, ամեն տեղ
Դուն ինձ հետ ես, Աստված։

* * *

Ա՛խ, երանի թե լիներ մի հնար –
Այդ ժպիտը միշտ քո դեմքին մնար.
Ես վախենում եմ մի ժամից հետո
Անցնի խնջույքը, և կյանքից դժգոհ
Մտածմունքներով դարձյալ դու տխրես...
Ա՛խ, երանի թե մնայիր այդպես...

1890

* * *

Այդ ինչ սրտամաշ տխրություն է քեզ
Պատել, հայրենի գեղեցիկ աշխարհ.
Մինչև ե՞րբ պիտի չարչարվես այդպես
Տառապանքներով, առանց մխիթար...

Իմ հայրենիքս տխուր է, տխուր...
Ուր աչք եմ դարձնում՝ տխուր ավերակ,
Ամեն տեղ միայն, միայն ցավալուր
Հեծության ձայներ, երկչոտ աղաղակ:

Թե երկրագործն է հորովել կանչում,
Թե մայրը որդուն օրորք է ասում,
Թե հովիվն իրան սրինգը հնչում,
Մի հուսակտուր հառաչք եմ լսում:

Աշխարհից, մարդուց հույսերը կտրած
Գանգատվում է նա, և ցավից տնքում,
Կյանքիցը զզված, սակայն դեռ չապրած,
Հանգիստ է խնդրում հեռո՛ւ, երկնքում...

Մի՞թե տրտմության թախիծըն այդպես
Խեղդեց նրա մեջ ապրելու հույսը.
Մի՞թե այլևս նա չէ երգելու
Իրան պապերի երգած խրախույսը:

Մինչև երբ պիտի մարդիկ կատաղի
Արցունքովն հայի կերածը թրջեն,
Եվ երկար պիտի մեռելաթաղի
Տաղերով ագահ ցերբերներ շրջեն...

Մինթե դեռևս անսիրտ հագարը
Այն ավերակաց վերա պիտ իշխե,
Անարգե, պղծե մեր սուրբ տաճարը,
Անարժաններին շնորհներ բաշխե...

Եվ չարագուշակ մտքերով հուզված
Քաշվում, մտնում եմ մի խաղաղ անկյուն.
Եվ երկար անշարժ ու խորասուզված
Հածում եմ նրա ցավերում անհուն:

Ավելի խորը, ավելի հեռու
Միտքս ինձ առնում, թռցնում, տանում է.
Թռչում է հանկարծ մի ծանր հառաչանք
Եվ սիրտս կարծես հանգստանում է:

* * *

Եթե իմ վերջին հայացքը մնա
Քո դեմքիդ վերա տխուր, վշտահար,
Տեսնեմ արտասուքդ ու սիրտս իմանա,
Որ սրտանց ես դու կոծում ինձ համար,

Եթե գիտենամ, իրավ պիտի դու
Ինձանից հետո ցավես իմ մահով,–
Երդվում եմ սիրով, առանց ցավելու
Կըմեռնեմ ես այդ հուսով ապահով:

Եվ երբ կըլսեմ իմ գերեզմանից
Ու կըճանաչեմ քո հեկեկանքը,
Կըմխիթարվիմ, որ սիրում ես ինձ,
Որ քաղցրը էր քեզ համար իմ կյանքը:

* * *

Պանդուխտն երգեց օտար երկրում
Եվ սրտաբեկ հոգոց քաշեց,
Երբ որ տխուր յուր երգերում
Անցած ուրախ օրերն հիշեց:
Մարմնով տկար, հոգով տխուր
Շուրջը նայեց մեկը չըկար,
Որ տար գեթ մի բաժակ ցուրտ ջուր,–
Ողբաց պանդուխտն անմխիթար:

Եվ նա խնդրեց անժամանակ
Հանգստության լուռ գերեզման,
Անհույս երգեց վերջին նվագ –
«Արի՛, չարքաշ կյանքիս վախճան.

Էլ ույժ չըկա, բարյավ մնաք,
Դուք սև օրեր պանդխտության,
Դո՛ւն, հայրական հեռու տնակ,
Եվ երազներ պատանեկան:

Իսկ դուն արի՛, քաղցր հիշատակ,
Կորցրած սիրո, վայելչության,
Արի ինձ հետ իբրև սփոփանք
Գերեզմանիս լուռ տխրության»:

Մեռավ պանդուխտն, բարյավ մնաք...
Գիտեք, որքան ձեզնից թաքուն
Խեղճը հեծեց, ողբաց մենակ...
Գեթ ողորմի տվեք հոգուն:

* * *

Մի՛ որոնիր մի ժամանակ
Արհամարհածդ՝ այս կըրծքի տակ,
Հառաչանքով դուրս թռավ նա,
Ու դատարկ է տեղը հիմա...

Էլ մի՛ կանչիր, մի՛ լար իզուր.
Քո արցունքից միայն տըխուր
Հին-հին հուշեր պիտի զարթեն,
Եվ ինչ օգուտ... ուշ է արդեն...

* * *

Շատերի նման նա էլ խեղդվեցավ.
Փոքրոգությունն եք պարսավում նրա:
Լռեցե՛ք, եղբայր, ի՞նչ գիտեք, ինչ ցավ
Առաջնորդեց այն մարդուն դեպի մահ:

Տեսե՛ք, այս խեղճը տխուր, գլխակոր,
Մոլոր շրջում է սգավորի նման.
Բայց նրա մասին մի՛ դատեք, երբ որ
Չգիտեք ինչն է կորացրել նրան:

Ահա, վարում են մյուսին պատժարան.
Օ՛, մի՛ անվանեք նրան չարագործ:
Ինչ գիտեք, գուցե մի միտք երկնարժան
Այս օրին մատնեց այդ մարդուն անփորձ:

Եվ դուք ինչ գիտեք, թե երգիչն ուրախ,
Որ ձեզ համար միշտ երգեր է երգում,
Քարասիրտ մարդկանց ծաղրանքից ծածկած
Ինչ ցավեր ունի յուր սրտի խորքում:

Ո՞րն է դրախտը,– վայրն երանավետ,
Ուր պիտի ապրեմ գերեզմանից ետ.
Մի՞թե մարդկային տառապած կյանքը
Ջըստեղծեց այն սուտ մխիթարանքը.
Եվ մի՞թե նորա մահից սարսափած
Ագահությունը չէ իրան խաբած...
Սակայն բարի է.– մի տանջված արդար,
Կամ իրան արդար համարող մի չար
Երկրային կյանքի վերջին վայրկյանին
Հանգիստ ու խաղաղ կավանդե հոգին,
Համաձայն իրան ճաշակի, կամքի,
Վայելքն հիշելով խոստացյալ կյանքի.
Եվ ահա միակ, բայց մեծ օգուտը,
Որ մարդկությանը տվեց այս սուտը:
Ա՛յս է մեր կյանքը.– լոկ խաբեություն.
Ոհ, մի՞թե և ես, ինչպես մի հնչյուն,
Այս իմ հույսերիս, ձգտումներիս հետ
Պիտի մեռանիմ, չքանամ անհետ...
Ջէ՛, սիրելի է խոստումն երկնքի –
Հույսն հավերժական, անվախճան կյանքի.
Հեռո՛ւ ինձանից հոգեմաշ կասկած,
Ողջույն քեզ, ողջո՛ւյն, ո՛վ կյանքի Աստված.
Արի՛, հայտնվի՛ր, նշկահիր մահու
Տարակուսանաց տագնապն ահարկու
Եվ կույր հավատով զորացրու հոգիս –
Անմահություն տուր լքացած կյանքիս...
Բայց ի՞նչպես պիտի կյանք առնեմ կրկին,
Արդյոք լուսակազմ, աննյութ, անմարմին
Պիտի սավառնեմ անծայր եթերքում,
Թե՞ իբրև մի հունչ շրջեմ աշխարքում,

Թէ անփույթ, անգործ թափառեմ պիտի
Մարդոց աչքերին անտեսանելի,
Թէ ամպերի մեջ պիտի ես հանգչեմ
Եվ ոտքիս տակից կայծակներ իջնեն...
Օ՜, նևրիր, Աստված՝ ծածկագետ, անհուն,
Նևրիր մեծամիտ, գոռոզ պատանուն.
Անհշան ճճիս չարաչար մեղա,–
Հանդուգն խորհրդով խորամուխ եղա,
Զգտեցի պարզել քո աստվածային
Անհասանելի, անմեկին գաղտնին:

ՄԱՐԳԱՐԵ

Երբ որ վեհության կնիքը ճակատին
Եվ ճշմարտության սուրբ պատգամներով
Նա հայտնվեցավ մոլար աշխարքին
Եվ դարձ քարոզեց հրաթափ լեզվով,

Նրա աստվածային ձայնից սարսափած
Գիշերատեսիլ մարդիկ հուզվեցին,
Իրանց սեղանից վեր կացան հարբած,
Մոլեգնության մեջ աղաղակեցին.

– Ո՞վ ես դուն, արի՛, այս մեր հանցավոր
Ուրախության մասնակից եղիր,
Կամ թո՛ղ վայելենք մեր կյանքն անցավոր,
Թե չէ՝ խիստ պատժի քարերից փախիր:

Սակայն անվհատ նա հառաջ գնաց
Անուշադիր յուր անձի վնասին,
Մոլորության ներելով մարդկանց՝
Հոգ տարավ նրանց փրկության մասին:

Եվ երբ որ լուսո նա ջահը ձեռքին
Մոտեցավ կորստյան փոսի եզերքին,
Ապերախտ ձեռքով ամբոխը խավար
Ջարկեց, խորտակեց ջահը փրկարար:

Ժամանակ անցավ. թշվառ ամբոխին
Արդեն փորձանքը վրա էր հասած,
Երբ ուշքի եկավ, վայ տվեց գլխին.–
«Նա մարգարե էր, նա իրավ ասաց»:

Alá Նադսոն
ՊՈԵՏԻՆ

Թաքցրու, պոետ, վշտերդ ամբարված

Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում
Ու իմ սիրտը իմ մըտքի հետ անհուններն է թափառում,
Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝
Մրդկըտում է սիրտըս անվերջ քո թառանչից աղեկեզ,
Ու պաղթական զավակներիդ լուռ շարքերից ուժասպառ,
Ցավ գյուղերից, և՛ շեներից՝ տրխո՛ւր, դատարկ ու խավար,

Ջարկվա՛ծ հայրենիք,
Ջըրկվա՛ծ հայրենիք:

Խըռնըվում են մըտքիս հանդեպ բանակները անհամար,
Տըրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,
Ու ջարդարար ոհմակները աղաղակով վայրենի,
Ավարներով, ավերներով, խընջույքներով արյունի,
Որ դարձըրին քեզ մըշտական սև ու սուգի մի հովիտ,
Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անժըպիտ,
Ողբի՛ հայրենիք,
Որբի՛ հայրենիք:

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհո՛ւն, խորհըրդավոր ճամփին նորի ու հընի.
Հառաչանքով սըրտի խորքից խոսք ես խոսում Աստծու հետ

Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում
չարաղետ,
խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհքին
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձրգտում է մեր հոգին –
Հույսի՛ հայրենիք,
Լույսի՛ հայրենիք:

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հազա՛ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
կենսաժըպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՛ր հայրենիք,
Հըզո՛ր հայրենիք...

«ՁԵՌԱՑ»

Արդո պարոններ, հայրեր սրբազան,
Վաղուց ենք կռվել ես ու իմ մուսան,
Նրանից հետո էլ չեմ կարող ես
Սահուն ու ձեռաց հորինել էնպես:

Արդո պարոններ, հայրեր սրբազան,
Վաղուց ենք ջոկվել ես ու իմ մուսան,
Ես եկա դեպի աղմուկներն անվերջ,
Քևֆեր ու ճառեր, ժողովներ ու վեճ,
Դարձա թամադա ու քաղաքագետ...
Իսկ նա ինձանից հեռացավ անհետ...
Ասում են, իբրև, թափառում է նա
Բյուրականյան ծաղկոտ սարերի վրա.
Ու չի մոռացել, դեռ հիշում է ինձ,
Տանջվում է, մաշվում սիրուց, կարոտից:

Բայց ճամփաները շատ են արյունոտ,
Չի կարողանում ետ դառնա ինձ մոտ:
Երբ ճամփաները դիակների տեղ
Բուրյան ծաղիկներ կփռեն շքեղ,
Երբ էլ գաղթական չի լինիլ քաղցած
Երբ խոսք ու ժողով կըլինեն բաց-բաց,
Ողջի հետ հայն էլ կապրի ինքնուրեն
Ու կպահանջի, որ երգեր գրեն,-
Նա ետ կդառնա նոր աշխույժ առած,
Ես էլ էն օրը կգրեմ «ձեռաց»:

Եփրատի ափին դեմուդեմ եկած՝
Զարկվում էին խիստ, զարկվում ու զարկում
Աննահանջ ու քաջ խըմբերը հայի
Եվ քուրդն ու թուրքը կիտված արենխում։
Երբ որ հոգնեցին երկար զարկվելուց,
Երբ որ հոգնեցին բազուկները կուռ,
– «Հե՛յ, ընկե՛ր, ասավ խըմբապետն արի,
Հե՛յ, ընկե՛ր, ասավ, բարձրացի՛ր շուտով,
Բարձրացի՛ր Հայոց բարձըր լեռների
Ամենից բարձըր գագաթն ու նայի՛ր,
Որտե՞ղ է, մի տե՛ս, վերջը թըշնամու...»
Բարձրացավ ջըլուտ հայդուկը հայի,
Բարձրացավ բարձըր գագաթը լեռան
Ու հոգնած ձեռքը դըրեց ճակատին.
– «Խըմբապե՛տ, ասավ, ընկեր խըմբապետ,
Տեսնում եմ հեռու հորիզոնները մութ
Եփրատի դալար հովիտներն ի վար՝
Մինչև Տավրոսի լեռները կապուտ,
Մինչև մըշուշոտ պարը Պոնտոսի,
Մինչև բարձրաբերձ ժայռերը Մոկաց...
Ծուխ է բարձրանում Մուշի հովիտից,
Ծուխ է բարձրանում Սասմա սարերից,
Ծուխ է բարձրանում Վանա կողմերից,
Ծուխ է բարձրանում Աբաղա դաշտից,
Կըրակ է կանգնած Ջեյթունի վըրա...
Ամեն կողմերից թըշնամին գունդ-գունդ
Շարժվում է մեր դեմ, ու չի երևում,
Չեմ տեսնում վերջը նըրա շարքերի...»
– «Հե՛յ, ընկե՛ր, ասավ խըմբապետն այնժամ,
Հե՛յ, ընկե՛ր, ասավ, ետ նայի՛ր հապա,

Եա նայիր, մի տես, հայերը հեռվից
Չե՞ն գալիս արդյոք մեզի օգնության...»
Ու հոգնած ձեռքը դըրեց ճակատին,
Կըտրիճ հայդուկը նայեց դեպի ետ.
– «Խըմբապե՛տ, ասավ, ընկեր խըմբապետ,
Տեսնում եմ ահա, ինչպես ափիս մեջ,
Սև ծովից մինչև ծովը Վըրկանա,
Մինչև Կովկասի պատնեշը ձյունոտ.
Գալիս են խումբ-խումբ հայերը ճեպով,
Գալիս են ճեպով մեզի օգնության:
Իջնում են Սյունյաց մութ-մութ սարերից,
Եջնում Գուգարքի խոր-խոր ձորերից,
Շիրակի դաշտից մինչև Այրարատ,
Ու ողջ ափերը Անուշ Արաքսի
Անվերջ տագնապով իրար են անցնում...
Գալիս են ամեն կողմից Կովկասի,
Գալիս են հեռո՛ւ, հեռու կողմերից,
Գալիս են կարոտ պանդուխտներն ամեն,
Գալիս են ցըրված տըղերքը նորից,
Գալիս են՝ պարզած դըրոշն հայրենի...»
– «Հե՛յ, ընկե՛ր, ասավ խըմբապետը փորձ,
Հե՛յ, ընկե՛ր, ասավ, սուր աչք ունիս դու,
Նայիր դեպ հյուսիս, ավելի հեռու,
Չի՞ շարժվում արդյոք հյուսիսը հըզոր...»
Ու նայեց հայդուկն ավելի հեռու,
Նայեց սըրատես աչքով արծվենի:
– «Խըմբապե՛տ, ասավ, ընկեր խըմբապետ,
Աչքըս չի կըտրում որտեղից մինչ ուր՝
Շարժվում է, ահա, հյուսիսն ընդհանուր.
Հորձանք է տալիս ծովն ըռուսական,
Հորձանք է տալիս ծանր ու ահավոր,
Դեպի ամեն կողմ – ափերն հեռավոր.

Եվ, հուր ու շոգի շընչելով ուժգին,
Գընացքը կըտրած գընացքի ետև,
Ու, գալարվելով հովիտից հովիտ,
Գալիս են, ինչպես վիշապներ սև-սև...»
– «Հե՛յ, ընկե՛ր, կանչեց խըմբապետն արի,
Հե՛յ, ընկե՛ր, կանչեց, դե՛ ցած եկ արագ,
Աո հըրացանըդ, դաշտն իջիր շուտով,
Իջի՛ր Սըրբազան ափը եփրատի.
Հին պատերազմի վերջին զարկն է սա,
Հին ոճրագործի հոգեվարքն է սա...»
– «Խըմբապե՛տ, կանչեց, ընկեր խըմբապետ,
Խըմբապե՛տ, կանչեց հայդուկը ջահել,
Հայոց երկնահաս լեռների վըրա
Խո՛ր, խորհրդավոր ձայներ են լսվում.
Դըղըրդում է խուլ երկինքը վերից
Էն անհուն, անքուն, անթիվ ձայներից...»
– «Հե՛յ, ընկե՛ր, կանչեց խըմբապետը հիմն,
Հե՛յ, ընկե՛ր, կանչեց, խաչ հա՛ն երեսիդ.
Էդ կյանքում տանջված, տանջանքով մեռած
Անթիվ, անհամար, անբախտ հայերի
Հոգիներն են հեգ, որ լաց ու կոծով,
Արյան մըրրիկով երկինք վերացան:
Փոթորկում են դեռ Աստծու առաջին,
Բողոքում անհուն երկրնքովը մին.
Նըրանց բողոքի աղմուկն է անլուռ,
Հասնում է ներքև՝ հայի ականջին...
Հե՛յ, ընկե՛ր, ասավ, խաչ հա՛ն երեսիդ,
Աո հըրացանըդ, դաշտն իջիր շուտով,
Իջի՛ր Սըրբազան ափը եփրատի,–
Մեծ տառապանքի վերջին օրն է սա...»

* * *

Շուռ է գալիս ծանր քարը
Մեր մոր կրծքից տենչավառ,
Վեր է կենում մեր աշխարհը
Ավերներից անհամար...
– Հեյ, ջան տղերք, ուս տվեք, ո՛ւս,
Միահամուռ, միաբան,
Հեյ, ջան տղերք, ուժ տվեք, ո՛ւժ,
Քարը մոտ է գլորման:

Մարիկ տվեք՝ ինչ վեհ պատկեր
Մեծ հիացման արժանի,
Էսքան դարեր նա քարի տակ
Դեռ շընչում է կենդանի.
Ու աչքերը, թեև լացոտ,
Լիքն են կյանքով ու հույսով,
Ու հույսերը, համակ ազնիվ,
Լիքը բարով ու լուսով...
– Հեյ, ջան տղերք, ուս տվեք, ո՛ւս,
Միահամուռ, միաբան..
Հեյ, ջան տղերք, ուժ տվեք, ո՛ւժ,
Քարը մոտ է գլորման:

Տեսե՛ք, թեև ծվեն-ծվեն
Մնրանի է իր հագին
Ու ցոլում է իր ճիգերեն
Ազնվական իր հոգին...
Ամեն շարժում դեպի կյանքն է,
Ամեն ձգտում՝ դեպի վեր,
Աչքերն էն կողմ, ուր ծաղկում են
Ընտիր ազգերն ու ցեղեր...

– Հե՛յ, ջա՛ն տղերք, ուս տվեք, ո՛ւս,
Միահամուռ, միաբան,
Հե՛յ, ջա՛ն տղերք, ուժ տվեք, ո՛ւժ,
Քարը մոտ է գլորման:

ԱՂԹԱՄԱՐԻ ԿՂԶՈՒՄ

Սըրտիս խորքերեն,
Հովեն թե ծովեն
Մի ձեն եմ լըսում.–
Ո՛նց է մի աղջիկ
Մեղմ ու հանդարտիկ
Անվերջ արտասվում:

Կոպիտ աշխարհ է,
Մարդը միշտ չար է,
Կյանք է կործանում,
Կյանքն էլ կործանված
Որ անցավ գնաց,
Էլ ետ չի դառնում...

Սըրտիս խորքերեն,
Հովեն թե ծովեն
Մի ձեն եմ լըսում.–
Ո՛նց է մի աղջիկ
Մեղմ ու հանդարտիկ
Անվերջ արտասվում:

«Թամա՛ր... Ա՛խ, Թամա՛ր...»
Իզո՞ւր... ոչ մի բառ...
Չի պատասխանում:
Սերը որ կորավ,
Սիրտը որ մեռավ,
Արցունքն է մնում...

Սըրտիս խորքերեն,
Հովեն թե ծովեն

Մի ձեն եմ լըսում.–
Ո՞նց է մի աղջիկ
Մեղմ ու հանդարտիկ
Անվերջ արտասվում...

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը հին՝
Վերջին հանգիստը կարդամ իմ ազգի անբախտ
զոհերին,
Որ շեն ու քաղաք, որ սար ու հովիտ, ծովից մինչև ծով
Մարած են, մեռած, փըռված ու ցըրված հազար
հազարով...

Ու կըրակ առա հայոց հրդեհի կարմիր բոցերից,
Էն խաղաղ ու պաղ երկնքի ծոցում վառեցի նորից
Մասիան ու Արան, Սիփանն ու Սըրմանց, Նեմրութ,
Թանդուրեք,
Հայոց աշխարհքի մեծ կերոնները վառեցի մեկ-մեկ,
Սուրբ Արագածի կանթեղն էլ, ինչպես հեռավոր արև,
Անհաս, աննըվազ, միշտ վառ ու պայծառ, իմ գըլխի
վերև...

Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նըման,
Կանչեցի Բըշխաո էն հոգիներին ցըրված հավիտյան
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն հայոց,
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ:
– Հանգե՛ք, իմ որբե՛ր... իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և
անշահ...
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կըմնա...

Աչիցըս Եփրատ, ձախիցըս Տիգրիս՝ ահեղ ձեներով,
Սաղմոս կարդալով՝ անցան, գընացին խոր-խոր
ձորերով,
Ամպերն էլ ելան Զիրավի ձորից, հըսկա բուրվառից,
Ճանապարհ՝ ընկան Մաղկանց սարերից, Հայկական
պարից,

Բույլ-բույլ, բուրավետ, շարժվեցին դեպի կողմերը
հեռու,
Գոհար ցողելու, ծաղկունք բուրելու, բուրմունք
խրնկելու
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն հայոց,
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ...
– Հանգե՛ք, իմ որբեր... իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և
անշահ...
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էապես կըմնա...

Իմ բարի սըրտի էն մեծ խոհերից,
Էն մեծ խոհերի անհուն խորերից՝
Կամեցավ՝ ելավ իմ հըզոր հոգին,
Որ բարձրից նայի Աստծու աշխարհքին:

Ու պայծառ ցոլաց դեպ վերին այեր՝
Մարդկային ամեն հընարքներից վեր,
Վե՛ր ամեն շուքից և շամանդաղից՝
Մինչև լուսեղեն ոլորան անթախիծ:

Ու իր հարազատ բարձունքիցը լույս՝
Անչար, անաչառ, անդորր ու անհույզ՝
Պարզ, ամենատես հայացքովը նա
Ճառագեց ներքև՝ աշխարհքի վըրա:

Տեսավ աշխարհքը՝ գեղեցի՛կ, անվե՛րջ,
Եվ հայրենիքներն անձուկ նըրա մեջ,
Եվ աստվածները նըրանց զանազան,
Եվ սուրբերը խիստ, խըստրող ու դաժան:

Տեսավ՝ ուտում են ամենքն ամենքին.
Ամեն հայրենիք՝ իրեն զավակին,
Եվ իր պաշտողին՝ ամեն մի աստված,
Եվ կյանքը տանջանք, ցավ համատարած:

Ու ոչ մի երկիր չըկա հանգչելու –
Խոր, արարչական հանգիստն անխըռով,
Ու ոչ մի անկյուն չըկա շընչելու
Շունչն աստվածային՝ լի անվերջ սիրով...

Անպատում վըշտով վերըստին նայեց
Իմ էս մեծ սըրտին՝ աշխարհքից էլ մեծ,-
Անսահմա՛ն աշխարհք, և սեր ընդհանուր
Եվ մարդը ուրախ, և երգ ամենուր...

Ու իջավ նորից էնտեղ հանգչելու –
Խոր, արարչական հանգիստն անխըռով,
Էնտեղ հանգչելու, էնտեղ շընչելու
Էն մեծ խոհերով, էն անվերջ սիրով...

<ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻՆ>

Մեզ մոտ եք եկել ձյունի աշխարհից,
Կոչում դեպ բարին, դեպ վսեմն ու սեր
Մեր ցավոտ սրտում զարթնում են նորից
Երջանիկ կյանքի իղձեր ու հույզեր:

Աշխարհից աշխարհ թող ձեն տան իրար,
Որոնք իշխում են մարդկանց սրտերին,
Ազգերն ինչ ունեն ազնիվ ու պայծառ,
Թող ի մի բերեն էս դառն օրերին:

Եվ թող սրտերի դաշըն կապեն կուռ,
Ամուր շաղկապեն անսահման սիրով,
Շնչեն կենդանի մի շունչ ընդհանուր,
Կյանքը ջերմացնեն հոգեղեն հըրով:

Եվ թող մի պայքար լինի կյանքի մեջ՝
Թե ով ավելի ուժգին կըսիրի,
Եվ թող մի մրցում լինի միշտ անվերջ՝
Բարու, գեղեցկի ու վեհ գործերի:

Եվ բանաստեղծի խոհերն իմաստուն
Քանզի խոսքեր չեն ապարդյուն ու սին,
Եվ քանզի մարդը կարող է մարդուն
Սիրել – երջանիկ ապրել միասին:

ԴԺՈԽՔԻ ՀԱՆԴԵՊ

Հո՛ւշ. հասավ օրը՝ վերջի՛ն, ահավո՛ր:
Սըրով ու հըրով բացվում էն էսօր
Հայոց դըժոխքի դըռներն ամրափակ.
Սարսափի պիտի աշխարհքը համակ,
Եվ մարդն ամաչի գիլից ու շանից,
Որ մարդ է ծընվել՝ մարդու նըմանից:
Ո՛ւհ, ինչքա՜ն մութն է գարշահոտ ու պաղ...
Ինչքան ոսկորնե՛ր, կըմախքնե՛ր անթաղ...
Էլ ի՞նչ կա հեռվում... հեռվի խավարում...
Ով է իմանում... ում աչքն է զորում...
Մեջտեղը մենակ, ժեռուտ բարձունքին,
Կանգնած է մայրը հողմերի տակին.
Որդու արյունը իր ձեռքն են տըվել.
– Խըմիր սուլթանի կենացը դու էլ...
Եվ նա, որ մարդ էր ու մայր էր երեկ,
Այժըմ, էն ժայռին կանգնած կիսամերկ,
Անուժ ու ապուշ խելագար է մի,
Բաժակը ձեռքին, որ պիտի խըմի...
Կանգնած է մենակ, և լոկ մոլեգին
Հողմերն են ոռնում, ու նըրանք չորս դին...
Բայց՝ հո՛ւշ. լռությո՛ւն... մըթին, ահավոր
Երկինք են նայում կըմախքները չոր,
Ու իրենց կարկամ շըրթունքները բաց՝
Խո՛սք են ասելու աշխարհքի դիմաց,
Խոսք, որ չի լըսված դեռևս լուսնի տակ...
Սարսափի պիտի աշխարհ բովանդակ
Եվ մարդն ամաչի գիլից ու շանից
Որ մարդ է ծընվել մարդու նըմանից:

ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(Նմանություն)

Բաբելոնի գետեզերքին նըստել էին նրանք գերի,
Հիշում էին իրենց Սիոնն, Երուսաղեմն ու լալիս,
Կախել էին տավիղները վեր՝ ճյուղերին ծառերի,
Հիշում էին անցած փառքերն, անցած երգերն ու լալիս:
Ահե՛ք տավիղն, երգե՛ք, տեսնենք երգերը ձեր Սիոնի.
Ասում էին գերիչները Իսրայելի որբերին,
Ու՝ սըրբելով նըրանք լացը իրենց տխուր աչքերի՝
Տավիղ առած երգում էին օտար գետի ափերին:
– Ո՛վ սըրբազան Երուսաղեմ, ըսկիզբը մեր երգերի,
Եվ քեզ, Սիոն, մեր սըրբություն, թե մոռանանք մենք երբեք,
Թող մոռանա մեզ մեր աջը, հավետ մընանք մենք գերի,
Թող չըտեսնենք մենք հավիտյան ոչ խնդություն և ոչ երգ...
– Ո՛վ անօրեն դու Բաբելոն, երնեկ բազկին ոխառու,
Որ կըզարկի աչքիդ առաջ զավակներըդ քարերի,
Երնեկ օրին, երբ կըզարթնի Իսրայելի Եհովան
Ու կըլսի հառաչանքը մեր գերեվար քընարի...
Էապես նըրանք երգում էին իրենց վըրեժն ահարկու,
Ու զարմանքով հարցնում էին գերիչները մեկմեկու.
– Մի՞թե դեռ էլ կենդանի է Իսրայելը աշխարհում,
Մի՞թե նըրան չըսպանեցինք պատերազմի դաշտերում...

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
(հոդվածի փոխարեն)

Երբ խոսում են Վրաստանի
Թըշնամանքից արյունոտ,
Ջարմանք է ինձ պատում հայտնի,
Եվ խորին ցավ, և ամոթ:

Ո՞չ ապաքեն գիտեն նըրա
Ոսոխները մինչ անգամ,
Աղ ու հացն է սիրել միշտ նա,
Միշտ աշխարհքին բարեկամ:

Թեև պատած հազար վերքով
Շատ ցավեր է նա տարել,
Բայց խաչակիր իրեն ձեռքով
Դեռ ոճիր չի կատարել:

Եվ իր ձեռքը եթե համառ
Տարածում է հին վրկան,
Ոչ թե դաժան գործի համար,
Այլ դեպ պայծառ ապագան:

Եվ ինչպես չեն տեսնում ոմանք
Նըրա ընթացքն աննըկուն,
Ո՞նց են ասում.– իր բախտի տակ
Նա ընկել է անկանգուն:

Ո՛չ ապաքեն Կովկասն անսաստ
Պատ է կանգնած մինչ երկին,
Որ չըհաղթի բուքը նըրան,
Ինչքան սուրա մոլեգին:

Ո՛չ ապաքեն Պոնտոսը հար
Շունչ է հոսում հով ու զով,
Որ նա հավետ մընա դալար,
Խորշակներից ապահով։

Եվ չե՞ն լըսել դեռ վըրացու
Երգը զըվարթ ու անհոգ,
Ո՞նց է ծաղրում նա մահացու
Ամեն հարված անողոք։

Երբ խոսում են իր անկումից,
Թըշնամանքից արյունոտ,
Զարմանք է ինձ պատում անվերջ,
Եվ խորին ցավ, և ամոթ։

ՆՎԱՐԴԻ ԱԼԲՈՄԻՑ
(Իմ Արուսյակին)

Լուսապըսակ
Իմ Արուսյակ,
Ինչ գեղատես
Ու ինչ զըվարթ
Վառվըռում ես
Իմ աստղազարդ,
Պայծառ ու պերճ
Գիշերվա մեջ...

Այո՛, թեև
Ջեղավ արև
Էս պաղ կյանքում
Ու երկընքում,
Բայց բյուր արեգ
Ու բյուր ցերեկ
Միշտ արժեր
Էսքան շըքեղ,
Հըրաշագեղ,
Մի գիշեր...

* * *

Շնորհավոր
Իրեն պես նոր
Տարին ու օր
Իմ Թամարին.
Անվերջ, անհատ,
Առատ-առատ
Ու անարատ
Սերն ու բարին
Փըռվեն, փարեն,
Փըթթեն, բուրեն
Ամբողջ իրեն
Ճանապարհին:

Անուհի Ալբոմից

Երազեցի շարունակ
Իմ կյանքի մեջ ես մանկուց,
Ու մընացի միշտ մենակ
Պատրանքի մեջ՝ ես մանկուց:

Ես չըգտա ոչ մեկին
Երազներից իմ շըքեղ,
Եվ ոչ մի մարդ, ոչ մի կին՝
Հերոսներից իմ շըքեղ:

Երազեցի շարունակ
Իմ կյանքի մեջ ես մանկուց,
Ու մընացի միշտ մենակ՝
Պատրանքի մեջ՝ ես մանկուց:

ԳՐԱԴԱՐԱՆՍ

Բազմած են շուրջըս նըրանք ամեն օր –
Բոլոր հանճարեղ մեծերն աշխարհքի,
Երգում են, պատմում ներդաշնակ ու խոր
Միաքն ու գաղտնիքը մահի ու կյանքի:
Ու էապես՝ ինձ հետ, իմ տանն ամեն օր,
Ոչ հայց են ուզում ինձանից, ոչ շոր:

ԱՐՓԵՆԻԿԻՆ

Հիշո՞ւմ ես Բորժոմն, այծյամնե՛ր, ժայռե՛ր...
Ինչպես որ թողիր՝ էս ժամին էլ դեռ
Վայրենի՛, չըքնա՛ղ կանգնած են ու կան։
Եվ հիշում են միշտ էն գիժ աղջկան,
Որ իր կուսական զըվարթ աղմուկով,
Արծաթ ծիծաղով, ճիչով ու երգով
Լըցնում էր անտառն իրենց շըրջակա –
Ու... հիմա չըկա՛... ու հիմա չըկա՛...

ԱՐՓԵՆԻԿԻ ԱԼԲՈՄԻՑ

(Դու չգիտե՞ս...)

Դու չգիտե՞ս՝
Ինչու եմ ես
Անբուժելի
Տըխուր էսպես:

– Ինչ ունեի լավ ու պայծառ՝
Ընկան, հանգան մի-մի, մի-մի.
Օրորանս էլ՝ միակ, որ կար,
Արնոտ եղավ ու թըշնամի...

Դու չգիտե՞ս՝
Ինչու եմ ձեզ
Քընարիս հետ
Դըրկել էսպես...

– Մըթնեց հոգուս երկինքն անհուն,
Սիրտըս պատեց մեծ շափառուկ.
Մեռան, կորան շուրջս ու հեռուն,
Քընարս է լոկ մնացել... և դուք...

* * *

Մայրըդ էն օրն ասում էր ինձ,
Թե՝ զուր թողիր տունը ձեռից,
Էնքան էժան ու էնքան հեշտ,
Էնքան հարմար, անհրաժեշտ...

Նա տակավին չի իմանում,
Թե աշխարհքն էր ինձ պատկանում.
Նույնիսկ ձրի, առանց փողի,
Սիրտըս չուզեց – ձեռից թողի...

* * *

Կանցնեն օրերն, Անուշ ջան,
Կանցնի քո հերն, Անուշ ջան,
Ու կըտանի իրեն հետ
Իր ցավն ու սերն, Անուշ ջան:

Ցավը՝ անտակ ծովի պես,
Սերը՝ անհատ սովի պես.
Ծովի միջին ու սովի՝
Անբախտ Սայաթ-Նովի պես:

* * *

Քոշաքարում ես վազել եմ
Եղնիկի հետ երազ, Անուշ,
Ջրմրուխտ սարում երազել եմ
Ջընաշխարհիկ երազ, Անուշ։

Ջրմրուխտ սարը ամպ է պատել,
Իմ արևի լույսը վատել,
Աստծուն խնդիրք արի շատ էլ
Ինձ չըտրվեց մուրազ, Անուշ։

Իմ մուրազը շատ էր շըքեղ,
Դըրախտ պիտեր քաղաք ու գեղ.
Երգը հոսեր հառաչքի տեղ,
Սերն ու բարին՝ Արազ, Անուշ։

Շատն են եկել էսպես անցել,
Հազար ափսոս էն մարդկանց էլ.
Ես էլ կերթամ, վեր եմ կացել,
Էսքան վաղ ու վըռազ, Անուշ։

* * *

Երկար, երկար ման եկա
Ոտքով, մըտքով ես կյանքում,
Երկու, երկու բան գըտա
Ջար ու ղըժվար էս կյանքում։

Վաղո՛ւց, վաղուց կար ասված,
Բայց կյանք տըվի ես բառին.
Դարձավ, դարձավ ինձ աստված
Գեղեցիկը ու բարին։

Դըստրիկ, դըստրիկ իմ անգին,
Դու գեղեցիկ ու բարի,
Աշխույժն, աշխույժն իմ կյանքի
Եվ իմ վըշտոտ քընարի։

Նայի՛ր, նայի՛ր սըրտաբաց
Էս լեն արձակ աշխարհին
Առատ, առատ տարածված
Գեղեցիկը ու բարին։

Էսքա՛ն, էսքա՛ն մոտ ու շատ
Բախտը փըռված մեր կյանքում,
Մարդը, մարդը՝ միշտ անբախտ
Որոնում է երկնքում։

ԻՄ ԵՐԳԸ

Գանձեր ունեմ անտակ, անծեր,
Ես հարուստ եմ, ջան, ես հարուստ
Ծով բարություն, շընորհք ու սեր
Ճոխ պարգև եմ առել վերուստ:

Անհուն հանքը իմ գանձերի,
Սիրտս է առատ, լեն ու ազատ.
Ինչքան էլ որ բաշխեմ ձըրի –
Սերն անվերջ է, բարին՝ անհատ:

Երկյուղ չունեմ, ահ չունեմ ես
Գողից, չարից, չար փորձանքից,
Աշխարհքով մին՝ ահա էսպես
Շաղ եմ տալիս իմ բարձունքից:

Ես հարուստ եմ, ես բախտավոր
Իմ ծընընդյան պայծառ օրեն,
Էլ աշխարհ չեմ գալու հո նոր,
Իր տվածն եմ տալիս իրեն:

Հյուսիսի կողմից,
Խստաշունչ հողմից
Եկաք դուք մեզ մոտ,
Մեր անհոգ, ուրախ
Ու զոռով խաղաղ
Երկիրն արևոտ:

Եկաք ու ընկաք
Մի նոր դըժընդակ
Փոթորկի առջև,
Ուր կիտվում են դեռ
Ահեղ, շանթաբեր
Ամպերը սև-սև:

Մեզ մոտ էլ, ավա՛ղ.
Արև ու խաղաղ
Անկյուն չըկա էլ,
Ուր որ կարենանք
Գոհ ու անվըտանգ
Ձեզ պահել, շահել:

Արևն ու լավ օր,
Երազուն ու խոր
Մեր սըրտումն են արդ,
Իսկ դուք, մեր փերի,
Գիտեք սըրտերի
Ճամփաները բարդ:

Էնտեղ ապրեցեք
Ու էնտեղ կացեք

Մեզ հյուր թանկագին,
Դըրանից ավել
Չի էլ գըրավել
Դեռ կյանքում մի կին։

ՊԱՏՐԱՆՔ

Վեր է կացել էն սարում
Մեր Ջալակը իր թևից.
Գրնում է մութ անտառում,
Քաջ ախպերըս ետևից:

Ջրընգում են նըրանք խոր
Էն անտառում կուսական.
Ես կանչում եմ նորից նոր,
Ինձ թրվում է, թե կըգան...

Ջո՛ւր... վաղո՛ւց են, ա՛խ, նըրանք
Մեր սարերից գընացել.
Էն զիլ ձեներն են մենակ
Իմ ականջում մընացել...

Ս. ՆՈՒՆԵԻ ՊԱՏԿԵՐԻ ԱՐԱՋ

Խունկի բուրյան մըշուշներում,
Մըրմունջներով պատած երգի՝
Կանգնած է նա կապույտ հեռվում՝
Վարդը կյանքի, հարսն երկընքի,
Եվ չըգիտեմ՝ աղո՞թք անեմ,
Թե՞ ըզմայլեմ իր գեղի դեմ:

Համակ շընորհք ու սըրբություն,
Նայում է լուռ՝ լուռ սըրտիս մեջ,
Լուս հայացքի խորքում անհուն
Վառված սիրո կըրակն անշեջ...
Եվ ո՞վ կասի՝ կըրա՞կն է շատ,
Թե՞ սըրբությունն իր անարատ:

Խաչ է բըռնած իր կույս ձեռին,
Որ նըման չի ոչ մի խաչի,
Ու որթն, ասես, աստվածային,
Պիտի շընչի ու կանաչի.
Մի նըշանում կապված հանդարտ՝
Տանջանքը վեհ, կյանքը զըվարթ.

Մութի թեթև քողդ է իջել
Պայծառությանն իր երկնային,
Վշտի ամպից լույս ճաճանչել,
Լույսն ըսքողվել վշտովն իր հին.
Ու չարիքն էլ, ասես, անկար,
Ջարդ է դարձել իրեն համար:

Ա՛խ, առնեի եղբոր ձեռով
Բախտի ձրգած քողը տըրտում,

Որ նա հառներ իր ողջ գեղով,
Ապրեր անփույթ էն ճոխ հովտում,
Վերին Պոետն ուր որ նըրան
Կերտեց, դարձավ ապշեց վըրան։

ԳՐԱՋԸ ԱՍՏՎԱԾ ԵՎ ՊՈԵՏԻ

Գըրազ եկան ու տըվին
Երկու Անուշ – երգ ու կին.
Պոետն աշխարհ հիացրեց,
Աստված՝ իրեն – պոետին։

ՆՎԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻՆ

Չէ՛, չի լըռել մեծ Շոթայի
Երգի ձենը կաթոգին
Ու դարավոր ցավն ամեհի
Չի խորտակել էն հոգին:

Թընդում է դեռ նոր ձեռքերում
էն քընարը գովանի,
Խընդում է դեռ նոր երգերում
Վըրաստանը գեղանի:

– Ողջո՛ւյն, ողջո՛ւյն Աստվածային
Արի, բարի ընկերներ,
Արարատի կողմից էն հին –
Եղբայրական երգ ու սեր:

Հին օրերի վերջալուսին,
Արշալուսին նոր կյանքի
Երգենք սըրտանց ու միասին
Երգը հանուր բերկրանքի:

Բարձըր հընչի մեր երգը թող,
Չարի ձենը խըլացնի,
Հընչյուններով իր կախարդող
Երկրե երկիր թող անցնի:

Ամեն կողմից թող ամենին
Հըրապուրի ու բերի
Բազմալեզու խըրախճանին
Մեր Կովկասի ազգերի:

Ելնենք՝ տեսով ու ճանաչով,
Ընկեր, ախպեր, մեր ու քուր՝
Մեր քյամանչով, ուրախ կանչով
Գընանք դեպ կյանքն ընդհանուր:

Շատ, շատ արցունք թափվեց մեզնում,
Մեն մի կաթիլն – մի խըրատ,
Անլուռ, անդուլ էն է ասում –
Ճամփա չունի գործը վատ:

Թող՝ ով կուզի՝ երկար-բարակ
Ջոռ տա խելքին մինչև մահ,
Մենք իմաստուն – սիրենք, խնդանք,
Կյանքը էս է, ինչ որ կա:

Ջարկենք ուժգին մեծ Շոթայի
էն քընարը ոսկեզար,–
Մարդը ինչ տա – էն կըշահի,
Թող իմանա ողջ աշխարհ.–

Տեսնի քանի նոր ձենով է
Խոսում Աստված էս երկրում,
Պատգամներով պայծառ ու վեհ,
Հազար ու մի երգերում:

Ողջո՛ւյն, ողջո՛ւյն Աստվածային
Արի, բարի ընկերներ,

Արարատի կողմից էն հին –
Եղբայրական երգ ու սեր:

1920

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

Հայոց լեռներ սև-սև ամպեր
Կուտակվել են, փաթաթվել,
Հայոց լեռներ սեգ-սեգ խըմբեր,
Գոռ գընդեր են ողջ պատել։

– Ո՞վ է կանգնած լեռների հետ
Էն հրզորը անսասան.
Ծածանում է գըլխին վետ-վետ
Իր դըրոշը սրբազան։

– Էն Սասունցի Դավիթն է հին,
Մըսրա շըղթան խորտակել,
Թուր-կայծակին իրեն ձեռին՝
Լույս աշխարհ է դուրս եկել։

Հայոց մըթին լեռների հետ
Նա է կանգնած անսասան,
Ծածանում է գըլխին վետ-վետ
Հայոց դըրոշը սրբազան։

Էլ ո՞ր հավքը կանցնի թևով
Էն լեռների մութ շարքից,
Ո՞ր թշնամին կանցնի կենդան
Դավթի զորքից ու զարկից։

Հայոց լեռներ սև-սև ամպեր
Կուտակվել են, փաթաթվել,
Հայոց լեռներ սեգ-սեգ խըմբեր
Գոռ գընդեր են ողջ պատել։

* * *

Զրվարթ երամով դուք եկաք ինձ մոտ
Ինչպես գարունքվան օրերը ծաղկոտ,
Ինչպես տարադիր հավքերը՝ երգով
Կանցնեն իմ հոգու աշնան երկընքով:

Եկաք ու կերթաք, ինչ որ կըմընա,
Էս լավ պիշերվան հիշատակն է նա,
Չէ՞ որ հուշերն են թանկ գանձերը մեր -
Ա՛խ, ինչ գանձ բերիք էսօր ինձ նըվեր:

ՏԻԵԶԵՐՔԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

Որ հայացք ես ինձ տրվել վերամբարձ՝
Սուզվելու վերին սահմաններն արփի,
Որ միտք ես տրվել երկնաճեմ ու բաց՝
Ջափելու ահեղ բացերն անչափի,

Որ կապել ես մեզ, հոգիս քեզ արել՝
Հոգուս անհունի հրրճվանքը տալով,
Բարձրը ճակատիս ժրպիտ ես վառել,
Վառել, զարդարել արփենի փայլով,

Անթարթափ աչքով, անխարխափ հոգով
կարդում եմ քո վեհ ազդումներն անվերջ,
կարդում եմ պայծառ, ուրախ ցերեկով,
Ու գիշերները ահավոր ու պերճ:

Վերանում է վեր հոգիս զըվարթուն –
Ջրկա մոտ ու տար, չրկա վեր ու ցած,
Տիեզերքն ամբողջ հայրենիք ու տուն,
Ու ես մի ազատ՝ անտարբեր Աստված:

ՍԻՐԻՈՒՍԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Սիրիո՛ւս, երկնից ահեղ անցվոր,
Ո՞ւրկից եկել,
Ո՞ւր ես թեքել,
Ո՞ւր ես ճեպում էդքան հրզոր,
Անճառ թափով,
Անծեր ճամփով,
Դարե՛ր, դարե՛ր հազարավոր:

Սիրիո՛ւս, երկնից շըքեղ գոհար,
Որ խաղում ես,
Փաղփաղում ես
Ճերմակ ու բիլ լուսով քո վառ
Ու զարդարում,
Ջըվարթ վառում
Մեր գիշերվան ճակատը մառ –

Ինչքան աչք են վըրադ հառել,
Նայում են քեզ
Հիմի մեզ պես,
Ինչքան աչք է նայել, մարել,
Եվ կամ ինչքան
Դեռ պիտի գան,
Որ անհայտից կյանք չեն առել:

Ո՞վ առաջինն ասավ ողջերթ
Քեզ մեր հողից,
Մարդու ցեղից,
Կամ ո՞ւմ աչքում պիտի անհետ
Մի օր հատնի,
Մարի, մըթնի
Հըրաժեշտի շողըդ հավետ...

Բարի ճամփա՛, հյո՛ւրըդ մեր հին.
Եվ թե տեսնես՝
Մեզնից էապես
Մի հարցում տուր հըզոր մահին.
– Մարդու քանի՞
Սերունդ կանի
Մի հըրաժեշտն աստեղային:

ՍԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ՀԱՏՎԱԾՆԵՐ

ՕՐՈՐՔ

Քնե՛, քնե՛, իմ որդի,
Աչերըդ խուփ, չըբանաս,
Որ քո թշվառ հայ ազգի
Դառն ցավերը չըտեսնաս.

Քնե՛, գուցե երազում
Տիրոջ բարի հրեշտակը
Քեզի պատմե, թե ինչպես
Պիտի փրկվի քո ազգը.

Քնե՛, գուցե քեզ ասե
Նրա խղճութ՛յան պատճառը,
Քնե՛, գուցե նա ասե
Նրա փրկութ՛յան ճարը.

Գիտե՛ս արդյոք, գառնուկս,
Անցան դարեր այն օրից,
Երբ քո ազգը զրկվեցավ
Իրան շքեղ աթոռից.

Տարիք ու դարեր անցան,
Այլոց է լուռ ծառայող,
Այդ առթիվ դառնաճաճան
Վիճակն էլ կա անփոփոխ.

Քնե՛, քնե՛, հոգվույս հատոր,
Ուրախութիյուն իմ միակ,
Քնե՛, կասեմ քեզ օրոր,
Չըտեսնես նրան ավերակ.

Մի պատկեր է նա տխուր,
Աչքերն արցունք, ինքը լուռ,
Մի սուր է մեր սրտի մեջ,
Մեզ այրելու հուր անշեջ.

Նրա հիմքը քանդելու
Շատ, շատ դարեր տանջեցին
Տաճիկ, պարսիկ, հույն և քուրդ
Մինչև վերջը քանդեցին.

Եվ այն օրից մինչ այսօր
Տկլոր, բոբիկ ու քաղցած
Թափառում է սարե ձոր
Անգութներից հալածված.

Ապա, քնի՛ր, անուշ զավակ,
Աչքդ խփիր, չըբանաս,
Որ քո թշվառ հայ ազգիդ
Դառն ցավերը չըտեսնաս:

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Հայ վաճառական, հայ վաճառական,
Խաբիր ու զրկիր աղքատ եղբորդ,
Հարամ ոռճիկով լից քո գանձարան,
Ու միշտ կուշտ պահիր ուռած մեծ փորդ.

Քեզ ինչ փույթ, ասա, թե ազգդ խեղճ է,
Շատ հարկավոր է թե նա չունի հաց,
Քեզ ինչ փույթ, թե եղբայրդ մեղք է,
Միայն քո փորը լինի տկըզած.

Քեզ ինչ փույթ, ասա, թե խեղճ վանեցին
Հեծում է սոված, տուն ու տեղ թողած,
Տանջվում է տաճկի ու քրդի ձեռքին,
Միայն քո փորդ լինի տկըզած.

Քեզ ինչ՝ շինվում է հայ ուսումնարան,
Որ ուսում առնի տգետ հայ տղան,
Էհ, очень нужно, խավար մնա Հայաստան,
Տրիցատկի համար պինդ պահիր լուման.

Կողքիդ է տիկը, գրպանդ լիքը,
Քեֆ արա, ինչ բան է հայրենիքը.
Քեզ ինչ՝ անուսում մնան հայ որդիքը,
Թող նրանց դարդը քաշեն հայ մարդիկը.

Կուշտ է թափանդ, լի է գրպանդ,
Ամենը թամամ է, բայց վատ է բանդ –
Աղքատ մշեցին կանգնած է դռանդ.
«Աստված տա» – ո՞վ է կապում բերանդ.

Հայ վաճառական, շուտով փախիր տուն,
Խավարի միջի հմուտ ղեկավար,
Որ ժապավինյալ ցուցակ են բերում
Սովատանջ եղբարցդ՝ վանեցոնց համար.

Դե՛հ, գառնազգեստ գայլին դու նման,
Խաբիր ու զրկիր աղքատ եղբորդ,
Աչքերը կապիր, առ վերջին լուման,
Գուցե նրանով լցնես մեծ փորդ.

Միայն գիտենաս, հայ վաճառական,
Հեռու չէ օրը, օրն օրհասական
Նա կըգա շուտով և գաբրիելյան
Փողը կըկանչե և քեզ դամբարան.

Մահից չի փրկիլ քեզ ժանգոտ փողը,
Մարմինդ կըկլանե անգութ սև հողը,
Ամեն բան կանցնի և կանհետանա,
Միայն բարի անունն այստեղ կըմնա:

* * *

Երբ որ կանցնի ձմեռն սաստիկ,
Դարձյալ կըգա գարուն քաղցրիկ,
Կըպճնի կրկին մեր հայրենիք,
Կըկանաչեն դաշտեր, լերինք,
Հայնժամ գայցեն դեպ Արմենիա
Ծարավ, նոթի որդիք նորա.

Երբ որ արևն Հայաստանի
Ջվարթ, ուրախ, պայծառ փայլի,
Երբ որ դաշտըն Ավարայրի
Կրկին կներկվի արյամբն հայի,
Հայնժամ գայցեն դեպ Արմենիա
Ծարավ, նոթի որդիք նորա...

Երբոր Ղևոնդ ու Ներսեսներ
Կըլնեն ազգիս առաջնորդներ,
Երբոր կանցնեն դառն ժամեր.
. . . . . .
Հայնժամ գայցեն դեպ Արմենիա
Ծարավ, նոթի որդիք նորա:

* * *

Ինչո՞ւ ես տխուր,
Թշվառ Հայաստան,
Էր է վիզըդ ծուռ,
Մայր իմ սիրական.
. . . . . .
Խոցալից սրտով մայր իմ Հայաստան.

Ինչո՞ւ աչերըդ
Լի են արտասուք,
Էր ես խեղճ նայում
Դեպի արևմուտք.
. . . . . .
Խոցալից սրտով մայր իմ Հայաստան.

Դուն ևս լավ գիտես,
Որ արևմուտքեն
Օգուտ չըկա քեզ
Ջատ անբույժ վերքեն.
. . . . . .
Խոցալից սրտով մայր իմ Հայաստան.

Թշվառ Հայաստան,
Քաջաց դամբարան,
Անջուր բուրաստան,
Խեղճ, անօգնական:

. . . . . .

Խոցալից սրտով մայր իմ Հայաստան.
Շրջիր աչերդ,
Որդիքդ ցրված են,
Ժողովիր քաջերդ
Արցունքդ կըսրբեն:

«ԹՈՂ ՓՉԵ ՔԱՄԻՆ» ԵՐԳԻ ԵՂԱՆԱԿԱՎ

Լուսնկա գիշեր.
Պայծառ երկնքում
Չկային սև ամպեր.
Աստղերն էին փայլում։

Հանդարտ ու տխուր
Լուռ էր բնությունն,
Չի ամենայն ուր
Մորփեն էր տիրում։

Այդ ժամին, ընդարձակ
Արարատ դաշտով,
Մի տխուր էակ
Գնում էր ճեպով։

Մոտեցա նորան.
Ախ, տեսնում եմ մի
Գեղեցկատիպ ու
Չվարթ պատանի։

Ո՞ւր ես շտապում,
Ասա՛, պատանի,
Անունդ, ազգանունդ,
Այսպես հարց արի։

– Դեպի Հայաստան,
Պատասխանեց ինձ,
Նորան օգնության,
Յավին կարեկից:

Դեպի սրտիս միակ
Սիրած առարկան.
Անունս՝ Աղեքսանդր,
Ազգավ՝ Գոլոշյան:

Երբ «դեպ Հայաստան»
Բառը լսեցի,
Զարմանք ինձ պատեց,
Շվարած մնացի:

Փա՛ռք քեզ, տեր աստված,
Մտքումս ասացի.
Տաքացավ սառած
Արյունն հայ ազգի:

Եվ էլի դարձա
Ես դեպի Նորան,
Այսպես խոսեցա
Զայնիվ հեգնական.

Դարձի՛ր, պատանի,
Փոխի՛ր ընթացքդ.
Համապաստասխան
Չէ ուժիդ միտքդ:

Ձմեռն է սաստիկ
Հայաստան երկրի.

Դու միակ ծաղիկ,
Գարուն չես բերի:

Ամայացած է
Հայաստան աշխարհ.
Հայը ցրված է
Երկիրներ օտար:

Անցյալն է ողբում
Անդ բուն չարգուշակ.
Գյուղեր, քաղաքներ
Կան ողջ ավերակ:

Ծնողք, ազգական,
Եղբայր ու քույրեր,
Քեզ են սպասում
Անդուլ, անհամբեր:

Դարձի՛ր, պատանի,
Թո՛ղ այդ մտքերդ,
Քեզ են միշտ խնդրում
Բարեկամներդ:

Բացեց բերանը,
Խոր հոգվոց հանեց,
Երկու աչերից
Ջուլգ արցունք կաթեց:

– Ընկերությանն այն,
Որին երդվեցա,
Սրտովս ամենայն
Հպատակ, ծառա:

Ախ, չկա հնար
Այլևս բաժանման.
Վճռած է արդեն՝
«Դեպի Հայաստան»:

Ես իրագործել
Կամիմ մի սուրբ միտք,
Միայն քավ մոռնալ
Ծնողք, ընտանիք:

Այսուհետ պիտ լինի
Իմ բարձս չոր քար
Ու վառ լապտերս՝
Լուսինը պայծառ:

Շքեղ դահլիճս՝
Սոսկ անտառները.
Փափուկ մահիճս՝
Կանաչ խոտերը:

Փափուկ վերմակս՝
Մռայլ ամպերը.
«Ղույթուկ դոշակս»՝
Կանաչ դաշտերը:

Մայրական «որդյակ»
Քաղցր բառի տեղ,
Լսեմ որոտ, կայծակ
Այսուհետև թող:

Եվ զի այն որոտ
Հայաստանինն է.

Ինձ համար անշուշտ
Հարաժամ քաղցր է։

Որոտք ծեր Մասյաց
Ճերմակ գագաթեն
Թե լսեմ, անկասկած
Ինձ համար քաղցր են։

Դե՛հ, գնաս բարյավ,
Գնա՛, Տեր ընդ քեզ,
Միայն հեգացյալ
Մորդ միշտ հիշես։

«Նատալիա» անունն
Մտքումդ ունենաս,
Ժամեժամ սպասում
է քեզ, իմանաս։

Արևն է մտնում,
Իրիկուն գալիս,
Միշտ քեզ է հիշում
Աստղեր տեսնելիս։

Ամեն իրիկուն
Լուսնին նայելով
Անունդ է հիշում
Ու ասում լալով.

«Ա՛խ, երանի քեզ,
Ո՛վ պայծառ լուսին,
Որ միշտ տեսնում ես
Իմ Աղեքսանդրին»։

ՆԱՀԱՊԵՏԻ ՈՂԲԸ

Այս ինչ ձայն է գալիս բարձրից, այս ինչ կռռոց է տխուր,
Այն ինչ շղթա վեր եթերքում, սլանում է դեպի ուր.
Ախ, քեզ տեսնեմ, սիրուն կռունկ, անցյալ գարնան էյ
իմ հյուր.

Ինչո՞ւ նախկին բնեդ ելար, դեպ մեզ իջար, ա՜խ, ի զուր...
Կռունկ, ի տար, օ՜ն,
Դեհ, դեպի Տարոն
Թռի՛ր, սլացի՛ր,
Գնա հեռացիր:

Ա՛յ, ծիծեռնակն էլ եկել է, տեղ չի գտնում բուն շինի,
Օճորք չըկա, ողջ քանդվել են, ավերակումն ինչ անի.
Քեզնից վերև, տե՜ս, արծիվը պտտվում է, զգույշ կացիր,
Սիրուն կռունկ, խախալ արա, գութան արա ու դարձիր.
Կռունկ, ի տար, օ՜ն
<Դեհ, դեպ ի Տարոն
Թռի՛ր, սլացի՛ր
Գնա հեռացիր:>

Ես էլ պետք է ձեռքս առնեմ ջախջախ քնարս ու քեզ մոտ
Այս ավերակ պատի տակին կուչ գամ մինչև առավոտ.
Հնչե քնարս, թող վշտաձայն, խոսե սիրտս այս ցավոտ.
Ա՜խ, գիշերը տարի դառնար, չըլուսանար առավոտ.
Կռունկ, ի տար, օ՜ն,
<Դեհ, դեպի Տարոն

Թռի՛ր, սլացի՛ր,
Գնա հեռացի՛ր։>
Վարք ու բարքով, խելք ու մտքով հատը հատին
չպատահին,
Ախ ու վախով պիտի ապրեն, վայ նրանց դառն օրերին.
Մի՛ս, դժվար է, սիրուն կռունկ, դժվար ապրել միասին,
Ընկեր լինի, թե հարևան, ծառա, տեր, թե ամուսին.
Կռունկ, ի տար, օ՛ն,
<Դեհ, դեպի Տարոն
Թռի՛ր, սլացի՛ր,
Գնա հեռացի՛ր։>

Թե տեսանես ողջ Պարսկաստան, արաբ, հույն կամ
լեռնական
Ջորք ժողված ու պոկ եկած արշավում են Հայաստան.
Ասա, կռունկ, ասա, հոգիս, այդ ինչ անթիվ զորք,
բաբան.
Ասա, կռունկ, ասա, հոգիս, Մամիկոնյանք էլ չըկա՞ն.
Կռունկ, ի տար, օ՛ն,
<Դեհ, դեպի Տարոն
Թռի՛ր, սլացի՛ր,
Գնա հեռացի՛ր։ >

Մշու շքեղ մշուշապատ դաշտի միջով համարձակ
< . . . . . .
. . . . . .
. . . . . . >
Սուրբ շիրիմներն իմ հայրերի՝ ահեղազոր դյուցազանց
Ոտնատակի անարգում են քյուրդ, տաճիկը լիրբ,
անսանձ,
Մշու սուլթան սուրբ Կարապետ մեր տաճարը վեհափառ
Ինչ, սև սգո քուրձ է հագել, ողբում է անմխիթար։

Կռունկ, ի տար, օ՛ն,
<Դեհ, դեպի Տարոն
Թռի՛ր, սլացի՛ր,
Գնա հեռացիր։>

Ա՛խ, թե տեսնես ազգիս բախտը... կտրուկ, քաջարի,
Մոլորել է ավերներում Տուրուբերան աշխարհի,
Կռունկ, ասա, բավական է, թափառելուց դադարի,
Ասա, կռունկ, ասա, հոգիս, ասա արի՛, ա՛խ, արի՛։
Կռունկ, ի տար, օ՛ն,
<Դեհ, դեպի Տարոն
Թռի՛ր, սլացի՛ր,
Գնա հեռացիր։>

* * *

... Ես ուզում եմ սեր երգել,
Երգել սրտանց և վառվել,
Ես ուզում եմ և գրկել,
Փարել նրան և փարվել.

Ես ուզում եմ մի հրատապ
Սաստիկ սիրով ինձ տանջել,
Նրա կրծքին անարատ
Բոցավառվիլ և հանգչել:

Թողե՛ք, թողեք ինձ խնդրե՛մ,
Թողեք ինձ միայն սեր երգել,
Թողե՛ք, թողեք որ գրկեմ,
Սիրեմ նրան անարգել...

* * *

Ես Մելիքն եմ Լոռեցի,
Մուհտար փաշին զոռեցի,
Տարի՛ - նանա՛, տարի՛- նանա՛,
Մելիք ջան
Ղոշունի սարդար Մելիք ջան...

Արփաչայի ծիլ-ծի խոտը
Կըտրել է Մուհտարի հոտը,
Մելիք ջան,
Ղոշունի սարդար Մելիք ջան...

ՄԻ ԽՐԱՏ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՑՈՒՆ

Երբ դուք կլսեք, որ ամբողջ աշխարհ
Իր երկրի բերքը, արտադրությունքը...
Բյուր մաշինները, նոր հեռախոսը
Տանում է Ֆրանսիայի ամեն տեղ հռչակված
Համաշխարհային շքեղ հանդեսը,-
Դուք էլ, ի սեր Աստծո, հայ եղբայրք,
Աղաչում եմ ձեզ, քնած չմնաք,
Մտեք Հայաստան, առեք մի աման
Կրակ տված ձեր տների մոխրից,
Լցրեք լճերից՝ մի ուրիշ աման էլ՝
Ձեր մորթված խեղճ որդվոց արյունից...
...Այս ամենն էլ հավաքած բարձեք
Հայաստանի հին սայլակի մեջը
Ու կամաց կամաց սայլը քշեցեք
Դեպ Ֆրանսիայի աշխարհանդեսը
Տարեք դարսեցնեք հանդեսի մեջը
Ու ասացեք. «Եղբայրք եվրոպացիներ,
Նայեցեք, մենք էլ Հայաստանիցը
Բերել ենք թուրքի ձեռքի պտուղներ»:
...Ոհ, Եվրոպ, Եվրոպ, նայիր երկնքին,
Այնտեղ է հասել հայի աղաղակ...
Դու, որ ճիշտ պատկերն ես լանգթեմուրին,
Էլ քրիստոնեի ինչո՞ւ ծածկել ես դիմակ...
Դու, որ քո կոպեկը բարձր ես դասում,
Քան թե չորս միլիոն խեղճ ազգը հայոց,
Էլ ինչո՞ւ, ասա, ինչո՞ւ ես կրում
Դու «մարդասերի», «քրիստոնեի» անուն...

* * *

Փայլուն աստղիկ երկնադիտակ,
Դուն, որ տեսնում ես ամեն բան,
Սառն հյուսիսի երկնքի տակ
Ունիմ ընկեր, տեսնո՞ւմ ես նրան...
Նա էլ ինձ պես
Նայո՞ւմ է քեզ...

* * *

Ո՛հ, թող, սեր իմ, հրափետուր
Դեպի հյուսիս խոյանա,
Ցնծա հոգիս այս տխուր,
Սիրտս առժամ հովանա...

* * *

Այստեղ ահա ինչ են ասում,
Սիրելիդ իմ Անուշավան,
Ահա ինձնից ինչ են ուզում
(Որին, գիտես, ես չեմ հավան):

(Սրանով էլ չեմ ասում թե
Այնքան էլ խելոք եմ ես,
Դե, այնքան որ, Աստված գիտե,
Ուղիղ գնում եմ ճամփես).

Ինձ ասում են, թե սարսաղ ես,
Որ չես ուզում տերտեր դառնալ,
Պետք է հանգիստ կնքես, թաղես,
Հարստանաս անակնկալ:

Այն գյուղ<աց>ին, որն որ թողած
Սարումն իրանց ոչխարն անտեր,
Եկավ այստեղ այնքան սողաց,
Մինչև վերջը դարձավ տերտեր:

Ինչո՞վ ես դուն նրանից պակաս,
Ինչու դուն չես կարողանում:
Ջենդ լավն է, բոյդ [լավն է],
Էլ ընչի՞ ես մտիկ անում:

Քեզ կհարգեն, քանի սաղ ես,
Քեզ կըսան ազիզ սեղան,
Իսկ երբ մեռնես՝ ո՛նց կըթաղվես,
Հենց այն արժե ամեն բան:

Արի սրանց հասկացրու դուն,
Թե այս դարում [խառնված]
Ինչ պաշտոն է տերտերությունն...
Ինչ ժամանակ է, Աստված:

Այսպես մի բան պատահեց ինձ
Հենց այս մոտիկ, անցյալ ամսում,
Կոնսիստորում սաստիկ ահից
Հետս ոչ ոք չէր էլ խոսում:

Կոնսիստորում գլուխ քարը,
Դու տանն ասա թե ինչ արին...
Այ տղա, ինչ պիտի լինի իմ ճարը,
Ինչ պտի լինիլ սրանց միջին.

Կարճը, պատմեմ որ իմանաս,
Թե բանն ինչումն է եղել,
Ինչու համար էին վրաս
Այնպես սաստիկ կատաղել.-

Ախպեր, մի օր առաջնորդի
Ծառան եկավ ինձ տարավ վեր,
Առաջնորդը թե՝ այ որդի,
Էս բանը տար գրիր ու բեր.

Շրջաբերական էր ութ հատ
Ուղղած մեր խեղճ դպրոցներին,
Թե հարգեցեք շնորհաշատ
Նոր տեսուչ հայր Եղիշեին:

Ես էլ անսաս, տարա մեր տուն,
Ճաշից հետո անմիջապես

Նստած մինչև [լավ] իրիկուն
Վերջացրի, ասա՝ ապրես:

Մյուս օրն եկավ հայր-քարտուղար –
Տելեգրաֆիստ Մոյինյանը,
Թե այս թղթերն առ հետդ տար
Ու գիշերն գրիր տանը:
Ասի՝ տեր հայր, ես չեմ կարող,
Խնդրեմ գտեք ուրիշ գրող:

Բայց տեր հայրը և նրա հետ
Ամբողջ խումբը ներքինեաց
Բացատրություն, բացատրություն
Պահանջեցին զայրագնաց:

Բացատրեցի – ահա թե ինչ.
Դուք էլ տեսնում եք տկար եմ,
Տկարությունս ասենք ոչինչ,
Սպասեցեք գործերն շարեմ:

(Գիտես, եղբայր իմ, քարի պես
Առողջ կուրծքս ոնց մաշեցի...
Ախ, կարճատես [միամտություն]
Ինչ տանջանք էր, որ քաշեցի...).

Գրությունը վերատեսչի,
Որ կուտած են,
Նույնպես շտատը քաղաքի
Հրամայված է վերջացնել:

Ես էլ ունեմ իմ անձնական
Գրելիքը նամանավանդ,

Հանգստանալն էլ չեմ ասում,
Տանը ունենք երկու հիվանդ.

(Հակառակին այդ օրերում
Տագնապի մեջ տենդական,
Ոտանավորներս էի գրում
Որ ուղարկեմ տպագրության),

Ինչ որ լինի, դուն գրագիր ես,
Մանավանդ արագագիր ես,
Հրամայում են և պրծավ,
Պետք է անխոս տանես գրես:

Զայնակցեցին քաղցրաբարբառ
Ջորս քահանա.– բարձրադիր,
Ինչպես ես դուն խոսում, տղա,
Լռի՛ր, վերցրու, տար գրիր:

(Այս գարշելի սողունները
Քահանա են դարձել...
Այժմ ուզում են անունները
Իրանց հարգել տալ զոռով):
Ասի կգրեմ, բայց ոչ մի տող
Տուն չեմ տանիլ, լավ իմանաք,
Ինչ ուզում են ինձ անեն թող:

Իսկույն և եթ հավաքեցի
Ջեռքիս թղթերն Կոնսիստորի,
Սեկրետարին տվեցի
Այսպիսի բան եմ գրում ասի:

Մեկ էլ տեսնեմ չոբնու շան պես

Որոտալով եկավ ծառան,–
Ինչ [որ] հրամայում են քեզ
[Ինչու] չես կատարում:

Սրբազանը հրամայեց,
Որ վերցնես ու տանես տուն,
Գրես, անշուշտ, առավոտյան –
Հետդ բերես պատրաստի:

Ասի ասա սրբազանին՝
Տուն չեմ տանիլ գիտենաք, թեկուզ
Վեհափառը գրի կոնդակ:
Ապշած, սարսափած
Ծառան դուրս գնաց
Յուցամատը թափ տալով,

Վերևիցը համբավ եկավ,
Թե սրբազան<ն> սաստիկ
Զայրանալով կնիժկումը նշանակեց:
Այսուհետև հալիդ մտիկ:

Ես նստեցի ծանր ու բարակ,
(Գիտես եղբայր՝ որ այս խայտառակ
Մարդոցն այսպես է հարկավոր).

Էլ գլուխդ ինչ ցավացնեմ,
Խաղ անելով ես այսպես,
Մինչև ժամի երկուսը
Պատրաստեցի երեք ու կես:

Հիմա խոսում են իրար հետ՝
Թող չըգրի, թող չըտանի,

Առավոտյան մի լուսանա,
Սրբազանը տես ինչ կանի։

Մյուս օրն չեկա ծառայության.
(Գլուխս էլ ցավում էր մի քիչ,
Այն գիշերվան հիվանդների
Սրտաճմլիկ տնքոցից).
Միայն բանալին ուղարկեցի,
Ասի՝ թղթերը հանեցեք։

Երանի թե չէի ուղարկել,
Սրանք կարգին բաց են անում,
Իրենց անտեր թղթերի հետ
Իմ թղթերս էլ առնում տանում։

Մի քանի մանր ոտանավոր
Երկու հատ էլ պոեմա,
Մեհրին և նոր
«Դարձ» անունով, որ [էլ] չըկա։
Ինձ ասում են՝ այս աշխարհում
Քո խելքով չես կարող ապրել,
Եվ այսպես են բացատրում –
Կուզես ապրել – պետք է հափռել,
Հափռիր, այո՛, որտեղ հասնես,
Խեղդի՛ր, որին ուժդ պատեց
Եվ մարդիկը մեկ էլ տեսնես
Քեզ կանվանեն արդար ու մեծ,
Աշխարհս դմակ, տղեն դանակ,
Որքան կարաս կտրիր ու կեր,
Ներելի էր մի ժամանակ
Այս դևիզը [մահահրավեր]
Գազանների օրենսգրքում

Գուցե հոդվածն է առաջին,
Բայց չըգիտեմ մարդոց սրտում
Ո՛նց է ընկեր դարձել խղճին.
Եվ ինչ զարմանք, եթե նրան,
Որ չէ կարող քրտինք անել
[Դուր է] եկել սրա նման
Մի բնաբան է հավանել:
Սիրելիդ իմ Անուշավան,
Այս ոսկու և արյան դարում,
Հանուն սիրո և փրկության
Մարդիկ ինչեր են կատարում.

Կատարում են թող կատարեն,
Իրանց մեղքը իրանց վզին,
Բայց թե այնքան լիրբ ու չար են,
Քարոզում են նույնն ուրիշին:

Ջահլես գնաց, Անուշավան,
Այստեղ կըտրենք, Աստծու խաթեր,
Խայտառակ թելն այս պատմության,
Ոտի համար դնենք Ծաթեր:

* * *

... Նա մի տգետ, աղքատ մարդ էր,
Որ ուզում էր դառնալ տերտեր,
Այդքանն, հարկավ, բավական էր,
Բայց կան նաև քանի բաներ,
Դիտելիքներ և նոր և հին,
«Ուսմունք պատշաճ քահանային»:

* * *

Օ՛, ցած խոսքերով անդուռն բերանի
Մի՛ հիշեք, մի՛, այն սուրբ անունը,
Դուք, որ չըգիտեք փառքն Հայաստանի,
Որ չեք ճանաչում նրա զորութիյունը...

* * *

Ընդունիր, իմ քույր,
Գուցե քաղցրաբույր
Ջրկան ծաղիկներ,
Բայց իբրև նվեր
Նվաստ եղբորից
Մի գնահատիր ինձ։

* * *

«Շնորհավոր Նոր տարի».
Եթե թևեր առնեի,
Սրտով վշտոտ ու կարոտ
Կրթռչեի ես քեզ մոտ,
Որ իմ պանդուխտ, հեգ եղբոր
Տարին անեմ շնորհավոր...
Բայց ես զուրկ եմ թևերից,
Եվ ստիպված եմ շատ հեռվից
Այս տողերով անտաղանդ
Շնորհավորել քո կաղանդ:
... Չիցե թե մենակ նա մտաբերի
Քաղցրիկ հիշատակն հայրենի երկրի,
Չիցե թե նրա հայացքը կարոտ
Չըգտնի խնդրած դեմքերը ծանոթ,
Դառնացած սրտով անիծի իրան,
Անիծի օրերն յուր պանդխտության...

ՄԱՐՇ

Կեցցե՛ «Մշակ» և ժողովուրդ
Եվ այս օրը մեծախորհուրդ –
Մեր ազգային իրավունքի,
Համայնական ազատ կամքի:
Անդառնալի թող վերանան
Ամեն գործեր կամայական.
Ընտրությունը ապօրինի,
Կոպիտ չոբանն Աբարանի:

Կեցցե՛, կեցցե՛ մշտազվարթ
Նոր սերունդը երիտասարդ,
Յուր եռանդով ամենազոր,
Գաղափարով պարզ, լուսավոր:

Կորչի՛ Մամբրե, սև է Աբգար
Իրանց խմբով գիշերավար,
Եվ անսասան կեցցե՛ հավետ
Մեր ժողովուրդն Արծրունու հետ:

* * *

[Միամիտ] ընկե՛ր, դու մի՛ զարմանար,
Որ չեն երգերըս պատանու կորով.
Ես ձեռքս չառած տակավին քընար,
Տանջվել եմ կյանքի բոլոր ցավերով։
Վիշտն ու [ցավերը] դեռ վաղ ծրծեցին,
Քամեցին հյութերն իմ մատաղ սըրտի,
Հոգսերն էլ տըհաս միտքըս կըրծեցին,
[Թրթուրներն ինչպես բողբոջը վարդի]։

Եվ ես [հյուծված] երգում եմ այսօր
Եվ սիրտս մաշված, և ձայնըս տկար,
Եվ երգըս տխուր, և կուրծքս անզոր,
Եվ խիստ նախատված բոլորի համար։

Հա՛, ուրիշ բան էր՝ եթե ինձ ընկներ
Գոնե մի նշույլ բախտավորության...
Բայց իմ բաժինը՝ այս եղավ, ընկեր,
Իմ այգն ու մութը միասին եկան։

* * *

Գիշերը բազմեց լեռների վրա.
[Թանձր մռայլը] կոխեց դաշտ ու ձոր,
Ոչ մի լուսատու երկնքում չըկա,
Մենակ մի լույս է փայլում հեռավոր...

* * *

Եթե գիտենաս իմ ցավը, հոգիս,
Եթե գիտենաս ինչու եմ տխուր,
Կըգովես անշուշտ կսկիծը սրտիս
Եվ ինձ քո սրտին կըսեղմես ամուր։

* * *

Գերեզմաններում վաղուց հանգչում են
Նրանց չարչարված մարմիններն անշունչ,
Իսկ հոգիները խաղաղ պտտում են
Սիրած վայրերում, սիրելիների շուրջ.
Այժմ հալածել դժվար է սրով
Այն եթերային գոյություններին,
Որ զարմանալի զորություններով,
Գիտեն մոտենալ մարդկանց սրտերին...

Հաճախ մտորման ժամին լուռեցուն
Ուրվական ձայներ այլ եղանակով
Խոսում են այնպես և ալեկոծում
Դժգոհի հոգին համարձակ մտքով –

...Սակ կարճամիտ մարդ, միտքդ բեր դու մեզ,
Երկրում հավիտյան խո չես ապրելու,
Մի օր ծնվել ես, մի օր կըմեռնես,
Ինչ ես համբերում ձաղքին թշնամու...

* * *

Քեզ, գոված մուսա, ես չեմ ճանաչում,
Ոչ ձեռքիս ունեմ ոսկեղեն քնար
Ոչ էլ ծովերի ափերն եմ փախչում,
Վայրենի երգս երգելու համար.

Բայց ճանաչում եմ ես մի ժողովուրդ
Ճտահար թաղված տառապանքներում,
Ունեմ և հոգումս մի գաղտնի խորհուրդ
Ինձ [հրապարակ նրանք] են բերում.

Նրա ցավն է ինձ ոգի ներշնչել,
Նրա տանջանքն է շունչը իմ երգի,
Եվ ո՞վ է կարող իմ երգը մերժել
Որպես հառաչանքն իմ ժողովրդի.

Անթիվ դարերի անողորմ հարված,
Լկանք ու ավեր,
Եվ ահա այսօր նա խեղաթյուրված
Դատ է պահանջում թշնամու գլխին
Եվ իրավունքներ.
Էլ ո՞վ էր կարող այդպես բողոքել,
Թե կարենայի եղածը երգել։

ՕՐ. Ն. Ս.-ԻՆ

Ալբոմիդ մեջ մի քանի տող
Հեշտ է խորհել և հորինել,
Բայց սրտումդ միշտ աղմկող
Մի հիշատակ կուզեմ թողնել,
Որ սիրտդ ինչքան բաբախի,
Ինձ էլ այնտեղ նա պահի...

* * *

Ես վիշտ ունեմ բերած երկրից հայրենի,
Նրանով են իմ երգերը կենդանի,
[Նրանով է իմ քնարը պարծենում,
Նրանով եմ ես թև առնում, բարձրանում...]
Եվ չեք կարող դուք հասկանալ բնավին –
Ինչ սիրով եմ ես հանդիպում այն ցավին։

[Եվ ձեր ուրախ խնջույքների ժամանակ
Ջեռքիս բռնած կենաց գինով լի բաժակ
Ես լալիս եմ, թեև դուք չեք նկատում,
Իմ արցունքը սրտիս միջին է կաթում,
Իսկ իմ երգը... դուք չե՞ք լսում, թե ինչպես,
«Իմ հայրենի՛ք, իմ հայրենի՛ք» հառաչում է
աղեկեզ։]

* * *

Հանկարծակի սիրտս տխրեց –
Միտքս եկան հին տեղներ,
Որ ոչ մեկը չըկատարվեց,
Եվ այն, գիտեք, ինչեր, ինչեր...
Նրանք էին ինձ ապրեցնում,
Նրանք էլ արդեն զուր են անցնում –
Դատարկ ձայներ գլխիս վերից
Կարծես թե միշտ ծաղրում են ինձ...

* * *

Այդպիսի աչքեր ես դեռ չեմ տեսել.
Աչքերն այդպիսի կրակ չեն ցայտում,
Արեգակն այդպես երբեք չի կիզել
Այրող շանթերով տաք անապատում։

[Այդտեղ երկրային ոչ մի նյութ չկա.
Եդեմում փայլող արևշողն է դա,
Որ իրան տեղից սլացել փախել
Աչքերիդ մթին ծովումն ցոլացել]։

Ո՛հ, այդ աչքերին ով որ պատահի,
Տեր Աստված նրա սիրտը թող պահի,
[Այդ քո սպանող] գեղեցկությունից
Որ իմ հանգիստը խլեց ինձանից։

Այդ աչքերն արդյոք ո՞վ է տվել քեզ,
Եվ հետը մի սիրտ ամուր քարի պես
[Եվ մեկի ուժով մյուսը չարաչար
Չարչարանքների դառնում է պատճառ]։

* * *

Հայոց վարժուհի, ողջ 10-ը տարի
Արի տանջվելով պարտքդ կատարի,
Լուիր ու տոկա, համբերիր ու տար
Թեմական տեսուչ, Կոստո ու Կատար:

Թե ինչ է, մի օր ազգը քո սիրած
Գալու է քեզ մոտ, ուտելու է հաց,
Վեր է առնելու մի բաժակ գինի
Եվ շշնջալու «կենացդ լինի»:

Սակայն երբեք փառք չի եղել
Նպատակը քո ջանքի,
Ոչ կենացն ես դու համարել
Արդյունքը քո տանջանքի:

Այլ, որպես մերթ բանաստեղծը
Շուրջն ու իրան մոռացած
Ծնում է յուր հոգու իղձը
Ազմուկներեն խլացած,

Նույնպես և դու չարչարանքով
Սերունդներ ես վերածնել
Եվ տքնել ես ջերմ եռանդով
Մութն ու խավար վերացնել:

Դրա համար, թեև այսօր
Բաժակներ ենք մենք լցնում,
Բայց բաժակիցն էլ առավել
Մեր սրտերն են լիք-լցվում –

Լցվում ենք վեհ պատկառանքով
Պաշտոնյայի կրթության.
Եվ ողջունում հեռվից հոգով
Լուսավորված Հայաստան:

* * *

Այս տողերը գուցե ջնջվեն,
Գուցե կորչի հուշագիրը,
Բայց ինձ համար դրանք ցավ չեն,
Ոչ էլ այդ է իմ խնդիրը։

Ես քեզանից ուրիշ անանց
Մի հիշատակ եմ խնդրում,–
Թող կենդանի մնամ պահված
Մտքիդ պայծառ հուշագրում։

Որպես անկեղծ մի բարեկամ,
Որ կարող էր այդ խնդրել,
Որ խոսքերից հազար անգամ
Ավելի է քեզ սիրել։

ՈՂՋ, ԷԼ ԵՐԳԵԼ ՉԵՄ ԿԱՐՈՂ ԵՍ

Անմիտները մտան պարտեզ –
Ամբողջ բուրմունք ու գարուն,
Ու չիմացան – ինչու այնպես
Եվ անուշ էր, և սիրուն:
Ու ոտքեցին, ու ճմլեցին
Ծաղիկները [բուրավետ],
Ու չիմացան – ինչ եղավ գեղն
Եվ բուրմունքը նորա հետ:

ՀՈՒՅՍ

Մթնեց... Ինչո՞ւ ես տխուր, իմ ընկեր.
Ո՛չ, մեր գիշերը շատ հեռու է դեռ,
Այս միայն վաղանցուկ մի ամպ էր խավար,
Բախտի մրրիկը բերեց մեզ համար,
Բերեց, քարշ արեց մեր գլխի վերև,
Մեր աչքից փակեց երկինք ու արև:
Բայց դու տակավին մի՛ ընկնիր հոգով,
Նա կանցնի, կերթա յուր սև ընթացքով
Եվ լուսապայծառ արևը կրկին
Ջաղցըր կըժպտա քո քնքույշ սրտին.–
Հավատա՛ [ուժին] գալոց օրերի,
Բայց [պարտությունը] հաստատ է չարի,
Որ ձգտեց բարվո շենքը խորտակել,
Լուսավորության շավիղը փակել,
Որ քո [գեղեցիկ] աչքին մանկական
Տվեց տխրություն և արցունք այդքան...

* * *

Երբ թույլ եք տալիս, որ Ձեր ալբոմում
Անշնորհքները գրեն և արձակ,
Ինձ այնուհետև էլ ինչ է մնում,
Եթե ոչ այսպես ասել համարձակ,–
Ինչո՞ւ Ձեր ալբոմն, ազնիվ օրիորդ,
Դուք բաց եք անում ամեն մեկի մոտ,
Որոնք ոչ ցանկալ, ոչ հայտնել գիտեն.
Եվ ալբոմն իզուր պիտի մըրոտեն:

* * *

Կարծես թե քիչ էր, ինչ որ արեցին,
Դեռ այնուհետև դարձյալ գրեցին,
Որ Ձեզ ավելի պարզորոշ ցույց տան,
Թե որքան համառ ...եր կան:*

* *ծանոթ.*

* * *

Հե՛յ, ափսոս էջեր...
Ինչ հիմար վեճեր,
Ինչ անմիտ տողեր
Խենթ բառախաղեր
Լցրեց... այն էլ ո՞վ,–
Մի ամբողջ ժողով,
Հրրատարակեց
Որ Հորիզոնը
Եվ խայտառակեց
Մեր զատկի տոնը:

* * *

Ա՛յ ծիծեռնակ,
Մի լուր չունե՞ս ղարիբին.

Մի խրճիթ կա [կանգնած] Սասմա
էն ահարկու քարափին,
էն խրճիթը տեսե՞լ ես դու,
Մի լուր ասա ղարիբին.

Ինտեղ մեկին թողել եմ ես
Աչքը լացով ու ճամփին,
էն սիրունից, Աստված սիրես,
Լուր չե՞ս բերել ղարիբին.

Սիրած ընկեր ունեմ այնտեղ ինձ,
Անմխիթար հայր ու մայր,
Ապրում են դեռ արտասվելով
[Աղոթում են ինձ համար].
Կարոտ յարից, ծեր ծնողից,
էն սուրբ հողից, էն շեն գեղից,
Մի լուր չունե՞ս ղարիբին.

Երգում էի ես քո երդկին
Ամեն րիգուն-առավոտ,
Եվ քո կինը միշտ լալագին
Դունդունում էր քեզ կարոտ.

Քո տխուր զավակները
Խնդում էին ու հրճվում,
Երբ իմ անթև ձագուկները
Ճըվում էին, ճըվճվում:

Այսպես մենք հաշտ ապրում էինք
Շատ շատ գարուն ու ամառ,
Ո՛չ մի արած մեղք ունեինք,
Ո՛չ թշնամի մեզ համար.

Քուրդը եկավ
Սև ու խավար էն տարին,
Կրակ զարկեց, թալան արավ,
Գերի տարավ քո յարին,

[Ես լսեցի ծվծվոցը
Իմ սիրելի ճուտերի,
Ես լսեցի ճիչն ու կոծը
Եվ քո անտեր փոքրերի].

Վերջին օրն էլ որ ես եկա,
Սև էր էնտեղն ու դատարկ,
Էլ ոչ քո հին օճորքը կա,
Ոչ իմ բունը նրա տակ.

Ջկա ձեր հին եկեղեցին,
Գյուղ ու դպրոց էլ չկան,
Թուրքն ու քուրդը ավերեցին
Հիմնահատակ ամեն բան.

Մինծառն այսպես երգ էր ասում
Հայ պանդուխտին վաթանից,
– Լսի՛ր, ղարիբ, լսի՛ր, ախպեր,
Լուր եմ բերել քո տանից:

ԷՔՍՊՐՈՄՏ

Երբեմն իմ մուսան՝ յուր խելքը կորցրած՝
Կավալերության պաշտոն էր տանում,
Բայց քնքուշները ավելի...
Նրա արժեքը չէին հասկանում։

Այժմ ժամանակն այնպես է փոխվել,
Որ նա կույսերից հեռու է փախել,
Եվ այսուհետև էլ ոչ մի օրիորդ
Ինձնից չի տեսնիլ մի տող կամ մի ոտ։

ՍՐՏԻՍ ԽՈՍՏՈՒՄԸ

Դաշնակահար պոետն երբոր
Էլ չըգրի դաշնակներ,
Սիրտը մեռնի վշտակոտոր,
Պատեն գլուխն ալիքներ,

Երբ մոռանա հիշել պես-պես
Անունն ու սերն ամենքի,
Գիտցեք, որ դեռ հիշում է ձեզ
Եվ այս օրերն իր կյանքի:

Գիտցե՛ք, որ նա, ալևորած,
(Եթե հասնի այն օրին)
Դողդողալով, ոգի առած
Պատմում է յուր թոռներին,

Թե ինչ օրեր տեսավ կյանքում,
Ո՛ւմ ունեցավ բարեկամ,
Եվ ձեր անունն հիշատակում,
Միտն է բերում շատ անգամ:

Բայց թերևս... ինչ եմ ասում.
Նա ձեզ անվերջ կըհիշի,
Եթե միայն գերեզմանում
Հիշողություն կըլինի:

1 ՀՈՒՆՎԱՐԻ

Շնորհավոր Նոր տարի...
Թեև պիտի նա մարի
Իմ վաստակած սրտի մեջ
Դարձյալ մի հին իղձ կամ տենչ,
Թեև պիտի ինձ բերի
Միայն ծանրություն հոգսերի,
Տան ծախքերի պրոզան,
Եվ հալածի իմ մուզան...
Բայց ինչքան էլ լինի վատ,
Ես միշտ ունեմ ժայռ հավատ
Դեպի կյանքն ու ապագան,
Եվ հույս ունեմ, թե կըգան
Սեր, սփոփանք, խնդություն...
Այդ հույսով էլ աննկուն
Ես կանչում եմ սըրտալի –
Շնորհավոր Նոր տարի,
Եվ մաղթում եմ ձեզ համար
Նոր բախտ, նոր օր ոսկեվառ:

ՊԱՋՈՏՆՈՒ ՏՐՏՈՒՆՋԸ

Առաջ մեր գյուղում պաչոտնի մարդը
Իսկի չէր քաշում գյուղական դարդը,
Ո՛չ խարջ էր տալիս, ո՛չ մասրափ գիտեր,
Խարջի ավելն էլ դեռ ինքը կուտեր:
Ա՛խ, ինչպես լավ էր,
Էն վախտ Շուլավեր:

Շրջվել է հիմի դարը հակառակ,
Պաչոտնի մարդն էլ ընկավ խարջի տակ,
Աստված վճեր կունի – պաչոտնի ու խա՞րջ,
Ո՞վ էր իմացել էս բանը առաջ –
Ա՛խ, առաջ լավ էր,
Ափսո՛ս Շուլավեր:

Պաչոտնու եզը, գոմեշը թե ձին
Թեկուզ հենց քանդեր քյասիբի այգին,
Ո՞վ կհամարձակեր պահանջել տուգանք –
Այնքան ուներինք պատիվ ու հարգանք –
Ա՛խ, ինչպես լավ էր,
<Էն վախտ Շուլավեր:>

Հիմի թե հորթ է, պատահի այնպես,
Ընկնի մի հիմար աղքատի պարտեզ.
– Հե՛յ, ինչո՞ւ մարդին տալիս ես վնաս,
Դե՛, սի՛րտ, դու սրան ի՞նչպես դիմանաս –
Ա՛խ, էս ինչ ցավ էր,
<Ափսո՛ս Շուլավեր:>

Ամեն մարդ իրան գյուգյումն էր պահում
Գինի էր առնում իր փողի շահում,

Մեծ էր թե ինչ որ – այն էր գյուգյումը,
Ո՞վ դեմ կըխոսեր – թեկուզ մտքումը –
Ա՛խ, ինչպես լավ էր,
<էն վախտ Շուլավեր:>

Հիմի աղքատի – հարուստի համար
Բերել են մի չափ շինել հավասար,
Վրան էլ գեղի պեչատն են զարկել,
Պետք է նրանով շիրա հավաքել:
Էս ինչ նոր ցավ էր –
<Ափսո՛ս Շուլավեր:>

Գեղի քյասիբին պապական ծեսով
Փող էինք տալիս 60 տոկոսով –
Դեռ խեղդում էինք պարտքերի տակին
Եվ հետո խլում տունը կամ այգին –
Ա՛խ, ինչպես լավ էր,
<էն վախտ Շուլավեր:>

Ասում են հիմի զակոն է եկել,
Որ այս տեսակ բան թե անենք մեկ էլ՝
Վինավաթ կըլնենք ու Սիբիր կերթանք.
Հապա էլ ինչո՞վ անենք աշխատանք –
Ա՛խ, էս ինչ ցավ էր –
<Ափսո՛ս Շուլավեր:>

Ախ, մի ժամանակ մեր ամբողջ գյուղը
Գիտեր պաչոտնու ահն ու երկյուղը –
Գիտեր, որ մենակ պաչոտնին էր մարդ,
Մյուսները նրան կամ ծառա, կամ պարտ.
Ա՛խ, ինչպես լավ էր,
<էն վախտ Շուլավեր:>

Հիմի, Տեր Աստված, այս ինչ է դառել,
Աղքատ և գյադա լեզու են առել,
Խոսում են, վիճում, դատում, պահանջում –
Պաչոտնու հարգը էլ չեն ճանաչում –
Ախ, էս ինչ ցավ էր,
<Ափսո՜ս Շուլավեր։>

Առաջ ժամանակ ամեն պաշտոնում
Պաչոտնի մարդ էր ընտրված լինում
Հարուստ ու դիրքով, մազով ու միրքով –
Գործն էլ տանում էր պաչոտնու կարգով.
Ախ, ինչպես լավ էր,
<էն վախտ Շուլավեր։>

Էնպես վախտի ենք հիմի պատահել –
Նոր ձվից ելած ամեն մի ջահել,
Որ գլխին ճերմակ մի մազ չունի դեռ
Դառնում է գեղի սուդիա-տանուտեր –
Ախ, էս ինչ ցավ էր,
<Ափսո՜ս Շուլավեր։>

* * *

Իմ սիրելի Ասլան-ապեր,
Մինչև այսօր բախտդ կապ էր.
Փողդ շուտով պիտի ստանաս,
Հանկարծակի հարստանաս.
*Երեք օր էլ կացիր հալա...**
Քո կարոտյալ Ասլան-բալա:

**Մինչև գրեն հրամանը,*
Ինչպես ասաց Խրիմյանը:

* * *

Այսօրից ահա անում եմ ես ուխտ,
Որ այսուհետև չըխաղամ էլ թուղթ։

Բայց բանը շուտով այնպես պատահեց,
Որ բանաստեղծը խոսքը չըպահեց։

Էլ ինչ թաքցնեմ, եղո՛ւկ իմ հոգուն,
Երկու անգամ էլ տարվել եմ թաքուն,
Բայց թե չըթողնեմ այժմ թղթախաղ,
Ուրեմն էլ չըկա ինձ նման սարսաղ։

* * *

Սիրեցի, կոնո, քո անուշ երգը,
Թող աստված օրհնի Գուգարքի բերքը:

* * *

Էլ չեմ կարող գրել «Ձեռաց».
Սիրտս վաղուց է մեռած...

* * *

Օ՛, սիրտ իմ, սիրտ իմ, տակավին մատաղ,
Քեզ որքան ցավեր ճմլել են հաճախ...

(ՀԱՏՎԱԾ)

... Ամեն բան երկրում ունի մի սահման,
Որտեղից որ նա ետ է նահանջում.
Աննահանջ է միայն սիրտը սիրահար,
Սերը չէ միմիայն սահման ճանաչում...:

* * *

Ինչ է բույրը ծաղիկի,
Մրրիկն եկավ – նա ցրվեց,
Ինչ է երգը սոխակի,
Բազեն հասավ – նա լռեց:

Ինչ է սերը աղջկա.
Ահա մեռավ, էլ չկա.
Ինչ է կյանքը մարդկերաց,
Մի այսպիսի դատարկ բան.

Նույնպես ծաղիկ մի սիրուն
Որ կորչում է սև հողում,
Նույնպես մի երգ թրթուն,
Որ լռում է դագաղում:

* * *

Էյ, գիժ ջահելներ, վառ-վառ ծաղիկներ
Բուսած մեր կյանքի տխուր ճամփի շուրջ,
Աշխարհք մայրական ... գիրկ է ձեզ դեռ,
Հառաչքը՝ [օրորք] և կյանքը՝ անուրջ:

Ահ, վաղուց զարթնած ու շատ տառապած
Ես անց եմ կենում այս տըխուր ճամփով,
Բուրմունքս՝ [ցրված], պըսակս՝ թափված,
Երկինքս էլ մթնած թուխպով ու ամպով:

Ես անց եմ կենում և ժպտում եք դուք,
Յրում եք առժամ թախիծն իմ սրտի...
Ոհ, դալար մընաք, մեր կյանքի ծաղկունք,
Ժպտացեք այդպես ամեն անցորդի:

ՋՈՆԳՈՒՐԻՍ

Ք՛ո պատմածներն,– այդ ձայները տրտմության,
Հառաչանքով, հեծեծանքով մշտական
Հուշում են ինձ հին օրերի հիշատակով թախծաբեր:

Է՛յ իմ չոնգուր, երբևիցե երանի
Ուրախ հնչյուն քեզնից լսած լինեի,
Որ իմ վշտոտ սրտի ցավին դարման լիներ,
մեղմացներ:

* * *

Հայոց ապաբախտ գրողը նըստած
Ու միտք էր անում.– ինչ անեմ, աստված,
Թերթը փող չունի,– վարձ չի վըճարում,
Գիրքն առնող չունի,– գիրք չի վաճառվում,
[Անվարձ ու անհաց] ես ինչպես գըրեմ.
Սակայն... բան չըկա, պետք է համբերեմ.
Երբ որ լրանա 40 տարի,
Ազգը հոբելյան պիտի կատարի:
– Կախարդական այն աշխարհում երջանիկ,
Ուր ապրում են երազները...
– Էդ ինչ ես նըստել, այ... մարդ
. . . . . անհոգ ու անդարդ,
Եկել են ահա ձմեռվան օրեր,
Պետք են մեզ պաշար, ձմեռվա շորեր:
– Ինձ մի՛ խանգարիր, հեռացիր, ա՛յ կին.
Կըլինի անշուշտ ամենն իր կարգին.
Դու միայն սպասիր 40 տարի...
Ազգը հոբելյան պիտի կատարի...
– Կախարդական այն աշխարհում երջանիկ,
Ուր ապ...
– Հայրի՛կ, ներս մըտավ ուսանող որդին.
Ինչ ասեմ հիմի ես իմ վարպետին.
Ասում էր՝ էգուց էլ դպրոց չըգա,
Ով փող չըբերի, ուսման վարձը տա:
– Հա՛, որդի, կըտանք, իրավ ես ասում.
Վարպետն էլ է մարդ, ապրել է ուզում...
Բայց թող սպասի 40 տարի...
Ազգը հոբելյան պիտի կատարի...
Ո՞րտեղ մնացի... ա՛յ քու վարպետը
[Ջրհանդամ] գընա, հենց դու էլ հետը...
«Կախարդական այն աշխարհում երջանիկ,

Ուր ...»:
– Պարոն, դուք երբ որ ունեիք կարիք,
Էնքան բան թողի ես ձեզ ապառիկ.
Ախար չէ՞ մեղք ենք... մենք էլ ենք ձերը,
Դռան մեջ կանգնեց խանութի տերը:
– Հա՛, կըտամ, կըտամ... ինչ ես խանգարում,
Տեսնում ես՝ նըստած [ես բան] եմ գըրում...
Գրնա, սպասիր 40 տարի...
Ազգը հոբելյան պիտի կատարի...
– Ո՞րտեղ մնացի... ինչ էի գըրում...
Ինչ եք ներս գալիս մարդու խանգարում...
«Կախարդական այն աշխարհում...»:
– Շատ համբերելուց կըտըրվեց չարես,
Քո պարտքը, ախպեր, պիտի վրճարե՛ս,
Թե՞ հենց միշտ էդպես հայոց գըրողը
Պիտի կըլանի ձեռն ընկած փողը...
[– Գրում եմ, ախպեր, հանգիստ թող արա,
Չի կորչիլ տված փողդ ինձ վրա.]
Դե գոնե սպասիր ... 40 տարի –
Ազգը հոբելյան պիտի կատարի...
Ինչ եղավ [թուղթս] գրիչս... որ կողմը կորավ...
Էսպես էլ մարդի՞կ կըլնեն անիրավ...
«Կախ...»:
Հոգին էլ էստեղ հասավ բերանը,
Ու մեծ գըրողը կանգնեց դռանը.
– Դեհ, ժամը հասավ, պատրաստվիր, պոետ,
[Տենչերդ] հավաքիր ու արի ինձ հետ –
Վա՛հ, այսպես անժամ... դրամաս հապա՞...
[Յնորք, ծրագիր,] ուսում... Եվրոպա...
Հըրեշտակն այստեղ այնպես ծիծաղեց,
Խեղճ մարդը, իսկույն դալկացավ, պաղեց...
Եվ էլ չըսպասեց 40 տարի...
Ազգը մեծ թաղում պիտի կատարի:

* * *

Այժըմ ահա ազատ եմ ես
Իմ մուզայի բըռնութ֊յունից,
Էլ չի տանջիլ սիրտըս այնպես –
Ցավ բերելով դեսից դենից...

* * *

Սիրելի ընկեր, որ պատահեցիր
Իմ և մուսայիս վեճի ժամանակ,
Զգալուն հոգով այնքան ցավեցիր,
Այնքան ջանացիր, որ մենք հաշտ մնանք,
Քեզ եմ նվիրում այս տրտում (?) էջը
Քեզ, որ հասկացար այն ծանր վեճը:

[Այսպիսի] ծանըր ու լուռ վեճերով
Մաշվում է մեր կյանքն.... սպառվում,
Հոգնում . . . . . .
Հոգու սրբազան կրակը մարում,
Անպտուղ դառնում կյանքը բեղմնավոր,
Թարշամում, ինչպես ծաղիկ մենավոր:

Այսպես է մեր մեջ գրողի կյանքը...
Եվ մեր աշխարհքում խավար (?) ու մթին,
Ո՞վ է հասկանում այս վեհ տանջանքը
Ո՞վ է թափանցում գրողի հոգին.
[Եվ ո՞վ է առնում իր սրտին մոտիկ...
Ո՞ւր է այն մարդը, ո՞ւր են այն մարդիկ:]

Ես ևս առած քնար գրողի,
Թեև շատ անշուք, երերուն (?) ու կարճ,
Անցել եմ կյանքում մի դժվար ուղի,
Կանգնել եմ անթիվ փորձության առաջ.
Վիճել եմ – անցել... և այժմ գրում,
Քեզ, որ իմացար, քեզ եմ նվիրում:

Անուշ ընկեր

Անցել են օրերն այն երանելի,
Հին հիշատակներ իզուր եմ կանչում,
Լռել են ձայներն ուրախ երգերի,
Եվ դաշտերն այնպես էլ չեն կանաչում.
Վիշտը չորացրեց լարերը սրտիս,
Ջեն դողում նրանք այլևս աշխույժ...

* * *

Շնորհավոր նոր կաղանդ.
Աստված ինձ տա նոր տաղանդ,
Իսկ ձեզ՝ խելոք մի փեսա,
Ամեն բանից լավն էս ա:

* * *

Ես պատվեր ունեմ,
Որ այսուհետև
Նըվեր չըտանեմ
Ո՛չ մեծ, ո՛չ թեթև,
Եվ խըտիր չկա –
Ով էլ որ լինի.
Թեկուզ աղջըկա
Մնըննդյան տոնի,
Եվ մինչև անգամ
Թեկուզ նա ըլի
Եվ լավ բարեկամ
Եվ շատ սիրելի: –
Ես կարող էի
Խնդրել Մուսային,
Թե մի բան գրի
Մեր Մարուսյային,
Բայց, ավա՛ղ, նա էլ,
Ինչ եկավ նոր «Մուրճ»,
Շատ է փըչացել,
Դառել թանկ ու լուրջ,
Եվ էլ ոչ մի տող
Չի գրում անփող:

Սիրելի

Խորն է քո հոգին երկրնքի նման,
Գաղտնիքներ ունի իր խորքում ահեղ...
Եվ ցույց ես տալիս այժըմ դու ճամփան,
Որ քո սիրելին ներս մտնի այնտեղ...
Ով դու անզգույշ, ստեղծման օրից
Հայտնի [. . . . . .]
Տերն ինքը լավին ողջ էակներից
Ընտրեց ու տարավ խորքերն երկրնքի.

Այնտեղ անպատում լիության միջին,
Անվերջ երջանիկ, լուսեղեն հարկում...
Եվ սակայն, հանկարծ, իրան Արարչին
Ուզեց կողոպտել երկրնքի խորքում:

Մնացած<ն> արդեն դու գիտես անշուշտ.
Երկուսն էլ հիմա տանջվում են տրտում,
Մեկը երկրնքում մըռայլ ու մենակ,
Իսկ մյուսը մերժված՝ խավար անդընդում:

Զգույշ կաց, ընկեր, թեկուզ «սիրելի»-
Մի բանար հոգիդ նորա առաջին.
Դու ներս կըթողնես, նա ներս կըմտնի,
Նա... որ դավ նյութեց նույնիսկ Արարչին:

* * *

Մեր սիրելի հայր Ճուղուրով,
Նորամանկանդ ոտն ուղուրով,
Բարի բախտով լինի թող սա
Ու քեզ բերի մի լավ փեսա։
Ոչ թե գըրող և կամ տերտեր,
Հետն էլ հազար ցավ ու դարդեր,
Այլ մի հարուստ – մի Մանթաշով,
Փող ունենա իրան քաշով,
Որ երբ լըսի գըրքից – երգից,
Կուշտ ծիծաղի սըրտի խորքից։

ՀԱՆԵԼՈՒԿ

Հապա գտեք, էն ո՞վ էին,
Որ մի դարում նշան տըվին,
Իսկ մյուս դարում ամուսնացան,
Ոչ թոռմեցին, ոչ ծերացան,
Ու մընացին մինչև պըսակ
Թարմ ու ջահել, ծաղկահասակ...

1901-Ի ՏԱՐԵՄՈՒՏԻՆ

Խոսքս, տեսաք, որ կատարվեց...
Բայց թե ձեզնից ո՞րը տարվեց,
Այդտեղ արդեն գործ չունեմ ես,
Էն մոցիքուլ տերտերի պես,
Որ ինչ անի,
Միշտ մեղ չունի...
Ինձ հանգ էր պետք, իսկ ձեզ՝ փեսա.
Ես ինչ գիտեմ խելոք է սա.
Հանգում բերեց խեղճ պոետը,
Ինքն էլ իսկույն եկավ հետը...
Այլ է հանգը,
Այլ է կյանքը,
Ինչ որ հանկարծ հանգում կըգա
Մեկ էլ տեսար՝ կյանքում չըկա,
Բայց և ինչ որ գտնեք կյանքում
Ջեք պատահիլ ոչ մի հանգում –
Եվ թող ամեն դարդ ու ցավիդ
Հանգն ու վերջը լինի Դավիթ։

Աջնիվ տիկնայք, ջահել հյուրեր

Աջնիվ տիկնայք, ջահել հյուրեր.
Շատ չեն կյանքում այսպես օրեր...
Եվ, միշտ այսպես, երբ որ լինի,
Նըստեք ուրախ մի սեղանի,
Ողջ մոռացած – սիրտ ու հոգի
Նըվիրեցեք տաղ ու երգի.
Բարձր երգեք խընդում ու սեր.
Շատ չեն լինում ուրախ օրեր:
Ահա լեռներ, կանաչ անտառ,
Գետի կարկաչ, երկինք պայծառ,
Եվ բաժակներս լի-փըրփըրուն,
Ինչպես այս մեր սրտերն եռուն,
Որ աշխուժով թըռչում են վեր.
Շատ չեն լինում այսպես ժամեր:
Բայց այստեղից, մեր սիրելի
Հալեյ, Քյարամ, Աբգար-օղլի,
Ուր ուզենաք դուք արշավել,
Ձը մոռանաք հեք Ուրավել,
Եվ այս հարկը, այ իգիթներ,
Շատ չեն լինում այսպես տըներ:

* * *

Հայր Գարեգին, մենք երեքով
Պոետ – գիտուն ազգին հայոց,
Ընտրվել ենք հանձնաժողով
Որ մոմ առնենք, սարքենք հոգոց:

Հոգոց սարքենք հայոց ժամում,
Աղոթք անենք ըստ հայ ժամի,
Որ տեր Աստված իր եդեմում
Տեղ տա հոգուն Ալիշանի:

Թեև, պետք է այս էլ ասել,
Ամբողջ տարով չենք գնում ժամ,
Ու ինչ օրից խելքի հասել,
Չենք հաղորդվել ոչ մի անգամ:

Չենք հավատում արքայության
Ինչքան լինի ցանկալի բան,
Ոչ էլ, ներեք, հայր Գարեգին,
Ձեր հոգոցին ու աղոթքին:

Հանգուցյալը նույնպես թեև
Հայ դրախտը չէր հավանում,
Ջուներ և մեր խեղճ ժամի հետ,
Կուզեր մընալ քավարանում:

Բայց մենք նրան երախտապարտ
Ցույց պիտի տանք մեր սերն անհուն,
Թեկուզ իրան կամքին ընդդեմ
Տանենք հայոց արքայության:

Գնա այնտեղ խընկենու տակ
Նըստի կողքին Լուսավորչի,
Ու ժամանակ առ ժամանակ
Երրորդության համար վիճի։

Արդարները տըկլոր-տըկլոր
Շուրջները գան բազմեն բոլոր,
Թամաշ անեն մեծ ծերերին,
Տեսնեն՝ որն է հաղթում որին։

Ահա այսպես բան ենք սիրում
Թե այս կյանքում, թե հանդերձյալ,
Նրա համար և ձեզ խընդրում
Ու կրկնում ենք նույնը դարձյալ։

Մենք ուզում ենք, որ մեր ազգի
Եկեղեցին լինի ազատ,
Կըրոնական չըլնի իսկի
Եվ տա ամեն համ ու լազաթ։

Դուք էլ, հայր սուրբ, լինեք մեզ հետ
Ազատամիտ, մեծահոգի,
Ու մըտածեք ինչպես պոետ,
Որ ազգ ազգից չի էլ ջոկի։

Դե տեսնում եք – ինչպես ենք մենք
Լուրջ-լայն նայում այս մեծ գործին,
Եվ դուք եթե հոգով չասեք,
Մենք կըդիմենք էջմիածին։

Իսկ թե մերժեն նաև այնտեղ
Մեր այս իղձը սաստիկ անմեղ,

Այն ժամանակ, օ՜, տեր իմ, տեր,
Որ մեզ շատ խելք պետք է տաս դեռ,

Այն ժամանակ, հայր Գարեգին,
Օ՜, էլ հանգիստ չեն ունենալ
Ոչ հանգուցյալ ծերի հոգին,
Ոչ գազեթը մեր լիբերալ։

Պատգամավոր Հ. Թումանյան

* * *

Թափառելով Բորժոմ-պարկում
Հիշում է Ձեզ և ուղարկում
Շատ բարևներ ու սեր անկեղծ
Ձեր բարեկամ մի բանաստեղծ։

* * *

Մընաս բարով, ուղտ բարեկամ,
Տըզզաց ճանճը, ամեն անգամ
Քո լավությունն ես կհիշեմ,
Շնորհակալ եմ, մընաս բարին։
– Ընչի՞ համար, խոժոռադեմ
Հարցմունք արավ էն վիթխարին։
– Ընչի համար – այ զարմանք բան,
Նրա համար, որ ինձ այսքան
Ցույց տըվիր դու պատիվ ու սեր,
Քո ականջում այսքան օրեր
Ապրել եմ ես ու տաք կացել...
Ասավ տըզզան մեր պանդուխտը։
– Ոչ գալըդ եմ ես իմացել,
Ոչ գընալըդ, ասավ ուղտը։

1904

* * *

Ինչ կարող է տալ մի պոետ
Քնքուշ, մաքուր, սըրտալի,
Ողջ տալիս եմ իմ գըրքի հետ,
Էլ բան չունեմ ավելի:

* * *

Իմ սիրելի Մըխիթարին
Եվ գեր-ազնիվ նորա յարին
Ու կըլտպըլտան լավ Թամարին,
Մեր փրկչական քսան դարին,
Քսան դարի չորրորդ տարին,
Չորրորդ տարու փետրվարին,
Փետրվարի տասնուվթ օրին
Նըվիրում է խորին-խորին,
Խորին սիրով ու հարգանքով,
Այսքան հանգով ու տանջանքով
Հեղինակը

<ԷՔՍՊՐՈՄՏ>

Կարմիր դրոշն ազատության
Բացվեց հայոց սարերում,
Ցոլաց շողքն առավոտյան,
Մեր աշխարհի խավարում։

Բացվեց, թնդաց քաջ Ֆիդայու
Հրացանը մահաբեր,
Հայ բողոքը տարավ հեռու՛,
Հեռու՛ աշխարհ ու ափեր։

Վե՛ր կաց, կանգնիր, դու տառապած
Հայոց դժբախտ ժողովուրդ,
Ու վեր կացավ հայը ցրված,
Արևելքից արևմուտք։

Վեր են կացել մի մարդու պես,
Թև են առել էն հողմից,
Արշավում են կռվի հանդես
Ամեն երկրից ու կողմից։

Խումբ է գալիս ծեր Կովկասից,
Հեռու ափից Նեղոսի,
Խումբ է գալիս երկրեն Պարսից,
Պաղ ձյուներեն Հյուսիսի։

Բանտ, կախաղան, սուր, հալածանք
Էլ չեն առնի սրրա դեմ,
Մինչև չըտան մեզ ազատ կյանք
Ու աշխարհը մեր եդեմ։

25 Կեցցե՛ դրոշն ազատության,
Բարձր ու մաքուր, հաստատուն,
Կեցցե՛ ծերուկ մեր Հայաստան,
Կարմիր Սասուն ու Զեյթուն...

* * *

Անցավ հին տարին, կանցնի և նորը.
Կանցնի՛ և արդյոք մեր անբախտ օրը։

* * *

Ну, господа! այսուհետև
Չի կարելի նայել թեթև,
Պետք է հոգալ, հըսկել արթուն,
Ինչո՞ւ է թանկ փողոցում ձուն,
Կամ թե անտեր այն շըները
Ո՞ւր են քընում գիշերները...
Պետք է այստեղ հարցը փակել
Ու միաձայն աղաղակել
Քաղաքի շահ,
Հա՛, հա՛, հա՛, հա՛...
Կամ կենտրոնը էլեկտրական,
Ինչո՞ւ [քաղքից] մոտ է այնքան,
Որ թե մի օր պայթի հանկարծ
Հինգերորդից ներքև կածի
Ութ երեխուն բանաստեղծի,
<Նրանց> կանի հանկարծամահ,
Հա՛, հա՛, <հա՛, հա՛>...

* * *

Հետներն առած պատգամ ու թուղթ
Գավառացիք, ելած ջուխտ-ջուխտ,
Եկան հարգով, սըրտի դողով
Համագումար հայոց ժողով։
– Բարով եկաք, հազար բարի,
Դուք ծաղիկներ մեր գավառի.
Ողջույն տվավ, ինչպես կարգն էր,
Մեր հինօրյա Թիֆլիզը ծեր.
Դուք, որ էդպես ջուխտ եք գալիս,
Բա մեզ քանի ձայն եք տալիս,
Գավառացի մեր ախպերտինք։
– Հինգ,
– Բայց Թիֆլիզը կենտրոն ու մեծ...
– Թող լինի վեց։
– Ջիջում արեք, մեկն ավելի։
– Ջի կարելի։
– Ուրեմն էդպե՞ս.
Դե հիմի տես։
Թիֆլիզն եկավ շարան-շարան,–
Ընկերություն, ուսումնարան,
Ինժեներներ, բըժիշկ, տերտեր,
Տիկին, գրող, բյուրո մի բեռ,
Խըմբագիրներ թերթերից շատ,
Երեցփոխներ մի քանի հատ,
Վանքից եկան,
Բանկից եկան,
Իրենց տանից,
Ու Գըլդանից...
– Ծո՛, էս ինչ է, աստծու խաթեր,
Էսպես ժողով չենք տեսել դեռ,

Այսուհետև ո՞ւր կըմնա
Գավառի ձայն... գավառի շահ...
Այսպես ասին
Ի միասին
Մեր Երևան, Գյումրին ու Կարս.
Աղա Թիֆլիզ նայեց թարս-թարս,
– Տեղըդ նըստի՛ր, կոպի՛տ գավառ.
Քառսուն ձայնով ձգեց հավար,
Այնպես թնդաց ու վեր կացավ,
Որ գավառը նոր հասկացավ,
Թե ինչին են սեյմը ասում,
Ինչ է իրեն վաղն ըսպասում,
Ու, վախեցած էս փորձանքից,
Հանեց իսկույն իրեն ցանկից:

* * *

Պարոնների դարը անցավ,
Պատճառը չեն հարցնում,
Անարդարության ծանր օրերից
Մենգրելիայի աշխարհում։

Պարոնները կերան ամբողջ
Աշխատանքը ժողովրդի,
Ժողովուրդն էլ ոտի կանգնեց,
Ելավ սարերն իր աշխարքի։

Էն անաստված պարոնները
Հավ չթողին ոչ մի գյուղում,
Եվ գյուղացին ու տերերը
Կռիվ արին Նապիչխովում։

Բայց խղճացին գյուղացիք,
Ջըկտրեցին գլուխները,
Ու գունատված նրանք էսպես
Շունչ քաշեցին իրենց տներում։

Նրանց խանում տիկինները
Կանանչ խաշեցին,
Սոված աղաները
Առանց ծամել կուլ տվին։

Կալվածատեր մարդ ու կնկան
Գոմի<ն> բուսավ երեք հավ,
Գիշերն իրենք վերից մըտան,
Մեծեն [էդ երեք] հավերն։

Զըգիտեին հասկ թակելը,
Իրար գլխի զարկեցին
Ու ձեռների փետե թակերն
Կոտրատեցին ու թողին։

Կոտրտանքն էլ ընկան, դիպան
Նրանց քնքույշ ոտներին –
Ամոթանքից ու զայրույթից...

* * *

Աշխենիկին՝ իր հայրիկը –
Ամեն տեսակ մրգով լիքը.
Պակաս էր միայն բադիբուդին,
Էն էլ եկող իր «Ծընունդին»:

* * *

Սիրելիք մեր, որ ի ժնև,
Նիկոլ, Դերենիկ և...
Այսօր ժողովյալ
Ի վերնատուն,
Հիշեմք անցյալ
Մեր խընդություն
Ուրախ հանդես,
զՄեր Բայրոն և զԲրանդես...
որ ար<>... բարձր ափին վճիտ լիմանի,
Ուր շուրջանակի լեռներ գեղանի
Որ ուժ են տալի թույլին ու հեգին,
Վազում են թափով սիրատենչ էգին...
Եվ զերթ արծիվներ թևածալ, քոստո,
Ըմբոստացումներեն կըռված հերըսոթ
(հիանալի կոթ)
Ջենք իմանում,
Ինչ են անում,
Ուր են գընում,
Ուր են քընում,
Ինչ են ուտում,
Թե հենց տըրտում,
Տըրտում, տըրտում,
Վիշտը սըրտում,
Միշտ կըտըրտում,
Միշտ պըտըրտում
«Տեսիլը կյանքի?
Ոչ այս աշխարհից...

Օ՛ն և օ՛ն,
Ո՛վ նոր Բայրոն,
Որ ի Շիլոն,
Եվ Բրանդես եգիպտացի,
Որ Վերնատուն տվյալ քացի
Փախար Սուեզ
Գոնե էնտեղ դայիմ կացի,
Որ չըկորսվես...

III

Իսկ մենք – այն է,
Շեքսպիր, Հայնե,
Նահապետ, Նիցշե,
Էս էլ քիչ չէ....

4

Տվյալ Թվին այս փրկչական,
Որ շատ արյուն և շատ կական
Ի վերա մեր հասյալ կան,
Եվ ետևից դեռ պիտի գան,
(Ով Թշվառ ազգ մեր հայկական):
Տվյալ այս Թուղթ,
Ձեզ, ով պանդուխտ
Եղբարց մերոց
Կորելոց,
Եվ կարոտելոց,
Բայրոնա երկրորդի
Եվ Բրանդես շանորդի...

Եվ արդ,
Բարդ-բարդ
Ամենքին պարտ,
Սակայն հպարտ
Ու միշտ Գերմարդ,
Մնում ենք ձեզ
Կարոտակեզ
Ես՝
Օհաննես,
Ավօն,
Լևոն։

Ի մայրաքաղաքն հայոց և վրաց,
Որի համար են միշտ կռված։
Ազգք երկուքյան ի սկզբանե,
Ձեր կարոտը մեզ կըսպանե...

Վկա ենք մենք Ջավո, Օլյա...

* * *

Ոչ խանդս է մարել,
Ոչ մուզաս մեռել –
Սակայն չեմ կարող
Այժմ բան գրել։

Կարծես թե օդում,
Կարծես իմ սրտում
Մի թույն է <1 անընթ.>
Մի խորշակ խեղդում։

Ղվձեր ու տենչանք,
Թախիծ ու տանջանք,
Բոլորը տկար
Նիրհում են անկյանք։

Եվ հողմանման
Կորչում է անձայն
Սրբազան շունչը
Ոգևորության։

Ոչ, ես չեմ կարող
[Ձեզ] համար գրել
[Ձեզ ոգևորող]
Թեկուզ երկու տող։

Այս միայն կըգրեմ,
Միշտ էլ կը խնդրեմ,
Որ ինձ հավատաք,
Երբ որ ասում եմ –

Ոչ խանդս է մարել,
Ոչ մուգաս մեռել,
Սակայն չեմ կարող,
Ջեմ կարող գրել։

Ես տակավին մանկուց գիտեմ
Հիմար խոսել, սուտ ժըպտալ,
Եվ սիրում եմ՝ շատ մարդկանց դեմ
Ես դիմակով երևալ:

Եվ շատ չըքեր գիտեն կյանքում,
Որ թեպետև ես՝ պոետ,
Եվ ըզգում եմ, և մըտածում
Հաշտ-համաձայն իրենց հետ:

Ժըպտում եմ, ու ... դուրս է գալիս
Խըխունջն իրեն պատենից,
Արևի տակ ցույց է տալիս
[Իրեն] փոքրիկ պոզերն ինձ:

Մինչդեռ գաղտուկ, իրեն պաշտպան
Քողի տակից, մեն մենակ,
Իմ լուռ, խոհուն փիլիսոփան
Քընընում է շարունակ...

Ո՛վ, ինչ հաճույք, երբ որ գիտես
Եղանակներ բազմազան,
Նվագում ես, հանում հանդես
Եվ մարդ, ճըճի և գազան:

Ու ողջ՝ հըլու – քո թովչանքին՝
Ցույց են տալիս ինչ ունեն,
Որ դու հասու լինիս կյանքին,
Գաղտնիք չըլնի [քո առջև]:

* * *

Յոլուն աստղեր, ջինջ եթերում
Ապրում եք դուք միշտ պայծառ,
Ձեզ չեն հասնում, ձեզ չեն տիրում
Յածի մըրրիկն ու խավար։

Ես էլ այդպես շատ ցընորքներ,
Շատ երազներ ունիմ հուր,
Որ ապրում են կյանքից շատ վեր,
Միշտ անարատ, միշտ մաքուր։

[Ու միշտ մաքուր գիտեմ սիրել,
Լուռ վըշտանալ ձեզ նըման,
Էն լուռ վըշտով, հուր սիրով էլ
Թրռչել, մարել հավիտյան։]

* * *

Դու գընում ես Անդարձ ճամփան
Մըշտադալար աշխարհքի։
. . . դալար իմ Անուշ,
Ուր անհայտ են, ուր որ չըկան
Էս չարիքի ու կարիքի
Ամեն մի կիրք, ամեն հուշ,

Ուր լոկ վերին կարեկցության
Շողն է կապում կոպիտ ու ցած
Էս կյանքի հետ ապաբախտ,
Ու վայրերում անմահական
Մարդն ապրում է հոգիացած,
Միշտ երջանիկ ու անհաղթ։

Ո՛վ, դու մանկուց քաջածանոթ
Էդ լույս ճամփին երկնաճեմ,
Քանի անգամ հըրաթև
Անցել եմ ես, ոտներս ամպոտ,
Հասել աշխարհքն էն եդեմ –
Բայց միշտ, ավաղ, կարճատև։

* * *

Բոլորն հանգել են – ոչ մեկը չըկան...
Եվ բանաստեղծի սրտումը հանգան
Վառ կրակները,
Աշխույժն ու սերը,
Սև ու սուգ հագավ
Թախիծը եկավ,
Սառով ու մութով:

* * *

Մեկը բարի, թախծոտ ու հեզ,
Մյուսը չար սատանի պես...

1911

* * *

Ես «Մշակի» աշխատակից,
Տունս էկզարխի տանը կից.
Ես փեսա եմ քահանայի,
Միշտ կարդում եմ խորենացի.
Դաս եմ տալիս գրաբար լեզու,
Կալված ունիմ մեկ չէ, երկու...

* * *

Հրացաններ են ճայթում սրտիս մեջ,
Հրացաններ են ճայթում անդադար,
Ու լաց են լինում սարսափած ու խեղճ
Որբ երեխաներ անթիվ, անհամար:

– Ինչո՞ւ եք լալիս, անմեղ փոքրիկներ...
Ձեր հայրերն ընկա՞ն <ամենը> կըռվում...
Էլ ոչ ոք չըկա՞, որ ձեզ պաշտպանի...
Վախենո՞ւմ եք դուք էս չար աշխարհում...
Խեղճ երեխաներ, անիծվի աշխարհն,
Ուր որ դողում է ձեր մանուկ հոգին,
Անիծված լինի, քանդվի, կործանվի
Իրեն մթերած չարության տակին...

Հրացաններ են ճայթում սրտիս մեջ,
Հրացաններ են ճայթում անդադար,
Ու լաց են լինում սարսափած ու խեղճ
Հայրեր ու մայրեր, անթիվ, անհամար:

– Ինչո՞ւ եք լալիս, դժբախտ ծնողներ,
Ձեր որդիքն ընկա՞ն <1 անընթ> կըռվում.
Էլ բան չըմնաց կյանքում ձեզ համար,
Էլ ոչ ոք չըկա՝ ձեզ մխիթարի.
Ու ողբում եք դուք դատարկ աշխարհում...
Դըժբախտ ծնողներ, անիծված լինին,
Որ դատարկեցին ձեր կյանքը էսպես.

Հրացաններ են ճայթում սրտիս մեջ,
Հրացաններ են ճայթում անդադար,
Ընդհանուր սուգ է ծավալվում անվերջ
Ու պաղ ոռնում է ժամանակը չար:

Եվ ժամանակը լինի անիծված,
Եվ աշխարհքը լի չարով ու թույնով,
Եվ մեր երգերը լինին անիծված
Լիքը արցունքով, լիքը արյունով:

* * *

Բարի իրիկուն, վշտալի մայրեր,
Ինչ ցեղ էլ լինեք,
Ինչ տեղ էլ լինեք,
. . . . ու սուգ
Իմ մայրերն եք դուք.
[Իմ մայրն էլ ձեզ պես,
Դուք էլ նրա պես,
Ճըրագի առջև,
Կըրակի առջև,
Դռան առաջև
Կամ լուսամուտի,]
Անկողնում անքուն
Պատսյտ եք գալիս
Ճամփա եք պահում
Երբ պետք է ծեգի,
Երբ պետք է մըթնի,
[Երբ պետք է օրն անցնի,
Երբ կյանքը անցնի –
Տանջանքը անցնի]
[. . . . .]
Բարի իրիկուն, վշտալի մայրեր,
Որ գիշերն՝ անքուն, ցերեկը՝ երեր
Մի հոգս ունիք լոկ,
Ըրբ պիտի արդյոք
Էս կյանքը անցնի,
Տանջանքը անցնի:
Ինչ ցեղ էլ լինեք,
Ինչ տեղ էլ լինեք,
. . . . . ու սուգ
Իմ մայրերն եք դուք:

* * *

Նըրանց չըթաղեցին քրիստոնեի ծեսով,
Եվ նրանք գնացին աստծո դատաստան.
Այնպես ճեղքած, արնոտ երեսով։

Եվ ոչ մի աղոթք նրանց բաժին չեղավ,
Որ առաչնորդեր մեղավորներին,
Եվ ոչ մի մաղթանք – որ այնտեղ
Բարեխոս լիներ մեղքերի համար։

Միմիայն մի հույս ունեին նրանք,
Որ պահել էին մութ անտառներում,
Թե կա մի ուրիշ դատաստան ու կյանք
Մի տեղ – ուր մարդու ձեռը չի տիրում։

Եվ այն ծառերը, նրանց հոտն ու հովանին,
Էլ այն մարդիկը – նրանց կյանքն կանի (?)։

ԻՄ ԱՐՓԻԿԻՆ

[Ախ, Արփի՛կ ջան, որ արփի ես
Բացվում հոգուս երկընքում,
Գիտե՞ս քանի արփի բացվեց
Քեզնից առաջ էս կյանքում...]

Քո լույս ու կույս շաղով, շողով
Թարմ շաղախված իմ սըրտում
Անքուն վախով, թաքուն դողով
Էս սև ամպն է պըտըտվում...

[Բայց] դու փայլիր, խաղա, շողա,
Կյանքը լինի քեզ եդեմ,
Ցոլա, ժըպտա, հուր բոց տեղա
Արևմուտքի մութի դեմ:

Տիեզերք է իմ մեծ հոգին,
Դու իր արփին բոցավառ,
Սա անդունդներ ունի մըթին,
Դու անըստվեր ու պայծառ,

[Ախ, Արփի՛կ ջան, քանի՛-քանի՛
Սիրտ կա թաղված ոտիդ տակ,
Քանի արփի կա գեղանի
Սուզված խավարն անհատակ...]

ԵՐԵԽԻ ՆՄԱՆ

Երեխի նըման մըտա ես աշխարհ,
Անվերջ միամիտ, անխելք անձնըվեր.
Սըրտումըս ինչ կար, ձեռքիս ինչ որ կար՝
Բաժնեցի մարդկանց՝ [անսեր, անտարբեր]։

Երեխի նըման խաբեցին ինձ շատ,
Երազուն ու խենթ երեխի նըման.
Ծաղրեցին երազ, [և՛ սեր], և՛ հավատ,
Խընդացին վըրես իմ դեմ հանդիման։

Երեխի նըման վարվեցին ինձ հետ,
Մի խորթ ու օտար երեխի նըման.
Ամեն հաճույքիս նայեցին միշտ խեթ,
Վըրդովմունք տըվին ամեն մի վայրկյան։

Երեխի նըման տանջեցին ինձ բիրտ
Ընկեր, մերձավոր, և եղբայր, և կին.
Ես էլ հուսահատ, զըզված խորասիրտ
Երեխի նըման թողի ամենքին...

Եվ ահա էսպես՝ հոգնած ու վշտոտ,
Դադարգուն եղա, ամենքից փախա.
Ամենքից փախած գալիս եմ ձեզ մոտ –
Եվ դուք էլ, [ավա՛ղ], ինձ պես երեխա։

* * *

Ախտո՛ւս, որ չես տեսնում բընավ
Տագնապն հոգուս խոր ու վեհ.
Հազար անգամ ափսոս ու ցավ,
Որ պիտ տեսնես՝ երբևէ...

Экспромт

Մննդյան տոնին

Իմ Անուշը, իմ ողջը թանկ,
Իմ [խնդություն], իմ թարմ հրճվանք,
Աո քընարս... լանջիդ վըրա
Աստղի փայլով ցոլա թող նա,
Եվ երբ կյանքում պատի գիշեր
Ճամփա ցույց տա միշտ դեպի վեր։

* * *

Վան, Վան,
Շատ է հավան,
Ինչ զոհ տվի քեզ, ինչ զոհ տվի քեզ։
Ոչ ոք էդ տեսակ զոհ չի տվել
Յուր կուռքին,
Ոչ էլ նույնիսկ բռնակալներն անգութ
[որ ոչինչ] էդպես զոհ չէին բերում։
Իմ շնորհքը – բյուրապատիկ.
Իմ...

1919

* * *

Իրենց վաղանց կյանքի կեսին
Հովհաննեսը Հովհաննեսին։

* * *

Իմ Թամարիկին,
Որ իր հայրիկին
Ճանաչեց նոր –
Էսօր:

ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

(Իմ բարեկամ Շ. Միսաքյանին)

Իմ սըրտին զարկին էնքան գընդակներ,
Մեջտեղն էլ զարկին՝ անշուշտ մահաբեր...
Նայիր, թե ինչքան մեծ սիրտ ունեմ ես,–
Կանգնած եմ ահա, ու չեմ ընկել դեռ:

* * *

Ինչ էլ բաշխեն
Քեզ, իմ Աշխեն,
Սրանից վեր
Չըկա նվեր։

***

Օդն են ցընդել երազները մշուշոտ,
Փչում է պաղ դաժան քամին ձյունաբեր:
Իրեն արտում արյունաբույր ու փոշոտ
Նա ընկած է իմ առաջին կիսամեռ:
Ո՞վ է արդյոք հանցավորը նըզոված,
Հին թշնամին արյունառուշտ, անհավատ,
Բարեկա՞մը նենգավոր,
Թե՞ իր որդին պոռոտախոս, ապիկար...

ԱՐՈՒՍՅԱԿ

I

Պայծառ
Ու վառ
Շողեր հագած
Անապակ,

II

Ո՛վ, թարմ, ուրախ,
Շաղաղ-շարմաղ
Պայծառ ու պաղ
Լո՛ւյս:

Բարձըր սարի,
Ծաղկի, ջըրի,
Սիրո գերի
Կո՛ւյս:

Անտառ-բույսի,
Անտեր որսի,
Անսեր կույսի
Հո՛ւյս:
Կանանչ-ճերմակ

Աչերդ համակ
կիրք, ահ ու զարկ,
Հո՛ւյզ...

III

Ծագի՛ր, ծագի՛ր,
Զարկի՛ր, զարկի՛ր,
Զարի, չարքի
Մութն հալածի՛ր
Արուսյա՛կ,
Լույս ցերեկի
Դուռը բացիր,
Արուսյա՛կ:

Հիվանդն անքուն,
Տըխուր մահճին,
Ճամփորդն անտուն,
Ճամփի միջին
Մրնում են քեզ,
Երբ տի ծագես:

Հավքը [թառած]
Ծառի ճյուղից,
Ծառը [սառած]
Մրթրընշաղից
Մրնում են քեզ,
Երբ տի ծագես:

Հանդվորն հեռու,
Խուլ հանդերում,
Եղնիկն...

Խոր անտառում,
Մընում են քեզ,
Երբ տի ծագես:

Ծագի՛ր, ծագի՛ր,
Ջարկի՛ր, զարկի՛ր,
Ջարի, չարքի
Մութն հալածի՛ր.
Արուսյա՛կ,
Լույս ցերեկի,
Դուռը բացի՛ր,
Արուսյա՛կ:

IV

Ահա ծագեց,
Ահա զարկեց
Արուսյակը
Աչագեղ,
Լուս...
Ու ոսկեհեր
Նաժիշտներով իր շրքեղ:

Ջահը ձեռին,
Ցոլաց վերին
Դարպասներից
Վաղորդյան,
Վարդ մատներով
Ետ քաշեց ծով
Վարագույրը
Սև մըթան:
[Կանգնեց] հըզոր

Ու լուսավոր
Անափ ծովում
Լազուրի,
Ցոլաց, ցայտեց,
Հեռու նետեց
Խուրձերն [առատ]
Լույսերի:

Ու [լուսածին]
Մոր առաջին,
Ավետավոր
Համասփյուռ,
Թրոռավ թեթև,
Արագաթև
Քընքուշ մանուկն
Էն Զեփյուռ:

Ցողոտ, շաղոտ,
Անուշահոտ,
Թևին արավ
Ու գընաց,
Ջով հով տալով
Ու խայտալով
Դեպ աշխարհը
Քընեած:

Միլ ու ծաղիկ
Մեղմիկ-մեղմիկ
Օրորվեցին
Նազանքով.
Հազար ձեն ձուն
Օրհնեց աստծուն

Լիքը անճառ
Բերկրանքով։

Գիշերն հատած
Ու գունատված
Քաշվեց անդունդն
Իր մըթին,
Ջարքերն էլ ետ
Փախան անհետ
Փապարները
Խավարչտին։

Ամեն մի տուն,
Ամեն մի բուն
Լըցվեց լուսով նորածին,
Ամեն անբան
Ու բանական
Ելավ աշխույժ իր գործին։

V

Ու փայլում էր սեգ դիցուհին
Հաղթանակով աստվածային
Մութի դիմաց ջահը ձեռին –
Արևելքի երկընքում,
Լույս ու վվարթ երկընքում,
Լազուր ու վարդ երկընքում։

Մարդ, անասուն, թըռչուն, մրջյուն,
Ամեն մի ձեն, ամեն հընչյուն
Ուղարկում էր նըրան ողջույն
Արևելքի երկընքում էն։

– Փառք լուսաբեր աստղին էն պերճ,
Որ փայլում է խաղաղ, անշեջ
Քրնատ, գունատ աստղերի մեջ,
Արևելքի երկնքում էն:

VI

Մեգը բացվեց:
Հրպարտ ու մեծ,
Հագած ամբողջ կըրակ ու հուր,
Նըստած կառքը իր ոսկեհուռ,

Ճոխ ամպերը, կուտակ-կուտակ,
Առած իր շուրջն ու ոտի տակ,
Վեր բարձրացավ Արևը պերճ
Ու ճառագեց անհունի մեջ:
Փառքից հարբած
Ագահ աստված,
Փրռեց հայացքն ամենատես,
Ջափեց անչափն [ագահ ու վես]
Ու նկատեց... կապույտ հեռվում
Շողշողում էր ու վառվռում
Համայքներով հըրաշագեղ
Արուսյակը – շարմաղ, շըքեղ:

Կըրքից հարբած,
Հուր գիրկը բաց
Ողջ երկընքով, տիեզերքով,
[Առաջ] վարեց արագ ձեռքով
Նըժույգները իր ոսկեպայտ,
Շող շող տալով ու հըրացայտ,
Հասավ, առավ իր գըրկի մեջ,
Հալեց, ձուլեց իր փառքի մեջ...

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

(էջ 31)

12 Դփ — Սըրտիս ականջին պատմելով թաքուն...
20 Դփ, ԲԹ, ԲԲ — Այդ անդընդախոր ձորերըդ լըցնեմ։
22 Դփ — Սըրտիս այս տանջող վերքերի նըման.
ԲԹ, ԲԲ — Սըրտիս այս խորունկ վերքերի նըման.
23 Դփ — Աստծո հարվածի հետքերն եք դուք էլ,
27 Դփ, ԲԹ, ԲԲ — Դուք ՙլ եք, տեսնեմ, այնքան մեծ ու խոր,
28 Դփ ԲԹ — Հոգուս անհատակ թախիծն է ինչ որ...
ԲԲ — Ինչպես իմ հոգու թախիծն ահավոր...

1881

«ՀՈԳՈՒՍ ՀԱՏՈՐ...»

(էջ 32)

4 ինք. — Ունի նաև՝ Մի զարմանար

1887

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

(էջ 34)

Հատված

Մեր պապերն էլ ունեին թագ,
Սուր ունեին ձեռքներին,

Նրանց թոռները ոտնատակ,
Ա՛յ, հասել են այս օրին։

Էլ աշխատանք, հավատ, հույս, սեր,
Էլ մեր դառը քրտինքը,
Շատ են կոտրել այդպես սրեր,
Ողորմած է երկինքը։

5-7 ինք., ՄԾ, Դ, Դփ, ԲԹ
Քաշիր, եզը, ուսիդ մատաղ,
Քաշիր, քաշենք, վար անենք,
Ճիպտին արա, քշիր հոտաղ,

12-ից հետո ինք., ՄԾ
Դեհ քաշեցեք, դեհ քաշեցեք,
Էլ մեր դառը քրտինքը,
Զարչարվեցեք, աշխատեցեք –
Ողորմած է երկինքը։

ԲՄ II
Երեխեքը մերկ ու տկլոր –
Կրակն ածես հոտ չի գալ,
Սոված նստած են, ամեն օր
Հարևանը հաց չի տալ։

ԲՄ II, Դ
Պակասությունը սևերես է,
Հալածված եմ իմ տանից,
Մինչև հարկ է, պարտք է, ծես է,
Կըլրացնեմ գութանից[1]։

13-24 ինքնագիրը չունի։
13-20 ԲՄ II չունի։

17 Դ, Դփ
Ջեռքս պատարկ, ուժըս հատած։

20-ից հետո Դփ
Ինչ որ աչքս բաց եմ արել
Պակաս եմ ու պարտական,
Քո մաճըդ եմ ձեռքըս առել,
Իմ ապավեն – իմ գութան։

Աստված հերու կարկուտ ղըրկեց,
Բարկացել էր ինձ վըրա,

[1] Դ-ում քեզանից

Մի կողմից էլ բանդեն[1] զըրկեց,
Կորչում էի սովամահ...

Բայց չըգիտեմ ես վըհատել,
Սուվ, եկ[2] լինի, թե երաշտ,
Խոփ ու ձևիչըդ կարկատել,
Դուրս եմ եկել կրկին դաշտ...

ԱՄԱՌՎԱ ԳԻՇԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ
(էջ 35)

Տարբերակ

ԱՄԱՌԱՅԻՆ ԳԻՇԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Լուսընկա գիշեր,
Երկինքը պայծառ.
Անհամար աստղեր
Ճրըքճրըքում են վառ:

Քնած է Դսեղ՝
Հին հայի գյուղը,
Մթնած ու լուռ է
Գյուղացու խուղը:

Եվ ժիր գյուղական
Ընտանիքն ահա,
Սրահում, կալում,
Կամ կտրի վերա,

Խոնջացած օրվան
Դառն աշխատանքից,
Ոտնուծոց արած,*
Քնած են հանգիստ:

---

[1] Դպ-ում՝ հողեղենը, մարդը:

[2] Դպ-ում՝ անձրևային:

* Գյուղերում վերմակի սակավության պատճառով ոտնուծոց են անվանում – մի վերմակի տակ պառկում են այս և հակառակ կողմերից, այնպես որ մեկի ոտները մյուսի ծոցին է լինում:

Մեր-մանուկ այսպես
Գրկված են, քնած.
Վերևիցն ասես
Ժպտում է աստված:

Միայն աղմկում է
Այս լուռ յությունը
Գյուղացու սայլի
Խուլ ճռնչյունը:

Եվ նրա գլխին
Կանգնած գյուղացին
Հորովել է երգում,
Հանգիստ է հոգին:

Երջանիկ է նա
Բնության գրկում,
Հոգետանջ ցավեր
Ջունե յուր սրտում:

6 Լ II *Հովտում ողջ գյուղը*

ՀԻՆ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ
(Եջ 36)

2 Հհ, Դի *Իրանց հասակի կարգով, ծալապատակ,*
11-12 *Նըրանց առաջին գլխամերկ կանգնած,*
Ձեռքներս խոնարհ կրծքներիս դրած,
19 *Եվ մեզ օրհնեցին. «Ապրե՛ք, երեխե՛ք,*
22-23 *Ուրախ երգերըս վշտալի դարձան*
Եվ ես հիշեցի մեր օրը լալիս,
27 *Խաղաղություն ձեզ, մեր խելոք պապեր,*

1888

ՆԱՀԱՏԱԿ
(էջ 38)

Ինքնագրի մշակման պատկերը

2	Երկնաբերձ լեռան [ծառաշատ] կրծքին,
3 ա	Դրախտի հուսով մի սուրբ նահատակ,
բ	Հանգչում է վաղուց մի սուրբ նահատակ,
4 ա	Հանգչում է հնուց, դարերից ի վեր
բ	Կուսական և թավ ծմակի միջին,
9-18 Չի պահպանվել:	
28 ա	Բարձրացավ տաճար մի մեծակամար:
բ	Բարձրացավ խորան գեղեցկակամար:
25-37 Չի պահպանվել:	
39	Եվ ժողովուրդը
	(տողի շարունակությունը չի գրված)
44	Մարդկերանցն անհայտ մեղքերի համար:
47-56 Չի պահպանվել:	
65-73 Չի պահպանվել:	
83-92 Չի պահպանվել:	
101-104 Չի պահպանվել:	

1889

«ՆԵՐԻՐ, Ո՛Վ ԿՈՒՅՍ, ՈՐ ՀՈՒՉԵՑԻ...»
(էջ 49)

13 ինք.	Ների՛ր, ո՛վ կույս, եռմունքիս

«ԵՐԲ ԵՍ ՏԽՈՒՐ, ՀՈՒՍԱՀԱՏ... »
(էջ 51)

10 ինք.	Ունի նաև՝ Հուսադրում է [ինձ] հանկարծ.

«ԱՅԴ ԻՆՁ ՍՐՏԱՄԱՇ ՏԽՐՈՒԹՅՈՒՆ Է ՔԵԶ...»
(էջ 53)

Ինքնագիր հատվածի մշակման պատկերը

5 Իմ հայրենիքս տխուր...
7 ա Ամեն տեղ միայն [բռնության անարգ]
բ Ամեն տեղ միայն, միայն ցավ...
17 Մի՞թե տրտմության թախիծը այդպես
19 ա [Եվ] մի՞թե [երբեք էլ] չէ երգելու
բ Մի՞թե այլևս նա չէ երգելու
20 ա [Նա իր] պապերի երգած խրախույսը,
բ Իրան պապերի երգած խրախույսը:

«ՊԱՆԴՈՒԽՏՆ ԵՐԳԵՑ ՕՏԱՐ ԵՐԿՐՈՒՄ...»
(էջ 56)

23 ինք. Ունի նաև՝ խեղճը [երգեց], ողբաց մենակ...

«ՄՒ ՈՐՈՆԻՐ ՄԻ ԺԱՄԱՆԱԿ...»
(էջ 57)

4-7 ԲՄ Եվ դատարկ է տեղը հիմա:
Մի՛ արտասվիր... հեռո՛ւ, խնդրեմ.
Քո հայացքից միայն տխրագեմ
Հիշատակներ պիտի զարթնեն,

ԴԻՇԵՐԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՍՏՂԻ ԴԻՄԱՑ
(էջ 64)

2 ինք. [Հանգչում են] խավարի գրկում արդեն
ընկղմված,
6 Այն սիրատենչակ սիրահարներին,

20-ից հետո — [Դուն ավետեցիր ժամն հանգստության
խոնջացած մարդուն բազմաշարշարանք,
իսկ բանաստեղծին, իրան դյուրեկան
կրքերի հուզմունք և հոգու տանջանք]:

22-23 — Ինչպես սիրուհու փայփայած տենչանք,
Ամենայն գիշեր կրծքումս ծոշնում ես

ԴԱՐՁՅԱԼ ՆՐԱՆՑ
(էջ 67)

12 ինք. Ունի նաև՝ — [Հովանի] բերել հռչակված լոբին.

«Ո՛Հ, ԽՆԱՅԵՑԵՔ, ՄԻ ՀԻՇԵՑՆԵՔ ԻՆՁ... »
(էջ 69)

Տարբերակ I

Ո՛հ, խնայեցեք, մի հիշեցնեք ինձ,
Թե ինչպես էր նա արտասուք թափում,
երբ չարագործի նենգավոր խոսքից
խաբված, ակներև կորուստն էր ողբում.

Ես կանգնած էի տկար և անզոր,
Ջգայուն սրտով լուռ հանդիսական,
Ա՜խ, ինչպես հանկարծ բացվեցավ լեզուս
Եվ ինչպես նրան կանգնեցի պաշտպան:

Եվ այնուհետև, ո՛վ երանություն,
Մի օր էր, մի ժամ, գուցե մի վայրկյան...

---

9 Գ ինք. Եվ այնուհետև ես լավ չեմ հիշում, թե այն օրվանից
10-ից հետո [Սիրո ժամերը այսպես են հաշվում]

Հեռու ինձանից զուր հիշողություն
Առաջին սիրո անհույս կորստյան.

Մի՛ հիշեցնեք, մի՛, թե ինչպես դաժան
Մարդիկ իրարից անջատեցին մեզ,
Թե ոնց եմ ապրում նրանից բաժան.
Թողե՛ք ինձ հանգիստ, ես դոհ եմ այնպես...

Օ՛, ես չեմ կարող չարշարվել անվերջ,
Ուզում եմ խնդալ ցավերից հեռի,
Եվ մոռացության ալիքների մեջ
Թաղել հիշատակն անցած օրերի:

Տարբերակ I I

Ո՛հ, խնայեցեք, մի՛ հիշեցնեք ինձ,
Թե ինչպես էր նա արտասուք թափում,
Երբ չարագործի նենգավոր խոսքից
Խաբված, [ընկել էր] ակներև կորուստն էր ողբում:
[Մինչդեռ ծնկաչոք նա հեկեկալով
Սիրտ էր կտրատում,
Այն քարասիրտը ժպիրհ ծիծաղով
Նայում էր անփույթ և չէր ամաչում.]
Ես կանգնած էի տկար ու անզոր,
Զգայուն սրտով լուռ հանդիսական,
Ա՛խ, ինչպես հանկարծ բացվեցավ լեզուս,
Եվ ինչպես նրան կանգնեցի պաշտպան:

11·14 *Հեռու ինձանից [տխուր հիշատակն] զուր հիշողություն*
Իմ [երանության] հստակ սիրո անհույս կորստյան
[Օ՛] Մի՛ հիշեցնեք, մի՛, թե ինչպես դաժան
Մարդիկ իրարից [մեզ բաժան] անջատեցին մեզ,

17·18 *[Չէ՛] Օ՛, ես չեմ կարող չարշարվել անվերջ*
Ուզում եմ խնդալ...

8 ԲՄ II	Բախտը չի մատնել սիրո վտանգին։
10	Մարդիկ իրարից անջատեցին մեզ,
12	Թողեք ինձ հանգիստ – ես գոհ եմ այսպես…
12-ից հետո	Ո՛հ, ես չեմ կարող չարչարվել անվերջ,
	Ուզում եմ խնդալ ցավերից հեռի,
	Եվ մոռացության ալիքների մեջ
	Թաղել հիշատակն անցած օրերի։

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ
(էջ 70)

ԹԹԳԳ1079/5-2-ում պահվող քառատողը

Ա՛յ, մեր աղքատ հարևանի
Որդին տկլոր ու սալար,
Կտեր ծայրին կուչ եկած
Լաց է լինում միալար։

Ինքնագիր հատվածի մշակման պատկերը

23	Ա՛խ, անհանգիստ, չար եղբայրը
25 ա	Մեղեդիական ձայն մայրենի
բ	Եվ մայրական
գ	Մորս ձայնը մեղեդիական
28 ա	Հետևում է [ինձ] զգույշ։
բ	Ինձ հետևում է զգույշ։

«Ո՛Հ, ՄԵՂՄԱՑՆԵԼ ՉԵՍ ԿԱՐՈՂ ԴՈՒՆ…»
(էջ 73)

Ա ինքնագրի մշակման պատկերը

Սկսվում է 21-րդ տողից.

21 ա	[Բայց աղաղակն] և գոյության
բ	Կյանքի աղմուկն և գոյության

27 ա	[Հափշտակված] և համարձակ
բ	Ոգևորված և համարձակ
35 ա	[Անգիտությամբ և ինքնակամ]
բ	Հափշտակված, հոժարակամ
37 ա	Հոգիս անչափ է տրտում,
բ	Հոգիստ տխուր է, տրտում.

Վերջում ունի նաև մեկ հավելյալ քառատող.

Եվ ինձ տեսնել, խորտակվածին
Նորից [դժվար է] էլ շունչ առնել,
Բայց [իմանաս] դու գիտես, թե ինչպես եմ
Ուզում ազատ սավառնել:

ՀԱՄԵՐԳ
(էջ 81)

5 Բոլոր մյուս հրատարակություններում.

	Ինչպես ծերունին ձայնով պառաված,
6-7 ԲՄ II, Դփ	Զայնակցում է յուր թոռնիկի երգին,
	Այնպես է մոտիկ անտառը կամաց
8-9 ԲՄ II, Դփ, ԲԲ	Արձագանք տալիս ջրի աղմուկին:
	Սակայն բնության զվարթ համերգի
10 ԲՄ II, Դփ	Անխոս ունկնդիրն հավիտենական,
ԲԹ, ԲԲ	Ունկնդիրն անխոս, հավիտենական,
11 ԲՄ II, Դփ	Ժայռը մտախոհ յուր անհայտ մտքի

ԳԻՇԵՐ
(էջ 87)

25 Տգ, ԲԲ	Այն ճամփորդն է, ճամփի տակին
27	Այն ծնողն է իր զավակին
31	Այն կտրիճն է հայրենատենչ

«ԿՈՒՐԾՔՍ ԵՐԲԵՄՆ ԵՒ Է ԳԱԼԻՍ ԵՎ ՀՈՒՋՎՈՒՄ...»
(էջ 89)

2 ՄՃ	Ես մնում եմ անշարժ, ինչպես մի արձան,
6	Եվ սիրատենչ կուսի կուրծքին է փարվում,
8	Աշխատողի տխուր ճակատը համբուրում...

1891

«Ա՜խ, ԵՍ ԵՐԱՆԻ...»
(էջ 94)

3-4 ՄՃ	Սաստիկ ճայթյունով
	Ամպերի միջից
5 ՄՃ, ԲՄ II, Դփ	Թռչնի վերև,
7-9	Եվ պատառեի
	Կամարն երկնքի,
	Յույց տայի երկրին

ԿԱՆՉ
(էջ 96)

15-16 ինք., ԲՄ II	Եթե դու Աստված
	Ես խաղաղության:
23	Խլացավ իսկույն
40-ից հետո ինք.	Ինչո՞ւ չես գալիս,
	Ո՞ւր ես, եթե կաս,
	Թե դու չես տալիս
	Խեղճին պատուհաս,

Այս քառատողը ԲՄ II-ում դրված է 53-րդ տողից հետո և սրանով ավարտվում է ոտանավորը:

ՆՎԵՐ ԱՆ. ԱԲ.-ԻՆ
(Էջ 100)

1-4 ինք. չունի

11 Եվ թռչունները, որ ճռվողելով,

ՍԱՐԵՐՈՒՄ
(Էջ 103)

1 ինք., ԲՄ II Մութը արդեն գետինն առավ

4-5 Եվ ողջ թաղվեց խավարում.
Տխուր, ամպած երկնքիցը

6 ինք. Կամաց անձրև է շաղում:

ԲՄ II Մանր անձրև է շաղում:

7-8 ինք., ԲՄ II Հեռու լերանց հետևիցը
Մերթ ծուխիանն է խաղում:

11 Պտրտվելով սարի տակից

12-ից հետո Բինում լռեց աղաղակը,
Եվ հանգչում են վաստակած,
Միայն վրանում հանգչող կրակը
Մերթ բռնկում է հանկարծ:

13-15 Բայց հովիվը դեռ արթուն է,
Դեռ կանգնած է արխաջում,
Անքուն աչքով դեռ հսկում է

25-28 ԲԹ չունի

28 ինք., ԲՄ II Մութն է դիշերն – ակնակիր

28-ից հետո ինք. Հեղեղը խուլ շրըփում է,
Վայր է հոսում անընդհատ,
Աչքն ակամա մարդ խփում է
Եվ կանգնում է հուսահատ:

ԲՄ II Հեղեղը խուլ շրըփում է,
Վայր է հոսում անընդհատ,
«Տարան... հասեք... » դեռ լսվում է
Հովվի ձայնը հեռացած:

Ինքնագրում կան հետևյալ հեղինակային ծանոթագրությունները.
Ա. Քոշաքար սարը գտնվում է Սևանա լճի հյուսիսային կողմը:

Բ. Բինա – սարվորի վրանների խումբ։
Գ. Արխաջ – տեղը, ուր վեր են անում (կանգնեցնում են) ոչխարների հոտը։
Դ. («Հէյ հեյ՛» համար) – Մի բացականչություն է, որով հովիվը հայտնում է յուր արթնությունը և սպասում է գողերին կամ գազաններին։
Ե. Հավար – օգնության աղերս-բացականչություն։

Հեղինակային ծանոթագրություններ կան նաև ԲՄ II-ում.
Ա. Ծովիան – փայլակ։
Բ. Արխաջ, թուրքերեն բառ է – հոտի բացօդյա հանգստության տեղն է։
Գ. («Թևի» համար) – Այն որոշյալ տեղն է, որտեղից շունը հսկում է։

«ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՐԵԼ Է ԿՅԱՆՔԻՆ...»
(էջ 107)

15 ինք. Ունի նաև՝ *Մի՞թե չեք սիրում հայոց պարծանքը,*

ԽԵՂՃ ԱԴԱՄՅԱՆ
(էջ 109)

3-5 ինք. *Այն շրթունքները պատմում էին ինձ*
Լիրի, Համլետի, տաք մավրի սրտից,
Այն աչքերն ուժեղ հրով ցոլանում –

ԱՍՏՂԵՐԻ ՀԵՏ
(էջ 111)

Տարբերակ

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՄՏՈՐՄՈՒՆՔ

Էյ աստղե՛ր, աստղե՛ր,
Երկընքի աչքեր,
Որ այդպես ցրված
Շողում եք վառված,–
Գիտե՞ք թե ինչեր

Կամ ինչ գիշերներ
Հիշեցնում եք ինձ...
Ապշեցնում եք ինձ.–
Շողում էիք դուք,
Երբ ես դեռ մանուկ,
Աշխույժ ու կայտառ,
Ձեզ նման պայծառ,
Թրթռում էի
Եվ ցավ չունեի:
Շողում եք և արդ,
Երբ երիտասարդ,
Անհուն հույսերով,
Խանդավառ սիրով
Եվ միշտ ուշառու
Նայում եմ հեռու...
Կշողաք նաև
Շիրիմիս վերև...

«ԵՐԲ ԽՈՍՈՒՄ ԷԻՐ, ՊԱՏՄՈՒՄ ԷԻՐ ԻՆՁ...»
(էջ 112)

10-11 ԲՄ II *Մերթ վառվում էին բարկության հրով...*
Ինձ թվում էր, թե երազում էի,
13 *Մի խուլ մուզիկա և ոչ թե բարբառ...*

ՈՒՐՈՒ
(էջ 115)

10-ից հետո «Թատրոն» *Օ՛, միթե դո՞ւ ես,*
Որ երևում ես
Նազելի շնորհքով,

---

6 ինք. ա *Կամ ինչ գիշերներ* *18 ինք. ա* *Սրտալի սիրով*
բ *Քանի գիշերներ* *բ* *Թրթռուն սիրով*
11 ինք. ա *Աշխույժ ու կայտառ,* *19 ինք. ա* *[Եվ միշտ աննկուն],*
բ *Տակավին կայտառ,* *20 ինք. բ* *Նայում եմ հեռուն:*

Եվ թաշկինակով
երեսըդ ծածկած
Լալիս ես կամաց...
14 Իմ լուռ սենեկի
16 Այդ դո՞ւ ես լինում։

«ՍԻՐԵԼԻ ԱՉԵՐ...»
(Էջ 116)

5 Տղ Լցնում եք հոգիս,
8 Յանկութիւնով լի
18-19 Ձեզ ապշած պաշտել
Ես միայն կուզեի,

«ԹԵ ՀՈԳՆԵԼ ԵՍ ՀԱՂԹԱՀԱՐՎԱԾ...»
(Էջ 117)

Ինքնագրի մշակման պատկերը

2 ա Կյանքի մանր հոգսերով,
բ Կյանքի անվերջ հոգսերով,
23 ա Ցույց տուր ո՞ւր է այնտեղ աստված,
բ Այնտեղ պիտի լինի աստված,
գ Այնտեղ պիտի ապրի աստված,

1892

ՔՐԻՍՏՈՄՆ ԱՆԱՊԱՏՈՒՄ
(Էջ 121)

3 ՄՃ, Դ, Դփ Գլխիկոր, նստած, մտախոհ և լուռ,
5 ինք. Նրա ճակատը մութն էր առավել
ՄՃ, ԲՄ II, Դ, Դփ Նորա ճակատը մութն էր առավել
7 ինք., ՄՃ, ԲՄ II, Դ, Դփ Նա պատրաստվում էր սեր-լույս ծավալել

9-10 ինք., ՄՃ, ԲՄ II	*Այնտեղ լսում էր աղմուկը մարդկանց* *Անօրենք երկրի ամեն մի ծայրից.*
11 ինք., ՄՃ	*Ցավում էր նրա սիրտը վշտացած*
ԲՄ II	*Ցավում էր նորա մեծ սիրտը շարժված*
Դ, Դփ	*Եվ վշտանում էր սիրտն աստվածային*
12 ինք., ՄՃ	*Մոլության անհոգ երգերից ձայնից.*
ԲՄ II	*Մոլության երգի և սուգի ձայնից.*
Դ. Դփ	*Մոլության երգի, սուգի ձայներից...*
13 ԲՄ II	*Եվ անապատում մի քարի վերա*
ԲԲ	*Եվ անապատի մի քարի վրրա*
24 ինք., ՄՃ, ԲՄ II, Դ, Դփ	*Միայնակ նստած արտասվում էր նա...*

«ՄՈՒԹՆ ԷՐ ԵՐԿԻՆՔԸ. ՈՉ ՈՔ ՉՐՏԵՍԱՎ...»
(էջ 123)

3-4 ՄՃ, ԲՄ II, Դ, Դփ	*Միայն առավոտյան, երբ որ լուսացավ,* *Մարգարտաւիպայլ ցող իջել էր դաշտում:*
7	*Միմիայն տողերում, երբ որ կարդացին,*

«ԲԱՆԱՍՏԵՂԸՐ ՄԵՐԱՅԵԼ Է...»
(էջ 124)

7 ինք. Ունի նաև՝	*Դեպի նորան, կամքով որի*

ԱՌԱՎՈՏ
(էջ 126)

2 ԲՄ II	*Ահռելի սարսափ գիշակերների...*

«ԵՍ ՍԻՐԵԼ ԵՄ ՎԱՐԴԸ ՏՐԾԳՈՒՅՆ...»
(էջ 127)

3 ԲԹ, ԲԲ	*Մելամաղձոտ խաղաղություն*
9 ինք.	*Բայց և տանել անկարող եմ,*

11 Ջասել՝ ինչով ես ուրախ եմ, (բախտավոր եմ)

ՀԻՇԻՐ...
(էջ 128)

7 ԲՄ II Նրա սերը մնաց անհաս,

«ԻՆՁ ՄԻ ԽԸՆԴՐԻՐ, ԵՍ ՉԵՄ ԵՐԳԻ...»
(էջ 129)

1-4 ԲՄ II, Դ, Դփ Ինձ մի՛ խընդրիր, ես չեմ երգիլ,
Շատ է տխուր իմ երգը,
Նորա[1] ձայնը կըխորտակի
Քնքույշ սրտիդ բերկրանքը.
7 ԲՄ II, Դ Ես երգեցի սարի վերա,
8 ԲՄ II, Դ, Դփ Եվ չորացան խոտ ու վարդ,
12-ից հետո ԲՄ II, Դ, Դփ Ես երգեցի կես գիշերին,
Վառ աստղերը իմ երգից
Գունատվեցան, դողդողացին
Եվ չքացան երկնքից.
Մեկը միայն[2], որ փայլում էր,
15-16 Այն էլ մահվան աստղն էր...
Որ մի սիրո երգ հյուսեի
18 Եվ երգեի քեզ համար,
Թույն ու թախիծ և գիշեր:

ԿԱՍԿԱԾ
(էջ 131)

1 ինք. Ո՞վ ես չար ոգի, որ իմ լուռ սրտում
ՄՃ Ո՞վ ես չար ոգի, որ դու իմ սրտում

[1] ԲՄ II Նրա
[2] ԲՄ II միմիայն

2 ինք., Մճ, Դ — Այսպիսի անխիղճ վճիռ ես կարդում...
5 ինք., Մճ — Կրծաղրեն մի օր քո անբիծ սերը,

«ՍԻՐԵԼԻ ՋԻՎԱՆ, ԸՆԿԵՐԴ ԻՄ ՀՈԳՈՒ...»
(էջ 132)

3 ինք. Ունի նաև՝ — Եվ քո երգերը երգիդ հարազատ,

ԱՄԱՌԱՅԻՆ ԵՐԵԿՈ
(էջ 137)

6 Մճ — Երկիրն ունկնդիր այս անխոսք ճառին,
8 — Փառավորում է մեծազոր տերին:

«ՍԸՐՏԻՍ ԹԱԳՈՒՀԻ...»
(էջ 138)

9 Տզ, Դ — Միմիայն Քե տեսնեմ
11 Տզ, Դ, Դփ — Միմիայն Քե ասեմ՝

ՏԵՆՋ
(էջ 140)

5 ինք., Մճ, Դ — Բարձրանային իրար վերա անդադար
16-ից հետո ինք. — Նույնպես կուզեմ դուք էլ տեսնեք իմ հոգին,
Որ, տեսնելիս, նորա հուզմունքն ահագին
Այդ ձեր հպարտ ուշք ու միտքը կլանի,
Այն ժամանակ սիրտս հանգիստ կըլինի,

ՎԱՏ ՕՐԵՐ
(էջ 142)

1 Մճ, Դ, Դփ — Յուրտ է, իմ ընկեր, և հոգմ ահագին.
3 — Խուլ որոտում է երկինքը խավար.
5 Մճ — Պըտրում են, կարծես, մի տեղ, օ՜ֆևան,

Դ, Դփ	Փընտրում են, կարծես, մի տեղ – օթևան,
6-ից հետո Մճ, Դ, Դփ	Այս աղետակոծ, մոլի և չնչին
	Կյանքի ցավերի, դավերի միջին,
7 Մճ, Դ, Դփ, ԲԲ	Այս խավար, ճընշող, ցուրտ մրթնոլորտում
9 Մճ, Դ, Դփ	Մտածմունքներս, տենչերս աննենգ,

ԱՂԲՅՈՒՐ
(էջ 145)

1 ինք. ա	Ականակիտ ջուր էր բխում,
բ	Ջուր էր բխում լանջերում,
Լ II, 1909	Սարալանջում, ժայռի տակ,
2 ինք. ա	Սարալանջում ծաղկավետ
բ	Ծաղկադալար սարերի,
3	Եվ անօգուտ ճահճանում
Աղ	Եվ ցրվելով խոտերում
4 ինք. ա	Ցրվում հանդերում, կանաչում:
բ	Թավուտներում [դալարի]:
5	Նորա առջև մի խոր գուշ[1]
6 ինք., Աղ	Շինեց հովիվն ու տարավ
7 ինք.	Եվ խոսքերով փաղաքուշ,
Աղ	Ջայն ածելով փաղաքուշ,
8 ինք.	Ջրեց հոտը յուր ծարավ:
9 ինք., Աղ	Պախրեն անցավ այն սարից
12 ինք. ա	Հապա վերև աստրծուն:
բ	Հետո նայեց աստրծուն:
13-20 ինքնագիրը չունի	
17-19 Աղ	Ապա թե իր օրհնանքը
	Մաղթեց մարդը այն բարի.
	«Քո շինողիդ օր-կյանքը

ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ
(էջ 146)

15-16 Ա ինք.	Հենց փաթաթվել ես թխպոտ ամպերում,
	[կարծես] Ջես ուզում ասես էլ տեսնել արև:

[1] ինք. փոքրիկ փոս:

16-ից հետո Այստեղ տուր ձեռքդ, մոտեցիր, ընկեր,
Մի նայիր ետև, ինչ է կատարվում...
Մենք խո եղբայր ենք դարերից ի վեր,
Մեզ խո միևնույն կրակն է այրում:

Մոտեց <իր>... իմ հին բարեկամ,
Եվ թող որոտան լեռները բոլոր,
Թող լինեն վկա մեր նոր հաշտության –
Խոսքը վերջացրեց Մասիսն ալևոր:
19 Այն սեգ լեռները [համբուրվում] ողջունում էին

1893

«ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱՎ... ԱՀ, ԵՎ ԱՅՍ ՀՈՇ...»
(էջ 149)

Տարբերակ

ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱՎ

Քրիստոս հարյավ... ա՛խ երանի
Կենդանանար իմ մեջ էլ
[Խնդությունը] Սուրբ եռանդը հին օրերի,
Որ շատ վաղուց է շիջել:

5 Երանի թե նույն սաստկությամբ
Սիրո կիրքը ևս հառներ,
Երկինքս էլի դառնար անամպ,
Միտքըս ուժգին սավառներ...:

Լռի՛ր, անմիտ, ինչ ես լալիս
10 Վհատ ձայնով ծերուքյան,
Դեռ քո ճամփին լույս է տալիս
Ճառագայթը վաղորդյան:

---

[1]Ունի նաև՝ Մեզ խո միևնույն կարոտն է այրում:

Դեռ կան հոգուդ գաղտնարանում
Կյանքի ժպիտ, սիրո բոց.
15 [Նրանք կարթնեն] Պիտի հառնեն որպես հնում
Քրիստոս հարյավ՝ի մեռելոց։

«ՀՈՍԻՐ, ԱՐՏԱՍՈՒՔՍ ԱՆԿԵՂԾ ՏԽՐՈՒԹՅԱՆ...»
(էջ 152)

2-3 ինք. *[Որպես] գարնան հորդահոս տարափի նման,*
Որ ծաղկեցնում է [խոպ] ծարավ արտերը...

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՆԿԱՐԻ ԱՌՋԵՎ
(էջ 154)

1-3 Մճ, Դ, Դփ *Ծանր ալիքները լայն օվկիանոսի,*
Խառնելով շերտը մռայլ մշուշի,
Կուտակվում էին գոռալով ահեղ,
5 *Անեզր և անվերջ*
8 *Մեր նկարիչը հուզված տարերքին.*
9 *Եվ հնազանդված հանճարի ձայնին,*
ԲԲ *Եվ լուռ, հընազանդ հանճարի ձայնին,*
10 Մճ *Սև ալիքները, փոթորկի ժամին։*
11 Մճ, Դ, Դփ *Կտավի վերա*

ՀԱՅ ՈՒԽՏԱՎՈՐԻՆ
(էջ 155)

1-2 Տզ, Լ V *Գնա՛ս բարով, հայ ուխտավոր,*
Երանի քեզ, ա՛յ ուխտավոր,
4 *Ուխտ ես գնում դեպ Այրարատ։*
9 Տզ *Եվ կարոտած աչքի նըման*
ՆԱ, ԲԲ *Եվ հարազատ աչքի նըման*
12-14 Տզ *Հար կըխաղա ալյոք վետ-վետ*

կրփայլփլի ծրփանքներով,
կրհորինի լույսերի ծով:

15-16 Տզ չունի

16 ՀԳ *Սևանում է, ինչպես սև ամպ...*
16-ից հետո ՆԱ *Ո՞վ իմանա՝ ինչն է հուզում,*
ինչ է հիշում, ինչ է ուզում...
17 Տզ *Հապա այն սա՛րն, այն սար հսկան,*
ԼՎ *Իսկ Մասիսը, էն սար հսկան,*
18-19 Տզ *Այն սարերի սարն ու արքան,*
Կապույտ երկնի ծոցը մըտած,
20 ԲԲ *Ճերմակ գլուխը ամպեր փաթթած,*
21 ԼՎ *Ահա կանգնեց վեհ ու տրտում*
22 Տզ *Քո առաջևն ու քո սրտում...*
ԼՎ *Քու առաջին ու քու սրտում...*

23-50 ԼՎ չունի

29 Տզ *Այն երկնահաս Մասյաց կատար,*
30-ից հետո *Այս էլ հիշիր աղոթքիդ մեջ,*
Կարոտ հոգով հայրենատենչ
Եվ լավ դիտե դու սրտադող
Հայոց անվան այն վեհ կոթող:

31-32 չունի

36-37 Տզ, ՆԱ *Կըբարձրանա սուր-սուր գըմբեթ,*
Ու կըխոսի մարդու հոգուն՝
39 Տզ *Այնտեղ, արյան դարերից վեր,*
44 ՆԱ *Էնտեղ լցված անեղ հոգով,*
47-50 Տզ չունի:

---

52 Տզ *Տաճարը սուրբ, լեռն ահագին,*
54 *Արծիվ Հայրիկ ունենք այնտեղ,*
60 ինք. *Որ հողմերուն ծաղր կանի,*
61-62 ինք., Տզ *Այնտեղ արքուն կանգնել է նա,*
Լուսավորչի շիրմի վերա,
65 ինք. *Եվ արծիվի աչքերն հընոց,*
Եվ արծվի աչքերն հընոց,
66-67 Տզ չունի
68 ինք. *Հովվե ցրված իր ճուտերուն...*

ՆԱ ՆՍՏԱԾ ԷՐ...
(էջ 158)

4 Տզ	Այնպես ազդու պատմում էր վիշտն իր սրտի,

ԽՐՃԻԹՈՒՄ
(էջ 159)

7 ինք. ա	– Մենք հաց չունենք, ձեզ մատաղ ես,
բ	– Քիչ էլ կացեք
10 Լույս	Դու ասացիր՝ քարափին
11 ինք. ա	Հենց որ դիպչի շողքն արևի
բ	Հենց որ զարկի շողքն արևի
Լույս	Երբ որ զարկի շողքն արևի
17-18 ինք.	[– Հաց չի գըտել ձեր ապին դեռ
	Տուն չի գալի սևերես.]
22-23 Լույս	Նա շատ ունի այնտեղ հաց...
	Նա ձեզ այնքան շատ է սիրո՛ւմ...
25	Կերթամ այնտեղ նըրան կասեմ,
28-ից հետո	Ասավ, սեղմեց սովալըլուկ
	Ջավակներին իր լանջին,
	Ու շըրթունքի վըրա դալուկ
	Սառավ համբույրը վերջին:
33	Կրոներն էլ ետ չըբացվեցան
35	Աչքը փակեց ու հավիտյան

«Լույսում» վերջին երկու քառատողերի տեղերը փոխված են:

ՆՈՐ ՏԱՐԻ
(էջ 161)

Ա ինքնագրի մշակման պատկերը

4 ա	Անցի[ր], գընա,
բ	Անցի, գընա,
8 ա	Ջերմ ժըպիտով,
բ	Վառ ժըպիտով,
12 ա	Ծաղկի վ[եր]ից,
բ	Ծաղկի վըրից,
35 ա	Մի [մահով] էլ
բ	Մի ճամփով էլ
3 Տզ	Գլխիս վրայից
5	Որպես մի օր
8 Բ ինք.	Տաք ժըպիտով,
12 Տզ	Ծաղկի վրայից,
30	Եվ թե մի մարդ...
31-38 Բ ինք.	Միայն իրար Ջեն[ք] հասկանում, Բայց ապրում են[ք] [Նույն] Մի սահմանում, [Ու նույն մահով] Մի ճամփով էլ Պիտի գնան[ք], Կըրկին ձուլվեն[ք], Մի հող դառնան[ք],

39-44 Բ ինքնագրում ջնջված են, փոխարենը կա հետևյալ քառատողը, նույնպես ջնջված.

[Ու մեզանից
Հետո էլ գեռ
Անվերջ նոր կյանք,
Նոր տարիներ...]

«ԵՍ ԱՍԱՑԻ, – ԴՈՒ ԾԱՂԿՈՒՄ ԵՍ...»
(էջ 163)

5 ՀՀ, ԲԲ Միմիայն, ափսո՜ս, սիրտդ է մեռած,
Դփ Միայն, ափսոս, սիրտդ է մեռած,
6 ՀՀ, ԲԲ Միմիայն նա է չոր քեզանում...
7 Նա հառաչեց և ինձ ասաց.
8 «Միմիայն սիրտս չես տեսնում»:

ԺՊՏՈՒՆ ԱՉՔԵՐ
(էջ 164)

Տարբերակ

Դու շատ մի՛ գերվիլ ժըպտուն աչքերին.
Նրանք շատ անգամ ծաղիկներ են վառ,
Բուսած կորստյան անդունդի ծայրին
Միամիտներին քարշելու համար:

Ահա պոետն էլ մի անգամ գերվեց
ժպտուն աչքերի հըրապուրանքին,
Նրանից հետո էլ վախճան չըկա
Նորա ըզգայուն հոգու տանջանքին:

Օ՛, մի՛ հավատալ ժըպտուն աչքերին,
Նրանք շատ անգամ ծաղիկներ են վառ,
Թունավոր օձ է պառկած տակերին,
Ներքև նախանձի դժոխք է խավար:

Ահա պոետն էլ շատ ու շատ անգամ
Խաբված այդպիսի ժըպտուն աչքերից,
Զարամիտներին դարձավ բարեկամ,
Եվ խեղճի սիրտը մաշվեց դավերից:

Դու շատ մի՛ խաբվիլ ժըպտուն աչքերից,
Նրանք շատ հաճախ ծաղիկներ են վառ,

Բուսնում են սրտի ավերակներից՝
Տխուր հատակը ծածկելու համար:

Ահա պոետն էլ, որ այնքան հաճախ
Մվ տատապել է, և՛ վշտեր ունի,
Ողջը ծածկելով ժպտում է ուրախ,
Կարծես քեզանից բախտավոր լինի...

1 ԲԲ Դու մի՛ հավատար ժըպտուն աչքերին
3-4 ԲԹ, ԲԲ Բուսած կորստյան անդունդի ծայրին
Միամիտ մարդկանց քարշելու համար:
8 ԲԲ Եվ որքան սըրտում գանգատներ ունի...
9 ԲԹ, ԲԲ Դու շատ մի՛ խաբվիր ժպտուն աչքերից,
14 ԲԹ Ու սըրտում այնքան գանգատներ ունի,
ԲԲ Որ սըրտում այնքան գանգատներ ունի,
15 ԲԹ, ԲԲ Բայց հաճախ այնպես ժպտում է զվարթ,

ՄԻ ՀԱՒԱՏՔԱՆՔ
(էջ 165)

8 ՀՀ, Դփ, ԲԲ Եվ սիրտս բացվեց,
9 ՀՀ Եվ նորա միջից.
Դփ Եվ նորա խորքից,
ԲԲ Եվ նըրա միջից,

---

5 ինք. Ահա պոետն էլ մի անգամ խաբվեց
9 Դու շատ մի՛ խաբվիլ ժըպտուն աչքերին –
11 Թունավոր օձ է պառկած տակներին, –
13 Ահա պոետն էլ մի քանի անգամ
16 Եվ խեղճի սիրտը մեռավ դավերից:

ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ
(էջ 166)

3 Դփ — Եվ նորաբույս վառ ծաղիկներ
11 Դփ, ԲԹ, ԲԲ — Նրանք սիրո այն խոսքերն են,
12-ից հետո Դփ — Նրանք իմ ջերմ համբույրներն են,
Այն աշխարհից ուղարկված,
Որի ճամփան քո առաջև
Գերեզմանով է փակված...
Քեզ համար եմ ողջ ուղարկել,
Որ քո կուրծքը զարդարես,
Որ իմանաս, թեև մեռել,
Ջեմ մոռացել սակայն քեզ...
Եվ թե մի օր, անուշ ընկեր,
Գաս այցելու իմ շիրմին,
Հիշիր այս օրն և միտդ բեր
Քո հեռացած մտերմին.
Նա, կարկամած շրթունքներով,
Գերեզմանի մութ խորքում,
Ըսփոփվում է դեռ քո սիրով,
Քո անունն է դեռ երգում...
12-ից հետո ԲԲ — Նրանք իմ ջերմ համբույրներն են,
Այն աշխարհից ուղարկված,
Որի ճամփեն քո առաջև
Գերեզմանով է փակված...

ԵՐԿՈՒ ՍԵՎ ԱՄՊ
(էջ 167)

2 Դփ — Գահը իրանց հանգստության,
5 Դփ — Սակայն հողմի չար հոսանքով
6-7 Դփ, ԲԹ, ԲԲ — Բաժանել չէր կարողանում,
Որքան նըրանց լայն երկընքով

9 *Եվ անդադար գընում էին*

11 Դվ *Իրար կըպած ի միասին*

1895

Ո՞Վ ՏԱՐԱՎ
(էջ 168)

Նախնական գրառման պատկերը

ա *Դուք ինձանից մի [հիշատակարան] տարաք*
Մի հիշատակարան,
Իսկ ես քեզանից տարա հիշատակ,
Մեկը կորչելու, մաշվելու է շուտով,
Մյուսը՝ մնալու է հավիտյան.

բ *Դուք ինձնից տարաք հիշատակարան,*
Իսկ ես ձեզանից տարա հիշատակ –
Մեկը մաշվելու,
Մյուսը հավիտյան կըմնա,
Մեկը պահելու սեղանի վրա,
Մյուսը՝ սրտում,
Մեկը, որ մի թուղթ գրելու,
Մյուսը՝ [արժանի] սրտում կրելու,
Արդյոք ո՞վ տարավ:

Բ ինքնագրի մշակման պատկերը

4 ա *Մյուսը [հավիտյան] կըմնա:*

բ *Մյուսը կըմնա երկար ժամանակ:*

5 ա *[Մեկը] նյութական [է] գրելու,*

բ *Դուք այս նյութական թուղթը գրելու,*

6 ա *[Մյուսը] զգացմունք սըրտում կրելու.*

բ *Իսկ ես զգացմունք սըրտում կրելու.*

8 ա *[Մարմնիս և ճամփուս տիրում էին],*

բ	*[Պաշարել էին մարմինս և ուղիս],*
գ	*Մարմնիս և ճամփուս շուրջն էին տիրում,*
9 ա	*Ես այն մոռացա – այնքան ջերմություն*
բ	*Ես ոգևորիչ այնքան ջերմություն*
10 ա	*Գտա ձեր... սրտերում:*
բ	*Գտա զգայուն, ազնիվ սրտերում:*

1896

«ԵՐԱՆԻ ՆԸՐԱՆ, ՈՎ ՈՐ ՔԸՆԵԱԾ...»
(էջ 171)

Ա ինքնագրի մշակման պատկերը

3 ա	*Ով որ երազներ ունի դեռ պահած*
բ	*Ով որ երազներ ունի պահպանած*
5 ա	*Ա՛հ, վաղուց արթնած՝ ես շատ եմ հոգնել,*
բ	*Ա՛հ, վաղուց արթնած՝ մենք շատ ենք հոգնել,*
8 ա	*Ու պաղն է փըչում ապագա մութից:*
բ	*Ջոր պաղն է փըչում հեռավոր մութից:*

ԿԱՂՆԻ
(էջ 172)

2	*Հաստաբուն հսկա - ճյուղաշատ կաղնի:*
4	*Ճեղքել էր նրա կուրծքը շատ անգամ*
6-7	*Ապտակ էր տալիս բարձր կատարին*
	Գարնան կարկուտը, տոթ<երն> ամարան,
13 ա	*Ուժգին հանդիպում տոթին ու բուքին*
բ	*Գլուխը դեմ տված [համբերում էր]*
20-21	*Թեքվում էին ու իրար ականջում*
	Փսփսում, վախում դըժգոհ շըշընջում.-

ԳԱՂԹԱԿԱՆԻ ԵՐԳԸ
(էջ 173)

4 երկիր, ԲԲ — Քյաֆուր աշխարքում, անծանոթ ճամփում,
6-7 — Յարաբ ո՞ւր կերթա, յարաբ շա՞տ մընաց,
Ո՞րտեղ կըհատնի էս օրը յամա՛ն,
12 ԲԲ (մշակումը) ա — Քո բունը հերվան, [չինարու] գըլխին...
բ — Քո բունը հերվան էն բարդու գըլխին...
19 երկիր, ԲԲ — Ամեն հավք, անգո՛ւթ, իր բունը կերթա,
ԲԲ (մշակումը) ա — Ամեն հավք, անգո՛ւթ, իր բունը կերթա,
բ — Ամեն հավք, անգո՛ւթ, իր բունը ունի,
22-23 ԲԲ — Յարաբ ո՞ւր կերթա, յարաբ շա՞տ մընաց.
Ո՞րտեղ կըհատնի էս օրը յամա՛ն,

ԱՆԴԱՐՁ ՃԱՄՓՈՐԴՆԵՐ
(էջ 174)

5-8 Տգ — Մեկն ասում էր. – Ես ունեի
Զարմանազան ծաղիկներ,
Եվ բոլորը մարդկանց տըվի
Գարնան գոգովն առատաբեր:
10 — Զգացմունքներ ու կորով,
11 ԲԹ, ԲԲ, Տգ — Ես էլ ամբողջ նըրանց տըվի
12-13 Տգ — Սիրապարար երգերով
Մեկն ասում էր. – Ես թողեցի
14 Տգ, ԲԲ — Ջմեո՛ւ ու սև՛ այն հովտում
16 Տգ — Մի սիրտ տխուր ու տըրտում:
ԲԹ, ԲԲ — Մի սիրտ անհույս ու տըրտում:
17-18 ԲԲ — Մինը ասաց. – Բայց կըծաղկի
Այն հովիտը նորից նոր:
19 ԲԹ — Մյուսը այստեղ ոչինչ չասավ,
ԲԲ — Մյուսը այստեղ ոչինչ չասաց,
20 ԲԹ — Ու գընում էին գըլխիկոր...
21 ԲԹ, ԲԲ — Այսպես իմ կյանքն ու հին տարին,

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(էջ 175)

Ա ինքնագրի մշակման պատկերը

2 ա — Ջվարթ տառապող, սրտաբեկ ուրախ.
բ — Խնդացող տխուր, սրտաբեկ ուրախ.
3 ա — Հազիվ [ուզում եմ անփույթ] ծիծաղել
բ — Հազիվ ուզում եմ անհոգ ծիծաղել
4 ա — Եվ սրտիս խորքից հառաչում եմ «ախ»։
բ — Եվ սրտիս խորքից հառաչել եմ «ախ»։
13 ա — Շեշտակի թափով, խենթ ու մոլեգին
բ — Շեշտակի թափով բուռն ու մոլեգին
14 ա — Ամենայն կողմից [հարձակվում], հոսում,
բ — Ամենայն կողմից ցոլանում, հոսում,
գ — Ամենայն կողմից [երևում, ցայտում],
18 ա — Որ թաքնված են [մթության] ետև,
բ — Որ թաքնված են լուսյան ետև,
20 ա — [Եվ ոչ մարդկանց պես անփույթ ու թեթև]։
բ — Բայց [ոչ մարդկանց պես անփույթ ու թեթև]։
գ — Բայց ոչ ձեզ նման [անփույթ ու թեթև]։
դ — [Որ մարդկանց լսած ձայներ չեն թեթև]։
ե — [Որ մարդու լսած ձայներ չեն թեթև]։
զ — Որ [մարդկանց կարծեցած] հեշտ չեն ու թեթև։
է — Որ մարդկանց ասած հեշտ չեն ու թեթև։
ը — Որ լսածներիդ պես հեշտ չեն ու թեթև։
թ — Որ [այնքան էլ] ձեր լսածի պես
ժ — [Եվ նրանք սովորական հնչյուններ չեն թեթև]։
ժա — Որ [սովորական հնչյուն չեն թեթև]։
ժբ — [Որ մարդկանց համար շշունջ են թեթև]։
ժգ — Որ դեռ սրտերում շարժվում են թեթև։
ժդ — [Որ դուք չեք լսում մի շշուկ թեթև]։
22 ա — Եվ քնքուշ, և՛ բիրտ, և՛ թույլ, և՛ զվարթ,

բ	Եվ քնքուշ, և՛ կոշտ, և՛ թույլ, և՛ զվարթ,
23	Ինձ վեր են ձգում, ինձ քաշում են վեր,
24 ա	Մերթ խորտակվում եմ, մերթ կանգնում հպարտ:
բ	Մերթ խորտակվում եմ, մերթ ծփում հպարտ:
25-32 չունի	

ԵՐԿԱՐ ԳԻՇԵՐՆԵՐ
(էջ 181)

1-2 Տգ	Եվ չարչարվում եմ ես իմ անկողնում, Շրջվում եմ, շրջվում, վաստակած տրկար,
3-4 ԲԹ	Ու մրտքերն հոգիս հանգիստ չեն թողնում, Ու գիշերը մութ, գիշերը երկար:
6-8 Տգ	Անվերջ խնջույք էր կյանքը ինձ համար, Հրճվանքը աչքիս չէր թվում ունայն, Ոչ էլ գիշերը տաղտկալի, երկար:
8-ից հետո	Ըհ, ինչպես երազն այն գիշերների Եվ այն հանգիստը անվրդով, պայծառ, Բոլորը անցան աննըկատելի, Որ դարձնեն այսպես գիշերը երկար:
9	Եվ ցնորք, և՛ հույս, և՛ հրճվանք, և՛ սեր,
12	Եվ դարձրին այսպես գիշերը երկար:
12-ից հետո	Այժմ ահագին շիրմի քարի պես Ճնշում են կուրծքս մտքերը խավար, Եվ տրտնջում եմ, և տանջվում եմ ես, Եվ դար է թվում գիշերը երկար:
13	Ուզում եմ հանգչել – չեմ կարողանում,

ՏՐՏՄՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍՆԵՐԻՑ

Ա
(էջ 183)

6 ԲԹ Գութըդ կօրհնեն կոտորածի այս ձորում,
10 Այսքան ավեր, վիշտ ու ցավեր, հեծություն։

Բ
(էջ 184)

4 Տզ Ճամփաս մոռացա ահագին վըշտես,
7 Ցերեկը լսեցի աղաղակ ու բոթ,
12 Մինթե չըհասավ ժամը գըթության։

ԳԱՐՆԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ
(էջ 185)

2-3 Տզ Այն ճյուղալի ծառի տակին,
Երբ գնացինք դիմավորել
5-7 Այն լավ օրից տարիք անցած,
Ես այն ճամփով անցնում էի,
Եվ ականջիս դիպավ հանկարծ
10 Այն կենդանի ձայներն, ընկեր,
15 Դաշտում դալար ու ամայի
17-20 Լուռ ու դատարկ մարգի վրա
Մենակ կանգնած մընում էր նա,
Նա էլ կարծես, բան էր հիշում
Եվ տխրալի ձայնով շըրշում...
Միտըդ է գալիս մեր քեֆն, ընկեր,
Այն ճյուղալի ծառի տակին...
Բայց ո՞վ գիտե, ո՞ւր ես ընկել,
Եվ կըտեսնե՞նք միմյանց կըրկին։

ԱՅՆ ՕՐԻՑ
(էջ 191)

10-ից հետո Տզ

Եվ երազում եմ այն տեսությունը,
Որ լինելու է մի ուրիշ կյանքով,
Թևքվում եմ դեպի մահվան խոր քունը,
Սիրտս ճխում է հեռու հրճվանքով...
Եվ երազում եմ այն տեսությունը...

«ՏԽՈՒՐ ԳԻՇԵՐ, ՏՐՏՈՒՄ ԳԻՇԵՐ...»
(էջ 192)

Տարբերակ

ՏԽՈՒՐ ՋՐՈՒՅՑ

Տխո՛ւր գիշեր, տրտո՛ւմ գիշեր.
Վիշտս ու ես ենք արթուն մենակ
Եվ ուզում ենք մի լավ հիշել,
Թե որտեղից իրար գտանք:

– Ասա՛, իմ վիշտ, իմ սև թախիծ,
Այ անբաժան կյանքիս ընկեր,
Դու ո՞ր օրից կամ որտեղից,
Ինչ դեպքով ես ինձ հետ ընկել...
Եվ նա՝ տխուր սըրտիս խորքից,
Մեկ-մեկ հիշում-պատմում է ինձ:

– Է՛ շատ վաղուց, դու չես հիշում,
Մայրդ՝ նստած օրրանիդ մոտ՝
Մեղմիկ լալով, երգ էր ասում,
Տխուր «նանի՛կ» մելամաղձոտ,
Որ տակավին չես մոռացել.
Նրա հետ եմ սիրտդ մըտել...

Է՛ շատ վաղուց.– փոքր էիր դու,
Այդ քու փոքրիկ տըղի նըման,
Մի խաղընկեր ունեիր քույլ.

Որբ տղա էր. ողջ էլ նըրան
Մեծում էին ու խեղթ կանչում.
Այն օրից եմ քեզ ճանաչում...

– Աղեն մի օր դուռը կըտրած
Սպառնում էր պարտ-գյուղացուն.
Խեղճ աղքատը, ճարը հատած,
Ձայն էր տալիս վեր – Աստծուն,
– Խղճա՛, փրկի՛ր – առ հոգիս, Տե՛ր...
Այն օրից եմ ես քեզ ընկեր...

– Մի մարդ եկավ տոպրակն ուսին,
Տըկլոր մանչի թաթը բըռնած,
– Մեզ խղճացեք, սերն Հիսուսին,
Մեր աշխարհքից մենք հալածված՝
Թափառական եղանք այսպես...
Այն օրից եմ ծանոթ ես քեզ...

– Լավ չեմ հիշում նրան հիմա,-
Բարեկամ էր, ընկեր, թե կին,
Ահա, ասիր, միշտ իմն է սա,
Եվ գըրկեցիր դու կաթոգին,
Բայց նա ոտքեց հույսդ էլ, սերդ էլ.
Այն օրից եմ ես քեզ գըտել...

– Մի օր, հանկարծ, պա՛ղ, դալկահար՝
Քո սիրելին ընկավ-մեռավ.
Դու արցունքոտ աչքով տեսար,
Թե ինչպես նա հողում կորավ,
Էլ չերևա՛ց, ոչ մի անգամ.
Այն օրից ենք մենք բարեկամ...

Տխո՛ւր գիշեր, տրտո՛ւմ գիշեր.
Վիշտս ու ես ենք արթուն մենակ
Եվ ուզում ենք մի լավ հիշել,

50 Թե որտեղից իրար գըտանք.
Եվ անցքերը պատմում է նա,
Համրում է նա ու թիվ չըկա...

1899

ԿՈՐԱԾ ՅՆՈՐՔՆԵՐ
(էջ 203)

Ինքնագրի մշակման պատկերը

Վերնագիր ա — ԹՈՇՆԱԾ ԾԱՂԻԿՆԵՐ
բ — ԿՈՐԱԾ ՅՆՈՐՔՆԵՐ

1 ա — [Սուրում է քամին հայրենի] հովտում,
բ — Հեծում է մըրրիկն իմ դալար հովտում,
2 ա — [Տանում է դալուկ] ծաղկունքն իմ սիրած,
բ — Թոշնել են [վաղուց] ծաղկունքն իմ սիրած,
գ — Թոշնել են [ցրտից] ծաղկունքն իմ սիրած,
դ — Թոշնել են, թոումել ծաղկունքն իմ սիրած,
6 ա — Էյ, իմ վաղուցվան [կորած] ցընորքներ,
բ — Էյ, իմ վաղուցվան սիրուն ցընորքներ,
12 ա — Իմ [գանձերն] անհուն, իմ սերն անթառամ,
բ — Իմ հույսերն անհուն, իմ սերն անթառամ,
17 ա — [Սուլում է] մըրրիկն իմ անուշ հովտում.
բ — [Հեծում է] մըրրիկն իմ անուշ հովտում.
գ — Շընչում է մըրրիկն իմ անուշ հովտում.

«ՄՈՒԹ ՈՒ ԽԱՎԱՐ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ...»
(էջ 204)

Ա ինքնագրի մշակման պատկերը

2 ա	*[Մութն ու խավար], լուռ ու տրտում...*
բ	*Անլույս գիշեր, լուռ ու տրտում...*
5 ա	*[Տաճարներում] լուռ, անմրմունչ,*
բ	*Ժամի գլխով, լուռ, անմրմունչ,*
6 ա	*[Լուռ արցունքով] շիրմաց վերա,*
բ	*[Անտեր, տխուր] շիրմաց վերա,*
գ	*Տխուր, մամռոտ շիրմաց վերա,*
7 ա	*Մութ կիսավեր հյուղերի շուրջ,*
բ	*Տխուր, անտեր հյուղերի շուրջ,*
գ	*Ավեր, անտեր հյուղերի շուրջ,*
7 ա	*Մութ կիսավեր հյուղերի շուրջ,*
բ	*Տխուր, անտեր հյուղերի շուրջ,*
գ	*Ավեր, անտեր հյուղերի շուրջ,*
8 ա	*[Մեր հին, հնօրյա]*
բ	*Ուր լույս չըկա, ուր ձայն չըկա...*
Դրանցից առաջինը «Հայ վաճառականն» է՝ գրված 1883 թ., այսինքն այն ժամանակ, երբ բանաստեղծն ընդամենը տասնչորս տարեկան էր: Սա ոչ այնքան ապրված զգացման, որքան նախորդներից փոխանցված ռոմանտիկ-լուսավորական գաղափարների արտահայտություն է, որտեղ ուսուցիչների օրինակով Թումանյանը ևս այն հույսն է փայփայում, թե անարժան վարքագիծը դատապարտելով հնարավոր կլինի դարձի բերել հայ վաճառականին և նրա կարողությունը ծառայեցնել ազգի լուսավորությանն ու բարօրությանը: Նա գործի է դնում Րաֆֆու և Պատկանյանի բանաստեղծություններից արդեն ծանոթ հնարանքները, որպեսզի ծաղր ու ծանակի ենթարկի ընչաքաղցությունը, ժլատությունը, այն աղավաղված, օտար բառերով լեցուն լեզուն, որով խոսում է հայ վաճառականը, և այլն: Զայրացած կշտամբելով իր «հերոսին» այն բանի համար, որ նրան չի հուզում ոչ տուն ու տեղից զրկված վանեցի «եղբոր» վիճակը (նույնպես հայտնի Պատկանյանի երկերից), և ոչ այն, որ «սիրասուն» ազգը կրթական հաստատություններ չունի, պատանի բանաստեղծը հայ վաճառականին «դարձի բերելու» համար ուրիշ կռվան չի կարողանում գտնել, բան հիշեցնելը, թե «գաբրիելյան փողը» մի օր նրան էլ դամբարան կկանչի:

Մի տասնամյակ հետո արմատական փոփոխություններ են տեղի ունենում բանաստեղծի հայացքների մեջ: 1880-ական թվականների վերջն ու 90-ականների առաջին տարիները նրա կյանքում դառնում են հասարակական-սոցիալական տենդագին մտորումների տարիներ: Թիֆլիսի հոգևոր կոնսիստորիայում պաշտոնավարելիս բանաստեղծն արդեն ոչ թե տեսականորեն, այլ գործնականորեն է բախվում սոցիալական անարդարությանը և իր հոգեկան խռովքն ու բողոքն արտահայտում «Չարամիտներին», «Դարձյալ նրանց», «Այստեղ ահա ինչ են ասում...» և մի քանի այլ ոտանավորներում, որոնք, ինչպես ճիշտ

նկատել է Ա. Իճճիկյանը, նախապատրաստել են «Պոետն ու Մուսան» երգիծական պոեմի ծնունդը (ՈՒՀ, 1, 396):

Այս բանաստեղծությունների հմայքը հրապարակախոսական կրքոտ խոսքի մեջ է: Սրանք արդեն կրակված սրտի թելադրանքով գրված մեղադրականներ են: Երգիծական բանաստեղծությունների այս նոր շարքում հայ հարուստին վերադաստիարակելու միամիտ-լուսավորական գաղափարն այլևս գոյություն չունի: Խոսքը ոչ թե ազգի գործերի նկատմամբ անտարբեր, ժլատ վաճառականների, այլ «բանտի ու խավարի սպասավորների» մասին է, որոնք քստմնելի ոճիրներ են գործում: Սրանց հետ լեզու գտնելու պատրանք բանաստեղծն այլևս չունի: Սրանով է պայմանավորվում այս բանաստեղծությունների հասարակական արժեքը, թեև «կապված անմեղին» սեղանավորի ոտքերի տակ զոհելու պատրաստ իր «հերոսների» պատիժը նա դեռևս բարձրյալից է ակնկալում.

Հարցանում եք, թե ո՞ւր է աստվածը.–
Կհասնի նա ձեզ, բարկությամբ արդար
Արժանի մահով պատուհասելու,
Եվ ո՞վ պիտի ձեզ ցույց տա ճանապարհ
Նորա բարկության պատժից փախչելու:

Թե ինչ հնչեղություն են ունեցել այս տիպի բանաստեղծությունները, երևում է իր իսկ՝ բանաստեղծի հետևյալ վկայությունից դրանցից մեկի՝ «Պաչոտնու տրտունջը» ոտանավորի մասին՝ գրված 1898 թ. Ծուլավերում. «Այստեղ,– գրում է Թումանյանը մի նամակում,– մի ներկայացման համար մի ձեռաց ոտանավոր գրեցի Ծուլավերի պաչոտնիների վրա: Այնպիսի մի աղմուկ, մի խռովություն ընկավ, որ ներկայացման երեկոյան եթե նայեիր փողոցները – կկարծեիր, թե մի կարևոր բունք կա գյուղում: Ծիծաղելին այն էր, որ ամբոխը – պաչոտնիների ոտնատակած ամբոխն ավելի խիստ էր հուզվել: Սպառնալիքն այնպես մեծ եղավ, որ երիտասարդները պատրաստած ոտանավորը հանեցին ցուցակից, վախենալով, որ ինձ հետ անախորժություն պատահի, ինչպես նամակներով ու պատգամավորների բերանով սպառնում էին» (ԵԺ, V, 142-143):

Եթե «Պաչոտնու տրտունջը» մերկացնում է գյուղի «վիճակա-

վորներին», որոնք, ինչպես տեսանք, արգելել են ոտանավորի հրապարակումը, ապա «Ну, господа! այսուհետև...» տողով սկսվող չափածո ֆելիետոնն ուղղված է քաղաքի «պաչոտնիների» դեմ:

Առաջին հայացքից ավելի մեղմ է Թումանյանի երգիծանքը «Հայի զարմանքը», «Հայի ցավը», «Հայի տրտունջը», «Գրականական «մազանդա»» և մի քանի այլ բանաստեղծություններում: Սակայն այդպես է թվում, քանի որ այս դեպքում բանաստեղծը ոչ թե հարստահարության միջոցների հիշատակությամբ է մերկացնում «դրության տերերին», այլ ավելի շուտ միջնորդված ձևով ու նուրբ վարպետությամբ պատկերում է հայ ժողովրդի ու նրա զավակների ողբերգական վիճակը բուրժուական հարաբերությունների պայմաններում: Արցունքոտ երգիծանք է սա, որի մեջ ուրախության փայլատակումներ այլևս չկան: Օրինակ՝ անանց տրտմությամբ է ողողված դերասան Գևորգ Տեր-Դավթյանի բեմական գործունեության քսանհինգամյակի առիթով գրված «Հայի զարմանքը», որտեղ նկարագրվում է տաղանդավոր անհատի կործանումը: Այս ֆելիետոնը ժպիտ չի առաջացնում ընթերցողի շուրթերին, ընդհակառակը, տեղիք է տալիս տխուր մտորումների այն հասարակության մասին, որտեղ «աղքատ, անընկեր, անօգ ու անգործ» արվեստագետը ստիպված է միմոսի խայտաճամուկ զգեստով խեղկատակի դեր խաղալ, երբ սիրելին պառկած է դագաղում: Նույն ոգով են շնչում «Հայի տրտունջն» ու մյուս բանաստեղծությունները, որոնցում ևս առկա են բանաստեղծի բողոքը, անհաշտությունն ու անելանելի վիճակի գիտակցությունը: Սրանք հեռու են այն նուրբ և ուրախ հումորից, որ այնքան վարպետորեն օգտագործում է գրողը հեքիաթներում և ժողովրդական թեմաների չափածո մշակումներում՝ հասցեագրված մանուկ ու պատանի ընթերցողներին:

* * *

Հայ գյուղացիության վիճակը Թումանյանի ստեղծագործության մեջ արտացոլվել է ողբերգական երանգներով: Նոր հարաբերությունների պայմաններում նահապետական «մաքուր» բարքերի քայքայումը տեղի է ունեցել մանուկ Թումանյանի աչքերի առաջ,

և այս պրոցեսը ցավագնորեն է արձագանքվել նրա հոգում: Սա Թումանյանական «հայոց վշտի» կողմերից մեկն է՝ կապված «ներքին» թշնամու շահատակությունների հետ, այն թշնամու, որն ավելի ուշ՝ 1910 թ. գրված «Parodia»-ում օրինաչափորեն դրվում է «արտաքին» թշնամու կողքին.

Տեսե՞լ ես արդյոք այն բլուրները,
Ուր ճոխ ծաղկում է մշտական գարուն,
Ուր թալանում են մերոնք ու այլերը,
Ուր հոսում է միշտ արցունք ու արյուն:

Քնարական այնպիսի բանաստեղծություններ, ինչպիսիք են «Հին օրհնությունը», «Գութանի երգը», «Խրճիթում», «Նկարիչ Գ. Բաշինջաղյանի «Ձորագետը գիշերով» նկարի առջև» և այլն, քաղաքացիական քնարերգության լավագույն նմուշներ են, թեև դրանցում իրավիճակը փոխելու որևէ ռեալ ճանապարհ չի առաջարկվում, եթե չհաշվենք շատ ընդհանուր հավատը ապագայի նկատմամբ և նույնչափ ընդհանուր պայքարի կոչը՝ 1889 թ. գրված «Երանություն էր խոստացել հույսս ինձ» տողով սկսվող բանաստեղծության մեջ.

Հառաջ, կռվելով, և կըգա մի օր,
Որ կըննկի ներկան վատըշվեր, դաժան,
Նրա ավերի վերա փառավոր
Ապագան լուսո կըկանգնի նշան:

Նահապետական-աշխատավորական գյուղի իդիլիան, զուգորդված մանկության քաղցր հիշողության հետ, երկար տարիներ թանկագին զգացում է եղել Թումանյանի համար: Ինչպես տաղանդավոր նկարիչն իր բնանկարն է կենդանացնում դրա մեջ պատկերելով բանական էակին, այնպես էլ Թումանյանը դեռ պատանության տարիներից համարյա թե երբեք հայրենի բնությունը չի պատկերում առանց «մեծամարմին և քաջալանջ» ու միաժամանակ «բազմահոգ» հայ շինականի: Եվ նայած թե ինչ վիճակում է բնության այդ տերն ու մշակը, դրանով էլ պայմանավորվում է երկի թախծոտ կամ

ուրախ ոգին, հեղինակի գորովանքը կամ տրտմությունը: Գորովանքը կապվում է աշխատանքի, ազնվության, բարության, իսկ հաճախ՝ կյանքի հարաբերական հանդարտության հետ: Հայ շինականը Թումանյանի քնարական երգերում երջանիկ է գիշերով, վաստակած դադարի պահին, կամ աշխատանքի մեջ, որ բանաստեղծն ու նրա հերոսը սուրբ ու նվիրական են համարում, ինչպես երկու «Կալի երգ»-երում և «Գութան», «Ա՛խ, ինչ լավ են սարի վրա», «Աղբյուր», «Ամառվա գիշերը գյուղում» և մի քանի այլ բանաստեղծություններում:

Այս հովվերգությունը ինչ-որ չափով և ինչ-որ ժամանակ սփոփում է բանաստեղծին: Հոգու աչքերը փակելով նա մի ակնթարթ, կարծես, մոռանում է և «մերոնց», և «այլերի» արարքները և իրեն երջանիկ է զգում այն բանի համար, որ «հոգնած գյուղական ընտանիքն ահա, սրահում, կալում, կամ կտրի վրա, երկնքի դիմաց գրկված են քնած, վերևից, ասես, ժպտում է աստված»:

Սակայն լոկ մի ակնթարթ: Ո՛չ Թումանյանական «հայոց վշտի» ահագնությանը և ո՛չ էլ նրա հանճարի փայլատակումներին մենք հասու չէինք լինի, եթե նա մնար նահապետական իդիլիայի կամ դրա կործանման համար սփոփանքի պասիվ ափսոսանքի շրջանակներում: Նահապետական բարքերն ու աշխատավոր գյուղացու «խաղաղ» տքնությունը մեծ բանաստեղծի ոչ հույսն են եղել և ոչ նպատակը: Նա տեսնում է նոր հարաբերությունների անկանգ առաջընթացը, ոչ միայն տեսնում է սոցիալական ահավոր անարդարությունները, այլև նկատում, որ դրանց արմատներն արդեն առկա էին նահապետական բարքերում, որոնք այնքան մեծ ուժով պատկերված են «Անուշում», «Մարոյում», «Լոռեցի Սաքոյում», «Անիծած հարսում»: Պատահական չէ, որ «Հին օրինության» մեջ «մեր հսկա պապերն ու մեր հայրերը, գյուղի տերերը», որոնք տիպիկ «նահապետական» բնաշխարհում՝ «կանաչ վիթխարի ընկուզենու տակ», տիպիկ «նահապետական» բարոյականության օրենքներով՝ «իրենց հասակի կարգով ծալապատակ» խնջույքի են նստել, գոհ չեն իրենց անցած կյանքից, երջանիկ չեն: Ներքին մի ցավ, մի խոր դժգոհություն կա նրանց սրտերում, որ արտահայտվում է նոր սերնդին ուղղված ո՛չ սովորական բարեմաղթությամբ՝ «Ապրեք, երեխեք, բայց մեզ պես չապրեք»:

Հայ գեղջուկի ցավն ու բողոքը, ինչպես Հովհաննիսյանի «Գյուղի ժամը», Աղայանի «Ճախարակ» բանաստեղծություններում, Թուման-

յանի «Գութանի երգում» ևս արդեն իր միանգամայն պարզ ու հասկանալի պատճառներն ունի: Հովհաննիսյանի ու Աղայանի գեղջկուհիների բողոքի նման, Թումանյանի դառնացած գութանավորի խոսքերը ևս, անկասկած, մի փոքր ավելին են, քան «նեղ օրվա» տրտունջ: Այստեղ նահապետական իդիլիայի հետքն անգամ չկա: «Ձեռը պակաս, ուժը հատած, հազար ու մի ցավի տեր» շինականի վիճակը չի պատկերվում որպես սոսկ մռայլ բնանկար: Այստեղ առկա են հասարակության բոլոր «բարեմասնությունները»՝ և՛ «թովջին», որով տերունական հարկն են պահանջում, և՛ վաշխառու պարտքատերերը, և՛ գյուղի իշխանավորը, դեպի որի տունն է տանում գողերի հետքը և որը «կգա, կծեծի» կամ, որ ավելի ահավորն է, կտանի գեղջուկի լծկանը, ինչպես իմանում ենք «Դժար տարի» երգից: Ներկա է հոգևոր հովիվը, որ օրհնելու վարձը չստանալով «կքարկանա, կանիծի»: Կարելի է ասել, որ արդեն 1887 թ. գրված «Գութանի երգից» է սկսվում հոչակավոր «Հառաչանքը», և որ «Գութանի երգի» կամ «Խրճիթում» սրտաճմլիկ բանաստեղծության նպատակը միայն տխուր փաստերի նկարագրությունը չէ, այլև սոցիալական հեղաբեկման փոքր-ինչ քողարկված պահանջը: Սա է ոգեշնչում բանաստեղծին նաև Գ. Բաշինջաղյանի բնանկարը դիտելիս: Նա հիացած է «քաջերի ձորը», «ժայռերի խոր մտածմունքը», «համատարած ահռելի խավարն» ու «լուռ հանգստությունը» կտավին հանձնելու Բաշինջաղյանի կարողությամբ: Նա նկարչին իր գործի «արտիստն» է համարում, բայց միաժամանակ առաջ է քաշում անդնդախոր ձորում կույչ եկած հայի «հոգու գիշերը» պատկերելու խնդիրը, որպես արվեստագետի առաջին և սուրբ պարտականություն:

Սոցիալական հարցերի լուծման նրա տենդագին որոնումները ոչ միայն պարբերաբար դրսևորվել են նրա հրապարակախոսական գործունեության մեջ, այլև հաստատվել զուտ գրական փաստերով: Հայտնի է, օրինակ, որ դեռևս 1903 թ. Թումանյանի թարգմանությամբ սոցիալ-դեմոկրատական մի թռուցիկի վրա տպագրվել և մայիսմեկյան ցույցի ժամանակ տարածվել է Պուշկինի «Ազատություն» բանաստեղծության մի քառատողը, որով բանաստեղծն իր ցասումն ու ատելությունն է արտահայտում ցարական ինքնակալության նկատմամբ: Հայտնի է, որ հայ հեղափոխականների խնդրանքով նա թարգմանել է նաև «Ինտերնացիոնալի» մի հատվածը, որը լույս է տեսել

1904 թ. «Պրոլետարիատի կռիվը» սոցիալ-դեմոկրատական անլեգալ թերթում: Վերջապես, այժմ հայտնի է դառնում, որ 1905 թ. գարնանը Մինգրելիայի մի շարք բնակավայրերում ծագած գյուղացիական խռովություններին արձագանքել է հայ բանաստեղծը «Պարոնների դարը անցավ...» տողով սկսվող բանաստեղծությամբ:

* * *

1904 թ. մի նամակում, ուղղված Փ. Վարդազարյանին, որը պատրաստվում էր նրա մասին հրատարակել «Վշտի և թախծի երգիչ Հովհաննես Թումանյան» գրքույկը (տպ. 1905 թ.), Թումանյանը գրել է. «Ընդհանուր առմամբ դու քո բանաստեղծին նկատել ու ճանաչել ես շատ ճիշտ, որ նա իր ժողովրդի թշվառության երգիչն է, թախիծի, վշտի բանաստեղծ, որ այդ թախիծը, այդ տխրությունը ունի զանազան աղբյուրներ, բայց բոլորը մի տեղից են գալիս ու մի տեղ գնում և այդ է մեր – հայկական կյանքը, հայկական աշխարքը: Գուցե այդ լինի իմ գլխավոր արժանիքը (ԵԺ, V, 283):

Ողբերգության այդ «զանազան» աղբյուրներից մեկն էլ, իհարկե, հայ ժողովրդի արևմտյան հատվածի ազգային-քաղաքական ծանր վիճակն էր, որն ամենաավանդական թեման էր արդեն նախորդ շրջանի հայ քնարերգության մեջ: Ավելին, ազգային-ազատագրական գաղափարների առաջին տաղանդավոր ջատագովներն արդեն ապրել էին իրենց ստեղծագործական մայրամուտը, մինչդեռ հարցի լուծման ճանապարհին չկար որևէ առաջընթաց, իսկ օսմանյան բռնապետության հալածանքների ու կոտորածների պայմաններում ժողովրդի դրությունը գնալով ավելի ողբերգական էր դառնում:

Բնականաբար, այս ողբերգությունը պիտի պաշարեր նաև Թումանյանին՝ նրա առաջին իսկ քայլերից ու դառնար նրա ստեղծագործության հիմնական մոտիվներից մեկը:

Թումանյանն այս մոտիվն սկսել է այն համոզմամբ, թե հայության թշվառության պատճառն առաջին հերթին ինքնուրույն պետականության բացակայությունն է, այն, որ «ազգը զրկվեցավ իրան շքեղ աթոռից» («Օրորք»):

Իհարկե, սա նորություն չէր, գալիս էր դեռ միջնադարյան

քնարերգությունից: Ինչ վերաբերում է նոր ժամանակներին, ապա Ռափայել Պատկանյանն այս գաղափարն արդեն արտահայտել էր ավելի կատարյալ ձևով, այն էլ ոչ թե մեղմ, օրորոցային, այլև մարտական բանաստեղծություններում: Թեմատիկ առումով նորություններ չէին նաև «Երբ որ կանցնի ձմեռն սաստիկ» (1883), «Ինչո՞ւ ես տխուր» (1884), «Թող փչե քամին» երգի եղանակավ» (1885), «Նահապետի ողբը» (1886) և մի քանի այլ ոտանավորներ, որոնք բանաստեղծն ինքը հրատարակության չի հանձնել:

Սակայն հիշատակված երկերը միաժամանակ շնչում են անկեղծ որդիական կարոտով և խոր տրտմությամբ հայրենիքի վիճակի համար: Բանաստեղծի հույզը սովորովի չէ: Սովորովին արտահայտման ձևն է: Այս կարոտն ու տրտմությունն են դրդել նրան ինքնաբերաբար հետևելու ժամանակի լավագույն հայրենասիրական երգերին ու դրանց նմանությամբ հորինելու սեփական ոտանավորները:

Անկասկած, պատանի Թումանյանը խորապես զգացել է հայ գաղթականի վիճակի ծանրությունը և կորցրած վաքանի կարոտը: Ահա, թե ինչու է նա հափշտակվել Նահապետ Ռուսինյանի «Կիլիկիա» բանաստեղծությամբ, որն այդ կարոտի ամենագեղեցիկ արտահայտություններից մեկն է, և իր հույզը թղթին հանձնել սիրած երգի օրինակով.

Երբ որ կանցնի ձմեռն սաստիկ,
Դարձյալ կըգա գարուն քաղցրիկ,
Կըպճնի կրկին մեր հայրենիք,
Կրկանաչեն դաշտեր, լերինք,
Հայնժամ գայցեն դեպ Արմենիա
Ծարավ, նոթի որդիք նորա...

Ընդ որում, նրա փոխաբերական «քաղցրիկ գարունը» այս դեպքում ևս այլ բան չէ, քան հայահավաքի և հայկական պետականության նույն ռոմանտիկ երազը, որին, ինչպես երևում է բանաստեղծության հետագա տողերից, պոետի կարծիքով հայ ժողովուրդը կարող էր հասնել նոր Ավարայրով, նոր Ղևոնդների և Ներսեսների առաջնորդությամբ:

Սա արձագանքն է նույն ժամանակ Արևմտյան Հայաստանում ծավալվող ազատագրական խմորումների: Դրանց արձագանքն է

նաև Ալիշանի հայրենասիրական երգերի հանդիսավոր տոներով հորինված «Նահապետի ողբը»: Դրանց արձագանքներն են 1890 թ. գրված երկու հատվածները՝ «Տարոնի գարունը» և «Տարոնի առավոտը»՝ առաջիններն այս տիպի երգերից, որ հրատարակել է ինքը՝ հեղինակը: Վերջապես՝ դրանց արձագանքն է ավելի ուշ՝ 1896 թ. գրված «Այ ծիծեռնակ» սրտակեղեք երգը, որի սևագիրն է միայն հասել մեզ:

Առհասարակ Թումանյանի հայրենասիրական երգերի կարևոր առանձնահատկություններից մեկը սերտ կապն է պատմական կոնկրետ իրադարձությունների հետ, որով մեծ չափով պայմանավորվում է այդ երգերի անկեղծությունը: Այդ ոտանավորներից է Պատկանյանի ազդեցությամբ գրված «Թող փչե քամին» երգի եղանակավ» երկարաշունչ բանաստեղծությունը՝ նվիրված հետագայում գրված «Հին կռիվը» պոեմի հերոսի նախակերպարին՝ արևմտահայության ազատագրության գործին զինվորագրված պատանի Ալեքսանդր (Վարդան) Գոլոշյանին, որն, ինչպես նկատել է Լեոն, գաղտնի մեկնել էր Արևմտյան Հայաստան «Կայծերի» հերոսներին կյանքի մեջ կենդանի, մարմին ու արյուն ունեցող մարդիկ դարձնելու համար» (տե՛ս Լեո, Հայ հերոսներ, 1920, էջ 48):

Եթե հիշենք հենց միայն այն անձնուրաց գործունեությունը, որ բանաստեղծը ծավալեց իմպերիալիստական պատերազմի տարիներին՝ բառացիորեն իր ուսերին առնելով հայ գաղթականության ֆիզիկական բնաջնջումից փրկելու գործը, ապա հասկանալի կդառնա, թե որքան հարազատ ու միաժամանակ կեղեքող է եղել նրա համար իր տեղահան ժողովրդի ճակատագիրը: Դեռ պատանության տարիներին է նա ոտանավորներ նվիրել հայ գաղթականին ու պանդուխտին՝ նորանոր հուզական տողեր ավելացնելով այս «զուտ հայկական» թեմայով գրված երգերին: Նույն «Օրորք» բանաստեղծությունը, փաստորեն, պատանի բանաստեղծի սրտի մորմոքն է հայ գաղթականի համար, որը «տկլոր, բոպիկ ու քաղցած, թափառում է սար ու ձոր, անգութներից հալածված»:

Մորթոտված անմեղներն ու ավերված հայկական գյուղերը չքուժվող վերքեր են եղել բանաստեղծի սրտում և իրենց խոր հետքն են թողել նրա քնարերգության վրա: Ահա թումանյանական «հայոց վշտի» երկրորդ կողմը, որի արտահայտություններից են նաև

«Գաղթականի երգը», «Մութ ու խավար իմ հայրենիք», «Հարութուն», «Գիշեր», «Օտարության մեջ» և այլն, և այլն: Միայն այս և նման երգերի մեջ խորամուխ լինելով կարելի է հասկանալ բանաստեղծի վշտի հասարակական խորքն ու ահագնությունը: Սա է, որ սկիզբ առնելով վաղ տարիներին, աստիճանաբար հզորանում է և անցյալ դարի 90-ական թվականներից դառնում նրա քնարերգության առանցքը: Բանաստեղծի հայրենիքը խոշտանգումների, սպանությունների, առևանգումների, բանտերի խորքերից լսվող հեծության աղաղակների մի աշխարհ է, իսկ ինքը՝ ձուլված իր տառապող ժողովրդին, նրա մասնիկը: Դրա համար էլ նրա վիշտը համազգային է, «բերված երկրից հայրենի» և «նրանով են իր երգերը կենդանի»:

Անցյալ դարի 90-ական թվականներից Թումանյանն արդեն վարպետ բանաստեղծ էր, և նրա վշտի պոռթկումները հանդես էին գալիս գեղարվեստական այնպիսի ընդհանրացումներով, որպիսիք են «Նախերգանքը» (որ գրված է «Հառաչանք» պոեմի համար, բայց հետագայում դարձել է բանաստեղծի գրեթե բոլոր ժողովածուները բացող առաջին, ծրագրային բանաստեղծությունը), «Հայոց վիշտը», «Տրտմության» երկու սքանչելի «սաղմոսները» և այլն:

«Նախերգանքում» Թումանյանը գեղարվեստորեն արտահայտում է իր հավատամքը, իր կարծիքը բանաստեղծի տեղի մասին մի ժողովրդի կյանքում: Նրա ներշնչանքի աղբյուրը հայրենի շռայլ ու շքեղ և կարծես միայն հերոսական արարքների համար ստեղծված բնությունն է՝ երկնահուպ լեռները, անդնդախոր ձորերը, որոնք, ավա՛ղ, ողբերգական զուգահեռներ են առաջացնում բանաստեղծի սրտում: Դրանց վեհությունը հակադրվում է համազգային մեծ վշտին: Թումանյանը «մանր» պատկերների սիրահար չէ: Շատ երկերում նա գրեթե չի օգտագործում ոչ մի համեմատություն, ոչ մի մակդիր, ոչ մի գնահատող խոսք: Նրա բանաստեղծություններից շատերում գեղարվեստական միակ հնարանքն այն է, որ որևէ «հնարանք» չկա: Մեծ ու դժվարին արվեստ է սա: Այսպիսի արվեստի մասին է, որ Ե. Չարենցը գրել է.

Բայց հասել է նա մի ջինջ պարզության,
Որ ձեռք է բերվում դժվար վարժությամբ:

Սակայն, երբ Թումանյանի սիրտը օրհասական ցավի նման կեղեքում է պատմությունը, նրա խոսքը երբեմն դառնում է նաև արտակարգ շքեղ ու պատկերավոր՝ ընդունակ, օրինակ, այնպիսի հիպերբոլների, որ հազվագյուտ կարելի է գտնել ուրիշ բանաստեղծների մոտ: Հենց արդեն հիշատակված «անտակ ծովի պես» ցավն ու «անհագ սովի պես» սերը պատկերավոր մտածողության այդպիսի օրինակներ են: Հապա այն «տարօրինակությունը», երբ բանաստեղծը, ինչպես նկատվել է թումանյանագիտության մեջ, ոչ թե իր վիշտն է չափում անդնդախոր ձորերի տարողությամբ, այլ, ընդհակառակը, «աստծո հարվածի հետքերի»՝ ձորերի անդունդներն է համեմատում իր ահռելի վշտին: Հիրավի, պատկերավոր մտածողության հանճարեղ նմուշ է այս տեսակետից, «Նախերգանքի» ավարտը:

Ձորե՛ր, ա՛յ ձորեր, սև, լայնաբերան,
Սրտիս ես խորունկ վերքերի նման,
Աստծո հարվածի հետքերն եք դուք էլ,
Ձեզ մոտ եմ գալիս, ուզում եմ երգել.

Դուք էլ խոսեցե՛ք, դուք էլ պատմեցե՛ք,
Ձեր անդունդներով եկեք չափվեցե՛ք,
Դուք է՞լ եք, տեսնեմ, ենքան մեծ ու խոր,
Ինչքան իմ հոգու թախիծն ահավոր...

Ահա այսպիսի կատարելությամբ ու վարակիչ ուժով է արտահայտվում թումանյանական «հայոց վիշտը» միմյանց հյուսված իր երկու կողմերով: Այս կատարելության ու վարակիչ ուժի մեջ է նաև բանաստեղծի ժողովրդայնության գաղտնիքը:

Եվ, այնուամենայնիվ, «հոգու ահավոր թախիծը» բանաստեղծին չի համակում անանց հոռետեսությամբ: «Հայոց վշտի» երգչի ստեղծագործության մեջ նախ հայտնվում է հազիվ նշմարվող մի կայծ, ապա հետզհետե ավելի ու ավելի վառ է բոցկլտում հավատը ժողովրդի ապագայի նկատմամբ: Ընդ որում, սա միանգամայն տարբեր է նոր Ավարայրի ռոմանտիկ սպասումից, պայմանավորված այն քաղաքական իրադարձություններով, որոնք XX դարի առաջին տասնամյակներում պարբերաբար ցնցում էին աշխարհը և արձագանքվում նաև հայ

ժողովրդի կյանքում: Հեղափոխական խմորումները Ռուսաստանում, ազգային-ազատագրական շարժումները Բալկաններում և Արևմտյան Հայաստանում ընդդեմ օսմանյան բռնապետության, բանաստեղծին ոգեշնչում են գրելու իր լավատեսական հայրենասիրական բանաստեղծությունները: Դեռ դարասկզբին, չնայած հայկական դպրոցների փակմանն ու եկեղեցական կալվածքների հարքունիս գրավմանը, և այդ առիթով տեղի ունեցած ժողովրդական հուզումների ազդեցությամբ, Թումանյանը «Հայոց վիշտը», «Հայոց լեռներում» բանաստեղծությունների հետ միասին գրում է «Մեր ուխտը», որը մի ձոն է հայ ժողովրդի տոկունության՝ տոգորված պայծառ լավատեսությամբ.

Բայց գնում ենք մենք անվեհեր
Զարկերի տակ չար բախտի,
Մեր աչքերը միշտ դեպի վեր՝
Դեպի լույսը մեր ուխտի:

1915 թ. հունիսին, երբ աշխարհն արդեն ցնցել էին հայոց եղեռնի քստմնելի փաստերը, կոտորածների իսկ վայրում՝ Վանում, Թումանյանը գրում է «Ծուռ է գալիս ծանր քարը...» բանաստեղծությունը, արտահայտելով իր խոր հավատը հայ ժողովրդի ազգային վերածննդի նկատմամբ, հավատ, որ նա փայփայում էր ի հակակշիռ թուրքական բռնակալության կազմակերպած ցեղասպանության: Լավատեսությամբ են շնչում նաև 1910-ական թթ. գրված «Թեպետ և բախտը մեզ շատ հարվածեց», «Հայրենիքիս հետ» և այլ բանաստեղծություններ:

Հայ ժողովրդի ծանր ճակատագրի և ազգային բարձր արժանապատվության ավելի սեղմ ու պատկերավոր ընդհանրացում, քան «Հայոց լեռներում» բանաստեղծությունը, անհնար է գտնել մեր քնարերգության մեջ: Պատահական չէ, որ մեր գրականագիտությունն այն անվանել է «հայ ժողովրդի բանաստեղծական կենսագրություն» (տե՛ս Էդ. Ջրբաշյան, Չորս գագաթ, Երևան, 1982, էջ 33): Ընդամենը երեսուն տողում, որոնցից տասն էլ կրկնակ տողեր են, Թումանյանը գեղարվեստորեն բնութագրում է հայոց պատմությունն իր էական կողմերով, փոխաբերաբար ներկայացնում որպես շեկ անապատներից եկած հորդաների զարկած ու զրկած քարավանի ճամփա, որ ձգվում է դեպի վեր հայոց «դրժար», ապա «բարձր», ապա «արնոտ», ապա

«սուգի» և վերջապես՝ «կանաչ» լեռներում: Մակդիրից մակդիր, տարողունակ տողերում աստիճանաբար խտանում են պատմական չարաղետ իրադարձությունների պատկերները, մինչև, վերջապես, նշմարվում են լույսի առաջին շողերը՝ հույս ներշնչելով, թե հոշոտված քարավանի ճանապարհին դեռ բացվելու է «պայծառ առավոտ»:

Տասներեք տարի անց այս սրբազան հավատը ավելի հուժկու պիտի ղողանջեր «Հայրենիքիս հետ» բանաստեղծության մեջ:

«Հայրենիքիս հետ» վերնագիրը պատահական չէր Թումանյանի համար: Պատահական չէր նաև, որ բանաստեղծն այդպես անվանեց 1916 թվականին հրատարակված իր ժողովածուն: Այս վերնագրի իրավունքը նա նվաճել էր ավելի քան երեսնամյա հայրենասիրական գործունեությամբ, առավել ևս՝ տասնյակ ու հարյուրավոր բանաստեղծություններով, պոեմներով, լեգենդներով, բալլադներով, հեքիաթներով, պատմվածքներով, զրույցներով, ինչպես նաև հրապարակախոսական հոդվածներով ու ելույթներով՝ իր ողջ ստեղծագործությամբ, որն, անկախ ժանրից, թեմայից, երկերի կոնկրետ բովանդակությունից ու ձևական առանձնահատկություններից, հայկական է, արդյունք հայ կյանքի, հայ հայրենիքի:

«Հայոց լեռներում» բանաստեղծության նման, այս գործը նույնպես հայ ժողովրդի անցած դժվարին ճանապարհի, ողբերգական ներկայի և ապագայի հանճարեղորեն սեղմ ու փայլուն ընդհանրացում է, միաժամանակ՝ բանաստեղծի հավատարմության երդումը իր ժողովրդին:

Առաջին երկու տան մեջ պատկերվում է ժողովրդի անցյալն ու ներկան, նրա գաղթական զավակների լուռ և ուժասպառ շարքերով և ծաղկած երկիրն ամայացնող ոսոխների հրոսակախմբերով: Հայաստանը ներկայանում է որպես «սև ու սուգի մի հովիտ», շեները՝ «դատարկ ու խավար»: Բայց ահա հաջորդ երկու տների մեջ, հակառակ այդ ամենին, որպես պատմության ընթացքի տրամաբանական հեռանկար, բանաստեղծը տեսնում է ազատագրված հայրենիքը ու հավատացած է, որ նա դեռ իր ծանրակշիռ խոսքն է ասելու աշխարհին.

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հազա՛ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,

Կենսաժպիտ իր շողերը պիտի ժպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՛ր հայրենիք,
Հզո՛ր հայրենիք...

Միայն Թումանյանի նման մեծ հումանիստ ու ինտերնացիոնալիստը կարող էր տեսնել այս հեռանկարը, այն էլ այն ժամանակ, երբ, իր իսկ բառերով ասած, «կյանքի կռվում» կանգնած էին «ամենքը դեմ ամենքին», երբ իր ժողովուրդը բառացիորեն ենթակա էր ֆիզիկական բնաջնջման: Հիրավի, այդ երկու բարձր գաղափարները՝ հումանիզմն ու ինտերնացիոնալիզմը միշտ դրված են եղել նրա ստեղծագործության հիմքում: Պատմության և ոչ մի արյունոտ դեպք, հայ ժողովրդին բաժին հասած և ոչ մի ողբերգական իրադարձություն չի պղտորել բանաստեղծի հոգին ուրիշ ազգերի դեմ ուղղված ատելությամբ: Այդ են վկայում ժողովուրդների համերաշխությանն ու բարեկամությանը նվիրված նրա բազմաթիվ հոդվածներն ու ելույթները՝ գրված 1915-1920 թթ., այսինքն՝ հայության համար ամենածանր տարիներին: Այդ է վկայում նրա հերոսական գործունեությունը հայ-վրացական և հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, երբ նա շրջում էր գյուղից գյուղ, համայնքից համայնք՝ հաշտության խոսքը շուրթերին: Այդ են վկայում դեռևս 1892 թ. գրված «Հաշտությունը», վրաց ժողովրդին ձոնված բանաստեղծությունները՝ «Ն. Բարաթաշվիլու դամբանի վերա» (1893), «Վրաստանի համար» (1916), «Ս. Նունեի պատկերի առաջ» (1918), «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» (1919) և այլն:

* * *

Թումանյանն ազգային բանաստեղծ է նաև այն յուրօրինակ սիրով ու հիացմունքով, որ նա տածում է հայկական բնաշխարհի նկատմամբ: Հայրենի բնությունն առկա է նրա բոլոր, այդ թվում, նույնիսկ, ամենատխուր երգերում: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ նա փորձում է ձերբազատվել սիրտը կեղեքող ցավերից, երբ խոնջացած ձգտում է հոգու անդորրության, դարձյալ հայրենի բնաշխարհն է

դառնում նրա սիրո ու երազանքի հանգրվանը: Բնության շքեղությունը, «ազնվությունն» ու «ազատությունը» նրան մղում են մտորումների՝ մարդկային փոխհարաբերությունների և հասարակական բարոյականության շուրջ, մտորումներ, որոնք մի դեպքում արտահայտվում են միջնորդված, մեկ այլ դեպքում անթաքույց, ինչպես, օրինակ, 1899 թ. գրված «Ես նայում եմ իմ առջև» բանաստեղծության մեջ: Այս իմաստով Թումանյանի բնապաշտությունը այնպիսի երկերում, որպիսիք են «Համերգը», «Ամառային երեկոն», «Ախ, ինչ լավ են սարի վրա», «Գարնան առավոտ», «Պատրանք» և այլն, հասարակական մեծ հնչեղություն ունի: Այս բանաստեղծություններն աչքի են ընկնում ինչպես բնապատկերի գունագեղությամբ, այնպես էլ իրենց ներքին լիցքով: Սրանցում բնությունը ոչ թե սոսկ միջավայր է, այլ նաև «գործող անձ»: Օրինակ, «Համերգում» վտակը, անտառը, ժայռը, բացի բնանկարի անհրաժեշտ համամասներ լինելուց, նաև «բնավորություններ» են և խորհրդանշում են հոգեբանական տարբեր վիճակներ: Վտակը ժայռից ներքև է թռչում զվարթ ու ժիր պատանու նման, անտառը դողդոջ ծերունու պես է ձայնակցում վտակ-թոռանը, ժայռը տարիների հոգսն ու փորձն ուսերին «իր մոայլ մտքի հետևից ընկած» է ունկնդրում համերգը:

Խոր իմաստ է թաքնված «Ամառային երեկո» բանաստեղծության մեջ, որտեղ որպես բանական էակներ են հանդես գալիս աստղազարդ երկինքն ու երկնահուպ լեռները:

«Ախ, ինչ լավ են սարի վրա» և «Գարնան առավոտ» բանաստեղծությունները, որոնք բնույթով և «անուշ, անուշ» կրնակ բառերով մի տեսակ օրգանական միասնություն են կազմում, ինչպես նաև «Պատրանքը», նույնպես տողամեջ թաքցրած ավելի խոր իմաստ ունեն, քան պարզ բնասիրությունը: Դրանք «ազատ» բնության գրկում անցած մանկության օրերի հիշողություններն են՝ ողողված խոր կարոտով ու տրտմությամբ կորցրածի համար:

Այս տիպի բնապաշտությունն ինքնին խորապես ժողովրդային է:

Ժողովրդայնությունը չի կարելի հասկանալ պատմական միջավայրից դուրս: Ընդհակառակը, այն ոչ այլ ինչ է, քան գրողի արտահայտած առաջավոր գաղափարների արձագանքը ժողովրդի սրտում, կամ, ավելի ճիշտ, ճշմարիտ գրականության և ժողովրդական մտածողության անխուսափելի փոխազդեցությունը: Այս առումով ոչ

ամեն բան, ինչ առաջ է գալիս ժողովրդի ընդերքում, ոչ ամեն գաղափար և ոչ ամեն զգացում կարող են համակել ազգային բանաստեղծին, քանի որ պատմականորեն ծնված ոչ բոլոր զգացումներն ու գաղափարներն են, որ կենսական նշանակություն են ունենում պատմության հաջորդ փուլերում և, ուրեմն, ընդունակ են հարատևելու: Ահա թե ինչու յուրաքանչյուր գրող, հավատարիմ իր ներքին ձայնին, ժողովրդից փոխ է առնում իր թեմաները, իր գաղափարները: Այս տեսակետից ժողովրդայնությունն ունի նաև սուբյեկտիվ կողմ, որն, անկասկած, ավելին է, քան սոսկ նախասիրությունը:

Դեռ պատանության տարիներից Թումանյանն արտակարգ հետաքրքրություն է հանդես բերել ժողովրդական ստեղծագործության նկատմամբ: «10-11 տարեկան ժամանակս,– գրում է նա,– ժողովրդի մեջ երգվող երգերին տներ էի ավելացնում և գրում էի զանազան ոտանավորներ...» (ԵԺ, IV, 87): Արդեն 1889 թ. նա գրել է «Կալի երգը»: Բայց ժողովրդական մոտիվներով հյուսված բանաստեղծությունները մեծ մասամբ երևան են եկել 1907-1911 թթ. և գրված են «Հասկեր» ամսագրի ու «Լուսաբեր» դասագրքերի համար: Այդ տարիներին է նա գրել «Ծույլ աղջիկը», «Արագիլ», «Ծիտը», «Խնոցի», «Քամին», «Կռունկներ», «Արտուտիկ», «Դժար տարի», «Փիսոն», «Ուրագ ու սղոց», «Ճախարակ», «Գութան», «Փոքրիկ երկրագործը», «Ուլունք», «Կալի երգը», «Ճնճղուկները», «Սոխակի վիշտը», «Կաքավի ողբը», «Մանուկն ու ջուրը» և այլն: Այս փոքրիկ բանաստեղծություններով ևս կարելի է ստվերագծել նրա ժողովրդայնության բնույթը, կամ այլ կերպ ասած՝ թե ինչն է գրավել Թումանյանին բանահյուսական անբավ նյութերի մեջ, հատկապես ինչ թեմաներ է ընտրել նա և ինչպես է մշակել դրանք:

Հասցեագրված լինելով մանուկ ու պատանի ընթերցողներին, ժողովրդական մոտիվներով գրված այս բանաստեղծություններն ունեն դաստիարակչական խոշոր նշանակություն, և մասամբ նաև սրանով է պայմանավորված թեմաների ընտրությունը: Սակայն, ինչպիսին էլ լինեն, դրանք նախ և առաջ արտահայտություններն են այն մեծ հումանիզմի, աշխարհը բոլորի համար շեն ու պայծառ տեսնելու այն փափագի, որ գալիս է ժողովրդական մտածողությունից և հարազատ է բանաստեղծին: Լեռնային գյուղի գորովանքով գծված համապատկերը, Լոռվա բնությունն իր երփներանգ ծաղիկներով

ու խոսնակ թռչուններով, աղբյուրներով ու գետակներով, գյուղի մարդիկ իրենց հոգսերով և ուրախություններով, դարերով մշակված սովորություններով ու չգրված օրենքներով, նրանց չարքաշ աշխատանքը որպես ամենայն բարյաց ու մարդկային բարձր հատկանիշների աղբյուր – ահա Թումանյանի ընտրած մոտիվները ժողովրդական բանահյուսության գանձարանից: Եթե մի ընդհանուր հայացքով ընդգրկենք բանաստեղծի ողջ ստեղծագործությունը, իսկույն կնկատենք, որ սրանք առկա են նաև այնպիսի երկերում, որոնք բանահյուսական ատաղձ չունեն: Այսինքն՝ այս դեպքում ևս Թումանյանը հարազատ է ինքն իրեն, քանի որ հարազատ է իր ժողովրդի մարդասիրական մտածողությանը:

Ժամանակին բանակոիվ մղելով ժողովրդայնության թյուր-ըմբռնողության դեմ՝ Թումանյանը Պուշկինի օրինակով ցույց է տվել, թե ինչ ասել է իսկական ժողովրդայնություն, և թե ինչ հարաբերության մեջ պիտի լինեն միմյանց հետ բանահյուսական նյութն ու դրա մշակումը: «Ես,– գրում է նա,– իմ լեգենդներն էլ եմ ժողովրդից առել, բոլոր հեքիաթներն ու զրույցներն էլ եմ ժողովրդից ու ժողովրդականից առել ու միշտ աշխատել եմ ինչքան կարելի է մոտիկ ու հարազատ մնալ» (ԵԺ, IV, 267): Բայց միաժամանակ նա մեծ տարբերություն է տեսնում բանահյուսական նյութի և դրա գեղարվեստական մշակման միջև. «Մշակածի, գրական լեզվով պատմած, փոփոխածի, զանազան վարիանտներից կազմածի, չափական ձևի վերածածի վրա,– ասում է նա,– չպետք է գրվի «ժողովրդական»: Նա արդեն ժողովրդականը չի, թեև բնագիրը ժողովրդից է առած» (նույն տեղում, էջ 266):

Նյութն ընտրելով՝ Թումանյանն առաջին հերթին այն ձևում է իր առաջադրած խնդրին համաձայն: Օրինակ, «Քաջ կիվիվը» բանաստեղծության նյութը նա առել է Գ. Սրվանձտյանի «Համով-հոտով» գրքից: Բայց այնտեղ ոտանավորն ունի 28 տուն, որոնցից բանաստեղծն օգտագործել է միայն 4-ը՝ առաջինը, երրորդը, տասնմեկերորդն ու քսաներեքերորդը: «Փոքրիկ երկրագործի» բանահյուսական տարբերակն ունի 54 տող, որոնցից բանաստեղծն օգտագործել է միայն առաջին 9 տողերը, և այլն:

Պահելով ժողովրդական երգի ընդհանուր ոգին՝ Թումանյանը միաժամանակ ներքին փոփոխություններ է մտցնում դրա մեջ՝ հարմարեցնելով նոր ժամանակներին: Այս տեսակետից որպես

հետաքրքիր օրինակ կարող է ծառայել «Մանուկն ու ջուրը»: Սրա ժողովրդական տարբերակները պահվում են միջնադարյան ձեռագիր մատյաններում, իսկ առաջին մշակողը եղել է XVII դարի բանաստեղծ Երեմիա Քյոմուրճյանը: Ե՛վ ժողովրդական տարբերակները, և՛ Քյոմուրճյանի մշակումն ավելի ընդարձակ են և միանգամայն համապատասխան միջնադարի ոգուն: Դրանք երկխոսություններ են կամ ջրիկի և «սիրո տեր» երիտասարդի, կամ ջրիկի և պանդուխտի սիրակարոտ նորահարսի միջև: Այդ պատճառով այս երկխոսությունների մեջ շոշափվում են սիրո ու պանդխտության մոտիվները՝ համապատասխանաբար ուրախ ու տխուր գուներանգներով:

Թումանյանի բանաստեղծության մեջ «ամպոտ սարից» եկող ջրիկի զրուցակիցը երեխա է, և, բնականաբար, այստեղ բացակայում են ուշ միջնադարի բանաստեղծության համար տիպական պանդխտության և կրոնական մտայնությանն ի հակակշիռ փառաբանվող աշխարհիկ սիրո մոտիվները: Ճիշտ է, հարցերը նույնն են՝ «Դու ո՞ր սարեն կուգաս, ջրիկ», «Դու ո՞ր առուն կերթաս, ջրիկ», «Դու ո՞ր այգին կերթաս, ջրիկ», բայց քանի որ դրանք տալիս է երեխան, ջրիկի պատասխանները խաղացկուն են, թեթև, դրանց նպատակը «ամպոտ սարերի», առվի ափերին փռված «շուշան ու վարդի», կանաչ ու դալար այգիների և, վերջապես, երկրագործի աշխատանքի փառաբանությունն է.

Ես էն այգին կերթամ դալար,
Որ տերն է ժիր, մեջն այգեպան:

Առհասարակ չկա մանկական գրականության որևէ ժանր, որևէ տեսակ, որին ձեռք զարկած չլինի Թումանյանը և հասցրած չլինի բարձր կատարելության: Դրա ցայտուն վկայությունն են նաև այս բանաստեղծությունները:

Արդեն տեսանք, որ ժողովրդական մոտիվները նա մշակել է բացառապես մանուկների համար, և դրանք նրա ստեղծագործության մի գեղեցիկ մասն են կազմում: Նրա ինքնուրույն բանաստեղծություններից էլ է երևում, որ մանկական գրականությունը նրա համար երբեք չի եղել «գործից ազատ ժամանակ» հորինվող, «ոչ այնքան կարևոր» արվեստ, ինչպես նկատում ենք ուրիշ դասականների ժառանգությունն

ուսումնասիրելիս: Այս առումով Թումանյանը մեր ամենակատարյալ մանկագիրն է նաև իր տեսական պատրաստությամբ և մանրամասն մշակված սկզբունքներով, որոնք նա արտահայտել է՝ պարբերաբար անդրադառնալով մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության հարցերին:

Թումանյան մանկագրի անզուգական վարպետությունը փայլատակում է ինչպես ժողովրդական մոտիվների մշակումներում, այնպես էլ «Հասկեր» ամսագրի և «Լուսաբեր» դասագրքերի համար նրա կատարած տասնյակ փոխադրություններում և այնպիսի ինքնուրույն բանաստեղծություններում, ինչպիսիք են «Լուսաբացին», «Գետակը», «Աղբյուրը», «Ծաղիկները», «Կանաչ ախպեր», «Աշնան վերջը» և այլն: Օրինակ, «Ծաղիկները» բանաստեղծության հիմնական նպատակը «արտաքին աշխարհի» ցուցադրումն է: Այստեղ բանաստեղծը մանուկ ընթերցողին ավետում է, որ գարնան գալու հետ նորից հայտնվելու են ձմռան ցրտին ձյան շերտի տակ թաքնված ծաղիկները: Բայց այն նուրբ քնքշանքը, որով նա համակում է ընթերցողին՝ ծաղիկներն համեմատելով քնից արթնացող մանուկների հետ, անշուշտ, ունի նաև դաստիարակչական նշանակություն: «Գետակը» բանաստեղծության մեջ ևս, թեև նպատակներից մեկը ջրի կենսական մեծ նշանակության մասին տեղեկություն հաղորդելն է, բայց միաժամանակ փառաբանվում է երկրագործի աշխատանքը, այսինքն՝ «թաքուն» անց է կացվում դաստիարակչական նպատակ ունեցող խրատը:

Բանաստեղծությունների այս յուրատեսակ բնույթով էլ հենց պայմանավորվում են դրանց գեղարվեստական առանձնահատկությունները՝ կառուցվածքը, պատկերները, ոճն ու բառապաշարը: Թումանյանը, որի բանաստեղծություններում հաճախ են հանդիպում «գիշեր», «խավար», «հառաչանք», «անտակ ցավ» և նման բառեր, մանկական բանաստեղծություններում ավելի շատ լավատեսական, ուրախ մեղեդիներ է հնչեցնում և, հավատարիմ իր այն համոզմանը, թե երեխան ամեն ինչ ընկալում է ուրախ ձևով, խոհական բանաստեղծությունների հանդարտ տողերը փոխարինում է վեհվեհուն, թեթևասահ տողերով, քանձր ու խորունկ պատկերները՝ պարզ, «առանց պատկերի» բանաստեղծությամբ:

Ուրիշ են ավելի տարեց ընթերցողներին հասցեագրված երկերը: Միջին տարիքի երեխաներին ու պատանիներին Թումանյանն

արդեն առաջարկում է այնպիսի բանաստեղծություններ, որոնցում հիմնականը բարոյագիտական խրատն է, ինչպես, օրինակ, «Ուրագն ու սղոցը», առաջարկում է իր սքանչելի հեքիաթները, բալլադները, լեգենդները, ժողովրդական էպոսի մշակումն իր հայրենասիրական խորքով, թեև այս դեպքում ևս նա խորաթափանցորեն խուսափում է մերկապարանոց խրատից:

* * *

Դեռ պատանության տարիներից Թումանյանի քնարերգությունն աչքի է ընկել խոհականությամբ: Ստեղծագործական կյանքի բոլոր փուլերում նա միաժամանակ, այսպես կոչված, ինտելեկտուալ բանաստեղծության խոշորագույն ներկայացուցիչներից մեկն է:

1890 թ. գրված «Խորհրդածություն» բանաստեղծության մեջ Թումանյանն առաջին անգամ փորձում է կյանքի սկզբնապատճառի մասին իր հոգում ծնված տարակուսանքը հաշտեցնել այն ավանդական «օրինաչափության» հետ, որ, իբր, հաստատել էր քրիստոնեական հավատը՝ համադրելով կյանքն ու մահը, իրական և հանդերձյալ աշխարհները: «Ո՞րն է դրախտը», մի՞թե դա այն սուտ մխիթարանքը չէ, որ մարդկային տառապալի կյանքն է ստեղծել,– հարցնում է բանաստեղծն ու չի կարողանում պատասխանել այդ հարցին, քանի որ սարսափում է տրամաբանական հետևությունից, իսկ ավանդական պատասխանն այլևս չի համոզում:

Բայց առաջին քարն արդեն նետված է: Այնուհետև ամեն ինչ՝ սերը, կարոտը, ազգային ողբերգությունը, հասարակական բարոյականությունն ու կյանքի առօրյա ընթացքն անգամ, նա պիտի քննի երկու պատասխանների հակամարտության և ավանդականի աստիճանական տեղատվության պայմաններում՝ թեև նրա սիրտը դեռ երկար ժամանակ պիտի կեղեքի պայքարի հավանական ելքը: Ինչ-որ չափով այս պայքարի ծնունդն են նաև «Մարգարեն», «Գիշերային աստղի դիմաց», «Դեռ անհիշելի վաղ մանկությունից» և այլն:

Այսպես, մինչև «Վայրէջքը» (1909) և 1915 թ. գրված «Բարձրից» բանաստեղծությունը, որն իր փիլիսոփայական տարողությամբ, կարելի է ասել, հավասարը չունի, նույնիսկ, իր՝ Թումանյանի

ստեղծագործության մեջ: Ներքին մաքառման վերջին ակորդն է սա, որտեղ տարակուսանքն արդեն տեղի է տվել, բանաստեղծը վերջնականապես հիասթափվել է ավանդական պատասխանից և դա այլևս ողբերգություն չէ նրա համար, քանի որ նա գտել է իր՝ մարդկային անհատի տեղը տիեզերքում և համոզվել, որ մարդու մեջ է այն ամենը, ինչ դարերով վերագրվել է արարչին:

Իմ բարի սրտի էն մեծ խոհերից,
Էն մեծ խոհերի անհուն խորերից՝
Կամեցավ՝ ելավ իմ հզոր հոգին,
Որ բարձրից նայի աստծու աշխարհքին:

Ու իր հարազատ բարձունքիցը լույս՝
Անչար, անաչառ, անդորր ու անհույզ՝
Պարզ, ամենատես հայացքովը նա
Ճառագեց ներքև՝ աշխարհքի վըրա:

Այսպիսով՝ դեպի վեր ճախրելով աշխարհն ավելի ամբողջական ձևով ընկալելու համար (իզուր չէ, որ բանաստեղծությունը կոչվում է «Բարձրից»), բանաստեղծի հոգին մտնում է մարդկային հասարակության ու տիեզերքի «առեղծվածները» բացատրելու ոլորտը, միանում տիեզերքի անհունին, երկնադետ Մասիսի հետ դարեդար քննում «կան ու չկան էս աշխարհքի»: Նրա բոլոր մտորումների ելակետը խոր հումանիզմն է, ներքին պայքարում ավանդականի վերջնական պարտությունը, որքան էլ բանաստեղծական խոսքի մեջ Թումանյանը դեռևս աշխարհը պիտի անվանի «աստծու աշխարհ», պիտի օգտվի ավանդական տերմիններից, ինչպես ուրիշ առիթներով նույն աղբյուրից արդեն փոխ էր առել «հոգեհանգիստ», «մարգարե», «անապատ», «ուխտ», «հարություն» և նման բառեր:

Բայց կարելի է ասել, որ իմաստասիրական իրարամերժ մտորումներից ու տարակուսանքներից մարդակենտրոն փիլիսոփայությանն անցնելու այս պրոցեսն արդեն փաստորեն ավարտված էր դեռ 1909 թ., երբ Մետեխի բանտում բանաստեղծը գրում էր իր հռչակավոր «Վայրէջքը», թեև այստեղ առաջին հայացքից կարող է մշուշապատ թվալ նպատակը, եթե չփորձենք հասկանալ նրա

«անհայտը սուրբ, աշխարհքը պայծառ», այսինքն՝ նրա իդեալը:

Իսկապես, ո՞րն է հանգրվանը, ո՞րն է այն իդեալական վիճակը, որ որոնել ու գտել է բանաստեղծը: Ներքևում թողնելով փառք, գանձ, քեն ու նախանձ, այն «ամենը, ինչ ճնշում է հոգին», քառասուն տարի «ահարկու ճամփով» քայլելուց հետո, վերջապես նա հասել է «հոգու խաղաղության», այսինքն նույն «անչար, անաչառ, անդորր ու անհույզ» վիճակին, որը հատուկ է միայն աստվածության: Պատահական չէ, որ տարիներ հետո նա հրաշապատում է ներկայացնում իր, որպես բանաստեղծի, կենունքը.

> Իմ կենունքին երկինքը ժամ, արևը՝ գահ սըրբազան,
> Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն ավազան,
> Սարը եղավ կրնքահայրըս, ցողը մյուռոն կենսավետ,
> Ու կրնքողըս նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:

Դրանից հետո է, որ նա իրավունք ունի ասելու, թե ինքը հարուստ է ու բախտավոր, քանի որ որքան էլ ձրի բաժանի իր գանձերը, դարձյալ «սերն անվերջ է, բարին անհատ»: Այսինքն՝ բնության մեջ տարրալուծելով, Թումանյանն անսահմանորեն հարստացնում է մարդկային հոգին, դարձնում տիեզերք տիեզերքի մեջ: Ահա, թե ինչ պայծառ լավատեսության է հասնում բանաստեղծի խոհը կյանքի ու մահու այն վեճի մեջ, որտեղ նյութի հավերժության և մարդկային կյանքի կարճատևության համադրությունը, թվում է, տրամաբանորեն պիտի հանգեցներ հոռետեսության:

Առհասարակ այս համադրությունն այն չափանիշն է, որով շատ հաճախ են փորձել այս կամ այն գրողի աշխարհայացքը՝ սկսած սուբյեկտիվ իդեալիզմին ու դրան ուղեկցող հոռետեսությանը վճարած հարկից, մինչև, ուրիշ դեպքերում, տիեզերքի մեջ իրեն տիեզերք զգալու գաղափարը, որով պայմանավորվում է շռայլ ու շքեղ լավատեսությունը: Հայ գրականության մեջ վերջինիս ամենահզոր ներկայացուցիչը Հովհաննես Թումանյանն է: «Վայրէջքից» մինչև «Սիրիուսի հրաժեշտն» ու «Արուսյակը», երկուսն էլ գրված արդեն մահվան անկողնում, Թումանյանը հավատարիմ է եղել իր այս կենսափիլիսոփայությանը: Դրա համար էլ նրա հարցը «Սիրիուսի հրաժեշտում», թե «մարդու քանի՞ սերունդ կանի մի հրաժեշտն

աստեղային», հոռետեսական մտորումներ չի առաջացնում: Դրա համար էլ «Արուսյակը» հնչում է որպես մի անզուգական ձոն «պայծառ ու վառ շողեր հագած, անապակ, թարմ, ուրախ, շաղաղ-շարմաղ» լույսին:

Այս լավատեսությունը, լույսի այս հաղթանակն է հենց այն հանգրվանը, այն իդեալական վիճակը, որ «Վայրէջքի» մեջ արդեն կռահել էր բանաստեղծը ոչ միայն իր, այլև աշխարհի համար: Այս ելակետից է, որ հասկանալի է դառնում, թե նա ինչպես է կարողանում դեպի մահը տանող ճանապարհի մասին գրել.

Եվ ես իմաստուն ու բեռս թեթև
Անհոգ ծիծաղով,
Երգով ու տաղով
Իջնում եմ զվարթ իմ լերան ետև:

Թումանյանի քնարերգության խոհափիլիսոփայական մոտիվների բնական զարգացումը եղան կյանքի վերջում գրած քառյակները: Ծավալով ամենափոքր բանաստեղծական այս ձևը դարձավ Թումանյանի հումանիստական աշխարհայացքի և տիեզերական մեծ ընդգրկումների ամենալայն ու խոր արտահայտությունը, նրանց գեղարվեստական բարձրագույն համադրությունը :

Խ. ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ
(վերահրատարակության խմբագրության կողմից)

Վերահրատարակության խմբագրությունը, արժանին հատուցելով անվանի գրող և գրականագետ Խ. Գյուլնազարյանի ըստ ամենայնի բովանդակալից հոդվածին՝ Թումանյանի քնարերգության մասին, հարկ է համարում անել որոշ վերապահումներ, ճշգրտումներ և լրացումներ՝ նկատի ունենալով, որ ետխորհրդային շրջանի հայ գրականագիտությունը անցյալի արժեքները վերաիմաստավորելիս ու վերագնահատելիս ղեկավարվում է այլ սկզբունքներով ու չափանիշներով, քան թույլատրելի էր ժամանակի պաշտոնական գաղափարախոսության պայմաններում: Խ. Գյուլնազարյանի հոդվածում զգալի է այդ գաղափարախոսության կնիքը:

Հոդվածի սկզբում միանագամայն տեղին նկատելով, որ Թումանյանի քնարերգությունը էպիկական գործերի կողքին երբեմն հանիրավի թերագնահատվել է՝ հանգամանալից վերլուծություններով ցույց է տրվում, որ առանց քնարական բանաստեղծությունների նրա ստեղծագործության համակարգային ամբողջությունը անկատար կլիներ: Այնուհետև համառոտ բնութագրվում է բանաստեղծի քնարերգությունը, ընդգծվում է նրա հետևողական «հավատարմությունը նախասիրած մոտիվներին, որոնք անցնում են նրա ստեղծագործության միջով՝ առաջին «ներանձնական» բանաստեղծություններից մինչև իմաստասիրական քառյակները»:

Բանաստեղծությունները խմբավորվում և հաջորդաբար վերլուծվում են թեմատիկ ստորաբաժանման ընդունված կարգով:

Սակայն բուն վերլուծությունների մեջ հակվածություն է նկատվում բանաստեղծի բոլոր քնարական ապրումներն ու խորհրդածությունները, անկախ թեմատիկ ու բովանդակային տարբերություններից, հարմարեցնել ժամանակին օրինականացված գաղափարական կաղապարներին:

Սիրային ոտանավորներին անդրադառնալիս հոդվածում ուշագրավ դիտարկումներ կան հայ դասական ու նոր շրջանի, մասնավորապես Դուրյանի, Իսահակյանի, Տերյանի սիրերգությունից դրանց տարբերությունների վերաբերյալ:

Այդ տարբերություններից հիմնականը համարվում է այն, որ Թումանյանի սիրային ոտանավորներում սերն իմաստավորվում է «որպես խորապես հասարակական զգացում», «վիշտը, թախիծը, տրտմությունը», որ, ինչպես դիտվում է հոդվածում, «սոցիալական հիմք ունեն» նաև Դուրյանի, Իսահակյանի, Տերյանի սիրերգության մեջ, Թումանյանի սիրային երգերում ավելի անմիջականորեն են առնչվում «արտաքին» աշխարհին, ուստի և նրա «սիրո քնարերգությունն ավելի քաղաքացիական է, քան նրա ժամանակակից որևէ ուրիշ հայ բանաստեղծի»:

Թվում է՝ այսպիսի գնահատականները որևէ խնդիր չպիտի առաջացնեին: Բայց ահա երբ դիտվում է, թե՝ «առաջին շրջանի բանաստեղծություններում Թումանյանի սիրո մեջ նկատվում է նաև, այսպես կոչված, ներանձնական զգացման արտահայտություն», ենթատեքստը պարզվում է, այսինքն՝ քնարական ստեղծագործության մեջ առաջնայինը ոչ թե «ներանձնականն» է, այլ «հասարակականը», այն, ինչ «սոցիալական հիմք» ունի: Այս տրամաբանությամբ՝ Թումանյանի սիրային քնարերգության մեջ իրոք առկա «ողբերգական երանգը» ևս բացատրվում է «հասարակականի և անձնականի հակադրությամբ»:

Այսպիսի բացատրությունը որոշակի տուրք է խորհրդային բարոյական կոդեքսով ամրագրված հայտնի մտայնությանը, թե անձնական զգացմունքին հասարակականից բացի այլ նշանակություն վերագրելը քաղքենիություն է, ուստի Թումանյանին ամեն կերպ պետք էր «փրկել» դրանից:

Հոդվածում «հասարակականի» և «անձնականի» այդ հակադրությամբ է բացատրվում նաև Թումանյանի «սիրո քնարերգության ողբերգական երանգը»: Մինչդեռ իր այդ հոգեկան դրամայի մասին բանաստեղծի ուղղակի վկայությունը կա 1904 թ. օգոստոսի 7-ին Փ. Վարդազարյանին հասցեագրած նամակում, որ այլ առիթով հիշվում է նաև Խ. Գյուլնազարյանի հոդվածում: «Դու քո ճամփեն գնա, քույրի՛կ...» բանաստեղծության վերաբերյալ Փ. Վարդազարյանի դիտողությանը, թե՝ «դու չես ուզել սիրել», Թումանյանը պատասխանում է. «Ոչ, ուզելը ուզել եմ, բայց չեմ կարողացել և, երևի, երբեք էլ չեմ կարողանալու սրտալի սիրել...»: Եվ բացատրում է, թե ինչու. «... մի հոգի, որ կորցրած կյանքի հաճույքն ու կնոջ սերը և ամեն լավ բան, ելած կյանքի ամեն ճամփից, ագահ, անվերջ ու անհանգիստ, թափառում է, փախչում է անհայտ օրերի խավարին ընդդեմ: ...Անցավորը ընկել է իմ սրտից, իսկ անանցի հետ կապված չեմ դեռ, անհայտը, որ պետք է ունենա ոգևորված գրողը, դեռ խավար է, մութն է ինձ համար, ու թափառում է իմ հոգին»: Այդ անհայտը («կամ ավելի ճիշտ՝ իմ անհայտը»,- ճշգրտում է բանաստեղծը), որ Թումանյանի ստեղծագործության մեջ նույնանում է խորհրդանշական «Վեր»-ի հետ, դեռ շատ է հեռու: «Այդ հեռու-ին հասնելը կամ այդ խավարը պարզելը հնարավոր է,- շարունակում է բանաստեղծը,- իհարկե, միայն զարգացումով, այնպիսի զարգացումով, որ ես երբեք ունենալու չեմ և միշտ թափառելու է իմ հոգին (ընդգծումները Թումանյանինն են *Վ. Կ.*)» (ԳԱԹ ՓՎՖ, №11 ա):

Ինքնադատական այս դիտարկումները շատ փակագծեր են ենթադրում, որոնք բացելու փորձը այս դեպքում հարմար չէ: Այստեղ նկատենք միայն, որ Թումանյանի սիրային քնարերգության «ողբերգական երանգները» ամենից առաջ անձնական-ստեղծագործական հոգեբանության բարդ խնդիրների հետ են կապված, որոնք շատ են հեռու «հասարակականի» և «անձնականի» պարզ հակադրությունից:

Հայտնի է, որ Թումանյանի ոչ միայն քնարերգության, այլև ողջ ստեղծագործության կենտրոնական թեմաներից մեկը հայ գյուղի

կյանքն է՝ իր կենցաղի ու բարքերի լուսավոր ու մութ կողմերով, սոցիալական կացությամբ: Հոդվածում այս թեմային վերաբերող քնարական երգերը վերլուծվում են բավական հանգամանորեն, ներկայացվում է թեմայի բանաստեղծական մեկնաբանության ամբողջական համայնապատկերը՝ զարգացման ընթացքի մեջ:

Բայց ահա այդ ընթացքի տրամաբանությանն անդրադառնալիս դարձյալ որոշակի ձգտում է նկատվում ամեն կերպ հարմարեցնելու ժամանակի պաշտոնական գաղափարախոսությամբ սահմանված մի կանխադրույթի, որի համաձայն արվեստի ստեղծագործությունը արժեքավորվում է ոչ այնքան նրանով, թե որքան ճշմարտացի է գեղակերտված իրականության պատկերը, որքան նրանով, թե արվեստագետը ինչ միջոցներ է առաջադրում այդ իրականության վերափոխման համար: Այդ տեսակետից Թումանյանի վաղ շրջանի «գյուղական» քնարերգության հիմնական թերությունը հոդվածում համարվում է այն, որ դեռևս չկա կյանքը կռվով վերափոխելու անհրաժեշտության գիտակցություն: Ուստի վերլուծությունները տարվում են այնպիսի ուղղությամբ, որ «ապացուցվի», թե բանաստեղծը իր ստեղծագործության զարգացման ներքին անհրաժեշտությամբ վերջիվերջո հանգում է այդ գիտակցությանը:

Այսպես, եթե, ինչպես մեկնաբանվում է հոդվածում, դեռևս 1883 թ. Րաֆֆու և Պատկանյանի հետևողությամբ գրված «Հայ վաճառական» բանաստեղծության մեջ «գաբրիելյան փողի» սպառնալիքով հայ վաճառականի բարոյական վերափոխման գաղափարն է անցկացվում, ընդհանրապես «կեղեքիչների» պատիժը պատանի բանաստեղծը «դեռևս բարձրյալից է ակնկալում», ապա 80-ականների վերջին և 90-ականների սկզբին գրված բանաստեղծություններում «հայ հարուստին վերադաստիարակելու միամիտ-լուսավորական գաղափարն այլևս գոյություն չունի»:

Առաջ տանելով այս միտքը՝ արդեն հայտնի «Parodia»-ում, նկատի ունենալով «Ուր թալանում են մերոնք և այլերը» տողը, ակնարկվում է գյուղացուն հարստահարող «ներքին» ու «արտաքին» թշնամիների մասին: Այս առումով «քաղաքացիական

քնարերգության լավագույն նմուշներ» են համարվում «Հին օրհնություն»-ը, «Գութանի երգը», «Խրճիթում»-ը, բայց անմիջապես էլ վերապահություն է արվում՝ «թեև դրանցում իրավիճակը վերափոխելու որևէ ռեալ ճանապարհ չի առաջարկվում»: Անբավարար է համարվում նաև «նույնքան ընդհանուր պայքարի կոչը» 1889 թ. գրված «Երանություն էր խոստացել հույսս ինձ» բանաստեղծության «Հառաջ, կովելով, և կգա մի օր...» սկսվածքով հայտնի քառատողը, որ դպրոցական դասագրքերում անգամ ընկալվում էր որպես Թումանյանի հեղափոխական տրամադրությունների արտահայտություն:

Այս համատեքստում անդրադադարձ է կատարվում «Կալի երգը», «Կալի երգ (լոռեցոնց)», «Գութան», «Ախ, ինչ լավ են սարի վրա...», «Ամառվա գիշերը գյուղում» ոտանավորներին և դրանք հակադրելով «Գութանի երգը», «Հին օրհնություն», «Խրճիթում» բանաստեղծություններին՝ հետևություն է արվում. «Այս հովվերգությունը ինչ-որ չափով և ինչ-որ ժամանակ սփոփում է բանաստեղծին: Հոգու աչքերը փակելով նա մի ակնթարթ, կարծես, մոռանում է և «մերոնց», և «այլերի» արարքները»:

Սակայն այստեղ ակնարկված «հովվերգությունը» Թումանյանի ոչ միայն քնարերգության, այլև ամբողջ ստեղծագործության մեջ ամենևին էլ ինչ-որ ակնթարթային «սփոփանք» չէ. դա «անցավորից» «անանցը» ձգտող հոգու հիմնային հանգրվաններից է, որոնց վրա խարսխվում է գեղեցիկի, բարու, ճշմարտի հավերժական օրենքներով կառուցված թումանյանական գեղագիտության ողջ համակարգը: Աստվածայինը այդ համակարգը շնչավորող գործուն սկիզբներից է:

Հոդվածում ակնհայտ մտավախություն է նկատվում, թե աստծու անվան կամ աստվածայինի մասին ակնարկը կարող է վտանգել Թումանյանի բանաստեղծական վարկը՝ դուր չգալով ժամանակի աթեիստական քարոզչամեքենային: Ուրեմն հարկավոր է բանաստեղծին «փրկել» նաև այս վտանգից, որ, ինչպես կտեսնենք, ավելի ակնառու է հոդվածի վերջին էջերում, ուր խոսվում է բանաստեղծի «խոհական» երգերի մասին:

Հետևենք, սակայն, հոդվածում հեղինակային դատողությունների ընթացքին. «Ո՛չ թումանյանական «հայոց վշտի» ահագնությանը, և ո՛չ էլ նրա հանճարի փայլատակումներին մենք հասու չէինք լինի, եթե նա մնար նահապետական իդիլիայի կամ դրա կործանման համար պասիվ ափսոսանքի շրջանակներում»: Ըստ այս տրամաբանության՝ դա «մեծ բանաստեղծի ո՛չ հույսն է եղել, ո՛չ նպատակը». նա ոչ միայն տեսնում է «նոր հարաբերությունների անկանգ առաջընթացը», այլև ըստ էության հանգում է հենց նահապետական բարքերում տիրող «սոցիալական ահավոր անարդարությունները» հեղափոխական ճանապարհով վերափոխելու անհրաժեշտության գիտակցությանը: «Գութանի երգի», «Հին օրհնության», «Խրճիթում»-ի կողքին հիշելով «Մարոն», «Լոռեցի Սաքոն», «Անիծած հարսը», «Հառաչանքը»՝ դիտվում է, թե դրանց «նպատակը միայն տխուր փաստերի նկարագրությունը չէ, այլև սոցիալական հեղաբեկման փոքր-ինչ քողարկված պահանջը»: Իբրև այս եզրակացության հիմնավորում՝ հիշվում է նաև երիտասարդ Շահումյանի խնդրանքով Պուշկինի հակացարական մի քառատողի թարգմանության հայտնի պատմությունը:

Չխորանալով հարցի ավելի հանգամանալից քննության մեջ՝ նշենք միայն, որ Թումանյանը՝ ո՛չ որպես հասարակական գործիչ, ո՛չ որպես հրապարակախոս, մանավանդ ո՛չ որպես բանաստեղծ երբեք բացահայտ կամ «քողարկված» ձևով չի համակրել իրականության «հեղափոխական» վերափոխման որևէ ծրագրի՝ կյանքի որ բնագավառին էլ վերաբերելիս լինի դա:

Հայրենիքի թեմայով երգերին ներքված էջերում բանաստեղծին «փրկելու» փորձերը համեմատաբար քիչ են, բայց այստեղ էլ նկատելի են այդ մտայնության հետքերը: Այսպես, եթե առաջին ոտանավորներում, ինչպես դիտվում է հոդվածում, բանաստեղծը, հետևելով հայ ռոմանտիկական պոեզիայի ավանդույթներին, հայրենիքի վերածնության հեռանկարը կապում էր «նոր Ավարայրով, նոր Ղևոնդների և Ներսեսների առաջնորդությամբ» ազգային պետականության վերականգնման հետ, ապա արդեն 1900-1910-ականների երգերում այդ հեռանկարը կապվում է

«հումանիզմի» և «ինտերնացիոնալիզմի» հետ: Դեռևս բանաստեղծի կենդանության ժամանակ նրա ստեղծագործությունը մոտավորապես այսպես էին արժեքավորում ժամանակի մարքսիստ քննադատները (Վ. Խորենի, Ն. Սուրխաթյան, Դ. Անանուն և ուրիշներ):

Հոդվածի այս բաժնում նկատելի են նաև որոշ բանաստեղծությունների ոչ ճիշտ կամ կամայական մեկնաբանություններ:

Այսպես, 1915 թ. հունիսի 14-ին Վանում գրված «Ծուռ է գալիս ծանր քարը...» ոտանավորի մասին ասվում է, թե բանաստեղծն այստեղ արտահայտել է «իր խոր հավատը հայ ժողովրդի ազգային վերածննդի նկատմամբ, հավատ, որ նա փայփայում էր ի հակակշիռ թուրքական բռնակալության կազմակերպած ցեղասպանության»:

Մինչդեռ հենց այս և նույն օրերին գրված «Վերջին տագնապը», «Վերջին օրը» ոտանավորներն են, որ «ակնթարթի» տրամադրության արտահայտություն են: Վանի կարճատև ազատության օրերն էին, ռուսական բանակը հայ կամավորների հետ հաղթականորեն առաջ էր գնում, «Պոլսի գրավումը օրերի հարց» էր, ինչպես մի նամակում ոգևորված գրում է բանաստեղծը, օսմանյան մայրաքաղաքում և գավառներում հայկական կոտորածների լուրերը դեռ կցկտուր էին հասնում Վան... Սակայն շուտով Էջմիածնում բանաստեղծի համար պիտի պարզվեին համազգային աղետի իրական ծավալները: «Ակնթարթային» ոգևորությունը տեղի է տալիս. Թումանյանի բանաստեղծություններում թանձրանում են ողբերգական շեշտերը: Այդ երգերի մասին զգուշավորությամբ է խոսվում հոդվածում՝ ամեն կերպ մեղմելով ողբերգականի զգացողությունը, շարունակ ընդգծելով լավատեսական շեշտադրումները:

Այսպես, «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունն իրավացիորեն համարելով հայրենասիրական քնարերգության իսկական գլուխգործոց՝ վերլուծելիս պարզապես շրջանցվում է սկզբի չորս տողերը, որտեղ արտահայտված է ոչ միայն իր՝ հեղինակի, այլև առհասարակ հայ գրողի ստեղծագործական մեծ դրաման, որ

սկզբունքային նշանակություն ունի հայ պոեզիայում հայրենիքի թեմայի բանաստեղծական արծարծումներում:

Բերելով բանաստեղծության ավարտական տունը՝ եզրակացվում է. «Միայն Թումանյանի նման մեծ հումանիստն ու ինտերնացիոնալիստը կարող է տեսնել այս հեռանկարը այն էլ այն ժամանակ, երբ, իր իսկ բառերով ասած, «կյանքի կռվում» կանգնած էին «ամենքը դեմ ամենքին» (ի դեպ՝ չակերտներում բերված բառերը ոչ թե «իր իսկ» Թումանյանինն են, այլ Իսահակյանինը (տե՛ս Ավ. Իսահակյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, 339): Ծփոթությունը հավանաբար գալիս է Թումանյանի «Բարձրից» բանաստեղծության «Տեսավ ուտում են ամենքն ամենքին» տողից *(Վ. Կ.)*, երբ իր ժողովուրդը բառացիորեն ենթակա էր ֆիզիկական բնաջնջման»: Գնահատականն ընդհանուր առմամբ սխալ չէ, թեև բանաստեղծի «հումանիզմի» և «ինտերնացիոնալիզմի» մասին ամեն առիթով կրկնվող ակնարկը միշտ չէ, որ տեղին է:

Հոդվածում այդպիսի հետևության համար հիմք տվել է բանաստեղծության այդ վերջին տան «Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած» տողը: Բայց «հումանիզմը» և «ինտերնացիոնալիզը», որ խորհրդային գաղափարաբանության, կարելի է ասել, հենակետային հասկացություններից են, իրենց առօրեական-գործնական բովանդակությամբ ու նպատակաուղղվածությամբ միայն մասամբ կարող են առնչվել «հանուր կյանքի» մասին թումանյանական իդեալի հետ, որին դեռ հարկ կլինի անդրադառնալու «Բարձրից» բանաստեղծության կապակցությամբ:

Հոդվածում բավական ընդարձակ ակնարկ կա նաև Թումանյանի ժողովրդայնության մասին, հատկապես խորհրդային գրականագիտության մեջ շատ չարչրկված մի հասկացություն, որ գրեթե իսպառ զրկվել էր իր գեղագիտական բովանդակությունից և գործառում էր որպես գաղափարախոսություն: Ժողովրդայնությունն, այսպիսով, կորցնում էր իր հասկացական որոշակիությունը: Հոդվածում Թումանյանի ժողովրդայնությունը բնութագրվում է այս մտայնության դիտակետից:

«Թումանյանն ազգային (այսինքն՝ ժողովրդային Վ.Կ.) բանաստեղծ է նաև այն յուրօրինակ սիրով ու հիացմունքով,- կարդում ենք հոդվածում,- որ նա տածում է հայկական բնաշխարհի նկատմամբ»: Այսպիսի եզրակացությունը հիմնավորվում է նրանով, որ՝ «բնության շքեղությունը, «ազնվությունն» ու «ազատությունը» նրան մղում են մտորումների՝ մարդկային փոխհարաբերությունների և հասարակական բարոյականության շուրջ»: Որպես բնորոշ օրինակ հիշվում են «Համերգ», «Ամառային երեկո», «Գարնան առավոտ», «Պատրանք» (այս բանաստեղծությունը, ինչպես հայտնի է, անձնական-կենսագրական հիմք ունի և կապ չունի հոդվածում հեղինակային կանխադրույթի հետ), «Ախ, ինչ լավ են սարի վրա...» (հիշենք, որ այս հանրահայտ ոտանավորը հոդվածում ուրիշ առիթով բերվում էր որպես օրինակ թեթև հովվերգության՝ գյուղում «մերոնց» և «այլերի» շահատակությունները մի «ակնթարթ», «հոգու աչքերը փակելով», մոռանալու համար) բանաստեղծությունները, որոնցում, ինչպես այնուհետև ասվում է հոդվածում, «բնապաշտությունը... հասարակական մեծ հնչեղություն ունի»: Այստեղից էլ հետևություն. «Այս տիպի բնապաշտությունը ինքնին խորապես ժողովրդային է»:

Դատողությունների այսպիսի ընթացքը վիճելի է առնվազն երկու տեսակետից: Նախ՝ հիշված բանաստեղծություններում «հասարակական հնչեղություն» այն իմաստով, ինչպես այդ հասկացությունը գործառում է հոդվածում, ընդհանրապես չկա. բանաստեղծի խոհերը վերաբերում են ոչ թե «մարդկային փոխհարաբերություններին» կամ «հասարակական բարոյականությանը», այլ նրա բանաստեղծական կենսափիլիսոփայության հիմքում ամենուրեք գործող «անցավորի» և «անանցի», պահի և հավերժության վերերկրային խնդիրներին: Եվ հետո՝ «բնապաշտություն» և «ժողովրդայնություն» հասկացությունների համատեղումը խիստ կասկածելի է, եթե չասենք, որ դրանք ընդհանրապես անհամատեղելի են:

Հոդվածում ընդհանրապես «ժողովրդայնություն» հասկացության սահմանները տեղ-տեղ դառնում են բեկբեկուն, ուստի

փորձ է արվում ճշգրտելու այդ սահմանները՝ ընդունված պատկերացումների համաձայն: Դա հոդվածում զբաղեցնում է մի ամբողջ պարբերություն, որին ընթերցողն ինքը կարող է ծանոթանալ: Հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել միայն, մեր կարծիքով, կարևոր մի երկու դիտարկման վրա:

Հարկավ, ճիշտ է այն դիտարկումը, թե ժողովրդայնությունն ունի սուբյեկտիվ կողմ, այսինքն՝ գրողը, «հավատարիմ իր ներքին ձայնին, ժողովրդից փոխ է առենում ի՛ր թեմաները, ի՛ր գաղափարները»: Բայց ահա ժողովրդայնության պատմականության մասին ակնարկը որոշակի տուրք է այդ հասկացության վերաբերյալ խորհրդային գրականագիտության մեջ ընդունված պատկերացումներին:

Գրականության և արվեստի ժողովրդայնությունը՝ որպես կոնցեպտուալ հասկացություն, ձևավորվել է 18-րդ դարում: Ժամանակի ընթացքում այս հասկացության դասական բովանդակությունն ու իմաստը արմատական փոփոխությունների են ենթարկվել՝ հարմարեցվելով տարբեր հասարակական-քաղաքական պայմանների և գաղափարական հոսանքների պահանջներին: Հասկացությունը, որ նախապես արվեստագետի գեղագիտական հայացքների, գեղարվեստական մտածողության ու ոճի որոշակի տիպի բնութագիր էր, աստիճանաբար վերածվում է գաղափարախոսության: Այդ միտումը ծայրահեղության է հասնում խորհրդային տարիներին, որ արտահայտվել է նաև այն դիտարկման մեջ, թե ժողովրդայնությունը «ոչ այլ ինչ է, քան գրողի արտահայտած առաջավոր գաղափարների արձագանքը ժողովրդի սրտում»: Սակայն «առաջավոր գաղափար» հասկացությունը, որ բավական տարածված էր խորհրդային գրականագիտության մեջ, ըստ էության զուրկ է որոշակի բովանդակությունից. յուրաքանչյուր դարաշրջան, ամեն մի հասարակական խավ կամ դաս իր շահերից բխող բովանդակություն է վերագրում դրան: Խորհրդային պաշտոնական ձևաչափով «առաջավոր» էր այն գաղափարը, որ այս կամ այն կերպ տեղավորվում էր ընդունված գաղափարական կաղապարներում: Ինչպես տեսանք, հոդվածում

Թումանյանի քնարերգության վերլուծությունները տարվում էին հիմնականում հենց այդ ուղղությամբ:

Հատկանշական է, սակայն, որ երբ տեսական դատողություններից անցում է կատարվում Թումանյանի՝ ժողովրդական թեմաներով ու մոտիվներով գրված բանաստեղծություններին, վերլուծություններն ավելի են մոտենում բանաստեղծի ժողովրդայնության բուն էությանը: Ընդհանրապես հոդվածի այդ մասը ամենահաջողվածներից է:

Ըստ այդ հասկացության հանրագիտարանային սահմանումի՝ «ժողովրդայնությունը բազմանշանակ հասկացություն է, որով բնութագրվում է՝ 1) անհատական ստեղծագործության հարաբերությունը ժողովրդականին, գրականության (արվեստի) կողմից ժողովրդական բանահյուսության մոտիվների, կերպարների, պոետիկայի փոխառման և ստեղծագործական յուրացման աստիճանը, 2) գեղարվեստական ստեղծագործության մեջ ժողովրդի ազգային դիմագծի և աշխարհայեցության արտացոլման խորության ու հարազատության մակարդակը, 3) հանրությանը արվեստի սոցիալական ու գեղագիտական հասանելիության չափը» (Литературный энцилклопедический словарь, М., 1987, стр. 235): Թումանյանի ստեղծագործության ժողովրդայնության մասին կարելի է խոսել հասկացության այս դասական սահմանումի դիտակետից՝ միշտ նկատի ունենալով նաև, որ նրա բանաստեղծական աշխարհընկալման շառավիղները շատ ավելի լայն սահմանների են ձգտում:

Հոդվածի վերջին մասը նվիրված է Թումանյանի «խոհական» բանաստեղծություններին:

Ամենից առաջ պետք է նշել, որ տեղին չէ այն դիտարկումը, թե՝ «ստեղծագործական կյանքի բոլոր փուլերում նա միաժամանակ, այսպես կոչված, ինտելեկտուալ բանաստեղծության խոշորագույն ներկայացուցիչներից մեկն է»: Ինտելեկտուալ բանաստեղծությունը 20-րդ դարի երկրորդ կեսի երևույթ է, Թումանյանի խոհական քնարերգությունը դրա հետ կապ չունի:

Հոդվածի այս ավարտական մասում վերլուծությունների ուղ-

ղությունը որոշվում է մի հիմնական կանխադրույթով՝ եթե վաղ շրջանի ոտանավորներում պատանի բանաստեղծը կյանքի, մարդկային հարաբերությունների կարգավորումը վերագրում էր սերնդեսերունդ ավանդաբար անցնող նախախնամության կամքին, ապա վերջին բանաստեղծություններում իսպառ և վերջնականապես հրաժարվում է արարչության գաղափարից:

Հոդվածում քրիստոնեական ավանդական պատկերացումների վերաբերյալ տարակույսներ հոդվածի հեղինակը նկատում է բանաստեղծի առաջին իսկ ոտանավորներում՝ իբրև բնորոշ օրինակ վերլուծելով 1890 թ. գրված «Խորհրդածությունը», որտեղ, իրոք, երիտասարդ բանաստեղծին հուզում են բազմաթիվ հարցականներ, որոնց պատասխանը դեռ անհայտ է նրան: Բայց, ինչպես դիտվում է հոդվածում, «առաջին քարն արդեն նետված է: Այնուհետև ամեն ինչ՝ սերը, կարոտը, ազգային ողբերգությունը, հասարակական բարոյականությունն ու կյանքի առօրյա ընթացքն անգամ նա պիտի քննի երկու, այսինքն՝ ավանդական և նոր, պատասխանների հակամարտության և ավանդականի աստիճանական տեղատվության պայմաններում»: Հետագա վերլուծություններն ուղղված են այս եզրակացության հիմնավորմանը:

Վերլուծվում է երկու բանաստեղծություն՝ «Վայրէջքը» (1909) և «Բարձրից»-ը (1915): Ելակետային դրույթն է. «Ներքին մաքառման վերջին ակորդն է սա (նկատի ունի հատկապես «Բարձրից»-ը - *Վ. Կ.*), որտեղ տարակուսանքն արդեն տեղի է տվել, բանաստեղծը վերջնականապես հիասթափվել է ավանդական պատասխանից, և դա այլևս ողբերգություն չէ նրա համար, քանի որ նա գտել է իր՝ մարդկային անհատի տեղը տիեզերքում և համոզվել, որ մարդու մեջ է այն ամենը, ինչ դարերով վերագրվել է արարչին»: Սա, ինչպես Նիցշեն է բնութագրել Սպինոզայի պանթեիզմը, «քաղաքավարի աթեիզմ» է, թեև հոդվածում առհասարակ չի գործածվում այդ բառը: Դա է ցույց տալիս նաև բանաստեղծության բուն վերլուծությունից արված հետևությունը. «Նրա բոլոր մտորումների ելակետը խոր հումանիզմն է, ներքին պայքարում ավանդականի վերջնական պարտությունը»:

Նախ՝ հումանիզմը շատ ընդհանրական հասկացություն է և չի կարող գրականության կամ արվեստի ստեղծագործությունները տարբերակելու չափանիշ լինել: Եվ հետո՝ անհասկանալի է, թե ինչու հումանիզմը պիտի նշանակեր ավանդականի, այսինքն՝ քրիստոնեական արժեքների պարտություն, չէ՞ որ հումանիզմը գործում է բոլոր կրոնների հիմքում, որքան էլ դրանցից յուրաքանչյուրը իր ուսմունքի ձևաչափով է բովանդակավորում այդ հասկացությունը:

Բանաստեղծության մեջ գործածված «աստծու աշխարհք», ինչպես նաև այլ առիթներով «նույն աղբյուրից» (այսինքն՝ Աստվածաշնչից) փոխառած «հոգեհանգիստ», «մարգարե», «անապատ», «ուխտ», «հարություն», կարելի է ավելացնել՝ «աղոթք», «օրհնանք», «սաղմոս», «բուրվառ» և նման այլ բառերի ու արտահայտությունների մասին վերապահություն է արվում, թե չլինի դրանք հասկացվեն իրենց իրական իմաստով. դրանք, ինչպես բացատրվում է հոդվածում, միայն «ավանդական տերմիններ» են: Այս կապակցությամբ չի կարելի չհիշել նաև, որ եղել է ժամանակ, երբ դպրոցական դասագրքերում «Գութանի երգի» վերջին տողում «աստված» բառը փոխարինված էր «հողով»՝ «Օրհնյա՛լ է հողը, հորովե՛լ»: Բայց երբ պատրաստվում էր Թումանյանի ակադեմիական հրատարակության առաջին հատորը, արդեն 80-ական թվականների վերջերն էին, և ամենևին էլ կարիք չկար հետևելու այս ավանդույթին...

Իրականում «Բարձրից»-ը Թումանյանի ամենաողբերգական բանաստեղծություններից է՝ գրված հայտնի «Հոգեհանգստի» (այս հանրահայտ բանաստեղծությունը հոդվածում ոչ մի առիթով անգամ չի հիշվում, քանի որ հնարավոր չէր տեղավորել հոդվածում ընդունված կաղապարներում) հետ միաժամանակ՝ 1915 թ.՝ համաշխարհային պատերազմի և ապրիլյան աղետի անմիջական տպավորության տակ:

Բանաստեղծությունը տեքստային բարդ կառուցվածք ունի, որին այստեղ անդրադառնալու հարկ չկա: Նշենք միայն, որ հոդվածում բանաստեղծության սկզբի երկու քառատողերի մեկնաբանությունը,

թե՝ «դեպի վեր ճախրելով աշխարհն ավելի ամբողջական ձևով ընկալելու համար (իզուր չէ, որ բանաստեղծությունը կոչվում է «Բարձրից»), բանաստեղծի հոգին մտնում է մարդկային հասարակության ու տիեզերքի «առեղծվածները» բացատրելու ոլորտը, միանում տիեզերքի անհունին...» և այլն, բավական պարզունակ է: Նախ՝ բարձրը այստեղ ինչ-որ նյութական-տարածական հեռավորություն չէ, որտեղից ընդարձակվում է տեսադաշտը, այլ հոգեկան արժեք, այն «Վերը», որի բացատրությանը հենց իր՝ Թումանյանի կողմից, ծանոթացանք նախորդ էջերում: Եվ հետո՝ տիեզերքի «առեղծվածների» մասին ակնարկը որևէ հիմք չունի, քանի որ այստեղ բանաստեղծի «հզոր հոգին» ամբողջովին ձերբազատված է դրանցից, նրա մտահոգությունները վերաբերում են բացառապես իրական-առարկայական աշխարհին, որտեղ՝

... ուտում են ամենքն ամենքին.
Ամեն հայրենիք՝ իրեն զավակին,
Իրեն պաշտողին՝ ամեն մի աստված,
Եվ կյանքը տանջանք, ցավ համատարած:

Կարելի է հիշել նաև «անձուկ հայրենիքների» «զանազան աստվածների», «խիստ, խստրող ու դաժան» սրբերի մասին: Բայց սյս ամենը նշանակում է ոչ թե «ավանդականի վերջնական պարտություն» կամ ավելի պարզ ասած՝ աստվածամերժություն, այլ ընդհակառակը՝ բանաստեղծի հոգին ողբերգություն է ապրում ոչ միայն մարդկության ընկած բարքերի, այլև, գուցե ավելի շատ, աստվածայինի աղավաղման համար, նրա համար, որ՝

... ոչ մի երկիր չկա հանգչելու -
Խոր, արարչական հանգիստն անխռով,
Ու ոչ մի անկյուն չկա շընչելու
Ծունչն աստվածային՝ լի անվերջ սիրով...

Մնում է միայն, Սիամանթոյի արտահայտությամբ ասած, «աստվածներով լեցուն» մարդկային հոգին, ուր կարելի է մեկուսանալ՝ ցավի ծանրությունը արժանապատվորեն կրել կարողանալու համար, սպասելով լավ օրերի... Ինքնըստինքյան ծագում է հարասությունը «Հոգեհանգստի» ողբերգականորեն վեհահունչ տողերի հետ.

-Հանգե՛ք, իմ որբեր... իզո՜ւր են հուզմունք, իզո՜ւր և անշահ...
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կըմնա...

«Վայրէջք»-ին անդրադառնալիս հոդվածում երկու կարևոր դիտարկում է արվում: Մի դեպքում բանաստեղծությունն արժեքավորվում է որպես Թումանյանի՝ «իմաստասիրական իրարամերժ մտորումներից ու տարակուսանքներից, մարդակենտրոն փիլիսոփայությանն անցնելու պրոցեսի» ավարտ, որ այնքան էլ հասկանալի չէ՝ նկատի ունենալով բանաստեղծության իրական բովանդակությունը, մյուս կողմից, փորձելով մեկնաբանել «Անհայտը սուրբ, աշխարհքը պայծառ» արտահայտության իմաստը, հետևություն է արվում, թե դա «նույն «անչար, անաչառ, անդորր ու անհույզ» վիճակն է, «որը հատուկ է միայն աստվածության»: Բայց փոխանակ վերլուծությունը տանելու այս երկու պնդումների համադրության արգասավոր ուղղությամբ, խոսք է գնում բանաստեղծի «շռայլ ու շքեղ լավատեսության» մասին, որ ըստ էության գիտական հարցադրում էլ չէ:

Իրականում Թումանյանի բանաստեղծական կենսափիլիսոփայությունը խարսխված է մի համապարփակ բարոյական հիմքի վրա, որ «Բարձրից» բանաստեղծության մեջ ներակայացվում է որպես «Խոր, արարչական հանգիստն անխռով», «Ծունչն աստվածային՝ լի անվերջ սիրով...»: Թումանյանի ամբողջ ստեղծագործության մեջ դա բացարձակ բարոյական արժեք է, ինչը ոչնչով պայմանավորված չէ, բայց իրենով պայմանավորում է առարկայական աշխարհի բոլոր իրերն ու երևույթները, որոնք էլ իրենց հերթին ձգտում են դեպի այդ բացարձակը. դա գոյության,

կյանքի, առաջընթացի հիմնական օրենքն է: Այդ տիրույթում է գոյավորվում նաև Մարդու թումանյանական իդեալը, որ անբաժան է արարչական նախասկզբի գաղափարից: Թումանյանի պանթեիզմը աստծու էությունը չի ձուլում բնության մեջ. աստված ամենուրեք է, ամեն ինչի մեջ, բայց և եզակի է, վեր է ամեն ինչից, անփոխարինելի, անհաս ու անմեկնելի արարչության սկիզբն է, անվախճանի խորհուրդը, որին բանաստեղծը դիմում է տարբեր անուններով՝ Աստված, Ստեղծող, անճառ Միհ, ով Շռայլ և այլն: Մարդն արարչության ծնունդ է, բայց ինքն էլ արարիչ է, որ հեռացել է իր նախաստեղծ էությունից: Վերադարձի ճանապարհը դժվարին է, գաղափար, որ խտացել է հայտնի քառյակի վերջին տողում. «Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան»: Բայց վերադարձը անհնարին չէ, ինչպես ուզում է հավատալ բանաստեղծը մի ուրիշ քառյակում. «Երբեմն, ասես, զգում եմ ես, թե կըհասնեմ Նըրա մոտ»: Իր բանաստեղծական աշխարհի այս եզրով Թումանյանը մերձենում է Գր. Նարեկացուն:

Վերահրատարակության խմբագրությունը հարկ է համարում նկատել, որ արված դիտողությունները վերաբերում են ոչ այնքան հոդվածի հեղինակին, որքան ժամանակին ու ժամանակի գիտական բարքերին: Ուստի նպատակահարմար գտնվեց Խ. Գյուլնազարյանի հոդվածը պարզապես չփոխարինել նորով, այլ վերապահումներով հանդերձ պահպանել՝ որպես մեծ բանաստեղծի ժառանգության մեկնաբանության որոշակի պատմափուլի արտահայտություն, որ կարող է հետաքրքրել նաև ժամանակակից ընթերցողին:

ՎԼ. Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հովհաննես Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի առաջին հատորն ընդգրկում է հեղնակի բանաստեղծությունները (բացի քառյակներից), գրված 1881-1922 թթ.:

Հատորում զետեղված բանաստեղծությունների համար հիմք են ծառայել Թումանյանի կենդանության օրոք տպագրված ժողովածուներում հրատարակված բնագրերը, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի և Հովհաննես Թումանյանի թանգարանի ֆոնդերում պահվող ինքնագրերը, որոնց մեջ կան նաև ցարդ անտիպ բանաստեղծություններ:

Վերահրատարակության մեջ անհրաժեշտ լրացումներ և ճշգրտումներ կատարելիս օգտագործվել են նաև այլ աղբյուրներ, որոնք նշվում են ծանոթագրություններում:

Հատորում օգտագործված են հետևյալ համառոտագրությունները.

ՀԳԿԸ – Հայ գրողների կովկասյան ընկերություն

ԲՄ I – Բանաստեղծություններ, հ. I, Մոսկվա, 1890

ԲՄ II – Բանաստեղծություններ, հ. II, Մոսկվա, 1892

Դ – Դաշնակներ, Թիֆլիս, 1893

Դփ – Դաշնակներ, փոփոխած, Թիֆլիս, 1896

ԱՄ – «Աղբյուրի մատենադարան» շարք, «Հովհաննես Թումանյան» ժողովածու, Թիֆլիս, 1899

ԲԹ – Բանաստեղծություններ, Թիֆլիս, 1903

ԲԲ – Բանաստեղծություններ, Բաքու, 1908

ՀՀ – Հայրենիքիս հետ, Թիֆլիս, 1916

ԲՊ – Բանաստեղծություններ, Կ. Պոլիս, 1922

ԳԵ – Հովհաննես Թումանյան, Գեղարվեստական երկեր, Երևան, 1934

ԵԺ I, II, III, IV, V, VI – Հովհաննես Թումանյան, երկերի ժողովածու, գիտական հրատարկություն 6 հատորով, Երևան, 1940-1959

Աղ – «Աղբյուր» ամսագիր

ԲԳԱ – «Բանբեր գրականության և արվեստի» հանդես

ԲԵՀ – «Բանբեր Երևանի համալսարանի» հանդես

ԳԱԹ – Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան

ԳԹ – «Գրական թերթ»

Գղ – «Գեղարվեստ» հանդես
ԲՋ – «Բյուզանդիոն»
ԹԹԳԳ – Թումանյանի քանգարանի գլխավոր գույքամատյան
ԹԸԱ – Թումանյանի ընտանեկան արխիվ
ԹԺՀ – Թումանյանը ժամանակակիցների հուշերում, տեքստը պատրաստեց և ծանոթագրեց՝ Լ.Մ. Կարապետյան, Երևան, 1969
ԹՖ – Թումանյանի ֆոնդ
ԹՏ – Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն, հ. 1, (1896-1908), Երևան, 2010
ԴԴԵԺ – Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու տասնչորս հատորով, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն
Լ I, Լ II և այլն – Լուսաբեր, դասագիրք, Ա տարի, Բ տարի և այլն
ԼԳ – «Լսորհրդային գրականություն» ամսագիր
Լսմբ. – Լսմբագրական կոլեգիա
ՀԳ – Հայ գրողներ (Ա, ռուսահայ գրողներ), Թիֆլիս, 1914
Հհ – «Հորիզոն» հանդես, Թիֆլիս, 1894
Հմբ – «Համբավաբեր» շաբաթաթերթ
Հսկ – «Հասկեր» ամսագիր
Հր – «Հորիզոն» օրաթերթ
Հուշ – «Հուշարար» երկշաբաթաթերթ
Մճ – «Մուրճ» ամսագիր
ՆԱ – «Նոր ալիք» օրաթերթ, Թիֆլիս
ՆՈՒ – «Նոր ուղի» ամսագիր
ՆՀ – «Նոր հոսանք» ամսագիր
ՆԴ - Նոր-Դար
Պր – «Պրոլետար» օրաթերթ
ՍԳ – «Սովետական գրականություն» ամսագիր
Տզ – «Տարազ» շաբաթաթերթ
ՈՒՀ 1, 2, 3, 4 – Թումանյան. ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 1, Երևան, 1964, հ. 2, Երևան, 1969, հ. 3, Երևան, 1983, հ. 4, Երևան, 1985
ՓՎՖ – Փիլիպոս Վարդազարյանի ֆոնդ
Հեղինակի ծանոթագրությունները տրվում են տողատակ, աստղանիշներով։ Ուղղանկյուն փակագծերի մեջ դրվում են խմբագրության վերականգնած և ըստ տրամաբանության անհրաժեշտ տառերն ու բառերը։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

(«Լեռնե՛ր, ներշընչված դարձյալ ձեզանով...»)
(էջ 31) (ԵԼԺ 1, էջ 23)

Գրված է 1890 թ.:

«Հառաչանք» (նախնական վերնագիրը՝ «Մեր այգեպանի պատմություն») պոեմի նախերգանքն է:

Ինքնագիրը չի պահպանվել: Հավանաբար կորել է 1908 թ. դեկտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը, երբ բանաստեղծին ձերբակալելուց առաջ ժանդարմերիան խուզարկել է նրա բնակարանը և այլ ձեռագրերի հետ բռնագրավել նաև հիշյալ պոեմի ձեռագիրը: (Այս մասին մանրամասն տե՛ս ԵԺ II, 367):

Առաջին անգամ տպագրվել է՝ Դփ, էջ 3-4, այնուհետև՝ ԲԹ, էջ 7-8, ԲԲ, էջ 5-6, ԲՊ, էջ 7-8, ապա՝ ԵԺ I, 28-29:

Պոեմի մյուս հատվածների հետ առաջին անգամ տպագրվել է ԵԺ II, 33-34:

Արտատպվում է ԲՊ-ից:

Դփ-ում, ապա 1903, 1908 և 1922 ԹԹ. ժողովածուների մեջ Թումանյանն այս բանաստեղծությունը զետեղել է սկզբում՝ դիտելով որպես իր ողջ ստեղծագործության նախերգանք: Սրանով է բացվում նաև Ե. Չարենցի խմբագրությամբ 1934 թ. հրատարակված «Դեղարվեստական երկեր» ժողովածուն: Հետևելով այդ ավանդույթին և նկատի առնելով այս բանաստեղծության բացառիկ կարևորությունը՝ խմբագրությունը հարմար գտավ Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի առաջին հատորը ևս բացել «Նախերգանքով»:

1881

«ՀՈԳՈՒՍ ՀԱՏՈՐ...»
(էջ 32) (ԵԼԺ 1, էջ 24)

Թումանյանի՝ մեզ հասած ամենահին բանաստեղծությունն է: 1916 թ. օգոստոսի 12-ին Յոլակ Խանզադյանին ուղղած նամակում, պատասխանելով հասցեատիրոջ հարցին, թե որն է իր ամենահին տպագրված բանաստեղծությունը, հիշատակում է «Շունն ու կատուն»,

«Գութանի երգը», «Մարոն» և ավելացնում. «Իհարկե, չեմ հիշում ամենահինը էն սիրային ոտանավորը իր պատմությունով հանդերձ, որ գրված է չեմ հիշում 1881 թե 82 թվականին» (տես ԵԺ V, 415): Սակայն այս տողերը գրելիս բանաստեղծը ըստ երևույթին նկատի է ունեցել ոչ թե իր անդրանիկ գրական փորձերը, այլ միայն պահպանված ոտանավորը, քանի որ մեկ այլ առիթով գրում է. «Շատ վաղ եմ սկսել ոտանավոր գրելը: 10-11 տարեկանս լուսիս Մելիքովի վրա երգեր էին երգում ժողովրդի մեջ: Այդ երգերին տներ էի ավելացնում և երգում էի զանազան ոտանավորներ՝ երգիծաբանական, հայրենասիրական և սիրային» (տես ԵԺ IV, 87):

Գրված է 1881 թ. մարտին՝ հավանաբար սկզբին: Դա երևում է բանաստեղծի մեկ այլ վկայությունից, որտեղ ոտանավորի գրության ժամանակը նշելիս հիշատակում է կայսր Ալեքսանդր II-ի սպանությունը, որ տեղի է ունեցել 1881 թ. մարտի 1-ին: «1881 թվականին, - գրում է նա, - այս ոտանավորը բոնեցին Համայակն ու Միքայելը, մեր տեսուչ Տիգ. (Տիգրան Տեր-Դավթյան – Խմբ.) ինձ ուզում էր ողջի տալ, բայց լացով պրծա: Թագավորի սպանվելուց հետո այն օրերում» (տես ԹԹԳ1036, ծոցատետր №10): Նույն տեղում պահվում է մեկ ինքնագիր՝ գրված հիշողությամբ 1890-ական թվականների սկզբներին: 4-րդ տողն ունի երկու տարբերակ:

ԴԱԼԹ Թ.Ֆ. №1 (11ա)-ում պահվում է մեկ ինքնագիր ևս, որն, ըստ երևույթին, նույնպես ուշ ժամանակի գրություն է՝ թվագրված «1882-3»:

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հավելված «Լույս» 1905 օրացույցի», էջ 21, այնուհետև՝ Էմ. ք. Նազարյանց, «Ընտիր հատվածներ», 1907, էջ 208, տպա՝ ԵԺ I, 427:

Արտատպվում է «Ընտիր հատվածներից»:

Սուտյդ հայտնի չէ, թե ում է ձոնված ոտանավորը: Թումանյանի պարոցական ընկերներ Վարսենիկ Գևորգյանի և Սարգիս Աբովյանի հուշերում, որպես պատանի բանաստեղծի հափշտակության առարկա, հիշատակվում է Ջալալօղլու դպրոցի տեսուչ Տիգրան Տեր-Դավթյանի դուստր Վերգինեն (Վերգինե Պապաջանյան), որ Թումանյանից երեք տարով մեծ է եղել և դասերից հետո նրա և մի քանի ուրիշ հետ մնացող աշակերտների հետ իրենց տանը լրացուցիչ պարապմունքներ է անցկացրել (տես ԹԺՀ, էջ 207-208 և 215): Բանաստեղծի մանկության ընկերներից մեկը Անուշավան Աբովյանը, գրում է. «Սույն ոտանավորը պատասխանն է սիրած աշակերտուհու այն գրության, որով նա նախապատրաստել էր Հովհաննեսին, թե չլինի՝ սիրով տարված, չկարողանա դասերը սովորել» (ԹԺՀ, էջ 221): Այս աշակերտուհին էլ, ըստ Ան. Աբովյանի, Քալի Շահվերդյանն է եղել, ըստ Ն. Թումանյանի՝ Քալի Սիմոնյանը (այս մասին մանրամասն տես Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, Երևան, 1969, էջ 104-105):

«ԱՂՈՒԹՔ»

(«Սողոմոնի պես, տեր....)
(էջ 33) (ԵԼԺ 1, էջ 25)

Գրված է 1887 թ. փետրվարին:

Տիգրան Փիրումյանն իր հուշերում գրում է ԲՄ I-ում տպագրված 13 բանաստեղծությունների մասին, որոնց մտահղացման ու գրության հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ իմացել է երիտասարդ Թումանյանի հետ իրենց առաջին հանդիպման ժամանակ: Ըստ այդ տեղեկությունների, որ հուշագիրը գրի է առել իր հուշատետրում «Աղոթք» բանաստեղծության մտահղացման համար առիթ է ծառայել մի քահանայի «փող է հարկավոր, փող, դուն փող ասա» բացականչությունը, որ բանաստեղծը պատահաբար լսել է փողոցում (ԹԺՀ, էջ 345):

1-2-րդ տողերը – Նկատի ունի Դավթից հետո թագավոր դարձած նրա որդու՝ Սողոմոնի խոսքերը: Նա երբ գահ է բարձրանում, Աստծո խորանին ողջակեզ է մատուցում: Աստված երազում երևալով Սողոմոնին՝ հարցնում է, թե ինչ է կամենում, որ տա նրան: Ժողովրդին թագավորելու համար Սողոմոնը խնդրում է. «Եւ արդ զիմաստութիւն և զհանճար տացես ինձ, զի ելանիցեմ առաջի ժողովրդեանս Քոյ այսորիկ» (Բ Մնաց. Ա 10):

Ինքնագիրը չի պահպանվել: Ըստ Արամ Առաքելյանի հուշերի՝ ինքնագիրը եղել է «գրելու թղթի թերթերից կարած» այն տետրում, որ 1888 թ. Թումանյանը ցույց է տվել Ներսիսյան դպրոցի բարձր դասարանցի ընկերներին՝ Դավիթ Շահլամյանին, Գրիգոր Վանցյանին, Արամ Առաքելյանին և Արսեն Ղևոնյանին (ԹԺՀ, էջ 288):

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ I, էջ 85, այնուհետև՝ ԵԺ I, էջ 247:

Արտատպվում է ԲՄ I-ից:

ԴՈԽԹԱՆԻ ԵՐԳԸ

(«Արի՛ գութան, վարի՛ գութան...»)
(էջ 34) (ԵԼԺ 1, էջ 26)

Գրված է 1887 թ. մարտին:

ԳԱԹ թղ №2 (15ա)-ում պահվում է Մ6-ի արխիվից հանված մեկ ինքնագիր՝ 16 տող, վերնագրված՝ «Գութանի երգը»: Վրան կա Ավ. Արասխանյանի մակագրությունը՝ «Մուրճ, №4», ապա՝ «Շարել ու տպել

Թումանյանցի մյուս ոտանավորի հետ (Կրասիլնիկյանինը առայժմ հանել ու պահել)»:

ԹԹԴԳ1079/5-2-ում պահվում է մի մասն այն տետրի, որից հեղինակն, ըստ երևույթին, կազմել է ԲՄ I և ԲՄ II ժողովածուները: Այստեղ ոտանավորը վերնագրված է «Հայ երկրագործի երգը», պահպանվել է առաջին տողը և մի հատված, որը չկա հեղինակի կենդանության օրոք լույս տեսած հրատարակություններում: Այդ հատվածը հրատարակել է Ա. Ինճիկյանը (տես Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 236-237):

Առաջին անգամ «Դուբանի երգը» վերնագրով, տպագրվել է ՄՃ, 1891, №4, էջ 504, այնուհետև ԲՄ II, էջ 93-94, Դ (13-րդ ոտանավոր), Դփ, էջ 5-6 «Դուբանի երգը» վերնագրով, վերամշակված ԲԲ, էջ 9-10, ԲԲ, էջ 7-8, ԲՊ, էջ 11-12, ապա ԵԺ I, 13:

Արտատպվում է ԲՊ-ից:

ԲՄ I-ի հրատարակությունից հետո Թումանյանը բազմաթիվ նամակներ է ստացել ինչպես իր մտերիմներից, այնպես էլ անծանոթ մարդկանցից, որոնցում բարձր կարծիքներ կան ժողովածուում զետեղված մի շարք բանաստեղծությունների, այդ թվում և այս մեկի մասին: Ահա, օրինակ, Բե ինչ է գրում մանկավարժ, քիմիկոս և լրագրող Սիմ. Հովվյանը 1891 թ. մայիսի 14-ին Թումանյանին ղրած նամակում. «Հիանալի էր վերջինը «Արի գուբան, վարի գուբան...»: Երգիր, սիրելիս, գյուղացու կյանքը, նրա հոգսն ու վիշտը, նրա տանջանքն ու երջանկությունը, երգիր, շատ երգիր, այդ մեր ամենից սրտին մոտիկ է: Երգիր, անընդհատ երգիր, որովհետև քո երգածի մեջ բնականություն կա և ոչ դատարկ ֆանտազիա: Դու պիտի երգես, որովհետև դու նույն իսկ այդ ընկճված, հարստահարված գյուղացու ծնունդն ես» (տես ՈւՀ 4, 302):

Ինչպես նշում է Ա. Ղանալանյանը, «Դուբանի երգը» ոչ թե գրական անմիջական մշակումն է ժողովրդական նույնաբնույթ ստեղծագործություններից որևէ մեկի, այլ «մի տեսակ խտացումն է վարի աշխատանքների միջոցին հորինվող ու երգվող մեր ժողովրդական անթիվ ու անհամար «հորովելների»: Քաջ ծանոթ լինելով դրանց բազմաթիվ նմուշներին՝ Թումանյանը ժողովրդական բանահյուսության մշակման ու օգտագործման իրեն հատուկ վարպետությամբ՝ ստեղծել է իր երգը, դրսևորելով նրա մեջ իրեն հարազատ սոցիալական ամբողջի՝ աշխատավոր գյուղացիության հույզերն ու մտորումները» (Ա. Ղանալանյան. Հայ շինականի աշխատանքային երգերը, Երևան, 1937, էջ 45):

Ինչպես նկատում է Է. Ջրբաշյանը, Թումանյանը այստեղ որոշակիորեն ազդվել է Ռափայանի «Սերմնացան» (1882 թ.) բանաստեղծությունից (Է. Ջրբաշյան, Թումանյանը և հայ գրականության ավանդույթները, էջ 152):

9-րդ տող – հիշեցնում է Ռափայանի բանաստեղծության հետևյալ տողը.

Պարտատերս մյուս կողմից է ինձ խեղդում։

19-20-րդ տողերը հիշեցնում են Աղայանի «Սերմնացանի» հետևյալ տողերը.

Մի տուն լիքը երեխեքս մերկ քաղցած,
Տարին առատ, բայց ես չունիմ կորեկ հաց։

ԱՄԱՌՎԱ ԳԻՇԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

(«Լուսընկա գիշեր...»)
(էջ 35) (ԵԼԺ, էջ 27)

Գրված է 1887 թ. օգոստոսի 10-ին։

Ըստ Տ. Փիրումյանի հուշերի՝ Թումանյանն այս ոտանավորը գրել է «Թիֆլիսի Մթածմինդա սարից մի լուսնյակ գիշեր քաղաքը դիտելուց և նրա աղմուկներն իր հայրենի Դսեղ գյուղի հանդարտության հետ համեմատելուց հետո» (տե՛ս ԹԺՀ, էջ 346)։

Ինքնագիրը չի պահպանվել։

Ա. Առաքելյանի վկայությամբ՝ այս ոտանավորը ևս եղել է այն տետրում, որ 1888 թ. Թումանյանը ցույց է տվել ընկերներին (տե՛ս «Աղոթք» բանաստեղծության ծանոթագրությունը)։

ԳԱԹ ԹՖ №1418-ում պահվում է 1908 է. II-ի մի էջ, որտեղ 3-16-րդ տողերը գրված են Թումանյանի ձեռքով։ Այստեղ 6-րդ տողում հեղինակը կատարել է մեկ ուղղում։

Առաջին անգամ, «Ամառային գիշերը գյուղում» վերնագրով, տպագրվել է՝ ԲՄ I, էջ 76-78 (32 տող)։ Նույնը, առանց վերջին քառատողի՝ Դ, (12-րդ ոտանավոր), այնուհետև, մշակված և ուղիղ կեսը կրճատած՝ 1908 է. II, էջ 98-99, ապա՝ ԵԺ I, էջ 14։

Տպագրվում է է. II-ի՝ Թումանյանի ուղղած բնագիրը։ ԲՄ I-ը տալիս ենք որպես տարբերակ։

ՀԻՆ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

(«Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ...»)
(էջ 36) (ԵԼԺ 1, էջ 28)

Գրված է 1887 թ.։

Ինքնագիրը չի պահպանվել։ Ըստ Ա. Առաքելյանի վկայության՝ այս ոտանավորը ևս եղել է այն տետրում, որ 1888 թ. Թումանյանը ցույց է տվել

ընկերներին (տե՛ս «Աղոթք» բանաստեղծության ծանոթագրությունը):

Առաջին անգամ տպագրվել է ՀԿ, էջ 97-98, այնուհետև՝ Դփ, էջ 25-26, ԲԹ, էջ 11-12՝ վերամշակված, և հետագա բոլոր ժողովածուներում, ապա՝ ԵԺ I, էջ 15:

Արտատպվում է ԲԹ-ից:

«Արվեստի բարձր մակարդակը» հիմք է տվել Ա. Ինճիկյանին եզրակացնելու, որ յոթ տարի առաջ գրված բանաստեղծությունը «անտարակույս, հիմնական մշակման է ենթարկվել 1894 թ.՝ տպագրության հանձնելիս» (տե՛ս Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 76):

1888

ՆԱՀԱՏԱԿ

(«Փարթամ Կովկասի պարզ երկնքի տակ...»)
(էջ 38) (ԵԺ 1, էջ 30)

Գրված է 1888 թ.:

Ա. Առաքելյանի վկայությամբ այս ոտանավորը ևս եղել է այն տետրում, որ 1888 թ. Թումանյանը ցույց է տվել ընկերներին (տե՛ս «Աղոթք» բանաստեղծության ծանոթագրությունը):

ԹԹԳԴ1079/5-2-ում պահվող պատառիկների մեջ պահվում են մի քանի հատվածների ինքնագրերը:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ I, էջ 55-61, որտեղից և արտատպվում է:

Այս և Թումանյանի առաջին ժողովածուից մի քանի այլ բանաստեղծությունների Մոսկվայի հայ երիտասարդության շրջանում գտած արձագանքների մասին Մ. Բարխուդարյանի տպարանի աշխատակից է. Ավետիսյանը 1890 թ. հոկտեմբերի 22-ին բանաստեղծին հղած նամակում գրում է. «Ձեր «Բանաստեղծությունները», այո՛, այստեղ հավանում են, բայց չհավանողներ էլ կան: Քնքուշ մայիսյան վարդը, նույնիսկ, փշեր ունի... Իմ կարծիքով, ձեզ հաջողվել է փոքր, կարճ բանաստեղծությունները. ինչպես է «Նա էլ խեղդվեցավ», «Նահատակ», «Մարգարե», «Միամիտներին», «Երանություն էր խոստացել...» և այլն» (տե՛ս ՈւՀ 4, 276):

Նույնն է գրում Բագրատ Թումանյանը նոյեմբերի 10-ի նամակում այս շարքին ավելացնելով «Դիշերային առաջին աստղի դիմաց», «Ինչ ևս կատարել անմեղ արարքից», «Զարամիտներին» ոտանավորը (տե՛ս ՈւՀ 4, 282): Այս մասին տե՛ս նաև Ան. Աբովյանի դեկտեմբերի 6-ի նամակը (ՈւՀ 4, 286):

«ԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԷՐ ԽՈՍՏԱՑԵԼ ՀՈՒՅՍ ԻՆՁ...»
(էջ 43) (ԵԼԺ 1, էջ 35)

Գրված է 1889 թ. մայիսի վերջին, ինչպես թվագրված է մեզ հասած ինքնագիր պատառիկներից մեկը:

Տ. Փիրումյանի վկայությամբ՝ Թումանյանն այս ոտանավորը գրել է՝ հիասթափվելով կոնսիստորիայի հոգևորական պաշտոնյաներից, որոնք հալածանք էին սկսել նրա դեմ:

ԹԹԳԳ-ում պահվում է անհայտ մի անձնավորության չթվագրված սևագիր նամակ՝ ուղղված Եղիշե Դեղամյանին, որտեղ խոսվում է «Մեղու Հայաստանի» և «Մշակ» պարբերականների հակամարտության մասին, և որի վերջում (թղթի ազատ մնացած մասում) Թումանյանի ձեռագրով կան այս ոտանավորի 33-38-րդ տողերը՝ թվագրված «21 մարտի»:

1890 թ. հունիսի 3-ին Ան. Աբուվյանին հղած նամակում, բողոքելով ժամանակի հայ մամուլից, Թումանյանը գրում է. «Մամուլի մասին որ մի խոսալ. այնքան եմ զզված, որ չեմ ուզում կարդալ և ոչ մեկը՝ դրանց մասին, որպեսզի կարճ կտրեմ, այստեղ եմ դնում մի տուն իմ ոտանավորից»: Եվ մեջ է բերում 25-28-րդ տողերը (տե՛ս ԳԱԹ, ԹՖ №434(267):

ԹԹԳԳ1079/5-2-ում պահվող պատառիկների մեջ կան նաև 1-4, 15-17, 21-28 և 39-48-րդ տողերի ինքնագրերը:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ I, էջ 88-91, այնուհետև՝ ԵԺ I, 20-21:

Արտատպվում է ԲՄ I-ից:

Տե՛ս նաև «Նահատակ» բանաստեղծության ծանոթագրությունը:

ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔ

(«Հեռո՛ւ, ո՛վ սուրբ խաղաղություն...»)
(էջ 45) (ԵԼԺ 1, էջ 37)

Գրված է 1889 թ. դեկտեմբերին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II, էջ 98-99, այնուհետև՝ ԵԺ I, 26-27:

Արտատպվում է ԲՄ II-ից:

3-րդ տողը, որի փոխարեն ԲՄ II-ում կետեր են դրված, վերականգնել են ԵԺ I-ի կազմողները՝ տողատակ տալով հետևյալ ծանոթագրությունը. «Այս տողի փոխարեն ԲՄ 2-րդ հատորի մեջ դրված են կետեր: Այդ,

հավանաբար, արված է գրաքննիչի ձեռքով: ԲՄ 2-րդ հատորի՝ Ղ. Ագայանին նվիրված օրինակում Թումանյանը կետերի վրա գրել է՝ «Մեր հալածված հայրենիքում», որի հիման վրա և մենք վերականգնել ենք տողը» (էջ 26):

«ԻՆՉ ԵՍ ԿԱՏԱՂԵԼ ԱՆՄԵՂ ԱՐԱՐՔԻՑ...»
(էջ 46) (ԵԼԺ 1, էջ 38)

Գրված է 1889 թ., ինչպես թվագրված է առաջին հրատարակությունը:

Տ. Փիրումյանի վկայությամբ՝ Թումանյանն այս ոտանավորը գրել է «Գրիգոր Արծրունուն («Մշակ» լրագրի նշանավոր խմբագիրը) պաշտպանելու համար նրա հակառակորդների դեմ, որոնցից հանդիմանվում էր ինքը Թումանյանը (տե՛ս ԹԺՀ, էջ 345): Վերջին ակնարկը հավանաբար վերաբերում է կոնսիստորականներին:

ԹԹԳԳ-1079/5-2-ում պահվող պատառիկների մեջ կա առաջին քառատողի ինքնագիրը:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ I, էջ 84, որտեղից և արտատպվում է:

Տե՛ս նաև «Նահատակ» բանաստեղծության ծանոթագրությունը:

«ԵՍ ՆԱՅՈՒՄ ԵՄ. ԻՄ ԱՌՋԵՎ...»
(էջ 47) (ԵԼԺ 1, էջ 39)

Գրված է 1889 թ.:

Տ. Փիրումյանի վկայությամբ՝ այս բանաստեղծության ներշնչման պարտը Թումանյանն ապրել է Թիֆլիսի Բուսաբանական այգու բարձունքից քաղաքը դիտելիս (տե՛ս ԹԺՀ, էջ 345):

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ I, էջ 74, այնուհետև՝ ԵԺ I, 17-18:

Արտատպվում է ԲՄ I-ից:

Բանաստեղծության հիմնական դաղափարը 30 տարի անց խտացված արտահայտվել է «Ազատ օրը, ազատ սերը, ամեն բարիք իր ձեռքին...» քառյակում:

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

(«Երբ որ գարշելով տեսնում եմ շուրջս...»)
(էջ 48) (ԵԼԺ 1, էջ 40)

Գրված է 1889 թ.:
Ինքնագիրը չի պահպանվել:
Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II, էջ 104-105, այնուհետև՝ ԵԺ I, 23-24:
Արտատպվում է ԲՄ II -ից:

«ՆԵՐՒՐ, Ո՛Վ ԿՈՒՅՍ, ՈՐ ՀՈՒՋԵՑԻ...»
(էջ 49) (ԵԼԺ 1, էջ 41)

Գրված է 1889 թ.:
ԹԹԳԳ1079/5-2-ում պահվող պատառիկների մեջ կա վերջին քառատողի ինքնագիրը՝ թվագրված «89 թ.»:
Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ I, էջ 82, այնուհետև՝ ԵԺ I, 19:
Արտատպվում է ԲՄ I-ից:

ԿԱԼԻ ԵՐԳ

(Լոռեցոնց)
(«Կալ արա, գնանք...»)
(էջ 50) (ԵԼԺ 1, էջ 42)

Գրված է 1889 թ.:
Ինքնագիրը չի պահպանվել:
Առաջին անգամ, «Լոռեցոնց» ենթավերնագրով, տպագրվել է՝ ՄՃ, 1893, №1, էջ 77, այնուհետև՝ ԵԺ I, 25:
Արտատպվում է ՄՃ-ից:
ԵԺ I-ում (էջ 616) կա հետևյալ խմբագրական ծանոթագրությունը. «Ժողովրդական երգ է: Հիշեցնում է մեր ֆոլկլորային ժողովածուներում և պարբերականներում տպագրված Լոռու կալերգերը: Թ-ը, հավանորեն, օգտագործել է բանավոր աղբյուրներից իրեն հայտնի Լոռու կալերգերը, ինչը հաստատում է առաջին հրատարակության ենթավերնագիրը»:
Ա. Ինճիկյանը ավելի կոնկրետ է նշում այս և մի քանի այլ ոտանավորների սկզբնաղբյուրները. «... Իսկ հորեղբայր Մամից լսել է Լոռու հորովելները, սայլերգերն ու կալերգերը: Եվ, անշուշտ, «Դուքանի

երգը» «Կալի երգ» (Լոռեցոնց), «Կալի երգը» (ժողովրդական), «Գուման» բանաստեղծությունները գրված են իր նշանավոր մահկալ հորեղբոր երգերի ներշնչմամբ» (Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 64-65):

Նկատի ունենալով Թումանյանի «Կալի երգ» վերնագրված բանաստեղծությունների «Հորովել» բառով կրկնակները Ա. Դանիելյանը գրում է. «Թումանյանի գումանի և կալի երգերի «Հորովել», «Հորովել, հորովելա» և այլ կրկնակները, որոնք ամբողջացնում են հիշյալ երգերի բնագրերի տաղաչափական նախապատմությունները (անները) և արտահայտում գումանի իրար հետևից հավասար խորությամբ շարվող ակոսների, և կալի հետագնաց արագացող կամ դանդաղող շրջապտույտների համաչափ միջոցները» (Ա. Դանիելյան. Հայ շինականի աշխատանքի երգերը, էջ 16):

«ԵՐԲ ԵՍ ՏԵՍԻՐ, ՀՈՒՄԱՀԱՏ...»
(էջ 51) (ԵԼԺ 1, էջ 43)

Գրված է 1889 թ.:

Տ. Փիրումյանի հուշերում կարդում ենք, որ Թումանյանն այս բանաստեղծությունը գրել է «Լոփանցկով Քրիստոսի (և երևի նաև իր) պրոբլյան մեջ» (տես ԹԺՀ, էջ 346): Համանաբար նկատի ունի Քրիստոսի փորձությունը անապատում (տես Ավետարան ըստ Մարկոսի, Գլ. Ա, Ավետարան ըստ Ղուկասի, Գլ. Դ): Այս տրամագրության հետ է կապվում նաև երեք տարի անց (1892) գրված «Քրիստոսն անապատում» բանաստեղծությունը:

ԹՓԳԳ-1079.5-2-ում պահվող պատառիկների մեջ կա վերջին երկու բառատողերի ինքնագիրը թվագրված «1889 թ.»:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ I, էջ 96, այնուհետև ԵԺ I, 22:

Արտատպվում է ԲՄ I-ից:

«ԱԽ, ԵՐԱՆԻ ԹԵ ԼԻՆԵՐ ՄԻ ՀՆԱՐ...»
(էջ 52) (ԵԼԺ 1, էջ 44)

Գրված է 1889 թ.:

ԳԱՖ ԹՓ №449 (280)-ում պահվում է 1892 թ. մարտի 24-ին Թումանյանի Ան. Արծրունուն գրած նամակը և գրա մեջ ինքնագիրը հետևյալ ծանոթագրությամբ. «Էսօր Բղխերիս մեջ գտա մի ոտանավոր – փոքր

экспромт, տակին գրած 1889 թ. «վեչերում». բանից դուրս է գալիս, որ մի տխուր բնավորության տեր սիրելի նագելիի ուրախությունը ինձ շատ է դուր եկել, և ես գրել եմ»:

Առաջին անգամ տպագրվել է՝ 1947 թ., ԵԺ V, էջ 60՝ Ան. Արովյանին հղած նամակի մեջ, այնուհետև՝ 1950 թ., ԵԺ I, էջ 436 «Վեչերում» վերնագրով և «Էքսպրոմտ» ենթավերնագրով:

Բանաստեղծությունն անվերնագիր է. հեղինակն իր այդ նշումներով ուզում է միայն ասել, թե որտեղ և ինչպես է գրվել ոտանավորը:

Տպագրվում է ինքնագրից:

1890

«ԱՅԴ ԻՆՁ ՍՐՏԱՄԱՇ ՏԽՐԻԹՅՈՒՆ Է ՔԵԶ...»
(էջ 53) (ելժ 1, էջ 45)

Գրված է 1890 թ. մարտին, ինչպես թվագրված են մեզ հասած պատառիկն ու առաջին հրատարակությունը:

ԹԹԳԳ1079/5-2-ում պահվող պատառիկների մեջ կա մի հատվածի սևագիր-ինքնագիրը (տող 17-20, 29-36 և լուսանցքում 5-րդ և 7-րդ տողերի թերի սևագրությունը): Սևագիր-ինքնագրում 17-20 տողերը անմիջականորեն նախորդում են 29-36 տողերին:

23-24-րդ տողեր - Նկատի ունի Մեռելաթաղի գանձերը, որոնք ժամանակի տարածված սովորությամբ հանգուցյալին եկեղեցուց հանելուց հետո քահանան և սարկավագները նրա վրա մեռելաթաղի գանձեր էին ասում, որ հանգուցյալի հոգին հեշտությամբ բաժանվեր մարմնից և երկինք գնար: Այս սովորության մասին գրված է Հայաստանի ազգագրական տարբեր շրջանների թաղման ծեսին վերաբերող նկարագրություններում: Սիսիանում «Դագաղը կանանց գրկախառնություններից ազատելով՝ դուրս են բերում և դնում եկեղեցու բակը: Այստեղ էլ քահանան և տիրացուներն են ձայները ձգում և դանձ ասում: Ննջեցեալի վրայ դնում են մի ափսե, և բոլորը գալիս դրամ են ձգում, որ երեցփոխը վերցնում է քահանային հանձնելու»: (Ե. Լալայան, Սիսիան, «Ազգագրական հանդես», Գիրք Գ, Թիֆլիս, 1898, էջ 245):

Այս սովորույթը քրիստոնեության միջավայրում յուրօրինակ դրսևորում էր հեթանոսական շրջանի այն հավատալիքի, որ մահացածի հոգին մեռյալների թագավորության էին ուղեկցում շները: Գերեզմանում մահացածի ատամների միջև մետաղադրամ էին դնում, որ ուղեկցող շունը

Ննջեցյալի հոգին հասցներ մեռյալների աշխարհը, որի մուտքի պահապանը Յերբեր անվանվող հրեշավոր շունն էր:

Հնթանոսական հավատալիքի և եկեղեցական հիշյալ սովորույթի զուգահեռով է մեռելաթաղի գանձեր տտղներին Թումանյանը համեմատում «ապահ ջերբերների» հետ:

Եկեղեցական ձևերի մեջ հնթանոսական այս սովորությունը եկեղեցական իշխանությունները բևև արգելեցին 19-րդ դարի վերջին, որն համընկավ Թումանյանի հիշյալ բանաստեղծության գրության ժամանակի հետ, սակայն այս արգելքը անտեսվում էր ժողովրդի անտհավատության, քև հանգուցյալի հոգին տանից այդ գանձի երկինք չէր գնա և քահանաների գանձապին անվանվող վարձը տտանալու պատճառով: Բորչալուի գավառի օրինակով Լալայանը գրում է. «վալկան կանանց հետացնելով գագաղը հանում են եկեղեցուց և գնում դռան առաջ: Այժմ էլ քահանան տիրացուների հետ սկսում է գանձ ասել, չնայելով որ վաղուց այս արգելված է» (Ե. Լալայան, Բորչալուի գավառ, «Ազգագրական հանդես», Գիրք X, Թիֆլիս, 1903, էջ 175):

Ստ. Լիսիցյանը գրում է, որ ննջեցյալին եկեղեցուց գերեզման տանելիս քահանային երեք անգամ գանձ ասել էին տալիս և ամեն անգամ մեկական կոպեկ տալիս, որպես «գանձուց» (Ստ. Լիսիցյան, Ջանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 211):

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ I, էջ 67-69, այնուհետև՝ ԵԺ I, էջ 30-31:

Արտատպվում է ԲՄ I-ից:

«ԵԹԵ ԻՄ ՎԵՐՋԻՆ ՀԱՅԱՅՔԸ ՄՆԱ...»
(էջ 55) (ԵԼԺ 1, էջ 47)

Գրված է 1890 թ. ապրիլի 1-ին, ինչպես թվագրված են մեզ հասած պատառիկն ու առաջին հրատարակությունը:

Ըստ Տ. Փիրումյանի հուշերի՝ այս բանաստեղծության ներշնչանքի ապրյուրը եղել է մի օրիորդ, որին բանաստեղծը «ինչպես կարելի է կարծել, մինչև այսօր էլ շարունակում է գաղտնի սիրել» (տե՛ս ԹԺՀ, էջ 345):

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ I, էջ 83, այնուհետև՝ ԵԺ I, 32:

Արտատպվում է ԲՄ I-ից:

«ՊԱՆԴՈՒԽՏՆ ԵՐԳԵՑ ՕՏԱՐ ԵՐԿՐՈՒՄ...»
(էջ 56) (ԵԼԺ 1, էջ 48)

Գրված է 1890 թ. ապրիլի 2-ին:

Ըստ Տ. Փիրումյանի հուշերի՝ Թումանյանն այս ոտանավորը գրել է «մի մշակի՝ շինությունից վայր ընկնելու և մեռնելու առիթով» (տե՛ս ԹԺՀ, էջ 345):

ԹԹԳԳ1079/5-2-ում պահվող պատառիկների մեջ կա վերջին երեք տողերի ինքնագիրը:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ I, էջ 72-73, այնուհետև՝ ԵԺ I, 33:

Արտատպվում է ԲՄ I-ից:

«ՄԻ ՈՐՈՆԻՐ ՄԻ ԺԱՄԱՆԱԿ...»
(էջ 57) (ԵԼԺ 1, էջ 49)

Գրված է 1890 թ. ապրիլի 21-ին:

Ըստ Տ. Փիրումյանի հուշերի՝ Թումանյանն այս ոտանավորը գրել է «իրենց տուն հյուր եկած մի օրիորդի ներկայությամբ, որից առաջ արհամարհանք, իսկ հիմա համակրություն էր տեսնում» (տե՛ս ԹԺՀ, էջ 345):

Առաջին անգամ «N-ին» խորագրով տպագրվել է ԲՄ I, էջ 81՝ թվագրված «1890 թ. ապրիլի 21-ին», այնուհետև՝ նույնը, առանց վերնագրի՝ Դ և ԴՓ, փոփոխված և «Մի որոնիր» վերնագրով՝ ԲԹ, ԲԹ-ի բնագիրն առանց վերնագրի՝ ԲԲ, ապա՝ ԵԺ I, 34:

Արտատպվում է ԲԲ-ից:

«ՇԱՏԵՐԻ ՆՄԱՆ ՆԱ ԷԼ ԽԵՂԴՎԵՑԱՎ...»
(էջ 58) (ԵԼԺ 1, էջ 50)

Գրված է 1890 թ. ապրիլի 22-ին:

Ըստ Տ. Փիրումյանի հուշերի՝ Թումանյանն այս ոտանավորը գրել է «Լոռու շրջանում բուն դրած Ջոփուռի տղերանց և այլ ավազակների մասին խիստ դատողություններ լսելուց հետո» (տես ԹԺՀ, էջ 346):

ԹԹԳԳ1079/5-2-ում պահվող պատառիկների մեջ կա 12-16-րդ տողերի ինքնագիրը:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ I, էջ 92, այնուհետև՝ ԵԺ I, էջ 35:

Արտատպվում է ԲՄ I-ից:

Տե՛ս նաև «Նահատակ» բանաստեղծության ծանոթագրությունը:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆ

(«Ո՞րն է դրախտը - վայրն երանավետ...»)
(էջ 59) (ԵԼԺ 1, էջ 51)

Գրված է 1890 թ. ապրիլին:

ԳԱԹ, Հովհաննես Մալխասյանի ֆոնդ, №152-ում պահվում է 1-18 տողերի ինքնագիրը, որ Թումանյանը նվիրել է Մալխասյանին ընծայականով. «Հիշատակ պ. Հ. Մալխասյանին, 29-ին հունվարի, 1891 թ., Թիֆլիս»:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1891, №7-8, էջ 877-878, այնուհետև՝ ԲՄ II, էջ 106-161, թվագրված՝ «1890 թ., ապրիլ», տպա՝ ԵԺ I, էջ 36-37:

Արտատպվում է ԲՄ II -ից:

ՄԱՐԳԱՐԵ

(«Երբ որ վեհության կնիքը ճակատին...»)
(էջ 61) (ԵԼԺ 1, էջ 53)

Գրված է 1890 թ. մայիսի 1-ին, Գր. Արծրունու տրապարակախոսական գործունեության բանտինգամյակի կապակցությամբ: Այս մասին բանաստեղծի ժամանակակից Տիգրան Փիրումյանը գրում է. «... Նույն Արծրունուն էր վերաբերում նաև «Մարգարեն», բայց Թումանյանը կամեցավ այդտեղ իդեալական կերպարանք տալ՝ աչքի առաջ ունենալով նաև Քրիստոսին» (ՊԺՀ, էջ 345):

Թումանյանը 1 12-րդ տողերում ներկայացնում է Հին Ախտի մարգարեների տիպական կերպարը, ովքեր աստվածային ազդմամբ էին մարգարեանում, որը պատկերվում է առաջին տան մեջ:

4 րդ տող՝ «Հրեաների լեզու» բնորոշումը գալիս է Նային մարգարեի համար ասված «կալծակնացայտ» խոսքերից, համաձայն հետևյալ պատմության: Աստված երբ ասում է «Ջո՞ առաքեցից» (Ում առաքեմ) քարոզելու համար ժողովրդին, Նային ասում է. «Առաքեա զիս, Տէր»: Աստվածային պատվերով Տիրոջ հրեշտակը այդժամ հրաշեկ ունելիով մաքրում է մարգարեի շուրթերը, որ մաքրամաքուր լեզվով նա քարոզի»: Հրեաների նույն հատիկ լեզվով են այս գրվածն է ակնարկվում և են Գրիգոր Արծրունու «Մշակի» խմբագրականներն ու հոդվածները:

12-րդ տող - Քարկոծման սպառնալիքով նկատի ունի «Հին Կտակարանի» մարգարեների մի մասին քարկոծելով սպանելը և որ հատարակական պարապմունքների քարկոծմամբ էին փորձում սպանել Արծրունուն:

Հին Ախտի օրենքով նույնատրվում էր քարկոծել բոլոր նրանց, ում

օրենքը դատապարտում էր մահվան: Հանում էին քաղաքից դուրս և քարկոծում. «Հանցես զայրն զայն կամ զկին՝ որ արարին զբանն չար ի դրունս Ձեր, և քարկոծեցէք զնոսա քարամբք են մեռցին» (Բ. Օր. ԺԷ 5-7):

ԹԹԴԴ1079/5-2-ում պահվող պատառիկների մեջ կա 13-24-րդ տողերի ինքնագիրը:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ I, էջ 97-98, այնուհետև՝ ԵԺ I, էջ 36:

Արտատպվում է ԲՄ I-ից:

Տե՛ս նաև «Նահատակ» և «Ինչ ես կատաղել անմեղ արարքից...» բանաստեղծությունների ծանոթագրությունները:

Է. Չրբաշյանը գրում է. «Եթե Պուշկինի «Մարգարեն» ավարտվում է աստվածային պատվիրանով՝ գնալ դեպի ժողովուրդ և «այրել խոսքով մարդկային սրտեր», ապա Լերմոնտովի բանաստեղծության մեջ ցույց է տրված մարգարեի հետագա ուղին՝ Սիրո ու ճշմարտության քարոզ և այդ պատճառով շրջապատից կրած հալածանք ու արհամարհանք... բայց հայ բանաստեղծը փորձում է մի քայլ էլ առաջ անցնել, հետևել մարգարեի խոսքի ապագա ճակատագրին՝ այս իմաստով կարծեք թե շարունակելով Լերմոնտովի բանաստեղծությունը» (Է. Չրբաշյան, Թումանյանի գրական ժառանգությունը, էջ 271-272):

Չրբաշյանը ցույց է տալիս նաև Թումանյանի այս բանաստեղծության ընդհանրությունը մարգարեի թեմայով «Հյուսիսափայլի» հրատարակությունների հետ՝ նկատելով որ ուղղակիորեն ամսագրից է վերցված «Գիշերատեսիլ մարդիկ» արտահայտությունը (էջ 273):

Ա la՛ Նադսոն
ՊՈԵՏԻՆ

(«Թաքցրու, պոետ, վշտերդ ամբարված...»)
(էջ 62) (ԵԼԺ 1, էջ 54)

Գրված է 1890 թ. մայիսի 7-ին:

ԳԱՖ ԹՖ №3(17)-ում պահվում է ՄՃ-ի արխիվից հանած մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ I, էջ 437-438:

Տպագրվում է ինքնագրից:

Ռուս բանաստեղծ Ս. Յա. Նադսոնի (1862-1887) պոեզիան արտահայտել է նարոդնիկության ճգնաժամի շրջանի առաջադեմ երիտասարդության տրամադրությունները: 1885 թ. հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուն որոշակի ազդեցություն է գործել ժամանակի երիտասարդ, այդ թվում նաև հայ բանաստեղծների վրա: Թումանյանի այս ոտանավորը

ևս, ինչպես երևում է նաև վերնագրից, կրում է այդ ազդեցությունը:

Ala´ – հետևողությամբ, նմանությամբ, որով Թումանյանն ինքը ևս նշում է, որ այս բանաստեղծությունը կրում է Նապսոնի ազդեցությունը:

33-34-րդ տողեր - «Ոսկի հորթերի» պատվանդան ասելով նկատի ունի «ելից դրքի» այն դրվագը, որ երբ Մովսես Սինա լեռան վրա Տիրոջ պատվիրաններն էր ստանում, ներքևում գտնվող ժողովուրդը ոսկե հորթ է պատրաստում և պաշտում նրան:

ԴԻՇԵՐԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՍՏՂԻ ԴԻՄԱՑ

(«Արևը Յոթավ, երկինք ու երկիր...»)
(էջ 64) (ելժ 1, էջ 56)

Գրված է 1890 թ. մայիսի 12-ին:

Տ. Փիրումյանը հիշում է. «Մի քանի հոգու հետ պատշգամբում նստած՝ դիտում է երկինքը ու տեղնուտեղը ստեղծագործում և ներկա եղողներին ընթերցում» (ԹԺՀ, էջ 345-346):

ԹԹԳԳ1079/5-2-ում պահվող պատառիկների մեջ կան 1-8-րդ, 20-24-րդ տողերի և մի հավելյալ քառատողի ինքնագրերը:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ I, էջ 86-87, թվագրված՝ «1890 թ. մայիսի 12», այնուհետև՝ ԵԺ I, էջ 39:

Արտատպվում է ԲՄ I-ից:

Տե՛ս նաև «Նահատակ» բանաստեղծության ծանոթագրությունը:

ՋԱՐԱՄԻՏՆԵՐԻՆ

(«Դուք, մեծ հայրերի ընկած զավակներ...»)
(էջ 65) (ելժ 1, էջ 57)

Գրված է 1890 թ. մայիսի 20-ին:

Ըստ Տ. Փիրումյանի հուշերի՝ Թումանյանն այս բանաստեղծության պաղպաղարը հղացել է «Թիֆլիսի Մթածմինդա սարից դիտելով քաղաքը» (ԹԺՀ, էջ 346):

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ I, էջ 93-94, թվագրված «1890 թ., մայիսի 20», այնուհետև՝ ԵԺ I, 40-41:

Արտատպվում է ԲՄ I-ից:

Տե՛ս նաև «Նահատակ» բանաստեղծության ծանոթագրությունը:

ԴԱՐՁՅԱԼ ՆՐԱՆՑ

(«Հայտնի եղվիտներ, ի՞նչ եք աղմկում...»)
(էջ 67) (ԵԺ 1, էջ 58)

Գրության թվականը ստույգ հայտնի չէ:

Հիշեցնում է «Ձարամիտներին», «Միամիտներին», «Երանություն էր խոստացել հույսս ինձ», «Մարգարե», «Ագդ» բանաստեղծությունները, որոնք գրված են բանաստեղծի՝ Կոնսիստորիայում ծառայելու տարիներին (1887-1892 թթ.): Թվում է՝ օրգանական շարունակություն է 1890 թ. մայիսի 20-ին գրված «Ձարամիտներին» բանաստեղծության և պետք է գրված լինի նույն օրերին:

ԳԱԹ ԹՖ №5 (49)-ում պահվում է ՄՃ-ի արխիվից հանված մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ I, 485:

Տպագրվում է ինքնագրից:

Վերը հիշատակված բանաստեղծությունների մասին ժամանակակիցները վկայում են, որ ուղղված են բարձրաստիճան հոգևորականների և նրանց արբանյակների դեմ, և ժամանակին բանաստեղծը կարդացել է ընկերական նեղ շրջանում (հմմտ. Արսեն Ղլտճյան՝ «Մտերիմ հանդիպումներ», ԹԺՀ, էջ 279-283):

Տե՛ս նաև «Նահատակ» բանաստեղծության ծանոթագրությունը:

ՄԻԱՄԻՏՆԵՐԻՆ

(«Երանի է ձեզ, որ չեք հասկանում...»)
(էջ 68) (ԵԺ 1, էջ 59)

Գրված է 1890 թ. հունիսի 12-ին:

Ըստ Տ. Փիրումյանի հուշերի՝ ոտանավորը «կոնսիստորիա եկած անմեղ գյուղացիների» մասին է, որոնց տեղի ծառայողները «կողոպտում են ահագին կաշառք վերցնելով» (տե՛ս ԹԺՀ, էջ 346):

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ I, էջ 95, թվագրված «1890 թ. հունիսի 12, այնուհետև՝ ԵԺ I, 42:

Արտատպվում է ԲՄ I-ից:

Տե՛ս նաև «Նահատակ» բանաստեղծության ծանոթագրությունը:

«Ո՛Հ, ԽՆԱՅԵՑԵՔ, ՄԻ ՀԻՇԵՑՆԵՔ ԻՆՁ...»
(էջ 69) (ելժ 1, էջ 60)

Գրված է 1890 թ. հունիսի 25-ին:

ԳԱԹ թփ №4 (18)-ում պահվում է մաքուր արտագրված մեկ ինքնագիր, վերագրված «1890 թ. հունիսի 25»: Նույն տետրում №69 (12)-ում կա նաև թերի և ջնջումներով մի սևագիր-ինքնագիր, որը, հավանաբար, մատենագրման առաջին գրառումներից է:

ԹՓԳԳ1079/5-2-ում պահվող պատառիկների մեջ կա ևս մեկ թերի ինքնագիր, որ բնույթով նման է Ա ինքնագրին և սկսվում է 7-րդ տողից:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II, էջ 87, 16 տող, այնուհետև՝ ԲԲ, էջ 14, 12 տող, ապա՝ ելժ I, 43:

Արտատպվում է ԲԲ-ից:

Ա ինքնագիրը սրվում է որպես I տարբերակ՝ տողատակում նշելով Գ ինքնագրի՝ գրանից ունեցած տարբերությունները, Բ ինքնագիրը՝ որպես II տարբերակ:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ
(«Ախ կրծքի տակ ապականված...»)
(էջ 70) (ելժ 1, էջ 61)

Գրված է 1890 թ. հուլիսի 5-ին:

ԹՓԳԳ1079 5-2 ում պահվող պատառիկների մեջ կա մեկ թերի սևագիր-ինքնագիր (12-րդ, ապա՝ 21-28-րդ տողերը) և մի քառատող, որ Թումանյանը գործ է ածել ԲՄ II-ից, և այժմ հնարավոր չէ պարզել, թե ինչ տեղ էր գրավելու բանաստեղծության մեջ: Հրատարակել է Ա. Ինճիկյանը (տե՛ս Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 76):

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II, էջ 89-92, այնուհետև՝ ելժ I, 44-46:

Արտատպվում է ԲՄ II-ից:

«Ո՛Հ ՄԵՂՄԱՅՆԵԼ ՉԵՍ ԿԱՐՈՂ ԴՈՒՆ...»
(էջ 73) (ելժ 1, էջ 64)

Գրված է 1890 թ. հուլիսի 5-ին:

ԳԱԹ թփ №6 (11)-ում պահվում է մեկ թերի սևագիր-ինքնագիր: Նույն տետրում №438 (282)-ում, պահվում է նաև մեկ մաքրագիր-ինքնագիր:

Երկուսն էլ թվագրված են «5 հուլիս»: Տարեթիվը պարզվում է 1890 թ. օգոստոսի 27-ին և սեպտեմբերի 28-ին բանաստեղծի Ան. Աբովյանին գրած նամակներից, որտեղ ակնարկվում է այս բանաստեղծությունը: Առաջինում կարդում ենք. «Ստեփանի նամակի հետ մի ոտանավոր ուղարկեցի, կարծեմ թախծալի է, չէ՞...», երկրորդում «Շատ ուրախացա քո նամակի վերջաբան ոտանավոր պատասխանովդ, վերջին երկու տունը հավանեցի, որոնք իրրև «հուլս» պատասխանում են իմ «թախիծին»»:

Ան. Աբովյանի այդ ոտանավորը գրված է Թումանյանի բանաստեղծության անմիջական տպավորության տակ: Բանաստեղծի ակնարկած այդ երկու տունն են.

Գուցե կըգա ըղձակատար
Եվ ցանկալի այն ժամը,
Երբ մեր պաշտած գաղափարներ,
Կառնուն իրենց լրումը:

Կամ եթե ոչ, անդորր հոգով
Կուղևորվենք այն Տունը,
Ուր տիրում է ողջի համար
Ընդմիշտ ճշմարտությունը: (Ուշ 4, էջ 271)

Մաքրագիր-ինքնագրի բնագրից առաջ կան Ան. Աբովյանին ուղղված հետևյալ տողերը. «Ահա, Անուշավան, իմ այս միջոցներում գրած բանաստեղծություններից մեկն իբրև նմուշ, կատարյալ թախիծ է»:

1893 թ. փետրվարի 4-ին Թումանյանն իր բանաստեղծությունների մոսկովյան հրատարակության երկու հատորները (ԲՄ I, ԲՄ II) միասին կազմած նվիրել է Դարյա Գոլոշյանին՝ անվանաթերթի վրա, ընծայականից հետո մեջբերելով այս բանաստեղծության 17-24-րդ տողերը: Գիրքը պահվում է՝ ԹԹԳ-437/2:

Առաջին անգամ, Բ ինքնագրից, տպագրվել է ԵԺ I, 439-440:

Տպագրվում է նույն ինքնագրից:

«... ԱՐԻ, ՀՈԳԻՍ, ՈՐ ԱՌԱՆՑ ՔԵԶ...»
(էջ 75)

Գրված է 1890 թ. սեպտեմբերի 27-ին Շուլավեր կնոջը Օլգա Թումանյանին հասցեագրված նամակի սկզբում (տե՛ս ԳԱՖ թֆ, ց 3, №23), մի հոգեվիճակում, որ բանաստեղծը ներկայացնում է այսպես. «Այնպես դատիշտակված էի այսօրվան նամակը գրելիս, որ մոռացել եմ (կարծեմ)

ամսաթիվը դրել: Մի շատ ծիծաղելի թերահավատությամբ և անմիտ կասկածանքով ես տանջվում եմ, կարծելով, թե քեզ ... կամ թե շատ ուշ եմ տեսնելու: Ինչքա՜ն տխուր են անցնում առանց քեզ իմ ժամերը, նրանցից յուրաքանչյուրը մի ծանր բեռան նման է անցնում սրտիս վրայից և ես հառաչում եմ»:

Ելժ 1-ից դուրս է մնացել:

Նամակի հետ տպագրվել է՝ ելժ 9, էջ 34, որտեղից և արտատպվում է:

«ԴԵՌ ԱՆՀԻՇԵԼԻ ՎԱՂ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԻՑ...»
(էջ 76) (ելժ 1, էջ 66)

Գրված է 1890 թ. սեպտեմբերի 30-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել՝ ԲՄ II, էջ 80-81, թվագրված՝ «1890 թ. սեպտ. 30», այնուհետև՝ եժ I, 47-48:

Արտատպվում է ԲՄ II-ից:

ՆՐԱՆ

(«Ես ուզում եմ, որ ինձ նման...»)
(էջ 78) (ելժ 1, էջ 67)

Գրված է 1890 թ. հոկտեմբերի 5-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II, էջ 110, թվագրված՝ «1890 թ. հոկտ. 5», այնուհետև՝ եժ I, 49:

Արտատպվում է ԲՄ II-ից:

ԱՋԴ

(«Հեռացրեք նրան Աստծո սեղանից...»)
(էջ 79) (ելժ 1, էջ 68)

Գրված է 1890 թ. հոկտեմբերի 18-ին:

Գրության առիթը, ամենայն հավանականությամբ, հորեն եպիսկոպոս Նար-Պեյի քարոզներն են Թիֆլիսում 1890 թ. սեպտեմբերի վերջերին: Դրանք երիտասարդ Թումանյանի վրա տհաճ տպավորություն են թողել,

որի մասին գրում է Ան. Արովյանին. «Հռչակավոր խորեն Նարպեյն այստեղ է. անիծվի դա իրան հռչակովը. քարոզ խոսաց, պատարագ արավ, զահլեներս տարավ: Հիմա էլ հետ է ընկել, որ կիրակի օրը խոսա (գոնե մեզ խղճար), որ ցույց տա, թե անցյալ անգամ հիվանդ էր, թե չէ... Ասում է «էս չեղավ, մի ուրիշը բերեք» (երեխա մկրտող քահանայի առակը)» (տե՛ս ԵԺ V, էջ 23): Այնուամենայնիվ Թումանյանը, իբրև կոնսիստորիայի ծառայող, եպիսկոպոսի քարոզների մասին, ինչպես տեղեկացնում է նույն նամակում, պաշտոնական լուր է ուղարկում «Նոր-Դարին» (տե՛ս ՆԴ, 1890, №147):

4-րդ տող - Նկատի ունի Վարդան Մամիկոնյանին, որ Ավարայրի հերոսի պաշտած Աստծո անունը չարտաբերեն «անսուրբ բերանները»:

9-րդ տող - «Հաշտ ու պատարագ»՝ զոհաբերություն և նվիրաբերություն: Նոյով ու Աբրահամով սկսված Աստծուն ընծայաբերված զոհաբերությունները «հաշտ» են անվանվել ի նշան Աստծո հետ հաշտության:

10-րդ տող - «Սեղանակապուտ»՝ «Սեղանը կամ տաճարը կողոպտող, եկեղեցին կողոպտող, տաճարակապուտ, սրբապիղծ» (Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հտ. 4-րդ, Երևան, 1945, էջ 199):

Այս երկու տողերով Թումանյանը ցանկանում է ասել, որ Ծող աո Աստված ընծայում և Ս. Պատարագ չմատուցեն սրբապիղծ ձեռքերը:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ «Պահպանողականներին» ենթավերնագրով տպագրվել է՝ ՄՃ, 1892, №1, էջ 32, այնուհետև առանց ենթավերնագրի՝ ԲՄ II, էջ 135, որտեղից և արտատպվում է:

ՈՉ ՅՈՐԻՆԱԿ ԱՅԼՈՑ

(«Ազատ, համարձակ բարձրացիր, արատ...»)
(էջ 80) (ԵԼԺ 1, էջ 69)

Գրված է 1890 թ. հոկտեմբերին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Եկեղեցական ընդունված արտահայտություն է, որը նշանակում է՝ թեև այս որոշումը բացառության կարգով ընդունվում է, բայց այն չի կարող հիմք ծառայել և օրինակ լինել նմանատիպ այլ որոշումներ ընդունելու համար:

Նման որոշումների և եկեղեցական տնօրինությունների մեջ նշվում էր «ոչ յօրինակ այլոց»: Այսպիսի որոշումները վերաբերում են հատկապես ամուսնությանը, երբ բացառության կարգով թույլատրվում էր մերձամուսնությունը, ազգակցական ավելի մոտ աստիճանով:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 134, թվագրված «1890 թ. հոկտեմբեր», այնուհետև՝ ԵԺ I, 50։

Արտատպվում է ԲՄ II-ից։

ՀԱՄԵՐԳ

(«Վտակը ժայռից ներքև է թրռչում...»)
(էջ 81) (ԵԼԺ 1, էջ 70)

Գրված է 1890 թ. դեկտեմբերի 2-ին։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1891, №5, էջ 621, այնուհետև՝ ԲՄ II, էջ 79, թվագրված՝ «1890 թ. դեկտ. 2», հետագա ժողովածուներում և ԲՊ, էջ 13, ապա՝ ԵԺ I, 51։

Արտատպվում է ԲՊ-ից։

ԵՐԳՉԻՆ

(«Ախպա, այն երգն ասա՛, երգիչ...»)
(էջ 82) (ԵԼԺ 1, էջ 71)

Գրված է 1890 թ. դեկտեմբերին։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1891, №2, էջ 198, այնուհետև՝ ԲՄ II, էջ 86, թվագրված «1890 թ. դեկտ.», ապա՝ ԵԺ I, 52։

Արտատպվում է ԲՄ II-ից։

ԻՄՊԱՅԵԼ

(«Պանդուխտ, հալածված, հոգնած, վշտաբեկ...»)
(էջ 83) (ԵԼԺ 1, էջ 72)

Գրված է 1890 թ. դեկտեմբերին։

«Հին Կտակարանում» հրեա ժողովրդի վիճակի հետ հայ ժողովրդի ունեցած պատմական ընդհանրության թեմաներով Թումանյանի գրած բանաստեղծություններից առաջինն է։

9-10-րդ տողեր – նկատի ունի Հիսուսի տաճարից լումայափոխներին

վտարելը. «Եւ եգիտ ի տաճարին, զի վաճառէին զարջառս եւ զոչխարս եւ զաղաւնիս. եւ զլումայափոխսն որ նստէն. եւ արար խարազան չուանեայ, եւ եհան զամենեսին ի տաճարէն» (Յովհ. Բ 14):

Ինքնագիրը պահվում է Վրաստանի պետական արխիվում (ֆ. 114, գծ. 1130): Հայտնաբերել է Անահիտ Խառատյանը:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՍԳ, 1956, №4, էջ 141, այնուհետև՝ ԵԺ VI, էջ 20:

Տպագրվում է ինքնագրից:

ՏԱՐՈՆԻ ԳԱՐՈՒՆԸ

(«Գարունն եկավ և թևերը...»)
(էջ 84) (ԵԼԺ 1, էջ 73)

Գրված է 1890 թ.:

ԳԱԹ Թ.ֆ №8 (20)-ում պահվում է մեկ ինքնագիր, որի վերնագրի տակ փակագծերի մեջ գրված է «Հատված»: Ինքնագրում 3-րդ և 4-րդ քառատողերի տեղերը փոխված են:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II, էջ 72-73, այնուհետև՝ ԵԺ I, էջ 56:

Արտատպվում է ԲՄ II-ից:

«Հին կռիվը» պոեմի նախնական տարբերակի հատվածներից է, որը հետագայում դուրս է մնացել ընդհանուր հենքից (այս մասին տե՛ս Էդ. Ջրբաշյան, Թումանյանի պոեմները, Երևան, 1986, էջ 267-268):

ՏԱՐՈՆԻ ԱՌԱՎՈՏԸ

(«Կարմիր արևն առավոտյան...»)
(էջ 85) (ԵԼԺ 1, էջ 74)

Գրված է 1890 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II, էջ 95-97, այնուհետև՝ ԵԺ I, 57-58:

Արտատպվում է ԲՄ II-ից:

ԲՄ II-ի սեփական օրինակում Թումանյանն ուղղել է 33-րդ տողի վրիպակը: Եղել է «Տեսավ հեռվից քաջալերը», դարձել է «Տեսավ հեռվից քաջ աշիրը»:

«Հին կռիվը» պոեմի նախնական տարբերակի հատվածներից է, որը հետագայում դուրս է մնացել ընդհանուր հենքից:

9-16-րդ տողեր - Նկատի ունի Աստղիկի Արածանիի ափերը մշուշով պատելը, որ Վահագնը իրեն չտեսներ: Այստեղից է նաև Մուշ բառի, որպես մշուշ ժողովրդական ստուգաբանությունը: Թումանյանի անգամ ողբերգական տողերն հիշեցնում են հետևյալ ավանդությունը. «Մշո դաշտն ամառ ու ձմեռ մշուշով պատվելուն պատճառ կ՚ավանդվի Աստղկա այգուն [այգաբացին] կանուխ ի լոգարան մտնելն, որով հարկ կը լինի եղեր մշուշներուն դաշտը պատել Աստղկա մերկությունը ծածկելու համար:

Կը պատմվի, Թե Աստղկա առաջին անգամ ի լոգարան մտած ատեն սիրտար աշուղ մը երգած լինի, և այնքան զմայլափին երկար կ՚երգե, որ ի լուր ձայնին հայ պատանիներ և աղջիկներ լույս առնելով և խարույկ վառելով ի տես նորա գեղեցկության կը փութան: Աստղիկ ամոթահար կը սոխվի մշուշ իջեցնել երկնքեն և զինքը ծածկել հետաքրքիր աչերե: Սուն մշուշը գրեթե միշտ կա, այգուն [լուսաբացին] քանի մը ժամ միայն»: (Վահան վրդ. Տեր-Մինասյան, Անգիր գրքույկն և առակք, կ, Պոլիս, 1893, էջ 169-170):

21-24-րդ տողեր - Նկատի ունի Մշո Սուրբ Կարապետին նվիրված երգերը: Տարբեր սրբավայրերին վերաբերող երգերում նկարագրվում էր մինչև ավլալ վանքի ուխտակատարության տեղին հասնող ընթացքը, որը սկսվում էր հեռվից այդ վանքի մայր գմբեթի խաչի երևալուց: Ուխտավորները իրենք սկսում էին երգել, երբ հեռվից տեսնում էին արևի ներքո փայլող գմբեթի խաչը:

Աստեղ ողբերգական հակադրությունների պատկերային շարքով Թումանյանը գրում է, որ առավոտյան ելնող արևի հետ Տարոնի դաշտում չուզաց ոչ Թե Ս. Կարապետի գմբեթի խաչը, այլ քրդի սուր նիզակի փայտը:

Տե՛ս նաև «Տարոնի դարուներ» ոտանավորի ծանոթագրությունը:

ԳԻՇԵՐ

(«Եկավ գիշերն ափոփանքը...»)
(էջ 87) (ԵԼԺ 1, էջ 76)

Համանարար գրված է 1890 Թ.:

ԳԱԹ ԹՖ №1355-ում պահվում է ԲԲ-ի օրինակը՝ հեղինակի ուղղումներով:

Առաջին անգամ տպագրվել է՝ Տզ, 1895, №16, էջ 238, «Հատված պոեմից» ենթավերնագրով, այնուհետև, առանց ենթավերնագրի՝ ԲԲ, էջ 41-42, տպա՝ ԵԺ I, 121-122:

Տպագրվում է Թումանյանի ուղղած բնագիրը:

«Հին կռիվը» պոեմի նախնական տարբերակի հատվածներից է, որը

հետագայում դուրս է մնացել ընդհանուր հենքից:

Տե՛ս նաև «Տարոնի դարունը» և «Տարոնի առավոտը» ոտանավորի ծանոթագրությունները:

Թումանյանի երկերի քառահատոր ժողովածուի երկրորդ հատորում («Հայաստան» հրատարակչություն, 1969) տպարանական անփութության հետևանքով այս բանաստեղծության վերջին չորս քառատողերը անջատվել և միացել են հաջորդ՝ «Հարությունն» բանաստեղծությանը՝ իբրև դրա շարունակություն: ԵՀ 1-ում ուղղված է:

«ԿՈՒՐԾՔՍ ԵՐԲԵՄՆ ԵՒ Է ԳԱԼԻՍ ԵՎ ՈՒՒՋՈՒՄ...»
(էջ 89) (ԵՀ 1, էջ 78)

Գրված է 1890 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1891, №6, էջ 746, այնուհետև՝ ԲՄ II, էջ 83-84՝ թվագրված «1890 թ.», ապա՝ ԵԺ I, 54:

Արտատպվում է ԲՄ II-ից:

Մշ, 1891, 13 օգոստոսի, №90-ում տպագրվել է Ասիացու (Գր. Արծրունու) ֆելիետոնը, որտեղ ծաղրվում է Թումանյանի այս ոտանավորը: Պիտի ասել, սակայն, որ Արծրունու ծաղրն ու հակակրանքն ուղղված է եղել ոչ միայն նոր-նոր գրական ասպարեզ իջնող բանաստեղծի, այլև Ավ. Արասխանյանի և նրա «բանաստեղծական նոր դպրոցի», այսինքն՝ ՄՃ-ում տպագրվող նաև մյուս բանաստեղծների (Ալ. Ծատուրյան, Լ. Մանվելյան և ուրիշներ) դեմ:

Այս հակակրանքն ավելի հին ծագում ուներ: Թումանյանը դա բացատրում է առհասարակ ժամանակի հայ գրականության և արվեստի նկատմամբ կյանքի վերջին տարիներին Գր. Արծրունու բռնած ժխտողական դիրքով: Այդ մասին նա իր կարծիքն արտահայտել է քանիցս, այդ թվում 1913 թ. երկու անգամ՝ դեկտեմբերի 15-ին և 29-ին՝ Հայ գրողների ընկերության երկու երեկույթներում, որոնցից առաջինում դասախոսություն է կարդացվել Միք. Նալբանդյանի, Րաֆֆու և Գր. Արծրունու, իսկ երկրորդում՝ Գր. Արծրունու մասին: «Նորերը չեն իմանալ,- կարդում ենք դեկտեմբերի 15-ին բանաստեղծի ելույթի շարադրանքում,- բայց հները լավ կհիշեն, թե նա (Արծրունին՝ խմբ.) ինչպես էր խոսում հայ գրողների դեմ, հայ տազանդների դեմ»: Այնուհետև հիշում է Ղ. Աղայանի, Պ. Ադամյանի և Րաֆֆու դեմ ունեցած նրա ելույթները (տե՛ս ԵԺ IV, 456-458):

ՆԿԱՐԻՉ Գ. ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆԻ «ԶՈՐԱԳԵՏՔ ԴԻՇԵՐՈՎ» ՆԿԱՐԻ ԱՌՋԵՎ

(«Ափսո՛սա, քաջերի այս ձորն ահարկու...»)
(էջ 90) (ԵԼԺ 1, էջ 79)

Գրված է 1890 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1892, №6, էջ 883, թվագրված «1890 թ.», ապա՝ ԵԺ I, 53:

Արտատպվում է ՄՃ-ից:

Գրականության մեջ Բաշինջաղյանի այդ նկարը հայտնի է «Կերևի գետը պիշեր ժամանակ» անունով: Ստեղծվել է 1890-ին, նույն թվականին ցուցադրվել է Թիֆլիսի, ապա Մոսկվայի և Պետերբուրգի պատկերասրահներում (տե՛ս Մ. Սարգսյան, Գևորգ Բաշինջաղյան, Երևան, 1957, էջ 70-71):

«ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱՎ ՀՐՐԱՇԱՓԱՒ...»
(էջ 91) (ԵԼԺ 1, էջ 80)

Գրված է 1890 թ.:

ԳԱՒԹ ՓՖ №9 (26 ա)-ում պահվում է մեկ ինքնագիր:

«Քրիստոս հարյավ» սկսվածքով Թումանյանը տարբեր տարիներին գրված երեք բանաստեղծություններ ունի: Միջնադարից եկող հոգևոր ավանդույթով ժամանակին ընդունված էր Ս. Մննդյան և Ս. Հարության առնելի առթիվ այդ թեմաներով բանաստեղծություններ գրել:

Ս. Հարության առնին նվիրված այս գործում այն միտքն է շեշտվում, որ Քրիստոսի հարությամբ նորոգվեց կյանքը և նորոգություն առան մեր հոգևները: Թեև անձնական բնաբանական ապրումների վրա հիմնված, սակայն նույն կառուցվածքով է գրված և այս բանաստեղծությունը, որի 2-3-րդ տներում ասվում է, որ ինչպես Քրիստոսի հարությամբ հարություն առավ և աշխարհը, այնպես և յոզ բանաստեղծի սերը հարություն առնի:

1-ին տող - «Քրիստոս հարյավ» արտահայտությունը վերցված է Ավագ Շարաթին կատարվող «Ճաշու ժամամուտին» կարդացվող «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» սկսվածքով փառաբանությունից, ինչպես նաև Ս. Հարության առնի կիրակիին մատուցվող Ս. Պատարագի Ս. Հարության ավետիսի ժամանակ ասվող «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, ձեզ և մեզ մեծ աւետիս» խոսքերից (Ճաշոց, Գիրք Հայաստանեայց Եկեղեցւոյ, 2-րդ տպ., Վաղարշապատ, 1872, էջ 261):

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II, էջ 107՝ թվագրված «1890 թ.», այնուհետև՝ ԵԺ I, 55։

Արտատպված է ԲՄ II-ից։

ՏԱՊԱՆԱԳԻՐ

(«Կյանքի տղմի մեջ գլխովին թաղված...»)
(էջ 92) (ԵԼԺ 1, էջ 81)

Գրված է 1890 թ.։

ԳԱԹ ԹՖ №4 (18)-ում պահվում է մեկ ինքնագիր, որ հանված է ՄՃ-ի արխիվից։ Ա. Ինճիկյանը տալիս է հետևյալ ծանոթագրությունը. «Բանաստեղծության ինքնագիրը գտնվել է «Մուրճ»-ի արխիվում։ Ժամանակին չտպագրվելու պատճառը եղել է, հավանորեն, գրաքննության արգելքը կամ Արասխանյանի զգուշավորությունը։ Հետաքրքրական է, որ ժամանակի հասարակության ոսկի կուռքերի հավաքական դիմանկարը բնութագրող այս ոտանավորի վերջին տողը բանաստեղծը նույնությամբ օգտագործել է իր երգիծական պոեմի «Փողի քսակը, փողի քսակը...» հատվածում («...Կանգնեցին արձան անվախճան փառքի»)» (տե՛ս Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 493-494)։ Ինչպես այս, այնպես էլ մի քանի ուրիշ երգիծական ոտանավորներ և էպիկական ֆրագմենտներ («Աղոթք», «Հայի զարմանքը», «Հայի տրտունջը», «Հայի ցավը», «Գրականական մազանդա», «Վայր լնկնող աստղեր», «Կտակ», «Հայոց անբախտ գրողը»), «որոնք գրեթե բոլորն էլ գրված են պոեմի ստեղծման ժամանակաշրջանում և իրենց վշտախառն ծաղրով ուղղված են գրողին և արվեստագետին խորթ հասարակության, նրա բարքերի և կուռքերի դեմ» (տե՛ս Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 494), ուսումնասիրողն իրավամբ կապում է «Պռեստո ու Մուսան» երգիծական պոեմի հետ։

Առաջին անգամ տպագրվել է՝ ԳԹ, 1932, №27, այնուհետև՝ ԵԺ I, էջ 441։

Տպագրվում է ինքնագրից։

1891

«ԽՂՃԱԼԻՔ ՄԱՐԴ, ՏՈԳՈՐՎԱԾ ...»
(էջ 93) (ԵԼԺ 1, էջ 82)

Գրված է 1891 թ. հունվարի 10-ին։

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II , էջ 100-101՝ թվագրված «1891 թ. հունվարի 10», ապա՝ ԵԺ I, 59:

Արտատպվում է ԲՄ II -ից:

«Ահ, ես ԵՐԱՆի ...»
(էջ 94) (ԵԺ 1, էջ 83)

Գրված է 1891 թ. հունվարի 13-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ, առանց վերնագրի, տպագրվել է՝ ՄՃ, 1891, №3, էջ 341, այնուհետև՝ ԲՄ II, էջ 85՝ թվագրված «1891 թ. հունվարի 13», ԲԹ և ԲԲ՝ պարձյալ առանց վերնագրի, էջ 15, ապա՝ ԵԺ I, 60:

Արտատպվում է ԲԲ-ից:

ԵՐԳԻ ՎՐԵԺԸ

(«Մանր հևծության ժամանակներիս...»)
(էջ 95) (ԵԺ 1, էջ 84)

Գրված է 1891 թ. փետրվարի 22-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1891, №10, էջ 1180, այնուհետև՝ ԲՄ II, էջ 116՝ թվագրված «1891 թ. փետրվարի 22», Դփ, էջ 9՝ թվագրված «1892», ԲԲ, էջ 19, ապա՝ ԵԺ I, 61:

Արտատպվում է ԲԲ-ից:

ԿԱՆՉ

(«ԵՒԽ կաս, Աստված...»)
(էջ 96) (ԵԺ 1, էջ 85)

Գրված է 1891 թ. փետրվարին:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ ԹՖ №10 (21)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ հանված ՄՃ-ի արխիվից, վրան մակագրված՝ «Չհրապարակված», որից կարելի է ենթադրել, որ ՄՃ-ում տպագրությունն արգելել է գրաքննությունը:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II, էջ 76-78՝ թվագրված «1891 թ. փետրվար», այնուհետև՝ ԲԲ, էջ 22-23, ապա՝ ԵԺ I, 62-63:

Արտատպվում է ԲԲ-ից:

Թումանյանի առաջին շրջանի լավագույն բանաստեղծություններից է, որ բարձր է գնահատվել նաև ժամանակակիցների կողմից: Այդ մասին ունենք ոչ քիչ թվով վկայություններ: Օրինակ՝ գրաքննադատ և մանկավարժ Գ. Վանցյանը 1893 թ. ապրիլի 8-ին բանաստեղծին հղած նամակում գրում է. «Կանչը» ամեն տեղ ֆուրոր է անում. «Это действительно высокохудожественное произведение». Եթե, Հովհաննես ջան, ուրիշ ոչ մի բան չգրեիր, այդ ստեղծագործությունդ բավական էր քեզ բանաստեղծի կոչմանը արժանացնելու: Ունիս, այո՛, ուրիշ գեղեցիկ բաներ, ունիս և շատ ծույլ բաներ, բայց «Կանչը», դա գլուխգործոցդ է, դա մի գոհար է: Այդպես եմ ես անվանում «Կանչդ»՝ «գոհար» (տե՛ս ՈւՀ 4, էջ 313):

Թումանյանի երբեմնի դասընկեր, Ներսիսյան դպրոցի ուսուցիչ Արամ Ասաքելյանը գրում է. «Շատ գեղեցիկ էր «Կանչը», գրքիդ միջի անգին գոհարն է այդ կտորը» (տե՛ս նույն տեղում, էջ 314):

Մանկավարժ, թարգմանիչ Ջալալ Տեր-Գրիգորյանն էլ գրում է. «Քաղաքացիական մոտիվներիցդ էլ ամենից աչքի ընկնողը «Կանչդ» է, որ միանգամայն գլուխ գործոցդ է» (տե՛ս նույն տեղում, էջ 318):

15-16-րդ տողեր – նկատի ունի ավետարանական հետևյալ տողերը. «Խաղաղութիւն թողում Ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ, ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ» (Հովհ. ԺԴ 27), տես նաև Ղուկ. Բ, 14, Ղուկ. ԺԲ 51:

52-53-րդ տողեր – նկատի ունի Դավթի սաղմոսների «Աստուած՝ վրէժխնդիր Տէր, Աստուած վրէժխնդիր յայտնեցար» (Սաղմ. ՂԴ 1) տողը:

«Կանչ» բանաստեղծությունը զուգահեռի մեջ դնելով Նարեկացու «Մատյանի» հետ է. Ջրբաշյանը գրում է. «Թումանյանը, կարելի է ասել, արդիականացրել է հինավուրց նարեկացիական ձևը և Աստծո հետ նորօրյա զրույցի մեջ արծարծել է ժամանակակից մարդու բողոքն ու հույսը» (է. Ջրբաշյան, Թումանյանը և հայ գրականության ավանդույթները, Երևան, 1994, էջ 24):

Ջրբաշյանը մատնանշում է «Նարեկի» մի շարք տողեր, որոնք ուղղակիորեն հարաբերակցվում են «Կանչի» հետ «Այս տողերը, հեռավոր կամ մերձավոր նմանությամբ, հիշեցնում են աստվածային էության անհամար բնութագրումները Նարեկացու պոեմում, ինչպես օրինակ. «Եղիցի՛ խաղաղութիւն հրամանաւ մեծիդ» (ՀԱ), «Առաջնորդ խաղաղութեան» (ՁԳ), «Ով իրաւադատ, ահաւոր, անճառ, անպատում, հզօր, աստուած բոլորի» (Ե), «Աստուած բարերար, հզօր, ահաւոր» (ԺԳ),

«Եւ արդ, դու միայն սիրելն բարևաց, պիտիին անճառ» (ԻԹ) և այլն» (նույն տեղում, էջ 28):

«ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐ, ՇԱՏ ՈԳԵՎՈՐՎԵԼ...»
(էջ 98) (ԵԺ 1, էջ 87)

Գրված է 1891 թ.:

ԳԱՔ ԹՓ, №445 (276)-ում պահվում է 1891 թ. մարտի 2-ին Թումանյանի՝ Ան. Աբովյանին գրած նամակը, որից երևում է, որ իր «Անուշ» պոեմը նա ցանկացել է նվիրել ընկերոջը: Այստեղ «Անուշ» վերնագրի տակ, փակագծերում գրել է. «Նվեր իմ ընկեր Անուշավանին», ապա գետեղել է այս ձոնն ու պոեմի առաջին երկու հատվածները:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ II, 368-369, «Մանոթագրություններ» բաժնում, այնուհետև՝ ԵԺ V, 46, վերը հիշված նամակի մեջ և ԵԺ I, էջ 443՝ «Անուշի ձոնը» վերնագրով:

Տպագրվում է ինքնագրից:

ՊԱՏՎԵՐ
(«Վանա բանտի խորքից ելած հառաչանք...»)
(էջ 99) (ԵԺ 1, էջ 88)

Գրված է 1891 թ. մարտի 7-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II , էջ 132-133՝ թվագրված «1891 թ. մարտի 7», այնուհետև՝ ԵԺ I, 64:

Արտատպվում է ԲՄ II -ից:

ՆՎԵՐ ԱՆ.ԱԲ.-ԻՆ
(«Նորևկ գարունը լեռնական հային...»)
(էջ 100) (ԵԺ 1, էջ 89)

Գրված է 1891 թ. մարտի 24-ին:

Ինքնագիրը, առանց 1-4 տողերի, պահվում է ԳԱՔ ԹՓ №447 (278)-ում՝ 1891 թ. ապրիլի 16-ին Թումանյանի՝ Անուշավան Աբովյանին գրած նամակի մեջ (տե՛ս նաև ԵԺ V, 52): Նամակում կարդում ենք. «(Ես)

Տարագին (բառախաղ է անում՝ խարազ (մաշակար)-Տարազ՝ խմբ.) տվել էի մի ոտանավոր – պանդխտության աշխարհից էր. այդ ոտանավորի մեջ Թուփը խոսում էր պանդուխտի հետ... Թուփն ինչպե՞ս կխոսա, հայտնեց և վերապարձրեց Տարազը, սրա տեղը դնելով Սրնգի «Վիշտր». երանի կարդաս»:

Դատելով այս տողերից՝ «Տարագին» ուղարկված բնագրում առաջին 4 տողերը այլ են եղել. պանդուխտի հետ խոսել է ոչ թե «Նորեկ գարունը», այլ «Թուփը»:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II, էջ 74-75՝ թվագրված «1891 թ., մարտի 24», այնուհետև՝ ԵԺ I, 65:

Արտատպվում է ԲՄ II-ից:

N. N.-ին

(«Կյանքի հոսանքն յուր ընթացքում...»)
(էջ 101) (ԵԼԺ 1, էջ 90)

Գրված է 1891 թ. ապրիլի 10-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Ոտանավորի երեք քառատողերը (տող 25-36) առաջին անգամ տպագրվել են՝ ՄՃ, 1891, №12, էջ 1500՝ թվագրված «1891 ապրիլի 10»: Լրիվ բնագիրը տպագրվել է՝ ԲՄ II, էջ 148-150, այնուհետև՝ ԵԺ I, 66-67:

Արտատպվում է ԲՄ II-ից:

ՍԱՐԵՐՈՒՄ

(«Մութը իջավ, գետինն առավ...»)
(էջ 103) (ԵԼԺ 1, էջ 92)

Գրված է 1891 թ. ապրիլի 15-ին:

ԳԱԹ թ.ֆ. №11(22)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ թվագրված «1891 թ. ապրիլի 15», վերնագրված «Մի պատկեր» (հանված է ՄՃ-ի արխիվից):

Առաջին անգամ, «Մի պատկեր» վերնագրով, տպագրվել է ԲՄ II, էջ 66-68: Այնուհետև, «Սարերում» վերնագրով, կրճատումներով և մշակված՝ ԲԹ, էջ 17-18, ԲԲ, էջ 16-17, ապա՝ ԵԺ I, 68-69:

Արտատպվում է ԲԲ-ից:

«ԵՐԲ ՏԵՄՆՈՒՄ ԵՍ ՄԱՐԴ ՏԱԿԱՎԻՆ...»
(էջ 105) (ԵԼԺ 1, էջ 93)

Գրված է 1891 թ. ապրիլի 25-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

9-12-րդ տողեր – նկատի ունի Քրիստոսի՝ Իր, որպես Մարդու Որդու մասին ասված խոսքերը. «Ագուեսուց որջք ունն եւ թռչնոց երկնից դադարք, եւ Որդուդ Մարդոյ ոչ ունն ուր գլուխ» (Ղուկ, ժ 58):

Աղվեսների և թռչունների բույն ունենալու և Մարդու Որդու գլուխը դնելու տեղ չունենալու մասին խոսքերը Թումանյանը վարպետորեն վերափոխել է, ապատ մարդու գլուխը խոնարհելուն վերաբերող տողերին:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II, էջ 102-103՝ թվագրված «1891 թ. ապրիլի 25», այնուհետև՝ ԵԺ I, 70:

Արտատպվում է ԲՄ II-ից:

ԿՈՐՈՒՍՏԻՑ ՀԵՏՈ

(«Ինդրիր, սիրտ իմ կարուսակեզ...»)
(էջ 106) (ԵԼԺ 1, էջ 94)

Գրված է 1891 թ. մայիսի 7-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 117՝ թվագրված «1891 թ. մայիսի 7», այնուհետև՝ ԵԺ I, 71:

Արտատպվում է ԲՄ II-ից:

«ՀՈՒՄԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՐԵԼ Է ԿՅԱՆՔԻՆ...»
(էջ 107) (ԵԼԺ 1, էջ 95)

Նվիրված է Պետրոս Ադամյանին:

Դատելով արտիստի՝ հիվանդ լինելու մասին ոտանավորում արված ակնարկից՝ պետք է գրված լինի 1891 թ. գարնանը, երբ Ադամյանը կոկորդի տուբերկուլյոզով ծանր հիվանդ պառկած էր Կ. Պոլսի «Ռուսական Նիկոլաևյան հիվանդանոցում»: Այս ոտանավորով Թումանյանը հայությանը կոչ է անում նյութական օգնություն ցույց տալ հիվանդ արտիստին:

ԳԱԹ ԹՖ №12(23)-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԳԹ, 1932, №27, այնուհետև՝ ԵԺ I, 445:

Տպագրվում է ինքնագրից:

ՀՐԱԺԵՇՏ

(«Այստեղ ահա կրբաժանվենք...»)
(էջ 108) (ԵԼԺ 1, էջ 96)

Գրված է 1891 թ. մայիսի 27-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II, էջ 158՝ թվագրված «1891 թ. մայիսի 27», այնուհետև՝ ԵԺ I, 72:

Արտատպվում է ԲՄ II-ից:

ԽԵՂՃ ԱԴԱՄՅԱՆ

(«Ճանաչում էի ես նրան, ընկեր...»)
(էջ 109) (ԵԼԺ 1, էջ 97)

Գրված է հավանաբար 1891 թ. հունիսի 4-ին՝ Պետրոս Ադամյանի մահվան օրը:

ԹԹԳԳ1036-ում ծոցատետր 10-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է «Թատրոն», 1895, №1, էջ 132-133, այնուհետև՝ ԵԺ I, 446:

Արտատպվում է «Թատրոնից»:

ԴԵՐԱՍԱՆ ԱԴԱՄՅԱՆԻ ՄԱՀԸ

(«Ոգևորողն ընկավ արդեն...»)
(էջ 110) (ԵԼԺ 1, էջ 98)

Գրված է 1891 թ. հունիսի 7-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II, էջ 111-112՝ թվագրված՝ «1891 թ. հուլիսի 7», այնուհետև՝ ԵԺ I, 73:

Արտատպվում է ԲՄ II-ից:

ԱՍՏՂԵՐԻ ՀԵՏ

(«Էյ աստղեր, աստղեր...»)
(էջ 111) (ԵԼԺ 1, էջ 99)

Գրված է 1891 թ. հուլիսի 17-ին, Դանդում:

ԹՊԳԴ-1037-ում՝ ծոցատետր 11-ում պահվում է մեկ ինքնագիր՝ առանց վերնագիր՝ թվագրված «17 հուլիսի, Դանդ»:

Առաջին անգամ առանց վերնագրի տպագրվել է՝ ՄՃ, 1891, №11, էջ 1304, այնուհետև, «Գիշերային մտածմունք» վերնագրով՝ ԲՄ II, էջ 108-109, նույնությամբ, բայց «Գիշերային մտորմունք» վերնագրով՝ Դ (16-րդ տառանավոր), Դփ, էջ 20:

Վերջինս բերում ենք որպես տարբերակ՝ տողատակ նշելով ինքնագրի տարբերությունները:

Հետագայում բանաստեղծը տառանավորը ենթարկել է հիմնական վերամշակման և հրատարակել ԲԹ-ում (էջ 13)՝ «Էյ աստղեր» վերնագրով: Նույնը առանց վերնագրի, տպագրվել է՝ ԲԲ, էջ 11, այնուհետև «Աստղերի հետ» վերնագրով՝ ԲՊ, էջ 15 (այս վերջին հրատարակությունները թվագրված են «1890»), տպա՝ ԵԺ I, 74:

Արտատպվում է ԲՊ-ից:

Բանաստեղծի դուստր Ն. Թումանյանը հիշողությամբ մեջ է բերում հոր խոսքերն այս բանաստեղծության մասին. «Հիշում եմ «Էյ աստղերը» գրելու օրը: Դանդ էր, Զապի ձորն էր գնացել որսի: Կալի ժամանակն էր. ձորից դուրս եկա մեր կալը, կալի մոտ էլ պապան էր. աստղալի գիշեր էր, պատկեցի պապից հետու, կալի մոտ ու լսանդ էր, որ գրել եմ «Էյ աստղերը...» (տե՛ս Ն. Թումանյան, Հուշեր և պրպտումներ, Երևան, 1987, էջ 231):

(«ԵՐԲ ԽՈՍՈՒՄ ԷԻՐ, ՊԱՏՄՈՒՄ ԷԻՐ ԻՆՁ...»)
(էջ 112) (ԵԼԺ 1, էջ 100)

Գրված է 1891 թ. հոկտեմբերի 10-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II, էջ 82՝ թվագրված «1891 թ. հոկտ. 10», այնուհետև՝ մանանոի փոփոխություններով՝ ԲԲ, էջ 24, տպա՝ ԵԺ I, 75:

Արտատպվում է ԲԲ-ից:

«ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՐԲ ՎԱՐՈՒՄ ԷԻ...»
(էջ 113) (ելժ 9, էջ 88)

Գրված է 1891 թ. նույն օրը Ուզունլար՝ Ան. Աբովյանին հասցեագրված նամակում:

Ասիթը Գր. Արծրունու՝ Ասիացի ստորագրությամբ ֆելիետոնն է (տե՛ս «Մշակ», 1891, №90), որտեղ ծաղրվում են «Մուրճում» տպագրված բանաստեղծությունները («Մշակում», իբրև սկզբունք, բանաստեղծություններ չէին տպագրվում), այդ թվում նաև Թումանյանի «Կուրծքս երբեմն եռ է գալիս և հուզվում...» ոտանավորը: Դրա շուրջ բանաստեղծը վեճեր է ունեցել «մի քանի գովված «ականների»», այսինքն՝ մշակականների հետ: Այդ վեճերի բովանդակությունը համառոտ ներկայացնում է ընկերոջը և տեղեկացնում. «Նրանք կատաղեցան, որ ես վերջը հայտնեցի, թե պետք է պատասխանեմ և պատասխանի վերջը «ամենագետ» Արծրունուն մի տուն ոտանավոր նվիրեմ իրեն հանգի (որ գրել էր Հարոյի վրա)»: Եվ բերում է այս քառատողը:

Թումանյանն այդ պատասխանն այնուամենայնիվ չի գրել: Ավելին, անկախ ամեն ինչից, ըստ արժանվույն գնահատում է Արծրունուն և նրա թերթը, որի մասին ընկերոջը գրում է. «Այդ կապիկները չեն կարողանում ըմբռնել, որ մենք էլ ենք հարգում Արծրունուն, բայց հաշիվ ենք տալիս մեզ, թե ինչու համար ենք հարգում և ինչու համար անարգում»:

Թումանյանի հիշած Հարոն «Մշակի»՝ Փարիզի թղթակիցն էր, որ հետագայում հեռանում է թերթից և «Обзор» լրագրում հոդվածներ գրում Արծրունու դեմ: Հայտնի չէ, թե Թումանյանը Հարոյի մասին Արծրունու ինչ ֆելիետոն նկատի ուներ:

Քառատողը նամակի հետ տպագրվել է՝ ելժ 9, էջ 88, և դուրս է մնացել այդ հրատարակության առաջին հատորից:

Արտատպվում է ելժ 9-ից:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

(«Քո աչքերում, որ փայլում է...»)
(էջ 114) (ելժ 1, էջ 101)

Գրված է 1891 թ. նոյեմբերի 9-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II, էջ 157՝ թվագրված «1891 թ. նոյեմբ. 9», այնուհետև՝ եժ I, 76:

Արտատպվում է ԲԲ II -ից:

ՈՒՐՈՒ

(«Դո՛ւ ևս, իմ սիրուն...»)
(էջ 115) (ԵԼԺ 1, էջ 102)

Գրված է 1891 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ, «Միրո տեսիլները» վերնագրով, տպագրվել է «Թատրոն» հանդեսում, 1899, №1, էջ 31, այնուհետև, մշակված ԲԹ, էջ 19 և ԲԲ, էջ 18, ապա՝ ԵԺ I, 77:

Արտատպվում է ԲԲ-ից: Պահպանվել է ԲԹ-ի կետադրությունը:

«ՍԻՐԵԼԻ ԱՉԵՐ...»
(էջ 116) (ԵԼԺ 1, էջ 103)

Գրված է 1891 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Տգ, 1892, №18, էջ 274, «Ալբոմում» վերնագրով, այնուհետև Դ (14-րդ ոտանավոր)՝ թվագրված «1891 թ.», ապա՝ ԵԺ I, 78:

Արտատպվում է Դ-ից:

«ԹԵ ՀՈԴՆԵԼ ԵՍ ՀԱՂԹԱՀԱՐՎԱԾ...»
(էջ 117) (ԵԼԺ 1, էջ 104)

Գրված է 1891 թ.:

Նախորդ հրատարակության մեջ նշվում է. «ԹՀԱ-ում պահվում է մեկ ինքնագիր, որից և տպագրվում է առաջին անգամ»: Վերահրատարակելիս նյութը թանգարանի ֆոնդերում չի գտնվել:

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ I, էջ 444:

Տպագրվում է ԵԼԺ 1-ից:

1892

«ԵՐԲ ԳԻՇԵՐԱՅԻՆ...»
(էջ 118) (ԵԼԺ 1, էջ 105)

Գրված է 1892 թ. հունվարի 9-ին:

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II, էջ 153-155՝ թվագրված «1892 թ. հունվարի 9», այնուհետև՝ ԵԺ I, 80-81։

Արտատպվում է ԲՄ II -ից։

ՌՈՄԱՆՍ

(«Երկու աչքով լալիս էր նա...»)
(էջ 120) (ԵԼԺ 1, էջ 107)

Գրված է 1892 թ. հունվարի 13-ին։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1892, №6, էջ 884՝ թվագրված «1892 թ. հունվարի 13», այնուհետև՝ ԵԺ I, 82։

Արտատպվում է ՄՃ-ից։

ՔՐԻՍՏՈՍՆ ԱՆԱՊԱՏՈՒՄ

(«Անապատի մեջ խավար ու տխուր...»)
(էջ 121) (ԵԼԺ 1, էջ 108)

Գրված է 1892 թ. հունվարի 18-ին։

ԳԱԹ Թֆ №13 (25)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ հանված ՄՃ-ի արխիվից՝ թվագրված «92, հունվարի 18»։

Նույն տեղում՝ №1355, պահվում է ԲԲ-ի՝ հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը կատարել է մեկ ուղղում։

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1892, №3, էջ 414, այնուհետև՝ ԲՄ II, էջ 118, Դ (10-րդ ոտանավոր). Դփ, էջ 10, ԲԲ, էջ 28, ապա՝ ԵԺ I, 33։

Տպագրվում է ԲԲ-ի՝ Թումանյանի ուղղած բնագիրը։

Թումանյանի այս բանաստեղծությունն իր ոգով այնքան հարազատ է ոուս գեղանկարիչ Ի. Ն. Կրամսկոյի «Քրիստոսն անապատում» նկարին (նկարված 1872 թ.), որ տեղիք է տվել քյուրիմացության, թե իբր ստեղծվել է Կրամսկոյի նկարի ազդեցությամբ։

Ոտանավորը գրելուց 14 օր հետո, առաջին անգամ տեսնելով Կրամսկոյի նկարը, Թումանյանը ևս զարմանքով նկատել է նմանությունը և ասես հետագայի ուսումնասիրողներին քյուրիմացությունից զերծ պահելու համար, ԹԹԳԳ-ում պահվող պատառիկներից մեկում գրել է հետևյալ դրառումը. ««Հիսուսն անապատում», Կրամսկոյի նկարը, Живописное обозр. 87г., երես 299։ «Հիսուսն անապատում» ոտ<անավորը> գրելուց

Վեստո, 92 թ. փետր <մարի> 1-ին տեսա Տ.-ի մոտ»:

Տ.-ի անձնավորությունը պարզել չհաջողվեց:

11-12-րդ տողեր – նկատի ունի ի պաշտպանություն ազգասանների, այրինների և որբերի Քրիստոսի խոսքերը չորս ավետարաններում:

13-14-րդ տողեր – Թե՛ այս և Բե՛ առաջին երկու տողերում ընդգծվում են անապատին ոչ բնորոշ գարների մեծաթվությունը: Նույնը աչքի է զարնում և Կրամսկոյի կտավում: Կարելի է ենթադրել, որ այս բնդհանրությունը գալիս է անապատում Քրիստոսի քառասնօրյա փորձության ժամանակ ղպացած քաղցի պահին սատանայի ասած հետևյալ խոսքերից. «Եթէ որդի ես Աստուծոյ ասա, զի քարինքս այսոքիկ հաց լինիցին», (Եթե Աստծո որդին ես, ասա, որ այս քարերը հաց լինեն) (Մտթ. Դ 3):

Տե՛ս նաև «Երբ ես տխուր, հուսահատ...» բանաստեղծության ծանոթագրությունը:

ԵՐԱՉ

(«Դիշերն երազում հալածում էին...»)
(էջ 122) (Եվժ 1, էջ 109)

Գրված է 1892 թ. հունվարի 20-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II, էջ 130-131, թվագրված՝ «1892 թ. հունվարի 20», այնուհետև՝ ԵԺ I, 84:

Արտատպվում է ԲՄ II-ից:

«ՄՈՒՄԸՆ ԷՐ ԵՐԿԻՆՔԸ. ՈՉ ՈՔ ՉԸՏԵՍԱՎ...»
(էջ 123) (Եվժ 1, էջ 110)

Գրված է 1892 թ. հունվարի 22-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1892, №2, էջ 263, նույնությամբ՝ ԲՄ II, էջ 106՝ թվագրված «1892 թ. հունվարի 22»: Այնուհետև՝ Դ (1-ին ոտանավոր), «Մումն էր երկինքը» վերնագրով, Դի, էջ 27, «Արտասուքներ» վերնագրով: Վերջապես, մասնակի փոփոխություններով և առանց վերնագրի՝ ԲԲ, էջ 30, ապա՝ ԵԺ I, 85:

Արտատպվում է ԲԲ-ից:

«ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԾԵՐԱՅԵԼ Է...»
(էջ 124) (ԵԼԺ 1, էջ 111)

Նվիրված է Ռափայել Պատկանյանին:

Գրված է 1892 թ. փետրվարի 11-ին (Պատկանյանը վախճանվել է նույն թվականի օգոստոսի 26-ին):

ԹԹԴԴ478-ում պահվում է մեկ ինքնագիր՝ գրված Ռ. Պատկանյանի լուսանկարի վրա, թվագրված «92.II.11 Տփխիս»:

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ I, էջ 447:

Տպագրվում է ինքնագրից:

«ԵՐԲ ՈՐ ՆԱՅԵՍ ԱՅՍ ՏՈՂԵՐԻՆ...»
(էջ 125) (ԵԼԺ 9, էջ 100)

Գրված է1892 թ. փետրվարի 13-ին:

Նվիրված է մանկավարժ, թարգմանիչ և լրագրող, Տիգրան Փիրումյանին՝ քսանամյա Թումանյանի առաջին քայլերից իսկ նրան մեծ բանաստեղծի ապագա կանխատեսողներից մեկին, նրա անվանակոչության օրվա առթիվ:

Ոտանավոր-ուղերձը հասցեատիրոջն ուղարկվել է մի շնորհավորական երկտողի հետ. «Անմոռաց ընկեր, անվանակոչությանդ շնորհաբեր օրը շնորհավորելով սրտագին, քեզ այսօր տալիս եմ մտերմական հարատև սիրույս հավաստիքը և պատկերը այն մարդու, որի մեջ տեսնում ես ազգիդ երջանկության առհավատչյան»:

Առաջին անգամ, այս երկտողի հետ, տպագրվել է ԵԼԺ 9-ում, որտեղից և արտատպվում է:

Երկտողի վերջին արտահայտության մասին Ա. Ինճիկյանը կարծիք է հայտնել, թե «ազգիդ երջանկության առհավատչյան» բառերով Փիրումյանը գնահատել է իր բանաստեղծ բարեկամին: Հատորի ծանոթագրողները այս ենթադրությունը անհիմն են համարում՝ իրենց հերթին ենթադրելով. «Հավանաբար, բանաստեղծը Փիրումյանին ուղարկել է տակավին կաթողիկոսության թեկնածու Խրիմյան Հայրիկի լուսանկարը, որ այդ ժամանակ մի քանի անգամ մեծ տպաքանակով տպագրվել էր ու տարածվել» (ԵԼԺ 9, 510):

Վերջին ենթադրությունը հավանական է թվում:

ԱՌԱՎՈՏ

(«Արտամաշ տապտուկ ծանըր դիշերի...»)
(էջ 126) (ԵԺ 1, էջ 112)

Գրված է 1892 թ. մարտի 12-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԹԹԳ517-ում պահվում է ԲՄ I և II-ի մեկ օրինակ ընդայականներով «Յուր պատվարժան բարեկամ Մևսրոպ ք. Մելյանին Հովհաննես Թումանյանից» և «Յուր բարեկամ բարեկրոն Մևսրոպ ք. Մելյանին հարգանքով հեղինակը», որտեղ բանաստեղծը կատարել է մեկ ուղղում:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 147՝ թվագրված «1892 թ. մարտի 12», այնուհետև՝ ԵԺ I, 86:

Տպագրվում է ԲՄ II-ի Թումանյանի ուղղած բնագիրը:

«ԵՍ ՍԻՐԵԼ ԵՄ ՎԱՐԴԸ ՏԺԳՈՒՅՆ...
(էջ 127) (ԵԺ 1, էջ 113)

Գրված է 1892 թ. մարտի 18-ին:

ԴԱՄ ԹՓ №9(26ա)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ վերնագրված «Իմ սերը», թվագրված՝ «92 թ. մարտի 18»:

ԴԱՄ ԹՓ №1355-ում պահվում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը կատարել է մեկ ուղղում:

Առաջին անգամ «Իմ սերը» վերնագրով տպագրվել է ԲՄ II, էջ 156, այնուհետև նույնությամբ՝ Դ (24-րդ ոտանավոր), Դփ, էջ 37, ԲԹ, էջ 20, ԲԲ, առանց վերնագրի, էջ 25, ապա՝ ԵԺ I, 87:

Տպագրվում է ԲԲ-ի Թումանյանի ուղղած բնագրից:

ՀԻՇԻՐ

(«Յուր չար բախտի ճանկում բռնված ...»)
(էջ 128) (ԵԺ 1, էջ 114)

Գրված է 1892 թ. մարտի 20-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲՄ II, էջ 159, թվագրված «1892 թ. 20 մարտի», այնուհետև՝ Դ (26-րդ ոտանավոր), ապա՝ ԵԺ I, 88:

Արտատպվում է Դ-ից:

«ԻՆՁ ՄԻ ԽՆԴՐԻՐ, ԵՍ ՁԵՄ ԵՐԳԻ...»
(էջ 129) (ԵԼԺ 1, էջ 115)

Գրված է 1892 թ. մարտին:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ ԹՖ №1355-ում պահվում է ԲՒ-ի՝ հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը չնչել է «Իմ երգը» վերնագիրը:

Առաջին անգամ, առանց վերնագրի, տպագրվել է՝ ԲՄ II, էջ 151-152՝ թվագրված «1892 թ. մարտ», այնուհետև, «Իմ երգը» վերնագրով, Դ (8-րդ ոտանավոր), Դփ, էջ 28-29, ԲԹ, էջ 23, հիմնական մշակման ենթարկված՝ ԲՒ, էջ 29, ապա՝ ԵԺ I, 89:

Տպագրվում է ԲՒ-ից:

ՕՐ. Բ.-ԻՆ

(«Դու արտասվում ես, և քո ծանրավիշտ...»)
(էջ 130) (ԵԼԺ 1, էջ 116)

Գրված է 1892 թ. ապրիլի 5-ին:

ԳԱԹ ԹՖ №14 (27)-ում պահվում է մեկ ինքնագիր, հանված ՄՃ-ի արխիվից, թվագրված՝ «92 թ. ապրիլի 5»:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1892, №5, էջ 725, «Նվեր» վերնագրով, որը Թումանյանինը չէ. ՄՃ-ի խմբագիր Ավ. Արասխանյանն է չնչել «Օր. Բ. ին» վերնագիրը՝ տեղը դնելով «Նվեր»: Հետագայում «Նվեր» վերնագրով տպագրվել է ԵԺ I, 90:

Արտատպվում է ՄՃ-ից: Պահպանվել է Թումանյանի դրած վերնագիրը:

Օր. Բ.-ի անձնավորությունը պարզել չհաջողվեց:

ԿԱՍԿԱԾ

(«Ո՞վ ես, չար ոգի, դո՛ւ, որ իմ սրտում....)
(էջ 131) (ԵԼԺ 1, էջ 117)

Գրված է 1892 թ. ապրիլի 13-ին:

ԳԱԹ ԹՖ №15 (28)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ հանված ՄՃ-ի արխիվից, Ավ. Արասխանյանի կից երկտողով. «Դավիթ, սա շարեք, որ բանի պակաս տեղը, առաջնորդողից ու Մանվելյանցի ոտանավորից հետո»:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1892, №11, էջ 1564՝ թվագրված «1892

Բ. ապրիլի 13» այնուհետև՝ Դ (19-րդ տառնավոր), Դփ, էջ 33, ապա՝ ԵԺ I, էջ 91:

Արտատպվում է Դփ-ից:

«ՍԻՐԵԼԻ ՋԻՎԱՆ, ԸՆԿԵՐԴ ԻՄ ՀՈԳՈՒ...»
(էջ 132) (ԵԼԺ 1, էջ 118)

Գրված է 1892 Բ. մայիսի 1-ին: Այդ օրը 1890 Բ. «Բանաստեղծություններ» առաջին հատորը (ԲՄ I) Թումանյանը նվիրել է Ջիվանուն՝ «Յուր սիրելի Երգիչ աշրդ Ջիվանուն նվեր Հովհաննես Թումանյանից» ընծայականով և 4-րդ տպաս էջում գրել այս տառնավորը:

Գիրքը պահվում է ՀՀԱԱ ԳԱԱ Ֆոնդամենատալ գրագարանի Գ. Լևոնյանի անհատական ֆոնդում:

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ I, 448:

Տպագրվում է ինքնագրից:

«ԱՀ, ՈՐՔԱՆ ՓԱՐԹԱՄ ԿՅԱՆՔԸ ՇԱՂԿՈՒՄ Է...»
(էջ 133) (ԵԼԺ 1, էջ 119)

Գրված է 1892 Բ. մայիսի 3-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1892, №10, էջ 1434՝ թվագրված «1892Բ. մայիսի 3», այնուհետև՝ ԵԺ I, 92:

Արտատպվում է ՄՃ-ից:

ՕՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(«Իմ եղբայրները օտարության մեջ...»)
(էջ 134) (ԵԼԺ 1, էջ 120)

Գրված է 1892 Բ. հունիսի 26-ին:

ԳԱԹ ԹՖ №16 (29)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ հանված ՄՃ-ի արխիվից՝ թվագրված «1892.VI.26»:

Առաջին անգամ, առանց վերնագրի, տպագրվել է՝ ՄՃ, 1892, №7-8, էջ 1045, այնուհետև՝ նույնը, «Օտարության մեջ» վերնագրով Դ (2-րդ տառնավոր), Դփ, էջ 7, ապա՝ ԵԺ I, 93:

Արտատպվում է Դփ-ից։

Խոսելով Թումանյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուի (ԲՄ I)՝ ժամանակի հայ գրական հասարակայնության, հատկապես երիտասարդության վրա թողած ազդեցության մասին և մեջբերումներ անելով օտարության մեջ ապրող մի խումբ հայ երիտասարդների՝ Ան. Աբովյանի, Ա. Ղտճյանի, Ս. Հովվյանի և ուրիշների՝ Թումանյանին ուղղած նամակներից, Ա. Ինճիկյանը գրում է. «Անշուշտ, իր պանդուխտ հայրենակիցների և ընկերների այդ նամակներն են Թումանյանին ներշնչել «Օտարության մեջ» բանաստեղծությունը» (Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 250)։

«ԼՍՈ՞ՒՄ ԵՍ ԴՈՒՌ ԷԼ, ԹԵ ԻՆՉ ԵՆ ԽՈՍՈՒՄՔ...»
(էջ 135) (ԵԼԺ 1, էջ 121)

Գրված է 1892 թ. հունիսի 30-ին։

ԳԱԹ թ.ֆ. №16(29)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ հանված ՄՃ-ի արխիվից, թվագրված «92.VI.30»։ ՄՃ-ին ուղարկվել է որպես շարքի երկրորդ ոտանավորը «Օտարության մեջ» բանաստեղծության հետ միասին։

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1892, №7-8, էջ 1046, այնուհետև՝ ԵԺ I, 94-95։

Արտատպվում է ՄՃ-ից։

ԱՄԱՌԱՅԻՆ ԵՐԵԿՈ

(«Ամռան գիշերվա երկինքն աստղալի...»)
(էջ 137) (ԵԼԺ 1, էջ 123)

Գրված է 1892 թ. հուլիսի 17-ին։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ, առանց վերնագրի, տպագրվել է՝ ՄՃ, 1892, №9, էջ 1273՝ թվագրված՝ «1892 թ. հուլիսի 17», այնուհետև՝ «Ամառային երեկո» վերնագրով՝ Դ (5-րդ ոտանավոր), Դփ, էջ 21, ապա՝ ԵԺ I, 96։

Արտատպվում է Դփ-ից։

«ՍՐՏԻՍ ԹԱԳՈՒՀԻ...»
(էջ 138) (ԵԼԺ 1, էջ 124)

Գրված է 1892 թ. հուլիսի 26-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ, «Կարոտ» վերնագրով, տպագրվել է՝ Տգ, 1893, №7, էջ 101, այնուհետև՝ Գ (25-րդ տառնամոր)՝ թվագրված՝ «1892 թ. հուլիսի 26», Գիր, էջ 38, ԲԹ, էջ 21, այնուհետև, առանց վերնագրի, ԲԲ, էջ 26, ապա՝ ԵԺ I, 97:

Արտատպվում է ԲԲ-ից:

«Օ՜, ԼՈՒՒ ԿԱՅ, ԸՆԿԵՐ. ԱՅԴ ԻՆՉ ԵՍ ԵՐԳՈՒՄ...»
(էջ 139) (ԵԼԺ 1, էջ 125)

Գրված է 1892 թ. օգոստոսի 14-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1892, №10, էջ 1433՝ թվագրված՝ «1892թ., օգոստոսի 14», այնուհետև՝ ԵԺ I, 98:

Արտատպվում է ՄՃ-ից:

ՏԵՆՉ
(«Մեկն էլ այն է հոգուս անթիվ տենչերի...»)
(էջ 140) (ԵԼԺ 1, էջ 126)

Գրված է 1892 թ. սեպտեմբերին:

ԳԱԹ ԹՓ №17(30)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ «Տենչեր» վերնագրով, ուղված ՄՃ-ի արխիվից, թվագրված՝ «92 սեպտեմբեր»:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1892, №11, էջ 1583, այնուհետև՝ Գ (18-րդ տառնամոր), Գիր, էջ 22, ապա՝ ԵԺ I, 99:

Արտատպվում է Գիր-ից:

ՄՈՌԱՑՎԱԾ ՍԵՐ

(«Միրում էի երբեմըն քեզ ...»)
(էջ 141) (ԵԼԺ 1, էջ 127)

Գրված է 1892 թ. դեկտեմբերին։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1892, №12, 1800, այնուհետև՝ Դ (21-րդ ոտանավոր), Դփ, էջ 35, ապա՝ ԵԺ I, 100։

Արտատպվում է Դփ-ից։

ՎԱՏ ՕՐԵՐ

(«Յուրտ է, իմ ընկեր, ու հողմ ահագին...»)
(էջ 142) (ԵԼԺ 1, էջ 128)

Գրված է 1892 թ.։

Ինքնագիրը չի պահպանվել։

ԳԱԹ Թ.ֆ №1355-ում պահվում է ԲՒ-ի՝ հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը կատարել է մեկ ուղղում։

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1893, №3, էջ 421, այնուհետև՝ Դ (19-րդ ոտանավոր), Դփ, էջ 8, ապա՝ ԵԺ I, 101։

Տպագրվում է ԲՒ-ի՝ հեղինակի ուղղած բնագիրը։

ՕՐ. Մ. Վ.-ԻՆ

(«Երբոր բացվելիս է եղել արփին...»)
(էջ 143) (ԵԼԺ 1, էջ 129)

Գրված է 1892 թ.։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1893, №7-8, էջ 1053-1054՝ թվագրված «1892 թ.», այնուհետև՝ ԵԺ I, 102-103։

Արտատպվում է ՄՃ-ից։

Նվիրված է բանաստեղծի մտերիմ ընկեր Փիլիպոս Վարդազարյանի քրոջը՝ Մարիամ Վարդազարյանին։

ԱՂԲՅՈՒՐ

(«Սարի լանջին, ժայռի տակ...»)
(էջ 145) (ԵԼԺ 1, էջ 131)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Մեզ հասած միակ ձեռի սևագիր-ինքնագիրը պահվում է ԹԹԳ1036 ծոցատետր 10-ում, որի մեջ եղած նյութերը վերաբերում են 1891-1892 ԲԲ. (օրինակ «Լեզգ Ադամյան» բանաստեղծությունը): Այստեղից կարելի է ենթադրել, որ այս բանաստեղծությունը ևս գրված պետք է լինի այդ տարիներին:

Առաջին անգամ տպագրվել է՝ Ազ, 1893, №5-6, էջ 198, այնուհետև՝ մասնակի փոփոխություններով՝ Լ II, 1909, էջ 116 և նույն դասագրքի մի քանի հետագա հրատարակություններում, ապա՝ ԵԺ I, 106:

Արտատպվում է 1916 թ., Լ II-ից:

ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ

(«Կովկասի ամպած երկինքը պարզվեց...»)
(էջ 146) (ԵԼԺ 1, էջ 132)

Գրված է 1892 թ., սակայն 1893 թ. Թումանյանը կրկին անդրադարձել է այս բանաստեղծությանը:

ԳԱԹ ԹՖ №18 (9 լրացուցիչ)-ում պահվում է առաջին տարբերակը, որն ավելի ընդարձակ է՝ թվագրված՝ «92/93՝ 5 և 6 տները»:

ԳԱԹ ԹՖ №77 (11 լրացուցիչ)-ում պահվում է ևս մեկ ինքնագիր, 20 տող, խնամքով արտագրված և կետադրությունը ճշտած, թվագրված՝ «93 մարտի 30»: Երևում է, որ բանաստեղծը հրատարակության է պատրաստել այդ օրինակը, սակայն ինչ-ինչ պատճառներով տպագրության չի հանձնել:

Առաջին անգամ, Ա ինքնագրից, տպագրել է ԳԵ, էջ 114, այնուհետև՝ ԵԺ I, 449-450: Երկու հրատարակություններում էլ կան խմբագրական միջամտություններ:

Տպագրվում է Բ ինքնագրից:

ԼՈՌՈՒ ՁՈՐՈՒՄ

(էջ 147) (ԵԼԺ 4, էջ 216)

Առաջին անգամ տպագրվել է ԵԼԺ 4-ի հավելվածում՝ էդ. Ջրբաշյանի

հետևյալ ծանոթագրությամբ. «Այս անավարտ բանաստեղծության ինքնագիրը պահվում է ԴԱԹ ԹՖ №18 (9 լրացուցիչ)։ Առաջին քառատողը ջնջված է շեղ գծով։ Գրված է նույն թղթի վրա, ուր ավարտվում է «Հաշտություն» բանաստեղծության ինքնագիրը (տե՛ս սույն հրատ. էջ 146, 477, 640)։ Ըստ երևույթին՝ Թումանյանը մտադիր է եղել այդ բանաստեղծությունները մտցնել մի շարքի մեջ. այդ է վկայում այն փաստը, որ «Հաշտություն» բանաստեղծությունը համարակալված է 7, իսկ «Լոռու ձորում»՝ 8 թվերով։ Թե որոնք էին լինելու շարքի առաջին վեց բանաստեղծությունները՝ հայտնի չէ։ Քանի որ «Հաշտությունը» գրված է 1892-1893 թթ., կարելի է ենթադրել, որ նույն տարիներին է վերաբերում այս գործը։

Պետք է կարծել, որ այս երկու քառատողերը սկիզբն են մի ավելի ծավալուն բնապատկեր-բանաստեղծության, որը մեզ չի հասել կամ առհասարակ չի գրվել։ Թերանկատման պատճառով դուրս է մնացել սույն հրատարակության առաջին հատորից»։

Արտատպվում է ԵԼԺ 4-ից։

1893

ՕՐ. Օ. Գ.-Ի ԱԼԲՈՄՈՒՄ

(«Ինչ ես ուզում, որ թողնեի...»)
(էջ 148) (ԵԼԺ 1, էջ 133)

Գրված է 1893 թ. հունվարի 6-ին։

ԳԱԹ ԹՖ №3010 (260)-ում պահվում է Օ. Գիրգիդյանի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը, թվագրված՝ «93 1/6»։ Թվագրությունից հետո Թումանյանը գրել է «Օր. Շ-ի ալբոմում, Մուրճ, 1893 թ. №1»։ Բայց բանաստեղծությունն առաջին անգամ տպագրվել է ոչ թե Մճ-ի 1893 թ. առաջին, այլ 1892 թ. 12-րդ համարում (էջ 1815)։ Այդ համարում նախատեսված է եղել տպագրել մի թարգմանական բանաստեղծություն, որի տպագրությունը վերջին պահին գրաքննությունն արգելել է, և խմբագրությունը բաց էջն զբաղեցրել է այս բանաստեղծությամբ, որը նախատեսված է եղել տպագրել 1893 թ. առաջին համարում։ Այդ է պատճառը նաև, որ Մճ-ի 1892-ի 12-րդ համարի ցանկում այս բանաստեղծությունը չի հիշատակված։

Այնուհետև տպագրվել է՝ Դ (17-րդ ոտանավոր), թվագրված՝ «1893», «Օր. Օ. Գ.-ի ալբոմում» վերնագրով, ապա՝ ԵԺ 1, 79։

Արտատպվում է Դ-ից։

«ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱՎ... ԱՆ, ԵՎ ԱՅՍ ՀՈՒ...»
(էջ 149) (ԵԼԺ 1, էջ 134)

Գրված է 1893 թ. մարտի 28-ին:

ԳԱԹ ԹՓ №3010 (260)-ում պահվում է Օ. Գիրգիրյանի ալբոմը, և դրա մեջ ինքնագիրը՝ թվագրված «1893 III/28, Զատիկ)»:

ԹԹԳԻ-1038 ծոցատետր 12-ում պահվում է ևս մեկ ինքնագիր, վերնագրված՝ «Քրիստոս հարյավ»: Արտագրված է Օ. Գիրգիրյանի ալբոմից: Վերնագրից առաջ Թումանյանը գրել է. «Օտանի ալբոմից, գրած 1893 III/28, Զատկին, экспромтом»:

Տե՛ս նաև ա. ն. «Քրիստոս հարյավ ՝ըրաշափառ» բանաստեղծության ձանթագրություններ:

Վերը բերված նշումը ցույց է տալիս, որ այն գրվել է Ս. Հարությյան 1893թ. տոնի օրը:

Այստեղ ևս բանաստեղծական նույն կառուցվածքով այն միտքն է հայտնվում, որ Քրիստոսի հարությամբ Թող հաոնի և իր հոգին:

9-16-րդ տողեր – Բանաստեղծի արտունջին ի պատասխան Ս. Հարությյան խորհրդին համահունչ ասվում է, որ ինչպես խաչված Քրիստոս հարյավ, այնպես էլ կհաոնեն նրա խաչված ցնորքները:

Առաջին անգամ տպագրվել է Տգ, 1901, «Իլյուստրասիոն», №12/4, էջ 30, այնուհետև՝ ԵԺ I, 104:

Արտատպվում է Տգ-ից:

Ալբոմի ինքնագիրը բերվում է որպես տարբերակ:

«ԱՏԵԼՈՒՍ ՀԱՄԱՐ...»
(էջ 150) (ԵԼԺ 1, էջ 135)

Գրված է 1893 թ. ապրիլի 24-ին:

ԳԱԹ ԹՓ №3010 (260)-ում պահվում է Օ. Գիրգիրյանի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը՝ թվագրված՝ «93.IV.24»:

Առաջին անգամ տպագրվել է՝ Պր, 1929, №41, այնուհետև՝ ԵԺ I, 451:

Տպագրվում է ինքնագրից:

Ն. ԲԱՐԱԹԱՇՎԻԼԻ ԴԱՄԲԱՆԻ ՎԵՐԱ

(«Միխիթարուհյո՛ւն, սգավոր Վրաստան...»)
(էջ 151) (ԵԼԺ 1, էջ 136)

Գրված է 1893 թ. ապրիլի 25-ին:

ԳԱԹ ԹՖ №19 (31)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ հետևյալ ծանոթությամբ. «կարդացված ապրիլի 25-ին, տե՛ս «Մուրճի» ներկա №-ի «Ջանազան լուրեր»»:

Առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1893, №4, էջ 520, այնուհետև՝ ԵԺ I, 105:

Արտատպվում է ՄՃ-ից:

Թումանյանը, որպես «Մուրճ» ամսագրի ներկայացուցիչ, այս բանաստեղծությունը կարդացել է վրաց բանաստեղծ Ն. Բարաթաշվիլու աճյունը Դանձակից Թիֆլիս տեղափոխելու առթիվ Թիֆլիսում կազմակերպված սգո միտինգին: Նույն սգո հանդեսում բանաստեղծության վրացերեն թարգմանությունը կարդացել է կարգադրիչ հանձնաժողովի անդամ Ախնազարովը (տե՛ս ՄՃ, 1893, №4, էջ 674):

«ՀՈՍԻՐ, ԱՐՏԱՍՈՒԻՔՍ ԱՆԿԵՂԾ ՏԽՐՈՒԹՅԱՆ...»
(էջ 152) (ԵԼԺ 1, էջ 137)

Գրված է 1893 թ. հունիսի 21-ին:

ԳԱԹ ԹՖ №20 (32)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ թվագրված՝ «21 հունիսի 93»:

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ I, 452:

Տպագրվում է ինքնագրից:

ՊՈԵՏԻՆ

(«Մեր ուշքն ինչո՞ւ ես կախարդում...»)
(էջ 153) (ԵԼԺ 1, էջ 138)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1893, №9, էջ 1329, այնուհետև՝ ԵԺ I, էջ 113:

Արտատպվում է ՄՃ-ից:

Յույց տալով «Կանչ», «Երանություն էր խոստացել հույսս ինձ», ինչպես նաև այս բանաստեղծության կրած ազդեցությունը Նալբանդյանի ստեղծագործություններից՝ է. Ջրբաշյանը գրում է. «Նալբանդյանի պոեմիայի քաղաքացիական մոտիվների տպավորությունն ու արձագանքը երիտասարդ Թումանյանի երգերում ունի ոչ միայն ընդհանուր գաղափարական, այլև կոնկրետ պատկերային բնույթ: Պատահական չէ, օրինակ, որ հասարակական ակտիվության կոչը Թումանյանը ևս արտահայտում է մանկության վերհուշի կամ «Սիրո և կույսի» մոտիվներից հրաժարվելու տրամադրության հետ զուգակցված» (է. Ջրբաշյան, Թումանյանը և հայ դրականության ավանդույթները, էջ 122):

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՆԿԱՐԻ ԱՌՋԵՎ

(«Ելած՝ օվկիանի անզուսպ ալիքներ...»)
(էջ 154) (ԵԼԺ 1, էջ 139)

Գրված է 1893 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԿԱՔ ԹՓ №1355-ում պահվում է ԲԲ-ի՝ հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը կատարել է մեկ ուղղում և թվագրել՝ «1894»:

Առաջին անգամ «Այվազովսկու ծովանկարի առաջին» վերնագրով, տպագրվել է՝ ՄՃ, 1893, №9, էջ 1348, այնուհետև՝ Դ (11-րդ ոտանավոր), Դփ, էջ 23, ԲԹ, էջ 25 (այստեղ ևս թվագրված է՝ «1894»), ԲԲ, էջ 38, ապա՝ ԵԺ I, 107:

Տպագրվում է ԲԲ-ի Թումանյանի ուղղած բնագիրը:

ԹԹԳԳ-438/2-ում պահվում է ԲԹ-ի՝ Մխիթար Տեր-Անդրեասյանին հեղինակի նվիրած օրինակը, որի 25-րդ էջում, հայերեն բնագրից ներքև, կա Վալերի Բրյուսովի թարգմանությունը՝ նրա իսկ ձեռագրով, թվագրված՝ «Баку, 1916 (9/I)»:

Բրյուսովն այս բանաստեղծության իր թարգմանությունը կարդացել է 1916 թ. հունվարին հայոց բանաստեղծության մասին իր դասախոսության ժամանակ: Մանկական գրող և ուսուցիչ Գևորգ Մեսյանը (1883-1937) հիշում է, թե ինչ տպավորություն է թողել դա ներկաների վրա. «Դահլիճը լսում էր քարացած. հաջող էր թարգմանությունը: Բրյուսովը ոգևորված շևշանց.

«Ни с места!»- воскликнул, палитра в руках,-

Старик чародей...

Դահլիճը լուռ էր: Վերջացրեց ոտանավորը. որոտաց դահլիճը

ծափահարությունները։ Բրյուսովը վեր կացավ տեղից և ձեռքը մեկնելով դեպի առաջին շարքում նստած Թումանյանը՝ ասաց հասարակությանը.

- Ему аплодируйте, вот он старик чародей.- Եվ ինքն էլ իր հերթին սկսեց ծափահարել Թումանյանին։ Պետք էր տեսնել, թե ինչպիսի հիացմունքի ժպիտ էր խաղում Բրյուսովի դեմքին...» (ԹԺՀ, էջ 630)։

Այժմ դժվար է կռահել, թե Այվազովսկու որ կտավը նկատի ուներ Թումանյանը։ Ավելի հավանական է թվում, թե բանաստեղծությունը գրվել է 1870-ական թվականներին՝ այսպես կոչված «Կապույտ ծովանկարներից» կամ 1880-1890-ական թթ. «Արծաթավուն ծովանկարներից» որևէ մեկի կամ մի քանիսի տպավորության տակ։

ՀԱՅ ՈՒԽՏԱՎՈՐԻՆ

(«Գնաս բարով, ա՛յ ուխտավոր...»)
(էջ 155) (ԵԼԺ 1, էջ 140)

Գրված է 1893 թ.։

ԳԱԹ ԹՖ №18 (9 լրացուցիչ)-ում պահվում է մեկ ինքնագիր-պատռուիկ՝ ոտանավորի վերջին հատվածը։ Նույն տեղում՝ №1355, պահվում է ԲԲ-ի՝ հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանն ուղղումներ է կատարել։

Առաջին անգամ տպագրվել է՝ Տպ, 1898, №4, էջ 58, այնուհետև՝ ՆԱ, 1907, 2 նոյեմբերի, №2՝ խմբագրության ծանոթագրությամբ. «Գրված է 1893 թ.-ին Հայրիկի ընտրության առիթով՝ Թիֆլիսի երիտասարդության խնջույքին։ Ժամանակի ցենզուրական պայմանների պատճառով առաջին անգամ է տպագրվում ամբողջ»։ Այնուհետև տպագրվել է առանց վերջին՝ 4-րդ հատվածի՝ ԲԲ, էջ 31-32, ՀԳ, էջ 142, 1917, Լ V, էջ 3-4, ապա՝ ԵԺ I, 108-109։

Տպագրվում է ԲԲ-ի Թումանյանի ուղղած բնագիրը։ Բանաստեղծության չորրորդ մասը տարբերակների բաժնից տեղափոխվել և կցվել է հիմնական մասին։

Գրության շարժառիթի մասին բանաստեղծի դուստր Նվարդ Թումանյանը հիշում է հոր հետևյալ խոսքերը. «Հայ ուխտավորին» էքսպրոմտ է։ Խրիմյանի ընտրության առիթով չորս հոգի քեֆ սարքեցինք Օրթաճալում, էն քեֆին գրեցի» (տե՛ս Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, 1987, էջ 231)։

Նորընտիր կաթողիկոսի առաջին ամիսների գործունեությունը, մասնավորապես մի շարք կադրային փոփոխություններ, չեն բավարարում ոգևորված երիտասարդությանը։ Լսվում են դժգոհության ձայներ։ Ա.

Վրեժյանը, օրինակ, գրում է բանաստեղծին, որ «կորցնի» ողևորության պահին գրված ոտանավորը: Թումանյանը պատասխանում է. «Ինչո՞ւ կորցնեմ, այն կմնա իբրև հիշատակ մեր առաջին զգացումների»: Միաժամանակ ակսում է գրել «Եթե այդպես է, մենք կխորտակենք // Այն պատվանդանը, որ մենք կառուցինք...» տողերով սկսվող մի նոր բանաստեղծության, որը, սակայն, չի ավարտել (տե՛ս ԹՏ (1869-1908), Երևան, 22 ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010, էջ 209-210):

Անկախ այս երիտասարդական անցողիկ տրամադրություններից Թումանյանը մինչև վերջ մնում է երիտյան մարդու, գրող-մտավորականի, կաթոլիկոսի և ազգային-հասարակական գործչի գնահատողներից ու ջերմ համակիրներից մեկը:

Համաքրիստոնեական, ինչպես նաև հայ միջնադարյան հոգևոր գրականության մեջ որոշակի ավանդություններ կան ուխտագնացության ընդմեջ կենտրոնական մշակման բնագավառում: Թումանյանն այդ ավանդություններից օգտվել է յուրովի. պահպանել է ժանրային ձևը և ժամանակի ոգուն համաձայն՝ բովանդակությանը հաղորդելով հայրենասիրական ուղղվածություն:

Թումանյանն անդրադարձել է Հայոց աշխարհի սրբավայրերի ուխտագնացության ձևավորված ավանդական երթուղու՝ Արևելյան Հայաստանում գտնվող Արագածին, Գեղամա լեռներին, Սևանին, Ս. Էջմիածնին, ինչպես նաև Արարատին, որը ևս այն ժամանակ գտնվում էր Իրանական կայսրության մաս կազմող Արևելյան Հայաստանի տարածքում:

35-րդ տող – վերցված է եկեղեցական ժամակարգությունից:

44-րդ տող – նկատի ունի Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլով Ս. Էջմիածնի հիմնարկումը (Ագաթանգեղոս, Պատմություն հայոց, աշխատ. Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, Երևան, 1983, էջ 412-428):

45-րդ տող – նկատի ունի Սահակ Գ Զորափորեցու (կթգ. 677-703 թթ.) Ս. Էջմիածնին նվիրված շարականի «Էջ Միածին ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ Նմա» տողը:

46-47-րդ տողեր – նկատի ունի նույն շարականի «Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» տողը (մանրամասն տե՛ս Վ. Գևորկյան, Թումանյանը և հայոց հոգևոր ավանդությունները, Երևան, 2010, էջ 65-74):

ՆՒԱ ՆՍՏԱԾ ԷՐ...

(«Նա նստած էր դաշնամուրի առաջին...»)
(էջ 158) (ԵԼԺ 1, էջ 142)

Գրված է 1893 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ Տգ, 1893, №41, էջ 632, այնուհետև՝ Դ (13-րդ ստանավոր), Դփ, էջ 36, թվագրված՝«1893», ապա ԵԺ I, 110:

Արտատպվում է Դփ-ից:

ԽՐՃԻԹՈՒՄ

(«Մանուկները գոռում-գոչում...»)
(էջ 159) (ԵԼԺ 1, էջ 143)

Գրված է 1893 թ.:

ԳԱԹ Թֆ №21(33)-ում պահվում է մեկ ինքնագիր, թվագրված՝«1893»: Թվագրությունից ներքև Թումանյանը գրել է. «(«Լույս» օրացույց, 1905)»:

ԳԱԹ Թֆ №1795 -ում պահվում է նաև «Լույս»-ում տպագրված բնագիր կտրոնը՝ հեղինակի կատարած փոփոխություններով:

Առաջին անգամ տպագրվել է՝ «Լույս» օրացույց- հանդես (տպ. 1904), էջ 469-471, այնուհետև ԵԺ I, 111-112:

Տպագրվում է հեղինակի փոփոխած բնագիրը:

1894

ՆՈՐ ՏԱՐԻ

(«Դու էլ արի...»)
(էջ 161) (ԵԼԺ 1, էջ 145)

Գրված է 1894 թ. հունվարի 1-ին:

ԳԱԹ Թֆ №22 (34)-ում պահվում է երեք ինքնագիր, որոնցից մեկը վերնագրված է եղել «Հունվարի 1-ին»: Բանաստեղծն այս վերնագիրը ջնջել է, փոխարենը գրել՝«Նոր տարի»: Թվագրված է «1894»: Նույն տեղում պահվում է նաև երկրորդ ինքնագիրը, վերնագրված՝ «Նոր տարուն», դարձյալ թվագրված՝«1894»:

ԳԱԹ ԹՓ №24 (III ցուցակ)-ում պահվում է երրորդ ինքնագիրը՝ խմբագրության ձեռքերի վրա, ձախ անկյունում նշված՝ «Տարազ, 1896, №1»:

Առաջին անգամ տպագրվել է՝ Տզ, 1896, №1, էջ 2, այնուհետև՝ ԵԺ I, 114-115:

Տպագրվում է Ա ինքնագրից, քանի որ Տզ-ում կան մի քանի փոփոխություններ, որոնք ակնհայտորեն խմբագրությանն են:

«ԵՍ ԱՍԱՑԻ,- ԴՈՒ ԾԱՂԿՈՒՄ ԵՍ...»
(էջ 163) (ԵԼԺ 1, էջ 147)

Գրված է 1894 թ. նոյեմբերի 5-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ ԹՓ №1355-ում պահվում է ԲԲ-ի՝ հեղինակի սեփական օրինակը, որում Թումանյանը ուղղումներ է կատարել:

Առաջին անգամ, «Օր. N-ին» վերնագրով, տպագրվել է՝ ՀՀ, էջ 108, թվագրված՝ «1894, նոյեմբերի 5»: Այնուհետև, «Ես ասացի...» վերնագրով՝ Դփ, էջ 32, առանց վերնագրի՝ ԲԲ, էջ 34, ապա՝ ԵԺ I, 116:

Տպագրվում է ԲԲ-ի՝ Թումանյանի ուղղած բնագիրը:

ԺՊՏՈՒՆ ԱՉՔԵՐ

(«Դու մի՛ հավատա ժպտուն աչքերին...»)
(էջ 164) (ԵԼԺ 1, էջ 148)

Գրված է 1894 թ.:

ԳԱԹ ԹՓ №23 (35)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ «Հարգելի օրիորդ Երանյակ Վարպանյանցին, 95 թ. նոյեմբերի 9, Ախալքալաք» մակագրությամբ (այս մասին մանրամասն տե՛ս ԹԺՀ, էջ 402 և 946-947):

ԳԱԹ ԹՓ №1355-ում պահվում է ԲԲ-ի՝ հեղինակի սեփական օրինակը, որում Թումանյանը ուղղումներ է կատարել: Թվագրված է «1894»:

Առաջին անգամ տպագրվել է՝ Դփ, էջ 30-31, այնուհետև, վերամշակված՝ ԲԲ, էջ 26, ԲԲ, էջ 39, ապա՝ ԵԺ I,120:

Տպագրվում է ԲԲ-ի՝ Թումանյանի ուղղած բնագիրը:

Դփ-ի օրինակը տալիս ենք որպես տարբերակ՝ տողատակ նշելով դրանից ինքնագրի ունեցած տարբերությունները:

ՄԻ ՀԱՌԱՋԱՆՔ

(«Ես տեսա հսկա...»)
(էջ 165) (ԵԼԺ 1, էջ 149)

Գրված է 1894 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱՖ թղ №1355- ում պահվում է ԲԲ-ի՝ հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը ուղղումներ է կատարել:

Առաջին անգամ տպագրվել է ՀՀ, էջ 99, այնուհետև՝ Դփ, էջ 24, ԲԲ, էջ 35, ապա՝ ԵԺ I, 117:

Տպագրվում է ԲԲ-ի՝ Թումանյանի ուղղած բնագիրը:

Այժմ դժվար է ասել, թե հայ ծովանկարչի որ նկարը նկատի ունի բանաստեղծը: Գրականության մեջ «Սև ծովի ափերը» անունով նկար չի հիշատակվում, իսկ նույն թեմաներով կատարված աշխատանքները բազմաթիվ են: Իրեն ոգեշնչած նկարը բանաստեղծը պետք է տեսած լինի մասնավոր անձի մոտ, քանի որ մինչև 1894 թ. Թիֆլիսում Այվազովսկու ստեղծագործությունների ցուցահանդես բացվել է միայն մեկ անգամ՝ 1869 թ.:

ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ

(«Եթե մի օր, անո՛ւշ ընկեր...»)
(էջ 166) (ԵԼԺ 1, էջ 150)

Գրված է 1894 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱՖ թղ №1355- ում պահվում է ԲԲ-ի՝ հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը կատարել է մեկ ուղղում, ապա ջնջել չորրորդ տունը և վերևում մատիտով գրել՝ «Նման.»:

Առաջին անգամ, «Նմանություն» վերնագրով, տպագրվել է՝ Դփ, էջ 39-40, թվագրված՝ «1894», այնուհետև, երեք տուն կրճատված և վերնագրված «Եթե մի օր, անուշ ընկեր»՝ ԲԹ, էջ 27, առանց վերնագրի, 16 տող՝ ԲԲ, էջ 40, ապա՝ ԵԺ I, 118:

Տպագրվում է ԲԲ-ի՝ հեղինակի ուղղած բնագիրը:

Բանաստեղծությունը գրելիս Թումանյանն աչքի առաջ է ունեցել իտալացի բանաստեղծ Լորենցո Սթեքեթթիի մի ոտանավորը (այս փաստի վրա ուշադրություն է հրավիրել Հ. Ս. Երեմյանը «Հովհաննես Թումանյան» հոդվածում, տե՛ս «Բազմավեպ», 1914, №5, էջ 333-336), որը ժամանակին

երգվել է, յայն առաջում գալ և յարգմանվել նաև ուսերեն: Դա քնարական-սիրային երգ է ուղղված հեղինակի սիրած կնոջը: Թումանյանի բանաստեղծությունը, ներկված լինելով հոգեկից ընկերոջը, ավելի խոհական բնույթ ունի: Մեջ ենք բերում իտալական երգը՝ բառացի յարգմանությամբ.

Երբ կթափվեն տերևները, ու գու կգաս
Փնտրելու իմ խաչը գերեզմանատանը,
Մի անկյունում այն կգտնես՝
Շուրջը բազմաթիվ ծաղիկներ աճած:
Այդ ծաղիկները ծնվեցին իմ սրտից
Քո չնչի մազերի համար:
Դրանք այն երգերն են, որ գու պիտես, բայց ես չերգեցի,
Եվ այն բառերը, որ բեզ չասացի:

ԵՐԿՈՒ ՍԵՎ ԱՄՊ

(«Վազուց Լոզան բարձր ու կանաչ...»)
(էջ 167) (ԵԼԺ 1, էջ 151)

Գրված է 1894 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել: Մեզ չի հասել նաև այն հեղինակային ընդօրինակությունը, որ 1895 թ. դեկտեմբերին Թումանյանը նվիրել է Ավ. Իսահակյանին (տե՛ս ԹԺՀ, էջ 9):

ԳԱԹ ԹՖ №1355-ում պահվում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը ուղղումներ է կատարել: Դրանք հետագայում արտահայտվել են ԲՊ-ում:

Առաջին անգամ տպագրվել է Դփ, էջ 19, թվագրված «1894», այնուհետև՝ ԲԲ, էջ 24, ԲՐ, էջ 33, ԲՊ, էջ 17, ապա՝ ԵԺ I, 119:

Արտատպվում է ԲՊ-ից:

Այս բանաստեղծության գրության շարժառիթների մասին կան տարբեր կարծիքներ: Դ. Դեմիրճյանը բանաստեղծությունը կապում է Փ. Վարդազարյանի և Թումանյանի մտերմության հետ: «Թումանյանը և Վարդազարյանը շատ մտերմացան,- գրում է նա,- այն աստիճան, որ վերջինս գարձավ Թումանյանի լիրիկական զեղումների ֆիգուրաներից մեկը («Երկու սև ամպ») (տե՛ս ԹԺՀ, էջ 23-24): Ա. Ինճիկյանը մեջ է բերում երկու ուրիշ վարկած. «Մի այլ ենթադրությամբ,- գրում է նա, - «Երկու սև ամպ» բանաստեղծության մտահղացումը կապվում է երկու գաղթական ամուսինների հետ, որոնց աշնանային Թիֆլիսի փողոցներից

մեկում կողք կողքի քայլելիս՝ տեսել է Թումանյանը: Այստեղից էլ երրորդ ենթադրությունը, թե հայածական երկու սև ամպի պատկերի մեջ բանաստեղծը խտացրել է հայության երկու հատվածների քաղաքական ճակատագիրը» (Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 500-501):

1895

ՈՂ ՏԱՐԱՎ

(«Դուք ինձնից տարաք հիշատակարան...»)
(էջ 168) (ԵԼԺ 1, էջ 152)

Գրված է 1895 թ. նոյեմբերի 11-ին:

ԹԹԴԳ1027-ում ծոցատետր 1-ում պահվում են երկու սևագիր-ինքնագիր: Առաջինը նախնական գրառումն է, որի վերևում Թումանյանը գրել է. «Օր. ե. Վ., 11 նոյեմբերի, 95, Ախալք.»: Երկրորդը համեմատաբար ավելի մշակված է, չի թվագրված:

Առաջին անգամ տպագրվել է «Լրաբեր հասարակական պիտույքների», 1979, №1, էջ 29, հրապարակել է Խ. Գյուլնազարյանը:

Տպագրվում է ինքնագրից:

Նվիրված է օր. Երանյակ Վարդանյանցին (հետագայում Գյուզալյան, Նևրսիսյան դպրոցի ուսուցիչ, գյուղատնտես Տիգրան Գյուզալյանի կինը, 1879-1916):

Տե՛ս նաև «Փալտուն աչքեր» բանաստեղծության ծանոթագրությունը:

ԲԱՅՐՆԻՆ

(«Ինչ մեծ հանճարով, ո՛վ հսկա պոետ...»)
(էջ 169) (ԵԼԺ 1, էջ 153)

Գրված է 1895 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ Բայրոնի «Շիլլոնի կալանավորը» պոեմի Թումանյանի կատարած թարգմանության հետ տպագրվել է առանձին գրքով 1896 թ., այնուհետև՝ ԵԺ I, 125:

Արտատպվում է հիշատակված գրքից:

Թումանյանը Բայրոնի ստեղծագործությամբ հափշտակված է եղել 1890-ական թթ.: Գևորգ Ասատուրը վկայում է, թե այդ տարիներին նա «անգլերեն

դասեր էր վերցնում Թիֆլիսի անգլիական փոխ-հյուպատոս Մուրատոֆից: Թե որքան առաջադիմեց նա այդ առարկայում չգիտեմ, բայց գիտեմ, որ նա անգլերեն էր սովորում, որպեսզի կարողանա «Շիլլոնի կալանավորը» անմիջապես բնագրից թարգմանել» (տե՛ս ԹԺՀ, էջ 352):

1895 թ. մարտի 21-ին Ավ. Արտասխանյանին գրած նամակում բանաստեղծը վերհիշում է 1893 թ. աշնան դեպքերը, որոնք ստիպել են իրեն հեռանալ «Մուրճ»-ից, մասնավորապես՝ թե ինչպես Արտասխանյանը մերժել է տպագրել «Բորչալումի» ակնարկը՝ ասելով. «Դուք իբրև հոդվածագիր հայտնի չեք, «Շիլլոնի կալանավորը» տվեք» (տե՛ս ԳԱԹ, Թֆ, №304): Այստեղից պարզվում է, որ Մ.-ում տպագրելու համար Արտասխանյանը «Շիլլոնի կալանավորին» թարգմանությունը Թումանյանից խնդրել է դեռևս 1893 թ. աշնանը: Սակայն Թումանյանը Բայրոնի պոեմը թարգմանել է 1895 թ. և նույն ժամանակ էլ դրել այս ձոնը:

1896

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

(«Քրիստոս հարյավ... երկինք գնաց...»)
(էջ 170) (ԵԼԺ 1, էջ 154)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Հավանաբար գրված է 1895 թ. վերջերին կամ 1896-ի սկզբներին:

ԳԱԹ Թֆ №24 (III ցուցակ №3)-ում պահվում է մեկ ձեռագիր խմբագրության ձեռագրի վրա, ձախ անկյունում նշված՝ «Տարազ, 1896, №12»:

Առաջին անգամ տպագրվել է՝ Տզ, 1896, 24 մարտի, էջ 181:

Արտատպվում է Տզ-ից:

Բանաստեղծության մեջ ուղղակի ակնարկներ կան աստվածաշնչյան պրվագների մասին:

2-րդ տող – Նկատի ունի Հիսուսի Լեռան քարոզը (Մատթեոս, գլ. 5):

5-6 տողեր – Նկատի ունի Հուդա Իսկարիովտացուն, որ 30 արծաթով մատնեց Քրիստոսին (Մատթեոս, գլ. 26):

7-8 տողեր – Նկատի ունի պոնտացի Պիղատոս կուսակալին, որ, համոզված լինելով Հիսուսի անմեղության մեջ, այնուամենայնիվ տեղի է տալիս ամբոխի պահանջին և նրան հանձնում մահվան դատավճռի (Մատթեոս, գլ. 27):

9-12 տողեր – Նկատի ունի Քրիստոսի Գողգոթա բարձրանալու և

խաչելության տեսարանը (Մատթեոս, գլ. 26)։

Տե՛ս նաև «Դիշեր» բանաստեղծության ծանոթագրությունը։

«ԵՐԱՆԻ ՆԸՐԱՆ, ՈՎ ՈՐ ՔՆԵԱԾ... »
(էջ 171) (ԵԼԺ 1, էջ 155)

Գրված է 1895-1896 ԹԹ.։

ԳԱԹ ԹՖ №25 (36)-ում պահվում է մեկ ինքնագիր։ Նույն տեղում՝ №61 (76), կա մեկ ինքնագիր ևս, թվագրված՝ «1895-6»։

Առաջին անգամ, Բ ինքնագրից, տպագրվել է Գե, էջ 115, այնուհետև՝ ԵԺ I, 488։

Տպագրվում է Բ ինքնագրից։

ԿԱՂՆԻ

(«Անտառի միջին բարձրանում էր մի...»)
(էջ 172) (ԵԼԺ 4, էջ 217)

Գրված է 1896 թ. սեպտեմբերի 18-ին։

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ ԹՖ №26 (37)-ում։

Առաջին անգամ տպագրվել է՝ ՈՒՀ 1, էջ 305, այնուհետև՝ երկերի լիակատար ժողովածուի 4-րդ հատորի հավելվածում էդ. Ջրբաշյանի հետևյալ ծանոթագրությամբ. «Կաղնու այլաբանական պատկերով Թումանյանն իր դրվատական վերաբերմունքն է արտահայտել ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի (Հայրիկ) նկատմամբ։ Ոտանավորը նվիրված է բանաստեղծի մտերիմ բարեկամ իշխանուհի Մարիամ Թումանյանին։

ՈՒՀ-ում տպագրվել է առանց բնագրային տարբերությունների և մի քանի անճշտություններով, որոնք ուղղվում են ըստ ինքնագրի։ Բանաստեղծությունը ֆյուրիմացաբար դուրս է մնացել սույն հրատարակության առաջին հատորից։

Թումանյանի վերաբերմունքը Մ. Խրիմյանի նկատմամբ արտահայտվել է նաև «Հայ ուխտավորին» բանաստեղծության մեջ (1893), նրա մահվան առթիվ գրված «Երկու հայր», «Խրիմյան Հայրիկի օրերից մինը» արձակ էջերում (1907)։ Կարճատև հիասթափությունից հետո, որը կապված էր Ղ. Աղայանի և Ա. Ղևոնդյանի հանդեպ կաթողիկոսի անարդար վերաբերմունքի հետ (տե՛ս ԵԺ V, 86), Թումանյանը 1895 թ. նոյեմբերին Մ. Խրիմյանին

անձամբ հանդիպելուց հետո (ԵԺ V, 113) նորից բարձր է գնահատում նրա ազգային-հասարակական գործունեությունը և մարդկային նկարագիրը: Դրա վկայություններից մեկը եղավ այս բանաստեղծությունը»:

Արտատպվում է ԵԼԺ 4-ից:

Տե՛ս նաև «Հայ ուխտավորին» բանաստեղծության ծանոթագրությունը:

ԴԱՂԹԱԿԱՆԻ ԵՐԳԸ

(«Կռունկն երկընքում ճամփա կըհանի...»)
(էջ 173) (ԵԼԺ 1, էջ 156)

Գրված է 1896 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ ԹՖ №1355- ում պահվում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը ուղղումներ է կատարել:

Գրված է միջնադարից եկող «Կռունկի» և պանդխտության երգերի վարպետ միահյուսմամբ՝ հիմք ունենալով «Կռունկի» միջնադարյան բնագիրը (Քննական բնագրերը տե՛ս Շ. Նազարյան «Կռունկ» երգը և նրա պատմությունը, Երևան, 1977, էջ 101-106):

Թումանյանի բանաստեղծությունը մոտ է հատկապես «Տաղ կըռնկի» տարբերակին (Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 252-253):

Առաջին անգամ տպագրվել է «Երկիր» օրաթերթում, 1906, 15 հոկտեմբերի, №13, այնուհետև՝ ԲԲ, էջ 60 և ՀԿ, էջ 37-38, ապա՝ ԵԺ I, 124:

Արտատպվում է ՀԿ-ից:

Ամենայն հավանականությամբ՝ գրության շարժառիթը արևմտահայության՝ 1895-1896 թթ. կոտորածներն են:

Լ. Հախվերդյանը գրում է. «Այն պարզ հակադրությունը, որ արվում է կռունկի և պանդխտի միջև՝ կռունկը գիտե իր ճամփան, պանդուխտը մոլորել է, կռունկը գարնանը ետ կգա իր բույնը, բնավեր գաղթականն էլ ետ գալ չունի՝ ներդաշնակ է տարագիր գեղջուկի պարզ հոգեբանությանը: Այնքան խորն է այդ ներդաշնակությունը, այնպես բնական ինտուիցիան, որ նկատել չի տալիս բանաստեղծության խայտաբղետ հյուսվածքը: Ուրիշ ոչ մի տեղ Թումանյանն այնքան չի ջանացել խոսքը երանգավորել արևմտահայերենով: Սա Արևմտյան Հայաստանից քշված գաղթականն է, բայց նրա մենախոսության մեջ հաշտ հարևանություն են անում արևմտահայ ու արևելահայ խոսվածքները» (Լ. Հախվերդյան, Թումանյանի հայրենասիրական մոտիվները 90-ական թվականներին, ԹՈՒ, հտ. 1-ին, էջ 167-168):

ԱՆԴԱՐՁ ՃԱՄՓՈՐԴՆԵՐ

(«Իմ անցած կյանքն ու հին տարին...»)
(էջ 174) (ԵԼԺ 1, էջ 157)

Հավանաբար գրված է 1896 թ. վերջերին, քանի որ ԲԹ-ում և ԲՊ-ում թվա գրված է «1897»:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ «Դեպի հավիտենականություն» վերնագրով տպագրվել է՝ Տզ, 1897, 1 հունվարի, №1, էջ 2, այնուհետև, «Անդարձ ճամփորդներ» վերնագրով՝ ԲԹ, էջ 28, ԲԲ, էջ 43 և ԲՊ, էջ 19-20, ապա՝ ԵԺ I, 126:

Արտատպվում է ԲՊ-ից:

1897

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(«Հա՛, կյանքումս ևս միշտ այսպես եմ եղել...»)
(էջ 175) (ԵԼԺ 1, էջ 158)

Գրված է 1897 թ. դեկտեմբերի 14-ին:

ԴԱԹ թղ №27(38)-ում պահվում է մեկ սևագիր-ինքնագիր: ԴԱԹ փվֆ №413-ում պահվում է Մարիամ Վարդազարյանի ալբոմը և դրա մեջ մշակված տարբերակը:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՍԳ, 1941, №3, էջ 3, այնուհետև՝ ԵԺ I, 467-468:

Տպագրվում է Բ ինքնագրից:

ՀԱՅԻ ՋԱՐՄԱՆՔԸ

(«Մեր բեմի ծիծաղ, քսանհինգ տարի... »)
(էջ 177) (ԵԼԺ 1, էջ 160)

Գրված է 1897 թ. դեկտեմբերի 17-ին, նույն օրը կարդացվել է Թիֆլիսի Ազնվականական թատրոնում դերասան Գևորգ Տեր-Դավթյանի (1850-1934) բեմական գործունեության քսանհինգամյակին նվիրված հոբելյանական հանդեսին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ Տգ, 1897, 21 դեկտեմբերի, №49, էջ 789, հետևյալ ծանոթագրությամբ՝ «Կարդացվեց 17 դեկտեմբերի, 1897, Թիֆ., Ազնվ. Քաղրոնում», այնուհետև՝ ԵԺ I, 248։

Արտատպվում է Տգ-ից։

ՀԱՅԻ ՏՐՏՈՒՆՋԸ

(«Ջարմանք բան է մեր բախտն, ախպեր...»)
(էջ 179) (ԵԼԺ 1, էջ 162)

Գրության թվականն առույգ չէ։ Համանաբար գրված է 1897 թ. դեկտեմբերին, «Հայի զարմանքը» ոտանավորի հետ միասին։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է՝ Տգ, 1898, 1 հունվարի, №1, էջ 8, այնուհետև՝ ԵԺ I, 250։

Արտատպվում է Տգ-ից։ Ուղղել ենք 22-րդ տողի վրիպակը՝ «տանել» դարձրել ենք «հանել»։

Այս բանաստեղծության մեջ Թումանյանը նկատի ունի առհասարակ հայ մտավորականության վիճակը, ընդ որում նա կարիք չի ունեցել օրինակների համար հեռուն գնալու։ Նրա մտերիմներից կատակերգակ Գ. Տեր-Դավթյանը, որի բեմական գործունեության 25-ամյակին է նվիրված «Հայի զարմանքը», ստիպված է եղել պաշտոնավարել բանկում, Պերճ Պռաշյանը այդ տարիներին կրոնուսույց է եղել Ներսիսյան դպրոցում, ինքը՝ բանաստեղծը ևս զանազան պաշտոններ է վարել ընտանիքի ապրուստը հոգալու համար։

ԵՐԿԱՐ ԳԻՇԵՐՆԵՐ

(«Տանջվում եմ անքուն գիշերն անկողնում...»)
(էջ 181) (ԵԼԺ 1, էջ 164)

Գրված է 1897 թ., ինչպես թվագրված է ԲԹ-ում։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է՝ Տգ, 1898, №9, էջ 153, այնուհետև վերամշակված՝ ԲԹ, էջ 30, ԲԲ, էջ 45, ապա՝ ԵԺ I, 127։

Արտատպվում է ԲԲ-ից։

1898

ՀՈՒՆՎԱՐԻ 1

(«Եկավ նոր տարին – փոխվեցավ հինը...»)
(էջ 182)

Գրված է 1898 թ. հունվարի 1-ին:

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ փ. Վարդապարյանի ֆոնդ, №413-ում՝ Մ. Վարդապարյանի ալբոմում:

Տպագրվում է առաջին անգամ:

ՏՐՏՄՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍՆԵՐԻՑ

Ա

«ՏԵՐ, ՄԻՆՉԵՎ ԵՐԲ ՄԵՐ ԱՉՔԵՐԸ ՔԵԶ ՄՐՆԱՆ...»
(էջ 183) (Եվժ 1, էջ 165)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Հրատարակություններում հանդիպում են երկու տարեթիվ՝ 1896 և 1898:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲԹ, էջ 32, այնուհետև՝ ՀՀ, էջ 40, թվագրված՝ «1898», ԲՊ, էջ 25, թվագրված՝ «1896», ապա՝ ԵԺ I, 128:

Արտատպվում է ԲՊ-ից:

Գրության շարժառիթը արևմտահայության կոտորածներն են՝ կազմակերպված սուլթան Համիդի կողմից 1894-96 թվականներին: Գրված է սաղմոսների հետևողությամբ: Նախօրինակը Դավթի 12-րդ սաղմոսն է, որի հետ կան գրեթե բառացի նմանություններ: Համեմատիր, օրինակ, բանաստեղծության առաջին քառատողը սաղմոսի այս տողերի հետ.

Մինչև ե՞րբ, Տե՛ր, պիտի մոռանաս ինձ իսպառ, մինչև ե՞րբ պիտի շրջես երեսդ ինձնից,

Մինչև ե՞րբ խոովք ունենամ իմ հոգում և ամենօրյա ցավ իմ սրտում...

Երրորդ քառատողի «կոտորածի ձոր» արտահայտությունը վերցված է Երեմիայի մարգարեությունից, որտեղ Եհովան, զայրացած Իսրայելի ժողովրդի վրա՝ Բաբելոնի աստվածներին պաշտելու և իրենց որդիներին Գլորման վայրում նրանց զոհաբերելու համար, ասում է. «Դրա համար էլ, ահա, օրեր են գալու, երբ այդ վայրի անունն այլևս չի կոչվելու Գլորման վայր կամ Ենոմացիների գերեզման, այլ Կոտորածի ձոր» (Երեմիա, 7.32, 19,6):

Այդ արտահայտությունը, իհարկե, Թումանյանի բանաստեղծության մեջ բոլորովին այլ իմաստ ունի:

ՏՐՏՄՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՆԵՐԻՑ

Բ

«ԱՍՏՎԱԾ, ԻՆՉՊԵՍ ԾՈՒխ ՕՐԵՐՍ ԱՆՑԱՆ...»
(էջ 184) (ելժ 1, էջ 166)

Գրված է 1898 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ Տգ, 1898, մարտի 14, №14, էջ 339, այնուհետև՝ ԲԹ, էջ 31, 22, էջ 39, ԲՊ, էջ 26, ապա՝ ԵԺ I, 129:

Արտատպվում է ԲՊ-ից:

Նախօրինակը Դավթի 101-րդ սաղմոսն է, որի հետ տեղ-տեղ զրելիս բառացի նմանություններ են դանդիպում: Օրինակ՝ համեմատիր սաղմոսի հետևյալ տողերը բանաստեղծության համապատասխան տողերի հետ.

«Մեր պես սպառվեցին օրերն իմ, և տարիներս չորացան ինչպես խոխվ:

Սիրտս խոցվեց և ցամաքեց խոտի պես, հեծությանս ձայնից մոռ ուտելս մոռացա»:

Կամ՝

«Եղա ինչպես բու ավերակներում, տքնեցի ու դարձա ինչպես մենավոր ճնճղուկ տանիքում»:

Կամ՝

«Օրերս անցան ստվերի պես, և ես ցամաքեցի ինչպես խոտ» (Սաղմոս, 101):

Տրտմության երկու սաղմոսների մասին տե՛ս Վ. Դևրիկյան, «Թումանյանը և հայոց հոգևոր ավանդությը» (էջ 90-92):

Տե՛ս նաև նախորդ բանաստեղծության ծանոթագրությունը:

ԳԱՐՆԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

(«Մի՞թե է գալիս մեր քեֆն, ընկեր...»)
(էջ 185) (ելժ 1, էջ 167)

Գրության թվականն ստույգ դայտնի չէ:

ԳԱԹ ԹՓ №21 (33)-ում պահվում է մեկ ինքնագիր, որը գրված է Տգ-ում տպագրվելուց հետո, քանի որ բնագրի տակ՝ փակագծում, Թումանյանը

պրել է՝ «Տարագ»: Սա ավելի մշակված է և կրճատված:

Առաջին անգամ տպագրվել է՝ Տգ, 1898, №15, էջ 305-306, այնուհետև՝ ԵԺ I, 131:

Տպագրվում է ինքնագրից:

ՄՈՒԱՅՎԱԾ ՎԱՐԴԵՐ

(«Ձեր վարդերը թողիք մեզ մոտ...»)
(էջ 186) (ԵԼԺ 1, էջ 168)

Գրված է 1898 թ., մայիսի 22-ին: Ուղղված է Մարիամ Վարդազարյանին:

ԴԱԹ Թֆ №28 (41)-ում պահվում է մեկ ինքնագիր, որը թանգարանին նվիրել է Մարիամ Վարդազարյանը: Թվագրված է՝ «22 մայիսի 98»:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԽԴ, 1935, №4, էջ 78, հրապարակողի հետևյալ ծանոթագրությամբ. «Հ. Թումանյանը շատ մոտ էր Ֆիլիպ Վարդազարյանին, որ խոշոր դեր է խաղացել բանաստեղծի կյանքում: Վարդազարյանի քույրը՝ Մարիամ Վարդազարյանը (հետագայում Միքայելյան) մի անգամ հյուր է գնում Հ. Թումանյանի նոր բնակարանը, որ զուրկ էր կահավորումից, բայց մեծ, լավ պարտեզ ուներ: Բանաստեղծն իր հյուրին նվիրում է մի փունջ ծաղիկ, որ երիտասարդ աղջիկը մոռանում է վերցնել իր հետ: Հետևյալ օրը Հ. Թումանյանը ուղարկում է իր վաղեմի բարեկամուհուն նրա մոռացված փունջն այս բանաստեղծության հետ միասին»:

Պետք է ենթադրել, որ այս վարկածը պատմել է ինքը՝ Մ. Վարդազարյանը՝ բանաստեղծության ինքնագիրը թանգարանին նվիրելիս:

Այնուհետև տպագրվել է՝ ԵԺ I, 470:

Տպագրվում է ինքնագրից:

ՀԱՅԻ ՅԱՎԸ

(«Հայը թեև շատ ցավ ունի...»)
(էջ 187) (ԵԼԺ 1, էջ 169)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ, «Նվեր «Մշակին»» ենթավերնագրով, տպագրվել է՝ Տգ, 1898, 5 հուլիսի, №26, էջ 576, այնուհետև՝ ԵԺ I, 252:

Թումանյանն այստեղ նկատի ունի ժամանակի հայ մամուլում

քահանաների ընտրության և նրանց բարոյական նկարագրին վերաբերող տարբերի քննարկումը, որոնք առաջել են «քահանայական խնդիր» անվանումը: Այս տարին արծարծվել է անգամ Ս. Էջմիածնի պաշտոնական «Արարատ» ամսագրում:

Գարեգին վարդապետ (ապա և Տանն Կիլիկիո կաթողիկոս) Հովսեփյանը 1900 թ., այսինքն Թումանյանի այս բանաստեղծության գրությունից երկու տարի անց, մի տոդվածաշար է նվիրում քահանայական խնդրին:

Մատաղատաս աղջկան ծերի հետ պսակելու տողերի արձագանքը կարծես լինեն տոդվածում վկայակոչված ժողովրդական հետևյալ խոսքերը. «Տէրտէրը չպէտք է պսակէ, որպէսզի ամէնքս էլ ստիպուած լինինք սպասելու մինչև աղջիկների հասունանալը» («Արարատ», 1900):

Արտատպվում է Տգ-ից:

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ «ՄԱՋԱՆԴԱ»

(«Այսքան երազ, որ մենք հայերս...»)
(էջ 189) (Եվժ 1, էջ 171)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ, «Նվեր իմ բարեկամ Ղ. Ագայանցին» ենթավերնագրով, տպագրվել է՝ Տգ, 1898, 12 հուլիսի, №27, էջ 505-506, այնուհետև՝ Եժ 1, 254-255:

Արտատպվում է Տգ-ից:

Ագայանին Թումանյանը մանրմասն կոչել է Ասյան-Ապեր, փոխադարձաբար Ղ. Ագայանը Թումանյանին՝ Ասյան-Բալա: Երկու գրողների՝ միմյանց այդ կոչումներով մեծարելու սովորությունը Մուշեղ Ագայանն իր հուշերում կապում է ժողովրդական մի զրույցի հետ, որը ժամանակին Ագայանը պատմել է Թումանյանին (տե՛ս ԹԺ2, էջ 541-542):

Երազդիրք կամ երազտան էին կոչվում այն գրքերը, որոնց մեջ դասդասվում և որպես ին մեկնաբանվում էին մարդկանց տեսած երազները: Գալիս են միջնադարից: Մինչև այսօր էլ ընդունված և բավական տարածում ունեն ժողովրդի որոշակի շրջաններում:

Քահանայական խնդիրը այնքան արդիական է սկսում արծարծվել, որ Մայր Աթոռի միաբան Արիստակես Եպս. Սեդրակյանը անգամ առանձին գիրք է գրում՝ «Քահանայական խնդիր. Տամատոտ ակնարկ» (Մոսկվա, 1900, 220 էջ):

Թումանյանի այս և համարնույթ մյուս ստեղծագործությունները բա-

նաստեղծական արձագանքն էին այս ցավոտ հարցին:

Թումանյանը սակայն այս բանաստեղծության մեջ ոչ թե ընդհանրապես նկատի է ունեցել երազահանների տարածված լինելը, այլև ինչպես ցույց է տալիս 7-13-րդ տողերը, գրված է հետևյալ առիթով: 1898 թ. գրված հիշյալ տողերում ասվում է, որ Տեր Հայրը «երազգիրքը» անվանում է «Հայի ոսկի ընկերը»:

Այսպես է անվանվել 19-րդ դարի վերջից ավելի քան տասը հրատարակություն ունեցող «Երազահանը», որը տպագրվել է նաև բանաստեղծության գրության տարում «Ոսկի բարեկամ. էֆիմէրտէ, երազագիրք» (Աշխատասիր. Գրիգոր քհյ. Մանդակունւոյ, 7-րդ տպ., 1898, 636 էջ):

ԱՅՆ ՕՐԻՑ

(«Այն օրից, ինչ որ նրան թաղեցին...»)
(էջ 191) (ԵԼԺ 1, էջ 173)

Գրված է 1898 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ Տգ. 1898, 29 նոյեմբերի, №46, էջ 1036, այնուհետև՝ ԲԲ, էջ 48, ապա՝ ԵԺ I, 132:

Արտատպվում է ԲԲ-ից:

Գրության շարժառիթը Ա. Ինճիկյանը համարում է բանաստեղծի հոր՝ տեր Թադևոսի մահը: Այդ մասին նա գրում է. «Մեր կարծիքով, հոր մահվան վշտի ծանր տպավորության անդրադարձումներն են «Այն օրից, ինչ որ նրան թաղեցին...» (1898) և «Խորհրդավոր մեռելը (1900) (վրիպակ է, պետք է լինի 1902 – վերահրատ. խմբ.) բանաստեղծությունները» (տե՛ս Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 49):

Մեր կարծիքով, դամոզիչ չէ այս և հիշատակված «Խորհրդավոր մեռելը» բանաստեղծությունները կոնկրետ մարդու (բանաստեղծի հոր) մահվան հետ կապելը, մանավանդ որ երկու դեպքում էլ բանաստեղծություններից չի երևում, թե խոսքը հասակն առած հարազատի կորստի մասին է:

Այս վերապահությունն իրոք ընդունելի է «Խորհրդավոր մեռելը» բանաստեղծության վերաբերմամբ: Իսկ «Այն օրից...» բանաստեղծության վերաբերյալ Ա. Ինճիկյանի ենթադրությունն ավելի հավանական է թվում (վերահրատ. խմբ.):

«ՏԽՈՒՐ ԴԻՇԵՐ, ՏՐՏՈՒՄ ԴԻՇԵՐ...»
(Լ, 192) (ԵԼԺ 1, Լ, 174)

Գրված է 1898 թ.։

Ինքնագիրը չի պահպանվել։

ԳԱԹ թ. №1355-ում պահվում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը իվագրել է «1898», 8-րդ տողից հետո լուսանցքում գրել՝ «Պատասխանը լրացնել», ապա ջնջել գրածը։

ԹՄԳ-553/2-ում պահվում է ԱՄ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը վերնագիրը գարձրել է «Տխուր դիշեր» և առաջին երկու բառատողերը գծիկով անջատել մնացած բնագրից։

Առաջին անգամ, «Տխուր գրույց» վերնագրով, տպագրվել է ԱՄ, Լ, 16-18 (տպիս ենք որպես տարբերակ), նույնը՝ ԲՋ, 1899, №822 այնուհետև, կրճատված և «Տխուր դիշեր» վերնագրով՝ ԲԲ, Լ, 33, նույնը, առանց վերնագրի՝ ԲԲ, Լ, 49, ապա, «Տխուր դիշեր» վերնագրով ԵԺ I, 130։

Արտատպվում է ԲԲ-ից։

1899

ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ

(«-Հայրիկ, տե՛ս, տե՛ս, աստղը ինավ...»)
(Լ, 193) (ԵԼԺ 1, Լ, 175)

Գրված է 1899 թ.։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է Տգ. 1899, №15 Լ, 355, այնուհետև՝ ԵԺ I, Լ, 256-258։

Արտատպվում է Տգ-ից։

Նմանությունն է Մ. Նալբանդյանի Բևրանժեից փոխադրած նույնանուն բանաստեղծությանը կամ, ինչպես նկատված է, ավելի շուտ պարոդիա է՝ գրված նույն մոտիվներով (տե՛ս Կ. Ջրբաշյան, Ջորս դարեր, Երևան, 1982, Լ, 78-79)։

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՊԱՍԱՆ ՊԵՐՃ ՊՈՈՇՅԱՆՅԻՆ ԻՐ ՔԱՌԱՄՆԱՄՅԱԿԻՆ

(«Այնտեղ ծնված ու մեծացած...»)
(էջ 196) (ԵԼԺ 1, էջ 178)

Գրված է 1899 թ., Պերճ Պոռշյանի գրական գործունեության 40-ամյակի առթիվ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ Տգ, 1899, 16 մայիսի №17, էջ 409, այնուհետև՝ ԵԺ I, էջ 133:

Արտատպվում է Տգ-ից:

5-6-րդ տողերում Թումանյանը նկատի ունի Խաչատուր Աբովյանին, որի «Վերք Հայաստանի» վեպի խոր ազդեցության տակ է Պոռշյանը գրել իր առաջին վեպը՝ «Սոս և Վարդիթերը»: Աբովյանի՝ իր վրա թողած ազդեցության մասին Պոռշյանը գրում է ինքնակենսագրականի մեջ (տե՛ս Պ. Պոռշյան, Երկերի ժողովածու, հ 7, Երևան, 1964, էջ 223), «Վերք Հայաստանին» և իմ «Սոս և Վարդիթերը» հոդվածում (նույն տեղում, էջ 399-408), «Հուշիկներ»-ում և այլուր:

ՕՐ. Մ.-ԻՆ

(«Նայում եմ քեզ, միտս է գալիս...»)
(էջ 197) (ԵԼԺ 1, էջ 179)

Գրված է 1899 թ.:

ԳԱԹ ՓՎՖ №413-ում պահվում է Մարիամ Վարդազարյանի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը, վերնագրված՝ «Ծաղիկներ», թվագրված՝ <18>99:

Առաջին անգամ, «Օր. Մ.-ին» վերնագրով, տպագրվել է՝ «Թատրոն», 1899, №2, էջ 88, այնուհետև՝ ԵԺ I, 475, ինքնագրից, «Ծաղիկներ» վերնագրով:

Արտատպվում է «Թատրոնից»:

ԱՓՍՈՍ

(«Լսի՛ր, սիրտս երգ է ասում...»)
(էջ 198) (ԵԼԺ 1, էջ 180)

Գրված է 1899 թ. սեպտեմբերին:

ԳԱԹ ՓՎՖ №413/7գ-ում պահվում է Փ. Վարդազարյանին ուղղված

նամակը և դրա մեջ՝ ինքնագիրը։

Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ V, 162, այնուհետև՝ ԵԺ I, 478։

Տպագրվում է ինքնագրից։

Թումանյանն այս բանաստեղծությունը գրել է Փ. Վարդազարյանի «Ես ու իմ սիրտը» ուսանավորը կարդալուց հետո։ «Քո նյութը կարդալուն պես,- գրում է նա Փ. Վարդազարյանին ղրած նամակում,- թեև ոչ ուղղակի նյութդ, բայց էլի սրտի աշխարհից գրեցի այս երկու տունը»։ Նույն տեղում տալիս է նաև բացատրություն չորրորդ տողի մասին. «Առաջին տան չորրորդ տողը դուցե մութն է. միտքս այն է, թե – (ափսոսում է) ինչ որ (ուզում էր ու) չի պատահել, չի եղել – չկար, և ինչ որ եղել է, անցել է – կար»։

ԿՏԱԿ

(«Դե գրի, տեր հայր...»)
(էջ 199) (ԵԼԺ 1, էջ 181)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

Ինքնագիրը չի պահպանվել։

58-րդ տող – Կողոպուտ էր անվանվում հանգուցյալի զգեստն ու անկողինը քահանային որպես թաղման վարձ տալը (Հր. Աճառյան, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1912, էջ 589)։ Կողոպուտ բառի եկեղեցական իմաստով նշանակության և քահանաների՝ որպես վարձ հանգուցյալի իրերից լրացուցիչ բաժին պահանջելու մասին Ստ. Մալխասյանցը գրում է. «Ննջեցեալի անձնական գործածութեան իրերը (զգեստ, անկողին, մատանի եւն) , որը տալիս էին քահանային բաժին։ Այս նշանակութեամբ գաւառական բարբառներով ասում է կողոպուրտ։ «Հարուստ մեռելի կողոպուրտն էլ մեծ կլինի», «Այսքան կողոպուրտով քահանան չէր բաւականանում, այլ պահանջում էր նաև հանգուցեալի գործածած բաժակը, զդալները» (Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հտ. Բ, Երևան, 1944, էջ 462)։

Առաջին անգամ տպագրվել է՝ ԱՄ, էջ 11-15, այնուհետև՝ ԵԺ, I, 259-261։

Արտատպվում է ԱՄ-ից։

«ԵՐՆԵԿ ԹԻԹԵՒ ԵՍ ԼԻՆԵԻ...»
(էջ 202) (ԵԼԺ 1, էջ 184)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։ Ձեռագրից կարելի է ենթադրել,

որ գրված է 1890-ական թվականներին:

ԳԱԹ ԹՖ №29 (47)-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԳԵ, էջ 115, ապա ԵԺ I, 483:

Տպագրվում է ինքնագրից:

ԿՈՐԱԾ ՅՆՈՐՔՆԵՐ

(«Հեծում է մըրրիկն իմ դալար հովտում...»)
(էջ 203) (ԵԼԺ 1, էջ 185)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Ձեռագրից կարելի է ենթադրել, որ գրված է 1890-ական թվականներին:

ԳԱԹ ԹՖ №30 (45)-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՀԳ, 1938, №3-4, էջ 132, այնուհետև՝ ԵԺ I, 484:

Տպագրվում է ինքնագրից:

«ՄՈՒԹ ՈՒ ԽԱՎԱՐ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ...»
(էջ 204) (ԵԼԺ 1, էջ 186)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Ձեռագրից կարելի է ենթադրել, որ գրված է 1890-ական թվականներին:

ԳԱԹ ԹՖ №31 (48)-ում պահվում է երկու ինքնագիր, որոնցից առաջինի վրա Թումանյանը բազմաթիվ ուղղումներ է կատարել:

Առաջին անգամ, Բ ինքնագրից, տպագրվել է՝ ԳԵ, էջ 114, այնուհետև՝ ԵԺ I, 482:

Տպագրվում է Բ ինքնագրից:

1900

ՕՋԱԽԻ ԵՐԳԸ

(«Քեֆ աննենք, տղերք – այս պետք է մնա...»)
(էջ 205) (ԵԼԺ 1, էջ 187)

Գրված է 1900 թ. մայիսի 30-ին, Բաքվում:

ԳԱԹ ԹՖ №33(52)-ում պահվում է մեկ ինքնագիր, որը եղել է Արսեն

Բալայանի անփականութիւնը, քանի որ վրան կայ նրա անձնական կնիքը, բայց Յանգարանին է նվիրել Արամ Նազարեթեանը:

Առաջին անգամ տպագրվել է ԽԳ, 1935, №4, էջ 79, այնուհետև՝ ԵԺ I, էջ 495:

Տպագրվում է ինքնագրից:

«Օջախը» եղել է Բաքվի հայ մտավորականներից կազմված մի խմբակ 1890-ական թվականներին: Թումանյանը մաերիմ է եղել «Օջախի» անդամների՝ Սեդրակ (Արսեն) Բալայանի, Մկրտիչ Բեգլարյանի, Սիմեոն Հովվյանի, Սահակ Մատինյանի, Արամ Նազարեթեանի և Միսակ Օհանյանի հետ, որոնք, բացի Օհանյանից և Բեգլարյանից, եղել են Բաքվի Մնասրոպյան և Հոիփսիմյան դպրոցների ուսուցիչներ: Բանաստեղծն «Օջախին» այցելել է երկու անգամ 1895 թ. գարնանը և 1900թ. մայիսին: Այս ոտանավորը գրիչով է երկրորդ այցելության ժամանակ:

Ինչպես վկայում է Ս. Հովվյանը, Թումանյանն ուրախ տրամադրությամբ գրիչով գրված ոտանավորներ է նվիրել «Օջախին» և դրա անդամներին նաև առաջին այցի ժամանակ: Հովվյանը մեջ է բերում դրանցից մեկի երկու տողը.

Ա՛յ,... ձեր «Օջախում»

Ջեր «Օջախի» պուճախում (ԹԺՀ, էջ 261):

ԳԱԹ ԹՓ №32 (45ա)-ում պահվում է մի դժվարընթեռնելի սևագիր, որը երգիծական ոտանավորի էսքիզ է՝ գարձյալ նվիրված «Օջախին»: Վերնագրված է «Օջախ» և սկսվում է հետևյալ տողերով.

Քշված կարիքի դաժան հողմերից,
Մեր հայրենիքի հետու կողմերից,
Որը քաղաքից, որը գյուղից,
Որը սարից, որը ձորից,
Մի քանի ազնիվ բնական բարու...

«ԻՆՉՈ՞Ւ ԷԴՊԵՍ ԻՆՁ ՄՈՌԱՑԱՐ...»
(էջ 206) (ԵԼԺ 1, էջ 188)

Գրված է 1900 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ ԹՓ №1355-ում պահվում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը կատարել է ուղղումներ և ջնջել վերջին քառատողը:

Առաջին անգամ, «Իմ գարդը» վերնագրով, տպագրվել է ՄՃ, 1901, №1, էջ 44, այնուհետև, «Ինչո՞ւ այդպես» վերնագրով ԲԲ, էջ 34-35, առանց

վերնագրի՝ ԲՒ, էջ 50, ապա՝ եԺ I, 134։

Տպագրվում է ԲՒ-ի՝ հեղինակի ուղղած և կրճատած բնագիրը։

«ԻՆՉՊԵՍ ՍՐՏԱԼԻ, ԻՆՉՊԵՍ ԿԱԹՈԴԻՆ...»
(էջ 207) (ԵԼԺ 1, էջ 189)

Գրված է 1900 թ. օգոստոսին, Շուլավերում։

ԳԱԹ ՓՎՖ №413/8-ում պահվում է Փ. Վարդազարյանին ուղղված նամակը և դրա մեջ ինքնագիրը։

Առաջին անգամ տպագրվել է՝ եԺ V, 176, այնուհետև՝ եԺ I, 496։

Տպագրվում է ինքնագրից։

Նամակում ոտանավորի գրության շարժառիթների մասին Թումանյանը գրում է. «Այժմ խոսենք քո բանաստեղծություններից։ Ինձ շատ դուր է գալիս, որ այդպիսի նամակներ եմ ստանում քեզանից։ Քո այդ մտորմունքներն ու խոհերը, որոնք լավն են, կամ նյութ են դառնալու ինձ համար, կամ դրդելու են մի ուրիշ բանի... Ահա, օրինակ, քո «Կուգքի» տեսանքը, նրա նկարակը սիրեցի ես էլ, որ այս է։ Իսկական էլ կգրեմ երևի և մի շարք այդպիսի բաներ կթխեմ, այժմ այս» (ԵԼԺ 9, էջ 232)։

1901

ԴԱՐԱՄԻՋԻ ԺԱՄԻՆ

(«Ինչպես երկու ահեղ սարեր...»)
(էջ 208) (ԵԼԺ 1, էջ 190)

Գրված է 1901 թ. տարեմուտին։

ԳԱԹ ՓՎՖ №413-ում պահվում է Մ. Վարդազարյանի ալբոմը և դրա մեջ ինքնագիրը, թվագրված՝ «1901 տարեմուտին»։ Հետո «տ» տառի վերևը Թումանյանը գրել է «դ»։

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1933, №6, այնուհետև՝ եԺ I, 499։

Տպագրվում է ինքնագրից։

ՌՈՒՍՏԵՄԻՆ

(«Սիրտդ է հիվանդ, պետք է բուժել...»)
(էջ 209) (ԵԼԺ 1, էջ 191)

Գրված է 1901 թ. հունվարի 30-ին:

ԳԱԹ ԹՓ №34(56)-ում պահվում է մեկ ինքնագիր, թվագրված՝ «30/Ա, 901»:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԴԵ, էջ 117, այնուհետև, ԵԺ I, 501:

Տպագրվում է ինքնագրից:

Ռուստամը բժիշկ Արիստակես Զարդարյանն է (1864-1935), Թումանյանի մտերիմներից մեկը, Փ. Վարդազարյանի մորաքրոջ որդին: Մ. Թումանյանի վկայությամբ՝ բանաստեղծը Ռուստեմի հետ մտերմացել է 1896 թ., երբ վերջինս վերադարձել է Մոսկվայից (տե՛ս ԹԺՀ, էջ 469-470): Ջալալ Տեր-Գրիգորյանը (Սալումյան) հիշում է, որ բժիշկը հաճախ այցելել է «Վերնատան» հավաքույթներին. «Կողմնակի այցելուներից,- գրում է նա,- «Վերնատան»-ը ես մի քանի անգամ պատահել եմ Ստ. Լիսիցյանին և բժիշկ Արիստակես Զարգարյանին» (նույն տեղում, էջ 405): 1901 թ. Զարգարյանը մշտապես օգնել է Թումանյանին բժշկական խորհուրդներով:

«ԿԳԱՆ, ԿԱՆՑՆԵՆ ՇԱՏ-ՇԱՏ ԱՄԻՍ ՈՒ ՏԱՐԻ...»
(էջ 210) (ԵԼԺ 1, էջ 192)

Գրված է 1901 թ. սեպտեմբերին:

ԳԱԹ Գ. Զալխուշյանի ֆոնդ, №6-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել՝ է ԵԺ V, 194, այնուհետև՝ ԵԺ I, 503:

Տպագրվում է ինքնագրից:

Թումանյանն այս ոտանավորը գրել է Ռ. Պատկանյանի մահարձանի բացման կապակցությամբ, որը տեղի է ունեցել 1901 թ. սեպտեմբերի 23-ին, Նոր Նախիջևանում: Օգտագործել է Ռ. Պատկանյանի «Հեռացել եմ իմ հայրենի աշխարհից...» բանաստեղծության մի տունը, ապա արտագրել լսոհնատաո հայերեն և ուղարկել հեռագրատուն՝ առաքելու Նոր Նախիջևան, սակայն հաջորդ օրն իմացել է, որ հեռագիրը չի առաքվել: Այդ մասին նա գրում է 1901 թ. հոկտեմբերի 5-ին Գ. Զալխուշյանին հղած նամակում՝ մեջ բերելով նաև քառատողը (տե՛ս ԵԺ V, 194, նաև՝ ԵԺ V, 418-419):

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(«Թեպետև վաղուց հասել էր աշուն...»)
(էջ 211) (ԵԼԺ 1, էջ 193)

Գրված է 1901 թ. նոյեմբերին՝ Ղևոնդ Ալիշանի մահվան առթիվ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ «կազմած հ. Ալիշանի գրվածքների» ենթավերնագրով, տպագրվել է Տզ, 1901, 18 նոյեմբերի, №44, էջ 401, այնուհետև՝ ԵԺ VI, 22-23:

Արտատպվում է Տզ-ից:

Թումայանը Ղ. Ալիշանի ստեղծագործություններից փոխ է առել բառեր, տողեր ու առանձին հատվածներ: Օրինակ՝ նրա ոտանավորի 2-4 տողերը Ալիշանի «Հայոց աշխարհիկ» բանաստեղծության 50-52, 15-18-ը՝ նույն բանաստեղծության 77-79 տողերն են, իսկ 19-12-ը՝ «Մասիսու սարերն» բանաստեղծության 150-151 տողերը:

1902

ԱՍՏԾՈ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

(«Թեպետև վաղուց հասել էր աշուն...»)
(էջ 213) (ԵԼԺ 1, էջ 195)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

ԳԱՖ Թֆ №35(58)-ում և №36(98)-ում պահվում է երկու ինքնագիր: Առաջինը՝ թանաքով արտագրված, 16 տող, վերնագրված՝ «Մարգարեություն»: Երկրորդը գրված է մատիտով, 20 տող, վրան մշակման հետքեր, վերնագրված է «Աստծո սպառնալիքը» և ունի «Աստվածաշունչ» ենթավերնագիրը: ԳԱՖ Թֆ №37 (1 լրացուցիչ)-ում պահվում է մեկ ինքնագիր ևս, հանված Մ. Գևորգյանի ֆոնդից, 20 տող, «Աստծո սպառնալիքը» վերնագրով: Հնարավոր է, որ Ա ինքնագիրը վերջին մշակումն է, սակայն այդ բանը պնդելու վավերական հիմքեր չունենք:

Առաջին անգամ, «Աստծո սպառնալիքը» վերնագրով, տպագրվել է՝ «Արարատ» ամսագիր, 1902, №1, էջ 12, այնուհետև՝ ԵԺ I, 143:

Արտատպվում է «Արարատից»:

Բանաստեղծությունը գրելիս Թումանյանն, անշուշտ, աչքի առաջ է ունեցել Մատթեոսի Ավետարանի ԻԳ գլխում Քրիստոսի խոսքերն ընդդեմ դպիրների և փարիսեցիների: Բայց ավետարանական թեման բանաստեղծր

մշակել է նորովի՝ արձագանքելով իր ժամանակի սոցիալական սուր խնդիրներին:

Բանաստեղծության առաջին արձագանքներից մեկը նշանավոր հայագետ «Արարատ» ամսագրի խմբագիր Գալուստ Տեր-Մկրտչյանի 1902 թ. փետրվարի 17-ին Թումանյանին ուղած նամակն է, որտեղ, ի միջի այլոց, կարդում ենք. ««Ախթամարի» 1898 թվի հատատաված ծրագրով իրավունք չունեինք բանաստեղծություններ տպատարակել և ընդհանրապես ունենալ գրական բաժին: Բայց այս անգամ հաջողվեց Ձեր գեղեցիկ ոտանավորը տպել կրոնական բաժնում: Հատուկ խնդրում եմ և այսուհետև շարունակել աշխատակցել, աշխատելով վերնագրերը կրոնական բաժնի հարմար մի բան դնել» (բանաստեղծության մասին և նամակի ամբողջական բնագիրը տե՛ս ՈՒՀ 3, 62-65, Պ. Հակոբյանի «Հովհաննես Թումանյանը և հայագետ Գ. Տեր-Մկրտչյանը» հոդվածում):

Է. Ջրբաշյանը նշում է, որ Թումանյանի համար ապրյուր է ծառայել նաև Դավիթ ՂԴ (93) սաղմոսը: Թումանյանը կատարել է հետևյալ փոփոխությունը: Սաղմոսում եվև Սաղմոսերգուն է դիմում Աստծուն պատժելու չարն ու անարդարությունը, ապա այստեղ ի պատասխան այդ դիմումի Աստված ինքն է սպառնում «ոչնչովնարդար տեսնել բոլոր անօրեն գործերի համար և օգնել արդվածներին՝ դաշախ բառացի կրկնելով այն, ինչ սաղմոսում ասվում է իրեն դիմողների խոսքի մեջ» (Է. Ջրբաշյան, Թումանյանի գրական ժառանգությունը, էջ 280):

1-2 րդ տողեր – «Ակրատի տատապանքի և անանկի տեղության համար այժմ ես կելնեմ,- ասում է Տերը,- կը բերեմ իմ փրկություն» (Սաղմ. ՂԴ, 1-2):

4-րդ տող – «Տերն եղավ իմ ապավենը, իմ ուժի օգնական Աստվածը» (Սաղմ. ՂԴ 22):

5-8-րդ տողեր – «Քո ժողովրդին, Տեր, ճնշեցին, և Քո ժառանգությունը չարաչարեցին: Այրուն ու պանդխտին սպանեցին, որբերին կոտորեցին ու ասացին. «Տերը դա չի տեսնում, և Հակոբի Աստվածն ուշք չի դարձնում» (Սաղմ. ՂԴ 5-7):

9-12-րդ տողեր – «Ուշքի՛ եկեք, ժողովրդի անզգամներ ու անմիտներ, մինչև ե՞րբ պիտի չմրմնանք: Միթե ականջ ստեղծողն՝ ինքը չի՞ լսի, կամ աչք ստեղծողն ինքը չի՞ տեսնի: Ազգերին խրատողն ու մարդուն գիտություն ուսուցանողը միթե չի՞ տանդիմանի» (Սաղմ. ՂԴ 8-10):

«ԴՈՒ ՔՈ ՃԱՄՓԵՆ Ն ԳՐՆԱ, ՔՈՒՅՐԻԿ...»
(էջ 214) (ԵԼԺ 1, էջ 196)

Գրված է 1902 թ. ապրիլի 29-ին:

ԴԱԹ Թ.Ֆ, №38 (57)-ում պահվում է մեկ ինքնագիր, վերնագրված՝ «N-ին», թվագրված՝ «29 ապր.»:

Առաջին անգամ, «Դու քո ճամփեն գընա» վերնագրով, տպագրվել է 1903 թ. «Լույս» օրացույց-հանդես, էջ 313, այնուհետև, մշակված, «Դու քո ճամփեն» վերնագրով՝ ԲԹ, էջ 38, առանց վերնագրի՝ ԲԲ, էջ 54, ԲՊ, էջ 27-28, ապա՝ ԵԺ I, 135:

Արտատպվում է ԲՊ-ից:

Այս և «Պանդուխտ եմ, քույրիկ, մանուկ օրերից» բանաստեղծությունների առիթով նամակագրական զրույց է տեղի ունեցել բանաստեղծի և Փ. Վարդազարյանի միջև: Վարդազարյանը, որ այդ ժամանակ գրում էր «Վշտի ու թախծի երգիչ Հովհաննես Թումանյան» գրքույկը (լույս է տեսել 1905 թ. Թիֆլիսում), 1904 թ. աշնանը նամակներով մի քանի հարցեր է տվել բանաստեղծին՝ նկատի ունենալով նրա այս երկու բանաստեղծությունները (այդ նամակներից մեզ հասել է երկրորդը՝ գրված օգոստոսի 13-ին): Թումանյանն այդ հարցերին պատասխանել է օգոստոսի 7-ին և 18-ին գրած նամակներում (տե՛ս ԵԺ V, 273-275 և 277-281): Սրանցում նա վերլուծության է ենթարկում իր երկու բանաստեղծությունները կատարելով իր համար անսովոր «ինքնագատության փորձ»: «Դու քո ճամփեն գրնա, քույրիկ» բանաստեղծության մասին նա Փ. Վարդազարյանին գրում է. «Վտանգավոր տեղ ես ընկել: Այս այն ոտանավորներից է, որոնց մեկնությունը իրենցից շատ ու շատ է երկար, որոնք կենսագրություն ունեն, պատմություն ունեն իրենց ետևը: Այսպիսի ոտանավորների տողերում է, որ թաքնված է լինում բանաստեղծի հոգին» (էջ 273): Այնուհետև նա ներկայացնում է սիրո և «արտաքին աշխարհի» փոխհարաբերության իր ըմբռնումը՝ հայտնելով այն միտքը, թե իսկական բանաստեղծությունը կարող է ծնվել միայն անկեղծ ու խոր զգացումից և ոչ երբեք սոսկ այս կամ այն գաղափարի ազդեցությամբ: Գրականագիտությունը պարզել է, որ այս երկու բանաստեղծությունների գրության առիթը Թումանյանի և Վարյա Խանդամիրյանի (հետագայում Հ. Մանանդյանի կինը) անձնական հարաբերություններն են: Ավելի մանրամասն տե՛ս Էդ. Ջրբաշյան, Ջորս գաղաթ, էջ 52-56:

ՏՐՏՈՒՆՋ

(«Օրերս անպըտուղ, տխուր, ձանձրալի...»)
(էջ 215) (ԵԺ 1, էջ 197)

Գրված է 1902 թ. օգոստոսի առաջին օրերին, Բելի Կլուչում:

ԳԱՖ փվֆ №413/10գ-ում պահվում է Թումանյանի նամակն այս ոտանավորի առաջին տարբերակի ինքնագրով:

Առաջին անգամ, մեզ չհասած ինքնագրից, տպագրվել է՝ ՄՃ, 1904, №9, էջ 76, այնուհետև՝ ԲԲ, էջ 20, ապա՝ ԵԺ I, 138:

Արտատպվում է ԲԲ-ից:

Գրության ժամանակը պարզվում է հետևյալ փաստերով. 1902 թ. օգոստոսի 6-ին, Փ. Վարդազարյանին ուղղած նամակում Թումանյանը գրում է. «Անցյալ օրը մի ոտանավոր գրեցի, հետևյալ նամակով կուղարկեմ» (տե՛ս ԵԺ V, 207), իսկ հաջորդ նամակում գրված օգոստոսի 10-ին, կարդում ենք. «Անցյալ անգամ խոստացա հաջորդ նամակով քեզ ղրկել իմ նոր գրած ոտանավորը: Կատարում եմ խոստումս և մեկի փոխարեն երկուսն եմ ղրկում» (նույն տեղում, 208): Եվ, իսկապես, ուղարկում է երկու բանաստեղծություն՝ «Ընկերիս», որը գրել է օգոստոսի 10-ին, և այս ոտանավորը, որ խոստացել էր նախորդ նամակում:

ԸՆԿԵՐԻՍ

(«Իմ վեհ տենչերի, չըքնաղ վըշտերի...»)
(էջ 216) (ԵԺ 1, էջ 198)

Գրված է 1902 թ. օգոստոսի 10-ին:

ԳԱՖ փվֆ №413/10գ-ում պահվում է Թումանյանի՝ Փ. Վարդազարյանին ուղղած նամակը, որի մեջ՝ ինքնագիրը, վերնագրված՝ «Ֆ-ին», որ նշանակում է՝ Ֆիլիպին, այսինքն՝ Փ. Վարդազարյանին:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲԹ, էջ 37, այնուհետև՝ ԲԲ, 58 , ապա՝ ԵԺ I, 137:

Արտատպվում է ԲԲ-ից:

Նամակում Թումանյանը, ի միջի այլոց, գրում է. «Այսօր քո նամակն առում եմ, նորից կարդացի և նրա տպավորության տակ գրեցի այս փոքրիկ ոտանավորը»: Այնուհետև՝ «Գազափարների ու երազների աշխարհն է, որ ես մի խոսքով անվանել եմ Վեր» (տե՛ս, ԵԺ V, 209):

«ՆՀՍՏԱԾ ԵՄ ՏԽՈՒՐ, ՄԵՆԱԿ ՄԻ ԺԱՅՌԻ...»
(էջ 217) (ԵԼԺ 1, էջ 199)

Գրված է 1902 թ. սեպտեմբերի 22-ին:

ԳԱԹ թֆ 622(114)-ում պահվում է Թումանյանի՝ 1902 թ. սեպտեմբերի 25-ին Աբասթումանից Վարյա Խանդամիրյանին հղած նամակը և դրա մեջ ինքնագիրը:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԳԹ, 1955, №18, այնուհետև՝ ԵԺ VI, 425-426:

Տպագրվում է ինքնագրից:

Նամակում՝ ոտանավորից առաջ, Թումանյանը գրել է. «Աքանչելի, աքանչելի օրեր են: Չգիտեմ Դուք երբևէ աշնանը եղե՞լ եք բնության մեջ անտառներում, սար ու ձորերում: Աբասթումանի հովիտը լիքն է արևի երգերով ու մի անուշ-թախծալի խաղաղությամբ: Ամբողջ օրը զբոսանքներ եմ կատարում, թաղվում եմ անտառների խորքում, բարձրանում եմ սարերի գլուխները, նստում եմ ժայռերի գագաթներին ու մտորում, ցնորում՝ չնայելով Ձեր խրատին: Հաճախ հենց այդ անտառներում, այդ ժայռերի վրա ոտանավորներ եմ գրում, մեծ մասամբ այսպիսի հիշատակարանի ոտանավորներ» (տե՛ս ԵԺ VI, 425-426):

ՀԱՅՈՑ ՎԻՇՏԸ

(«Հայոց վիշտը անհուն մի ծով...»)
(էջ 218) (ԵԼԺ 1, էջ 200)

Գրված է 1902 թ. մինչև հոկտեմբերի վերջերը, թեև ՀՀ-ում թվագրված է՝ «1903»:

Մեկ օրինակ պահվում է ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ №2273-ում:

Հայերեն առաջին անգամ տպագրվել է՝ Գղ, 1908, №1, էջ 48, այնուհետև՝ ԲԲ, էջ 59, ՀՀ, էջ 35, ապա՝ ԵԺ I, 146:

Արտատպվում է ՀՀ-ից:

Այս բանաստեղծությունը, մինչև հայերեն հրատարակությունը, լույս է տեսել ռուսերեն «Современные армянские поэты» ժողովածուում, Մոսկվա, 1903, էջ 41, «С авторской рукописи» ծանոթագրությամբ: Թարգմանել է Ս. Գոլովաչևսկին: Գրաքննության գիրքը տպագրության է թույլատրել 1902 թ. նոյեմբերի 6-ին: Այստեղից հետևում է, որ մինչ այդ բանաստեղծությունը ոչ միայն գրված, այլև թարգմանված է եղել:

ՄԵՐ ՈՒԽՏԸ

(«Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի լույս...»)
(էջ 219) (ԵԼԺ 1, էջ 201)

Գրված է 1902 թ. մինչև հոկտեմբերի վերջերը, քանի 22-ում թվագրված է «1903» (տես «Հայոց միության» բանաստեղծության ձեռագրությունը):

ԳԱԹ ԹՖ №39(60)-ում պահվում է մեկ ինքնագիր: Նույն տետրում №1355-ում պահվում է նաև ԲԲ-ի տեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը 15 րդ տողը «Մեր աչքերը հառած միշտ վեր», փարձրել է «Մեր աչքերը միշտ դեպի վեր»:

Հայերեն առաջին անգամ «Մենք ուխտ ունենք» վերնագրով, տպագրվել է «Վառակ» օրաթերթում 1907, 25 նոյեմբերի, №5, այնուհետև ԲԲ, էջ 51, «Մեր ուխտը» վերնագրով ՀՀ, էջ 7, ապա ԵԺ I, 147:

Արտատպվում է ՀՀ-ից:

Այս բանաստեղծությունը ևս, մինչև հայերեն հրատարակությունը, լույս է տեսել առաջին անգամ «Современные армянские поэты» ժողովածուում, էջ 43-44, «Песня армян» վերնագրով, «Савторской рукописи» ձեռագրությամբ: Թարգմանել է Լև Ռամանեցը: Ըստ երևույթին, թարգմանչի ձեռքին եղել է մի նախնական տարբերակ, որը 1907 թ. տպագրության հանձնելիս Թումանյանը հիմնական վերամշակման է ենթարկել (այս մասին մանրամասն տես «Պատմա բանասիրական հանդես», 1964, №o 3, էջ 183-185, էդ. Ջրբաշյանի «Բանասիրական ճշտումներ» հոդվածը):

«ՊԱՆԴՈՒԽՏ ԵՄ, ՔՈՒՅՐԻԿ, ՄԱՆՈՒԿ ՕՐԵՐԻՑ...»
(էջ 220) (ԵԼԺ 1, էջ 202)

Գրված է 1902 թ., ինչպես թվագրված է ԲԹ-ում:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ ԹՖ №1355-ում պահվում է ԲԲ-ի տեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը թվագրել է «1902»:

Առաջին անգամ տպագրվել է ԲԳԱ, 1903, գիրք Ա, էջ 131-132, վերնագրված «Պանդուխտ եմ, քույրիկ», այնուհետև, որոշ փոփոխություններով ԲԹ, էջ 40-41, առանց վերնագրի ԲԲ, էջ 55-56, ապա ԵԺ I, 139-140:

Արտատպվում է ԲԲ-ից:

Տես նաև «Ու քո ճամփեն գընա, քույրիկ» բանաստեղծության ձեռագրությունը:

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՄԵՌԵԼԸ

(«Ուր որ կանգնում, նըստում եմ ես...»)
(էջ 222) (ԵԼԺ 1, էջ 204)

Գրված է 1902 թ., ինչպես թվագրված են ինքնագրերը:

ԳԱԹ Թֆ №40 (59)-ում պահվում է մեկ ինքնագիր: Մեկ այլ սևագիր-ինքնագիր պահվում է՝ ԳԱԹ Թֆ №41 (8 լրացուցիչ)-ում:

Առաջին անգամ տպագրվել է «Թատրոն» հանդեսում, 1905, №2, էջ 64, այնուհետև՝ ԵԺ I, 142:

Տպագրվում է Ա ինքնագրից, քանի որ, ինչպես երևում է, դա արտագրված է «Թատրոնից» և ունի մշակման հետքեր:

Տե՛ս նաև «Այն օրից» բանաստեղծության ծանոթագրությունը:

ՄԵՐ ՆԱԽՈՐԴՆԵՐԻՆ

(«Երանի՛ էր ձեզ, դովված երգիչնե՛ր...»)
(էջ 223) (ԵԼԺ 1, էջ 205)

Գրված է 1902 թ. :

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲԹ, էջ 36, այնուհետև՝ ԲԲ, էջ 52, ԲՊ, էջ 29-30, ապա՝ ԵԺ I, 141:

Արտատպվում է ԲՊ-ից:

ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

(«Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր...»)
(էջ 224) (ԵԼԺ 1, էջ 206)

Հավանաբար գրված է 1902 թ.:

Ինքնագիրը պահվում է ԹԹԴ 1079/52-18-ում: ԳԱԹ Թֆ №42 (77)-ում պահվում է ինքնագրի լուսապատճեն:

Առաջին անգամ տպագրվել է՝ «Երկիր» օրաթերթ, 1906, 24 դեկտեմբերի, №70, այնուհետև՝ ԲԲ, էջ 61-62, ԲՊ , էջ 31-32, ապա՝ ԵԺ I, 144-145:

Արտատպվում է ԲՊ-ից:

«Հին կռիվը» պոեմի երկրորդ երգի («Ճամփին») նախերգանքն է, ինչպես վկայում է ինքը՝ բանաստեղծը: Հր., 1915, №243-ում տպագրելով պոեմի առաջին երգը («Տանը»)՝ նա տողատակի ծանոթագրության մեջ պատմում

է, որ իր բնակարանում տեղի ունեցած խուզարկության ժամանակ մի շարք ձեռագրեր են կորել: «Մինը էս պոեմն է, վերնագիրը գրած «Հնոնի կռիվը» և ջնջած: Հինգ տետրակով հետևյալ հինգ երգերը. 1) Տանը (որ տպվում է «Հորիզոնի» էս №-ում): Սրա մշակած ձևը: Էս սևագրության է, որ աղջիկս է պահել: 2) Ճամփին (որի նախերգանքը՝ «Հայոց լեռներում» տպված է)...»:

Գրության ժամանակը պարզելու հիմնական կռվանը դարձյալ հեղինակի վկայությունն է: 1902 թ. հուլիսի 29-ին Փ. Վարդազարյանին գրած նամակում նա գրել է. «Սակայն քեզ ասեմ, որ միևնույն ժամանակ մի մեծ ազգային պոեմա եմ ձևում, մի բան, որ վաղուց ներսս փոթորկում էր քառասային գրության մեջ... » (տե՛ս նժ V, 202): Խոսքն այստեղ «Հին կռիվը» պոեմի մասին է, որի մի մասն է այս բանաստեղծությունը:

«Ա՛խ, ինչ լավ են սարի վրա...»
(էջ 226) (նկժ 1, էջ 208)

Գրված է 1901-1902 թթ.:

«Անուշ» պոեմի հատվածներից է: Ըստ նախնական օրինակի՝ այսպես է սկսվում VIII երգը: Հետագայում դուրս է մնացել ընդհանուր հենքից: Այս հատվածի համար Թումանյանը նաև երաժշտություն է հորինել:

Ն. Թումանյանն իր հուշերում գրում է. «Հիշում եմ, այդ բլրի վրա ծառերի տակ հանգստանալիս երգում էր «Անուշից» մի կտոր, որի եղանակն էլ ինքն էր հորինել «Անուշը» գրելու ժամանակ.

Ա՛խ, ինչ լավ են սարի վրա,
Անցնում օրերն անո՛ւշ, անո՛ւշ ...

Այս երգը կապվեց Բորժոմի հետ և հետագայում երգելիս միշտ հիշում էինք Բորժոմը և ասում՝ «Բորժոմի երգը» (Ն. Թումանյան, Հուշեր և դրույթներ, Երևան, 1987, էջ 147):

ԳԱԹ ԹՖ №156 (5)-ում «Անուշի» ձեռագրերի մեջ, պահվում են երկու ինքնագրեր (Ա և Բ):

1939 թ. բանաստեղծի ծննդյան 70-ամյակի կապակցությամբ I և III քառատողերը, նոտաների հետ միասին, տպագրվել են առանձին փոստային քարտերի վրա, վերնագրված՝ «Ա՛խ, ինչ լավ են...» և վերնագրի տակ գրված՝ «Խոսք և եղանակ Հովհ. Թումանյանի»:

Տպագրվել է՝ նժ I, 136:

Տպագրվում է Բ ինքնագրից:

1903

ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆԸ

(«Այստեղ, անցվոր այս աշխարհում ...»)
(էջ 227) (ԵԺ 1, էջ 209)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: ԵԺ I-ում թվագրված է 1894 թ.: Սակայն գրության հանգամանքներից և ձեռագրերից երևում է, որ պետք է գրված լինի 1903 թ.՝ որպես «Դեպի Անհունը» պոեմի նախերգանք:

ԳԱԹ թֆ №43 (6ա)-ում պահվում է «Դեպի Անհունը» պոեմի՝ ՄՃ-ի կտրոնը (1903, №11), որի վրա Թումանյանն ուղղումներ է կատարել, ապա դրան կցել է այս քսան տող ինքնագիրը, վերնագրված՝ «Նախերգանք»: Հետագայում «Նախերգանք» բառից վեր, որպես վերնագիր, գրել է՝ «Անմահության»: Ինքնագրի վրա գիծ է քաշել և ինչ-որ պատճառներով չի գետեղել պոեմի հետագա հրատարակությունների մեջ (այս մասին մանրամասն տե՛ս Էդ. Ջրբաշյան, Թումանյանի պոեմները, էջ 203-205):

Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ I, 455:

Տպագրվում է ինքնագրից:

1904

«ԱՅՍՏԵՂ ՄԻ ՎՍԵՄ ԽՈՐՀՈՒՐԴ Է ԱՊՐՈՒՄ ...»

(էջ 228) (ԵԺ 1, էջ 210)

Բենիամին Յրտատարյանը Թումանյանի մասին գրած իր անտիպ հուշերում նկարագրում է 1904 թ. Թարգմանչաց տոնի հանդեսն Օշականում և վկայում. «Մեկ էլ կարծես հանկարծակի խորհրդավոր լուռություն, շշուկ, իրարանցում... Սեղանի կառավարիչը հայտարարում է, որ Օշական է ժամանել հանրածանոթ բանաստեղծ Հովհ. Թումանյանը և որտեղ որ է կներկայանա մեր սեղանին»:

ԳԱԹ թֆ №1521 ա-ում պահվում է Մ. Խրիմյանի դիմանկարով մի բացիկ, որի մի երեսին Թումանյանը գրել է. «Հարգելի օր. Հ. Մարկոսյանին, նախագահը», իսկ մյուս երեսին. «Անցած օրին օր չի հասնիլ: 21 հունիսի 904, էջմիածին»: Այսինքն՝ հունիսի 21-ին Թումանյանն արդեն գտնվել է էջմիածնում: Հավանաբար, Օշականից էջմիածին է մեկնել նախորդ օրը՝ հունիսի 19-ի Թարգմանչաց տոնի հանդիսություններին մասնակցելուց հետո: Այստեղից հետևում է, որ ոտանավորը պիտի գրված լինի հունիսի

19-ին կամ 20-ին Օշականում:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԴԹ, 1949 №6, թվագրված «1904 թ. Երևան», այնուհետև ԵԺ I, 509: Աչառեկ ծանոթագրության մեջ կարդում ենք. «Գրել է 1904 թ. հունիսին Օշականում: Ձեռագիրը չի պահպանվել: Տպագրվում է առաջին անգամ ուսուցիչ Մ. Մխիթարյանի ընդօրինակությունից»:

Անհայտ է, թե ինչ ապրյուրից է հրատարակվել ԴԹ-ում: Չհաջողվեց պարզել նաև, թե որտեղից է ընդօրինակել վերը հիշատակված ուսուցիչ Մ. Մխիթարյանը: Այդ «ընդօրինակությունը» ևս մեր ձեռքի տակ չի եղել:

Ըստ երևույթին, ԵԺ I-ի կազմողները տեղյակ չեն եղել, որ ոտանավորն արդեն տպագրված է եղել մեկ տարի առաջ, թեև հնարավոր է նաև, որ դիրքը տպագրության է տանձնվել ավելի վաղ, իսկ հետագայում կազմողները մոռացել են ճշտել ծանոթագրությունը:

ԴԹ-ում տպագրված 6-րդ տողը մեզ ավելի ճշգրիտ է թվում, այդ պատճառով հիմք ենք ընդունել ԴԹ-ի բնագիրը:

«ՄԵՆՔ ՓԱՓՈՒՔԵՐ ԱՒՆԵՆՔ ԹԱՂՎԱԾ ՀՈՂԻ ՏԱԿ...»
(էջ 229) (ԵԺ I, էջ 211)

Գրված է 1904 թ. հունիսի 24-ին, Անի այցելողների ալբոմում, որը պահվում է Հայաստանի պետական արխիվում՝ ֆ. 57, գ. 704, թ. 83:

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ I, 508:

Տպագրվում է ինքնագրից:

1905

«ՄԻՇԻԿ, ՆԻՇԻԿ, ԱՆԻՇԻԿ...»
(էջ 230)

Գրված է 1905 թ. հունվարի 1-ին:

Նվարդ Թումանյանն հիշում է. «1905 թ. հունվարի 1-ին, երբ դեռ ութը երեխա էինք, հայրիկը մեզ առնածառի կանչեց մի փոքրիկ երգով՝ չորս տող ութ երեխայի անունից կազմված» (տե՛ս Ն. Թումանյան, Հուշեր և պրոլյոններ, Երևան, 1987, էջ 38): Եվ բերում է այդ քառատող ոտանավորը, որ ուրիշ ոչ մի տեղ չի տպագրվել՝ դուրս մնալով նաև ԵԺ-ի նախորդ հրատարակություններից:

Արտատպվում է Նվարդի հուշերից:

1906

ԱՂՎԵՍԸ

(«Աղվեսն եկավ բարձըր սարից...»)
(էջ 231) (ԵԼԺ 1, էջ 212)

Ակունքը ժողովրդական է: Թումանյանն օգտվել է Կ. Կոստանյանցի «Նոր ժողովածուի» Ա պրակի (Թիֆլիս, 1892) տարբերակից: Ժողովրդական երգի միջին հայերենը փոխադրել է ժամանակակից գրական-ժողովրդական լեզվի, փոխել բազմաթիվ բառեր ու տողեր, «ի վերայ աղուէսին» վերնագիրը դարձել է «Աղվեսը»:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ Հսկ, 1906, №12, էջ 405-406, «Միջնադարյան ժողովրդականից» ենթավերնագրով, այնուհետև՝ ԲԲ, էջ 97-98, առանձին նկարազարդ գրքույկ (Թիֆլիս, 1909), ԲՊ, էջ 135-136, «Ժողովրդական երգեր» բաժնում՝ առանց ենթավերնագրի, ապա՝ ԵԺ I, 219-220:

Արտատպվում է ԲՊ-ից:

1907

ԿԱՔԱՎԻ ԳՈՎՔԸ

(«Արև բացվեց թուխ ամպերեն...»)
(էջ 233) (ԵԼԺ 1, էջ 214)

Ակունքը ժողովրդական է: «Վանեցվոց երգ կաքավու» վերնագրով տպագրվել է 1850 թ. «Բազմավեպում» և 1860 թ. Մ. Միանսարյանի «Քնար հայկականում»: Ժողովրդական երգի 6 քառատողից Թումանյանն ընտրել 4-ը՝ դուրս թողնելով 2-րդ և 6-րդ քառատողերը: Վանի բարբառը փոխադրել է գրական-ժողովրդական լեզվի, փոխել մի շարք տողեր ու բառեր:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ ԹՖ №1355-ում պահվում է ԲԲ-ի՝ հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը բազմաթիվ ուղղումներ է արել, որոնք մեծ մասամբ մտել են հետագա հրատարակության մեջ:

Առաջին անգամ, «Կաքավի երգը» վերնագրով և «Ժողովրդական» ենթավերնագրով, տպագրվել է՝ ՀՍԿ, 1907, №1, էջ 5, այնուհետև՝ ԲԲ, էջ 99-

100, «կաքավի գովքը» վերնագրով և առանց ենթավերնագրի ԲՊ, էջ 139-140, «ժողովրդական երգեր» բաժնում, ապա՝ ԵԺ I, 151։

Արտատպվում է ԲՊ-ից։

«ԺԱՄԱՆԱԿՆ ԱՆՎԵՐՋ, ՏԻԵԶԵՐՔՆ ԱՆՀՈՒՆ...»
(էջ 234) (ԵԼԺ 1, էջ 215)

Գրված է 1907 թ. սկզբներին։

ԳԱՔ ԹՖ №44 (63)-ում պահվում է մեկ ինքնագիր, վերնագրված «Անվերջ ու անվերջ»։

ԳԱՔ ԹՖ №1355-ում պահվում է ԲՒ-ի մեկ տպարանական առանձնատիպ, որի վրա Թումանյանը ուղղումներ է կատարել։ Այստեղ վերնագրված է «Անվերջ ու անվերջ»։ Շարվել է 65-րդ էջում, հետագայում տեղափոխվել 21-րդ էջ։ Այս և նման դեպքերը նկատի ունենալով՝ 1908 թ. օգոստոսին դասերը Աշխենին հղած նամակում բանաստեղծը գրում է. «Իմ գրքում բաներ էին փոխել։ Տպագրությունը կանգնեցրի, նորից տպել եմ տալիս փոխած տեղերը» (տե՛ս ԵԺ V, 314)։

Առաջին անգամ, «Անվերջ...» վերնագրով, տպագրվել է Հուշ., 1907, 16 փետրվարի, №1, էջ 5, այնուհետև, առանց վերնագրի ԲՒ, էջ 21, ՀԳ, 1914, էջ 143, ապա՝ ԵԺ I, 148։

Արտատպվում է ՀԳ-ից։

ԸՆՏՐՅԱԼԸ
(«Հոգու սրբրգան կըրակով վառված...»)
(էջ 235) (ԵԼԺ 1, էջ 216)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

Ինքնագիրը չի պահպանվել։

ԳԱՔ ԹՖ №1355-ում պահվում է ԲՒ-ի տեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը ջնջել է 36-րդ տողի «նետից» բառը և լուսանցքում գրել «թողից»։

Առաջին անգամ, «Ազատության պատմությունից» ենթավերնագրով, տպագրվել է «Ժամանակ» օրաթերթ, Թիֆլիս, 1907, №71, այնուհետև ԲՒ, էջ 46-47, առանց ենթավերնագրի ԲՊ, էջ 21-23, ապա՝ ԵԺ I, 149-150։

Արտատպվում է ԲՊ-ից։

Բանաստեղծությունը ներկայացնում է Հին կտակարանի հիմնականում

Ելից գրքի որոշ դրվագներ՝ առանձին բառերի և արտահայտությունների ուղղակի գործածությամբ.

2-րդ տող – Մովսես – աստծու կողմից ընտրված մարգարե, որ իսրայելցիներին եգիպտական գերությունից առաջնորդում է դեպի Ավետյաց երկիր (տե՛ս Ելք, գլ. 3):

2-րդ տող – լերան գագաթից – Սինա լեռան գագաթը, ուր բարձրացել էր Մովսեսը՝ լսելու աստծու պատվիրանները և փոխանցելու ժողովրդին (տե՛ս Ելք, գլ.19):

3-րդ տող – ահեղ պատգամներն – Եհովայի տասը պատվիրանները (տե՛ս Ելք, գլ.20):

4-րդ տող – շղթայից հանող աստծո – Եհովան, որ իսրայելցիներին ազատել էր գերության շղթաներից:

11-րդ տող – աստված է շինել ոսկուց, արծաթից – երբ Մովսեսը ուշանում է լեռան վրա, ժողովուրդը դժգոհում է, թե ինչու նա իրենց հանեց Եգիպտոսից և բերեց անապատ: Հուզումը խաղաղեցնելու համար Ահարոնը ժողովրդից հավաքած ոսկուց և արծաթից կուռքեր է պատրաստում, որոնց շուրջը պարում է հարբած ամբոխը (տե՛ս Ելք, գլ. 32):

22-րդ տող – ծովեր եմ պատռում – Եգիպտոսից հեռանալուց հետո իսրայելցիները հասնում են Կարմիր ծովի ափը: Եգիպտացիների հետապնդումից խուսափելու համար Մովսեսը գավազանով ճեղքում է ծովի ջրերը, և ժողովուրդը ցամաքով անցնում է մյուս ափը (տե՛ս Ելք, գլ.14):

22-րդ տող – անցնում անապատ – «Երբ փարավոնն արձակեց ժողովրդին, Աստված նրանց կարճ ճանապարհով՝ Փղշտացիների երկրով չառաջնորդեց, որովհետև Աստված մտածեց, թե ժողովուրդը, պատերազմի բռնվելով, գուցե վախենա ու Եգիպտոս վերադառնա: Դրա համար Աստված ժողովրդին շրջանցիկ՝ անապատի ճանապարհով տարավ դեպի Կարմիր ծով» (տե՛ս Ելք, գլ.13):

23-րդ տող – հրեղեն սյունով տանում իր ուղին – Երբ իսրայելցիները, Եգիպտոսից հեռանալով, հասնում են «անապատի եզրին», «աստված ցերեկը նրանց առաջնորդում էր ամպի սյունով, որպեսզի ճանապարհ ցույց տա նրանց, իսկ գիշերը՝ հրե սյունով, որպեսզի գիշեր-ցերեկ նրանք ուղեցույց ունենան» (տե՛ս Ելք, գլ.13):

28-րդ տող – գերության սխտորն ու սոխն են հիշում – անապատում իսրայելցիների մեջ գտնվող «խառնամբոխը», դժգոհելով Եհովայից, հիշում է ձուկը, որ Եգիպտոսում «ձրի» էին ուտում, «սեխը, ձմերուկը, պրասը, սոխն ու սխտորը» (տե՛ս Թվեր, գլ.11):

35-րդ տող – քարե տախտակներ – Եհովայի տասը պատվիրանները գրված էին քարե տախտակների վրա. «Երբ աստված Սինա լեռան վրա

ավարտեց իր խոսքը, Մովսեսին ավել վկայության երկու տախտակները՝ Աստծո մատով գրված քարե տախտակները» (տես ելք, գլ. 31):

Բանաստեղծական այս պայմանականություններով Թումանյանը ներկայացրել է ժողովրդի փրկության գործին նվիրված ընտրյալ անհատների իր իդեալը:

ԱՇՆԱՆ ՎԵՐՋԸ

(«Մարի լանջին...»)
(էջ 237) (եվժ 1, էջ 218)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Ա 1, 1907, էջ 24, այնուհետև՝ Ա II, 1908, էջ 19, ապա՝ եժ 1, 235:

Արտատպվում է Ա II-ից:

ԿՈՒՅՐ ԱՇՈՒՂԸ

(«Կույր աշուղը մի տան բակում...»)
(էջ 238) (եվժ 1, էջ 219)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱՔ ԹՖ №1794-ում պահվում է 1908 թ. Ա II-ի տեղինակի սեփական օրինակը, որի վրա Թումանյանն ուղղումներ է կատարել, որոնք, սակայն, չեն մտել հաջորդ 1909 թ. Ա II-ի մեջ:

Առաջին անգամ տպագրվել է Ա 1, 1907, էջ 29, այնուհետև՝ Ա II, 1908, էջ 22, ապա՝ եժ 1, 223:

Արտատպվում է 1909 թ. Ա II-ից:

ԱՄՊՆ ՈՒ ՍԱՐԸ

(«Ամպը եկավ նստեց սարին...»)
(էջ 239) (եվժ 1, էջ 220)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է՝ Լ I, 1907, էջ 30, այնուհետև՝ Լ II, 1908, էջ 37 և նույն դասագրքի հետագա տարիների հրատարակություններում (Լ II, 1921, էջ 39, տպագրվել է մեկ ուրիշ տարբերակ), ապա՝ ԵԺ I, 238։

Արտատպվում է 1908 թ. Լ II-ից։

ԼՈՒՍԱԲԱՅԻՆ

(«Ծուղրուղո՛ւ...»)
(էջ 240) (ԵԼԺ 1, էջ 221)

Ակունքը ժողովրդական է։ Հավանաբար Թումանյանն օգտվել է բանավոր աղբյուրից։

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է՝ Լ I, 1907, էջ 49, այնուհետև՝ Լ I, 1908, էջ 45, ապա՝ ԵԺ I, 221։

Արտատպվում է 1908 թ. Լ I-ից։

ՓԻՍՈՆ

(«Փիսոն, փիսոն մլավան...»)
(էջ 241) (ԵԼԺ 1, էջ 222)

Ակունքը ժողովրդական է։ Բնագիրը տպագրվել է Տ. Վարդանյանցի «Ժողովրդական անգիր բանաստեղծություններ» ժողովածուի մեջ (Թիֆլիս, 1901)՝ «Կատուն» վերնագրով։

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է՝ Լ I, 1907, էջ 58, այնուհետև՝ Լ II, 1908, էջ 14 և նույն դասագրքի հետագա տարիների հրատարակություններում, ապա՝ ԵԺ I, 229։

Արտատպվում է Լ I-ից։

ՈՒՐԱԳ ՈՒ ՍՂՈՑ

(«Մի լինիր ուրագի պես...»)
(էջ 242) (ԵԼԺ 1, էջ 223)

Ակունքը ժողովրդական է:
Գրության թվականն ստույգ հայտնի չէ:
Ինքնագիրը չի պահպանվել:
Առաջին անգամ տպագրվել է Լ 1, 1907, էջ 62, այնուհետև Լ II, 1908, էջ 30 և նույն դասագրքի հետագա տարիների հրատարակություններում, ապա ԵԺ 1, 223:
Արտատպվում է Լ I-ից:

ԿԱՆԱՆՉ ԱԽՊԵՐ

(«Էյ կանանչ ախպեր...»)
(էջ 243) (ԵԼԺ 1, էջ 224)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:
Ինքնագիրը չի պահպանվել:
Առաջին անգամ տպագրվել է Լ 1, 1907, էջ 63, այնուհետև Լ II, 1908, էջ 60, ապա ԵԺ 1, 234:
Արտատպվում է Լ I-ից:

ՄՈՒՅԼ ԱՂՋԻԿԸ

(«Քանի՛ ինչ կանեմ կեզտոտ է... »)
(էջ 244) (ԵԼԺ 1, էջ 225)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:
Ինքնագիրը չի պահպանվել:
Առաջին անգամ տպագրվել է Լ 1, 1907, էջ 65, այնուհետև Լ I, 1908, էջ 72, Լ I, 1920, էջ 70, Լ I, 1922, էջ 70, որտեղից և արտատպվում է:

ԿՈՒՆԿՆԵՐ

(«Կռո՛, կռո՛, կռոկռոան...»)
(էջ 245) (ԵԼԺ 1, էջ 226)

Ակունքը ժողովրդական է: Համանարար Թումանյանն օգտվել է

բանավոր աղբյուրից։

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է՝ Լ I, 1907, էջ 66, այնուհետև՝ Լ I, 1908, էջ 79, ապա՝ ԵԺ I, 226։

Արտատպվում է 1908 թ. Լ I-ից։

ԱՐԱԳԻԼ

(«Արագի՛լ, բարով եկար...»)
(էջ 246) (ԵԼԺ 1, էջ 227)

Ակունքը ժողովրդական է։ Նախօրինակը տպվել է 1858 թ. «Բազմավեպում», ապա՝ Մ. Մինասբյանի «Քնար հայկականում»։

Ժողովրդական երգի 7 քառատողերից Թումանյանն ընտրել է երկուսը (1-ինը և 4-րդը), վերամշակել, ավելացրել ևս մի քառատող՝ «Երգ արագլի» վերնագիրը դարձնելով «Արագիլ»։

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

ԳԱԹ ԹՖ №45 (64)-ում պահվում է մեկ սևագիր-ինքնագիր։

ԹԹԳԳ1079/52-15-ում պահվում է 1908 Լ II-ի մի օրինակ, որի վրա Թումանյանն ուղումներ է կատարել։

Առաջին անգամ տպագրվել է՝ Լ I, 1907, էջ 68, այնուհետև՝ Լ II, 1908, էջ 68, Լ II, 1909, էջ 64 , Լ II, 1921, էջ 84 , ապա՝ ԵԺ I, 230։

Արտատպվում է 1909 թ. Լ II-ից, քանի որ 1921 թ. Լ II-ում կան վրիպակներ։

ԳՈՒԹԱՆ

(«Լուսը լուսացավ...»)
(էջ 247) (ԵԼԺ 1, էջ 228)

Ակունքը ժողովրդական է։ Թումանյանն օգտվել է Ե. Լալայանի «Ջավախքի բուրմունք» (Թիֆլիս, 1892) և Աղեք. Մխիթարյանցի «Տաղեր ու խաղեր» (Ալեքսանդրապոլ, 1900) ժողովածուների մեջ զետեղված հորովելներից։

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

ԳԱԹ ԹՖ №46 (100 ժգ)-ում պահվում է մեկ սևագիր-ինքնագիր, առանց վերնագրի։

ԳԱԹ ԹՖ №1360-ում պահվում է Լ II-ի՝ հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը չնչել է 17-18-րդ տողերը։

Առաջին անգամ տպագրվել է՝ Լ I, 1907, էջ 70, այնուհետև՝ Լ II, 1908, էջ 78, Լ III, 1909, էջ 100, ապա՝ ԵԺ I, 240։

Արտատպվում է Լ I-ից։

ՄԻՏՔ

(«Հուսին գնաց բանջարի...»)
(էջ 248) (ԵԼԺ 1, էջ 229)

Ակունքը ժողովրդական է։ Համանաբար Թումանյանն օգտվել է բանավոր ապրյուրից։

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ, «Միտ» վերնագրով, տպագրվել է՝ Լ I, 1907, էջ 71-72, այնուհետև, առանց 5-6 տողերի Լ I, 1908, էջ 86, «Հուսին» վերնագրով՝ Լ I, 1920, էջ 75, ապա ԵԺ I, 227։

Արտատպվում է 1920 թ. Լ I-ից։

Պահել ենք նախորդ հրատարակությունների «Միտ» վերնագիրը, որովհետև Թումանյանն այն փոխել է՝ նկատի ունենալով, որ նույն պատապրքում ունի նաև «Միտ» վերնագրով ուրիշը։

ՈՒՄՈՒՆՔ

(«Դարատնր եկավ ամպերով...»)
(էջ 249) (ԵԼԺ 1, էջ 230)

Ակունքը ժողովրդական է։ Նախօրինակը տպագրվել է Տ. Վարպետյանցի «Ժողովրդական անգիր բանաստեղծություններ» ժողովածուում։

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է՝ Լ I, 1907, էջ 74-75, այնուհետև՝ Լ II, 1908, էջ 88 և նույն պատապրքի հետագա տարիների հրատարակություններում, ապա՝ ԵԺ I, 231։

Արտատպվում է Լ I-ից։

ՃՆՃՂՈՒԿՆԵՐ

(«Կոտ ու կես կորեկ ունեմ...»)
(էջ 250) (ԵԼԺ 1, էջ 231)

Ակունքը ժողովրդական է: Նախօրինակը տպագրվել է Գ. Սրվանձտյանի «Մանանայում» (Կ. Պոլիս, 1876): Մեկ այլ տարբերակ հրատարակվել է Կոմիտասի և Մ. Աբեղյանի «Հազար ու մի խաղ» ժողովածուում (Բ հիսնյակ, Թիֆլիս, 1905) և այլն:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ Լ I, 1907, էջ 78-79, այնուհետև՝ Լ II, 1908, էջ 114-115 և նույն դասագրքի հետագա տարիների հրատարակություններում, ապա՝ ԵԺ I, 233:

Արտատպվում է Լ I-ից:

ԽՆՈՑԻ

(«Հարի՛, հարի՛, խնոցի՛...»)
(էջ 251) (ԵԼԺ 1, էջ 232)

Ակունքը ժողովրդական է: Նախօրինակը տպագրվել է Ե. Լալայանի «Ազգագրական հանդեսում» (գիրք 11, 1904):

Ժողովրդական երգի 10 տողերից Թումանյանն ընտրել է 4-ը (5-8 տողերը), մշակել, բանահավաքի «Խնոցու երգը» վերնագիրը դարձրել «Խնոցի»:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

ԳԱԹ Թֆ №47(100Բ)-ում պահվում է մեկ սևագիր-ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է՝ Լ I, 1907, էջ 85, այնուհետև՝ Լ I, 1908, էջ 91, ապա՝ ԵԺ I, 225:

Արտատպվում է 1908 Թ. Լ I-ից:

1908

ԾԱԳՈՒՄՆ

(«Ելնում է ահա նագելի փառքով...»)
(էջ 252) (ԵԼԺ 1, էջ 233)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ ԹՖ №48 (50)-ում պահվում է ուրիշի ձեռքով արտագրված մի օրինակ: Նույն տեղում №1355-ում պահվում է նաև ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանն ուղղել է վրիպակները, 7-րդ տողի «երկնքից ծագած» բառերի փոխարեն լուսանցքում գրել է հարցական և անվերնագիր ստանավորը վերնագրել «Ծագումն»:

Առաջին անգամ, «Ծագումը» վերնագրով, տպագրվել է Հուշ. 1908, 18 մարտի, №1, էջ 6, այնուհետև նույն տարին, առանց վերնագրի ԲԲ, էջ 58, ապա ԵԺ I, 152:

Տպագրվում է ԲԲ-ի Թումանյանի ուղղած բնագիրը:

Ստանավորում բանաստեղծը նկատի ունի ստեղծագործական ոգևորության պահը:

ՃԱԽԱՐԱԿ

(«Մանի՛, մանի՛, ճախարակ...»)
(էջ 253) (ԵԺ 1, էջ 234)

Ակունքը ժողովրդական է: Նախօրինակը տպագրվել է Ե. Լալայանի «Ազգագրական հանդեսում» (գիրք 11): Ժողովրդական երգի 40 տողից Թումանյանն ընտրել է 14-ը, հյուսել միմյանց, փոխել բարբառային լեզուն և «Ճախարակի երգ» վերնագիրը տեղծելով բոլորովին նոր բանաստեղծություն:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ, «Այրի կնոջ երգը» վերնագրով, տպագրվել է Լ II, 1908, էջ 51, այնուհետև «Ճախարակ» վերնագրով Լ III, 1909, ԲՊ, էջ 133, «Ժողովրդական երգեր» բաժնում, ապա ԵԺ I, 154:

Արտատպվում է ԲՊ-ից:

Ինչպես նշում է Է. Չրբաշյանը, այս բանաստեղծության վրա իր ազդեցությունն է թողել նաև Ապայանի 1882 թ. գրած «Ճախարակը»: Համեմատելով երկու բանաստեղծությունները Չրբաշյանը գրում է. «Թումանյանն ավելի խորացված և ընդհանրացված ձևով է արտահայտում համանման «բանաստեղծական իրագրության» հիմնական տարրերը: Երկուսի մեջ էլ պատմողի դերում հանդես է գալիս ճախարակի վրա աշխատող ու երգող գեղջկուհին: Մի դեպքում չորս անգամ հնչում է «Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ» կրկներգը, մյուսի մեջ երկու անգամ «Մանի՛, մանի՛ ճախարակ» տողը: Երկու երգերի մեջ էլ գեղջկուհին այրի է, նրա ուսերին ընկել է որբ երեխաների ծանր հոգսը» (Է. Չրբաշյան, Թումանյանը և հայ գրականության ավանդույթները, էջ 155):

ՓՈՔՐԻԿ ԵՐԿՐԱԳՈՐԾ

(«Եկավ գարուն, եկան հավքեր...»)
(էջ 254) (ԵԼԺ 1, էջ 235)

Ակունքը ժողովրդական է: Նախօրինակը տպագրվել է Գ. Սրվանձտյանի «Համով-հոտով» (Կ. Պոլիս, 1884) ժողովածուում:

Ժողովրդական երգն ունի 54 տող, որոնցից Թումանյանն ընտրել է առաջին 9 տողերը:

Գրութ յան թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ Լ II, 1908 էջ 85, այնուհետև՝ Լ III, 1909, էջ 103-104, Լ III, 1920, էջ 100, ապա՝ ԵԺ I, 241:

Արտատպվում է 1920, Լ III-ից:

ՔԱՄԻՆ

(«Ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ...»)
(էջ 255) (ԵԼԺ 1, էջ 236)

Գրութ յան թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ Լ I, 1920, էջ 87, այնուհետև՝ ԵԺ I, 224:

Արտատպվում է Լ I-ից:

ԱՐՏՈՒՏԻԿ

(«Արտուտիկ...»)
(էջ 256) (ԵԼԺ 1, էջ 237)

Ակունքը ժողովրդական է: Նախօրինակը տպագրվել է Գ. Սրվանձտյանի «Համով-հոտով» գրքում:

Գրութ յան թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ Լ I, 1908, էջ 90, Լ I, 1920, էջ 86, այնուհետև՝ ԵԺ I, 228:

Արտատպվում է 1908, Լ I-ից:

ԿԱԼԻ ԵՐԳԸ

(«Ախր, եկը ջան, Միրան ջան...»)
(էջ 257) (ԵԺ 1, էջ 238)

Ակունքը ժողովրդական է: Համանարար Թումանյանն օգտվել է բանավոր ապրյուրներից (այս մասին տե՛ս «Կալի երգ» (Լոռեցոնց) առանձնաթերի ծանոթագրություններ):

Գրության թվականն առայդ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ է II, 1908 էջ 110, այնուհետև՝ է III, 1909, էջ 145, տպա՝ ԵԺ I, 239:

Արտատպվում է է III-ից:

ԴԺԱՐ ՏԱՐԻ

(«Վարի՛, պաչան ջան, վարի՛...»)
(էջ 258) (ԵԺ 1, էջ 239)

Ակունքը ժողովրդական է: Նախօրինակը տպագրվել է «Էմինյան ազգագրական հանդեսում» (հ. Ջ, Մոսկվա-Վաղարշապատ, 1906):

Ժողովրդական հորովելը 75 տող է: Գրանցից Թումանյանն ընտրել է մի մասը, փոխել բարբառային լեզուն, ավելացրել տողեր, հղկել ու ստեղծել բոլորովին նոր բանաստեղծություն:

Գրության թվականն առայդ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ ՖՖ №15 բ-ում պահվում է Հակ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը չնչել է «ժողովրդականից» ևնթավերնագիրը:

Առաջին անգամ տպագրվել է՝ Հակ, 1908, №7, էջ 246, այնուհետև՝ ԲՊ, էջ 131, «ժողովրդական երգեր» բաժնում, տպա՝ ԵԺ I, 155:

Արտատպվում է ԲՊ-ից:

ԱՌԱԿՈՏ

(«Հավը խոսեց երեք բերան... »)
(էջ 259) (ԵԺ 1, էջ 240)

Գրության թվականն առայդ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ Թֆ №1794-ում պահվում է 1908 թ. լ II-ի օրինակը, որտեղ, ըստ երևույթին ցանկանալով փոխել բանաստեղծության վերնագիրը, Թումանյանը լուսանցքում գրել է՝ «? Արեգակ»:

Առաջին անգամ տպագրվել է՝ Հսկ, 1907, №12, էջ 405, այնուհետև լ II, 1908, էջ 3 և լ II, 1909, էջ 3: Վերջինիս մեջ բանաստեղծը կրճատել է 9-12-րդ տողերը: Ապա տպագրվել է ԵԺ I, 222:

Արտատպվում է Հսկ-ից, քանի որ լ II-ի բնագիրը չարմարեցված է դասագրքի պահանջներին:

«Է՛հ, Ո՞վ ԳԻՏԻ, ՄԵՆՔ ԱՊԻԿԱՐ...»
(էջ 260) (ԵԼԺ 1, էջ 241)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

ԳԱԹ Թֆ №50 (51)-ում պահվում է ուրիշի ձեռքով արտագրված մեկ օրինակ: Առաջին անգամ տպագրվել է ԲԲ, էջ 57, այնուհետև ԵԺ I, 153:

Արտատպվում է ԲԲ-ից:

1909

ՎԱՅՐԷՋՔ

(«Քառասուն տարի բըռնած ճանապարհ...»)
(էջ 261) (ԵԼԺ 1, էջ 242)

Գրված է 1909 թ. փետրվարի 7-ին, հեղինակի ծննդյան 40-ամյակի օրը, Թիֆլիսի Մետեխի բանտում:

ԳԱԹ Թֆ №51(66)-ում պահվում է սևագիր-ինքնագիրը, թվագրված «1909 փետր. 7/20», հետագայում մատիտով կատարված ուղղումներով:

Առաջին անգամ, «Իմ ծննդյան քառասնամյակի առթիվ» ենթավերնագրով, տպագրվել է «Գործ» (Թերթ), 1909, 5 ապրիլի, №69, այնուհետև ՆՀ, 1913, №1, էջ 71, ԲՊ, էջ 33-34, ապա՝ ԵԺ I, 157:

Արտատպվում է ԲՊ-ից:

Թումանյանի բանտարկության և այս բանաստեղծության գրության շարժառիթների մասին խոսում են Ավ. Իսահակյանը, Լեոն, Աշխեն Թումանյանը և ուրիշներ: Իսահակյանը գրում է. «1908 թվի դեկտեմբեր ամսին, ցարական ժանդարմերիան Օհաննեսին և ինձ ձերբակալեց և, զանազան հակապետական մեղադրանքով, վեց ամիս պահեց Թիֆլիսի Մետեխի բանտում: Կամերաներով դրացի էինք իրար: Բանտում լրացավ, փետրվար ամսին, Օհաննեսի 40-ամյակը: Այդ առիթով նա գրեց «Վայրէջք»

բանաստեղծությունը: Մենք տխրության ու ուրախության խառն զգացմունքով տոնեցինք նրա տարեդարձը» (տե՛ս ԹԺՀ, էջ 19):

Նվարդ Թումանյանը հիշում է. «Մի օր՝ տեսակցության ժամանակ, հայրիկը Թամարին գրկելիս բարակ ծխախոտի թուղթ դրեց երեխայի գրպանը: Եկանք տուն, տեսանք ծխախոտի թղթի վրա գրված «Մի կաթիլ մեղրը» և «Վայրէջքը»: Վերջինը գրել էր ծննդյան 40-ամյակին՝ 1909 թվականի փետրվարին» (տե՛ս Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1987, էջ 90-91):

Հիշում է նաև, թե տարիներ անց՝ 1920 թ. մայիսի 19-ին, ինչ է ասել հայրը իր այդ բանաստեղծության մասին. ««Վայրէջքը» իմ ամենալավ բանաստեղծություններից է, շատ է լավը, Մետեխի բանտում եմ գրել ծննդյանս 40-ամյակի օրը» (նույն տեղում, էջ 231):

ԴԱՐՆԱՆ ԱՌԱՎՈՏ

(«Բարի լուսի զանգեր զարկին...»)
(էջ 262) (ԵԼԺ 1, էջ 243)

Ակունքը ժողովրդական է: Նախօրինակը, «Ամառ» վերնագրով, տպագրվել է Աղեք. Մխիթարյանցի «Տաղեր ու խաղերում»:

Ժողովրդական երգն ունի յոթ քառատող, որոնցից Թումանյանն ընտրել է չորսը՝ վերադասավորելով, փոխել տողեր ու բառեր, լեզուն դարձրել գրական-ժողովրդական, նախ վերնագրել «Գարուն», ապա «Գարնան առավոտ»՝ կերտելով բոլորովին նոր բանաստեղծություն:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

ԳԱԹ ԹՖ №180 (144)-ում պահվում է «Հին կռիվը» պոեմի մի հատվածի սևագիր-ինքնագիրը, որտեղ Թումանյանը գրում է. «Առավոտը գյուղում երգում են», ապա մեջ է բերում այս բանաստեղծության առաջին քառատողը:

Առաջին անգամ, «Գարուն» վերնագրով, տպագրվել է՝ Հսկ, 1909, №6-7, էջ 221: Նույն թվականին, «Գարուն առավոտ» վերնագրով՝ Լ III, էջ 96-97, այնուհետև, «Գարնան առավոտ» վերնագրով՝ ԲՊ, էջ 129-130, «Ժողովրդական երգեր» բաժնում, ապա՝ ԵԺ I, 156:

Արտատպվում է ԲՊ-ից:

ԳԵՏԱԿԸ

(«- Ո՞ւր ես վազում...»)
(էջ 263) (ԵԼԺ 1, էջ 244)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Ժողովրդական ակունքներ ունեցող այս ստեղծագործությունը հիշեցնում է հայրեններից և ժողովրդական երգերից եկող «Մանուկն ու ջուրը» շարքի չափածո գործերը, հմմտ.՝ «Տաղ ջրի վրայ է ասացեալ», Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 152-153:

Առաջին անգամ տպագրվել է՝ Լ II, 1909, էջ 112, այնուհետև՝ նույն դասագրքի հետագա տարիների հրատարակություններում, ապա՝ ԵԺ I, 236-237:

Արտատպվում է Լ II-ից:

«ՆՈՐԻՑ ԵԿԱՆ ԷՆ ՀԱՎՔԵՐԸ...»
(էջ 265) (ԵԼԺ 1, էջ 246)

Ակունքը ժողովրդական է: Նախօրինակը, «Տաղ չորս տարերայց գարնան, ամռան, աշնան և ձմռան» վերնագրով, տպագրվել է՝ Կ. Կոստանյանց, «Նոր ժողովածու», Գ պրակ, Թիֆլիս, 1896, էջ 16-18 :

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Պատկանում է ժողովրդական երգերի ցումանյանական մշակումների այն շարքին, որոնց մեծ մասը տպագրվել է 1900-ական թվականներին «Լուսաբերում»: Այստեղից կարելի է ենթադրել, որ գրված է նույն ժամանակ:

ԳԱԹ ԹՖ №52 (87)-ում պահվում են մեկ լրիվ և մեկ թերի ինքնագրեր:

Առաջին անգամ Ա ինքնագրից տպագրվել է՝ ԴԵ, էջ 121-122, այնուհետև՝ ԵԺ I, 520-521:

Տպագրվում է Ա ինքնագրից:

ԱՎԵՐԱԿՈՒՄ

(«Մոլոր, մենակ ես շըրջում եմ...»)
(էջ 267) (ԵԼԺ 1, էջ 248)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ է. IV, 1909, էջ 167-168, այնուհետև՝ ԵԺ I, 158-159:

Արտատպվում է է. IV-ից:

ՕՐ. Պ. Պ.-ԻՆ

(«Քույրիկ, այդքան որ սիրում ես...»)
(էջ 269) (ԵԼԺ 1, էջ 250)

Թուխյան Թվականն առույգ Տալյանի չէ: Չեռագրից կարելի է ենթադրել, որ գրված է 1900-ական թվականներին:

Նվիրված է Պ. Պռոշյանի դուստր Պերճանուշ Պռոշյանին:

ԳԱԹ ԹՖ №53 (54) ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ I, 518:

Տպագրվում է ինքնագրից:

1910

PARODIA

(«Իմ Տալրևիքը տեսե՞լ ես, ասա՜...»)
(էջ 270) (ԵԼԺ 1, էջ 251)

Գրված է 1910 թ., որպես պարոդիա Հովհաննես Հովհաննիսյանի «Իմ Տալրևիքը տեսե՞լ ես, ասա» բանաստեղծության:

ԳԱԹ ԹՖ №54 (94)-ում պահվում է վերջին երեք քառատողերի ինքնագիրը: Առաջին անգամ, առանց վերջին երկու քառատողերի, որոնք, բան երևույթին, արգելել է գրաքննություն, տպագրվել է՝ Հր, 1910, 18 ապրիլի, №83: Ամբողջական բնագիրը հրատարակել է Երվանդ Շահազիզը՝ ՆՈՒ, 1931, պիրք երկրորդ, էջ 136, այնուհետև՝ ԵԺ I, էջ 160-161:

Արտատպվում է ՆՈՒ-ից, որը համեմատվել է բնագրի հետ:

Հովհաննիսյանի բանաստեղծությունը գրված է 1880 թ., Մոսկվայում հետաքրքիր Տալրևիքի կարոտով ապրող պատանի Տալ ուսանողի անկեղծ ներշնչումով: Թումանյանն իր պարոդիայում ամենևին չի կասկածում երիտասարդ բանաստեղծի անկեղծությանը, նա միայն ցավում է, որ նոր սերունդը արդեն քիչ հիմք ունի այդպիսի ոգևորության համար: Սա այն տրամադրությունն է, որ ավելի որոշակի պիտի առարկավեր ավելի ուշ գրված «Մեր նախորդներին» Տալանի բանաստեղծության մեջ:

ՍՈՍԱԿԻ ՎԻՇՏԸ

(«Մի օր տեսավ օտար թըռչուն...»)
(էջ 272) (ԵԼԺ 1, էջ 253)

Ակունքը ժողովրդական է: Նախօրինակը տպագրվել է Կոմիտասի և Մ. Աբեղյանի «Հազար ու մի խազ» ժողովածուում (Բ հիսնյակ):

Թումանյանը պահպանել է ժողովրդական երգի լեզվաոճական տարրերը, կրճատել որոշ տողեր, դրանց տեղ ավելացրել նորերը, փոխել տողերի դասավորությունը, վերնագրել «Սոսկակի վիշտը» ստեղծելով բոլորովին նոր բանաստեղծություն:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ, «Ժողովրդական» ենթավերնագրով, տպագրվել է՝ ՀՍԿ, 1910, №11, էջ 309, ստորագրված՝ «Կազմեց Հ. Թ.», այնուհետև, առանց ենթավերնագրի՝ ԲՊ, էջ 137-138, «Ժողովրդական երգեր» բաժնում, ապա ԵԺ I, 162:

Արտատպվում է ԲՊ-ից:

ԿԱՔԱՎԻ ՈՂԲԸ

(«Կըտուցը լիքը արին...»)
(էջ 273) (ԵԼԺ 1, էջ 254)

Նախօրինակը ժողովրդական երկու տարբեր երգեր են: Առաջինը տպագրվել է Մ. Միանսարյանցի «Քնար հայկական» ժողովածուում, երկրորդը՝ «Մասիսում» (1884, էջ15), Թումանյանը միացրել է երկու երգերը, կրճատել, վերադասավորել մի շարք տողեր, փոխել բառեր, առաջին երգի միջնադարյան հայերենը և երկրորդի բարբառը վերածել գրական-ժողովրդական հայերենի, իր կողմից ավելացրել Բ և Դ հատվածները՝ ստեղծելով բոլորովին նոր բանաստեղծություն:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ ԹՖ №1360-ում պահվում է Հսկ-ի՝ հեղինակի սեփական օրինակը, որի վրա Թումանյանն ուղղումներ է կատարել, որոնք հիմնականում արտահայտվել են հետագա հրատարակության մեջ: Այստեղ վերնագրից վեր մատիտով գրել է. «Սկիզբը՝ «Կաքավի գովքը»:

Առաջին անգամ տպագրվել է՝ Հսկ, 1910, №12, էջ 131-132՝ «Ժողովրդականից» ենթավերնագրով, այնուհետև, առանց ենթավերնագրի՝

ԲՊ, 141-144, «Ժողովրդական երգեր» բաժնում, ապա՝ ԵԺ I, 166-167։
Արտատպվում է ԲՊ-ից։

1911

ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՋՈՒՐԸ

(«Ամպոտ սարեն ուրախ ձենով...»)
(էջ 276) (ԵԺ 1, էջ 257)

Նախօրինակը միջնադարյան ժողովրդական երգ է, որ հրատարակվել է մի շարք ժողովածուներում՝ Դամատ Քաֆիպա «Ազգային երգարան» (Թիֆլիս, 1856), Մ. Միանսարյանց «Քնար հայկական», Կ. Կոստանյանց, «Նոր ժողովածու» (Բ պրակ, Թիֆլիս, 1892) և այլն։

Հավանորեն Թումանյանն օգտագործել է «Նոր ժողովածուի» տարբերակը։ Սրա 32 տողից բնարել է առաջին 15-ը, ժողովրդական երգի միջին հայերենը վերածել գրական լեզվի, փոխել մեկ տող և մի քանի բառ, դուրս թողել հաճախ կրկնվող «Հա՛յ» ձայնարկությունը, միջնադարյան երգերում «երիտասարդ» իմաստով օգտագործված «մանուկ» բառին տվել ժամանակակից իմաստը։ Դրանով հիմնովին փոխվել է բանաստեղծության բնույթը։

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է՝ Հսկ. 1911, №1, էջ 20, այնուհետև՝ ԵԺ I, էջ 164։

Արտատպվում է Հսկ-ից։

Այս ժողովրդական երգը մշակել է նաև XVII դարի բանաստեղծ Երեմյա Չելեպի Քյոմուրճյանը։

ԳԱՐՆԱՆ ՀՐԱՎԵՐ

(«Բացվում են գարնան...»)
(էջ 277) (ԵԺ 1, էջ 258)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է՝ Հսկ. 1911, №3, էջ 66-67, այնուհետև՝ ԵԺ I, 163։

Արտատպվում է Հսկ-ից։

ԵՐԿՈՒ ՀՈԳԻ

(«Մարդիկ կյանքում իրար համար...»)
(էջ 278) (ԵԼԻ 1, էջ 259)

Գրված է 1912 թ., մինչև մարտի 20-ը, երբ Պետերբուրգում ավարտվել է, այսպես կոչված, «Դաշնակցության գործի» քննությունը կամ «159-ի դատավարությունը», և Թումանյանն անպարտ է ճանաչվել:

ԳԱԹ ԹՖ №339(262)-ում պահվում է մեկ ինքնագիր, իսկ ԹԹԳԳ 1079/55-2-ում՝ մեկ ինքնագիր օրինակ, որ փոքր-ինչ տարբերվում է ինքնագրից: Այստեղ չկա ենթավերնագիրը և տողատակ ունի ծանոթագրություն. «Պաշտպան և պրոկուրոր չպետք է նեղ մտքով հասկանալ», իսկ վերջում. «Պատասխան Գրուզենբերգին, թե Դուք շատ եք ուրախ, շատ եք հանգիստ նայում Ձեր գործին»:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԳԹ, 1940, 30 հունվարի, №18, այնուհետև՝ ՍԳ, 1943, №3, էջ 89, ապա՝ ՈՒՀ 2, 244:

Տպագրվում է ինքնագրից:

Նվիրված է Օսկար Օսիպովիչ Գրուզենբերգին, որ պետերբուրգյան դատավարության ժամանակ եղել է Թումանյանի փաստաբանը, լայնահայաց մի մտավորական, որ շատ լավ է հասկացել այդ դատավարության իրական իմաստը: Աշխեն Թումանյանի վկայությամբ՝ նա հաճախ է կրկնելիս եղել. «Սա ինտելիգենցիայի իսպառ ոչնչացումն է» (տե՛ս ԹԺՀ, էջ 641):

Աշխենը հետաքրքիր հուշեր է թողել նաև Գրուզենբերգի՝ իր պաշտպանյալի հետ ունեցած հանդիպումների մասին. «Նու, սիրելիս,- հաճախ դիմել է նա բանաստեղծի դստերը,- ես հուսահատվում եմ, ձեր հոր գործը շատ է լուրջ, մեղադրանքը՝ ծանր, իսկ նա չի ուզում հասկանալ, գնում եմ մոտը՝ գործի հետ ծանոթանալու, իրեն նախապատրաստելու, չէ՞ որ շուտով կսկսվի նրա գործի քննությունը, վկաների հարցաքննումը, դրանց մեջ կան մարդիկ, որ հատուկ եկել են նրան խորտակելու: Ասում, ներշնչում եմ նրան այս բոլորը, իսկ նա՝ ոչ մի ուշադրություն, շատ հմուտ կերպով խոսքը դարձնում է գրական ու փիլիսոփայական հարցերի շուրջ, և ցավալին այն է, որ նրան հաջողվում է ինձ գրավել այդ նյութով: Երկու ժամ մոտը մնալուց հետո դուրս եմ գալիս փողոց և նոր եմ սթափվում ու հասկանում, որ ըստ էության գործի վերաբերյալ իրենից ոչինչ չիմացա: Սիրելիս, կլինեք մոտը, հայտնեցեք, ծանր հետևանքներ են սպասում նրան, որ նա ինձ օգնի» (տե՛ս նույն տեղում, էջ 639):

Թումանյանն, իհարկե, վերջիվերջո նրան ծանոթացնում է իր գործի էությանը, որը հանգամանացնում է փաստաբանին: Իսկ երբ դատավարության ընթացքում լսում է իր պաշտպանյալի ելույթը, նրա մասին հուզված նկատում է. «Ինձ մնում է ասել՝ գնա, փաթաթվիր քո սպիտակ պրոշակի մեջ և հանգիստ քնիր: Ես շրաժարվում եմ քեզանից» (տե՛ս նույն տեղում, էջ 644):

Թումանյանն այս բանաստեղծությունն առաջին անգամ կարդացել է Պետերբուրգի «Դոնոն» ռեստորանում դատավարության հաջող ավարտի կապակցությամբ փաստաբանների կազմակերպած ընթրիքի ժամանակ (տե՛ս նույն տեղում, էջ 645):

1913

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎՐԱ

(«Հոդմերի առջև ցրված, հալածված...»)
(էջ 280) (ԵԼԺ 1, էջ 261)

Գրության իմպուլսը տասնյակ հայտնի չէ: Սակայն 1913 թ. հունվարին Թումանյանը «Հորիզոնի» 7, 9, 11, 14 համարներում տպագրում է մի հոդվածաշար՝ «Հայկական հարցն ու իր լուծումը» վերնագրով, որտեղ բարձրացված խնդիրները ուղղակիորեն առնչվում են այս բանաստեղծության հետ: Ուստի բնական է ենթադրել, որ բանաստեղծությունը գրված պիտի լինի հենց այդ օրերին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ Հր, 1913, 6 հունվարի, №4, այնուհետև, զգալի կրճատումներով և տառոց վերնագրի՝ ԵԺ I, 168:

Արտատպվում է Հր-ից:

«ՏԱՂՈՎ ԵԿԱՎ...»
(էջ 282) (ԵԼԺ 1, էջ 263)

Գրված է 1913 թ. ապրիլի 5-ին: Նույն օրը Թումանյանն այս ոտանավորը կարդացել է Հայ գրողների կովկասյան ընկերության նախաձեռնությամբ Սայաթ-Նովայի հիշատակին նվիրված երեկոյին:

Առաջին անգամ տպագրվել է՝ Հր, 1913, 7 ապրիլի, №77:

Սայաթ-Նովայի մահարձանի պատրաստումը և տեղադրումը

կազմակերպող հանձնաժողովի նիստերից մեկի ժամանակ առաջարկություն է լինում մահարձանին փորագրել Թումանյանի այս էքսպրոմտը: Բանաստեղծը կտրականապես դեմ է արտահայտվում պատճառաբանելով, թե եթե կարիք կա մահարձանին որևէ բան փորագրելու, ապա դա պետք է լինի միայն Սայաթ-Նովայի բանաստեղծություններից: Այդպես էլ մահարձանին որևէ բան չի փորագրվում:

Արտատպվում է Հր-ից:

«ԹԵՊԵՏԵՎ ԲԱԽՏԸ ՄԵՋ ՇԱՏ ՀԱՐՎԱԾԵՑ...»
(էջ 283) (ԵԼԺ 1, էջ 264)

Հավանաբար գրված է 1913 թ. հոկտեմբերի 13-ին, քանի որ նույն օրը, Գրողների ընկերության անունից հանդես գալով հայ գրերի գյուտի 1500-ամյա և տպագրության 400-ամյա հոբելյանների առթիվ Ներսիսյան դպրոցում կազմակերպված երեկույթին, Թումանյանը կարդացել է այս բանաստեղծությունը:

29-րդ տող – Այս տողը ուղղակիորեն վկայում է, որ բանաստեղծությունը գրվել է զույգ հոբելյանների առիթով: Միաժամանակ բանաստեղծության ընդհանուր ուղղվածությունը ցույց է տալիս, որ այն ուղղակիորեն կապված է Թարգմանչաց տոնի հետ, որն ըստ հայոց եկեղեցու չարժական տոմարի ընկնում էր հոկտեմբերի առաջին կեսին:

Միջնադարից եկող ընդհանրացած գրական ավանդույթով Թարգմանչաց տոնի առիթով բանաստեղծություններ էին գրվում:

Գրերի գյուտի և հայկական տպագրության զույգ հոբելյանները ևս կատարվել են Թարգմանչաց տոնի 1913 թ. նշվող օրերին, երբ գլխավոր հոբելյանական հանդիսությունները Մայր Աթոռում տեղի ունեցան հոկտեմբերի 11-14-ին: Նույն օրերին հոբելյանական հանդիսություններ տեղի ունեցան հայկական բոլոր կենտրոններում, այդ թվում նաև Թիֆլիսում: (Թարգմանչաց տոնին կատարված զույգ հոբելյանների մանրամասն նկարագրությունը տե՛ս «Արարատ» ամսագրի 1913 թ. հոկտեմբեր համարի հավելվածում):

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ Հր., 1913, 17 հոկտեմբերի, №233, այնուհետև՝ ԵԺ I, 170-171:

Արտատպվում է Հր-ից:

ՔԱՋ ԿԻՎԻԼԸ

(«Ճախինևրում, գևտին մոտիկ...»)
(Լ, 285) (ԵԼԺ 1, Էջ 266)

Ակունքը ժողովրդական է: Նախօրինակը, «Հանդես Թիֆլիսոց» վերնագրով, տպագրվել է Գ. Սրվանձտյանի «Համով-հոտով» գրքում:

Ժողովրդական երգն ունի 28 տուն, որոնցից Թումանյանն ընտրել է 4-ը (1, 3, 11, 23), բարբառը վերածել գրական-ժողովրդական լեզվի, սկզբից ավելացրել երկու նոր տուն, փոխել տողեր ու բառեր, վերնագրել «Քաջ կիվիլը» կերտելով միանգամայն նոր բանաստեղծություն:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Հակ, 1914, №2, էջ 37-38՝ «Ժողովրդականից» ենթավերնագրով, այնուհետև, առանց ենթավերնագրի՝ Լ V, 1914, էջ 191-193, տպա՝ ԵԺ I, 242-243:

Արտատպվում է Լ V-ից:

ՎԵՐՋԻՆ ՏԱԳՆԱՊԸ

(«Վեր է կացել հին վիշապը նոր թափով...»)
(Լ, 287) (ԵԼԺ 1, Էջ 268)

Գրված է 1914 թ. նոյեմբերի 3-ին, Բաքվում, ինչպես թվագրված են հրատարակություններր:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Արև, Բաքու, 1914, 5 նոյեմբերի, №175, այնուհետև՝ Հր, 1914, №250, տպա, առանց 3-րդ և 5-րդ քառատողերի՝ ԵԺ I, 175:

Արտատպվում է Հր-ից:

Բանաստեղծությունն արտահայտում է պատերազմի սկզբում հայ մտավորականության համակած այն հույսերն ու սպասելիքներր, թե չուտով օսմանյան կայսրությունը կփլուզվի, և Արևմտյան Հայաստանը կազատագրվի: Ակնարկություններ կային հատկապես «հյուսիսի արծվի», այսինքն՝ ռուսական բանակի արագ առաջխաղացումից և բուռն թափ առացած հայ կամավորական շարժումներից:

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

(«Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռում...»)
(էջ 288) (Եվժ 1, էջ 269)

Գրված է 1915 թ. հունվարին:

Ինքնագիրը չի պահպանվել:

25-26 տողեր – Ապագայի հանդեպ ընդհանուր լավատեսությունը արտահայտվել է վախճանաբանական ըմբռնումների հետևողությամբ՝ ընդհանրական հայության և արդարների հոգիների լուսապայծառ ճառագելու մասին գրվածքներին համահունչ:

Առաջին անգամ տպագրվել է՝ Հր հավելված, 1915, 8 փետրվարի, №12, այնուհետև՝ ՆՀ, 1915, №1, (լույս է տեսել օգոստոսին), էջ 3, ՀՀ, էջ 5-6, ԲՊ, էջ 35-36, ապա՝ ԵԺ I, 179-180:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ՁԵՌԱՅ»

(«Արդո պարոններ, հայրեր սրբազան...»)
(էջ 290) (Եվժ 1, էջ 271)

Գրված է 1915 թ. մարտին, Թիֆլիսում, մի խնջույքի ժամանակ:

ԳԱԹ ԹՖ №55 (7 լրացուցիչ)-ում պահվում է մեկ օրինակ՝ ուրիշի ձեռքով գրված, թվագրված՝ «1915, III»: ԹԹԳԳ1079/9-1-ում պահվում է մեկ օրինակ ևս: Դրանցից բացի ԳԱԹ ԹՖ №57(62) և №56 (72)-ում պահվում են ուրիշի ձեռքով արտագրված երկու օրինակ:

Առաջին անգամ, ԳԱԹ ԹՖ №57(62)-ում պահվող ուրիշի ձեռքով արտագրված օրինակից, տպագրվել է ԽՀ, 1935, 23 մարտի, №68, այնուհետև՝ ԵԺ I, 525:

Տպագրվում է Բ օրինակից:

Թումանյանի ստեղծագործական հոգեբանության մեջ ամենուրեք ծխա ցող այս թախիծը նոր չէ, որ արտահայտվում է նրա քնարերգության մեջ: Դրա վկայություններից է, օրինակ, դեռևս 1899 թ. գրված հայտնի ալբոմային երկտողը:

Էլ չեմ կարող գրել ձեռաց,
Սիրտս վաղուց է մեռած...

ՎԵՐՋԻՆ ՕՐԸ

(«Եփրատի ափին դևմուգեմ նկած...»)
(Լ, 291) (ԵԼԺ 1, Լ, 272)

Գրված է 1915 թ., հավանաբար ապրիլի 24-ին տեղի ունեցած Դիլմանի ճակատամարտի ազդեցության տակ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Հր, 1915, 2 մայիսի, №94: Նույն ժամանակ «Արարատ» ամսագրի ապրիլ-մայիս միացյալ համարում: Այնուհետև՝ ՀՀ, Լ, 50-53, որտեղից և արտատպվում է:

Լուսիկ Կարապետյանը, անդրադառնալով մի կողմից արևմտահայության կոտորածներին, մյուս կողմից՝ կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի հայկական կազմավորական չոհատների քաջագործություններին, այս բանաստեղծության մասին գրում է. «Այդ տպի, տագնապների, հպարտանքի ու սպասումներով լի օրերին մայիսի 2-ին, «Հորիզոնում» հրապարակվեց Թումանյանի «Վերջին օրը» բանաստեղծությունը, որ այդ միջոցին հնչեց որպես ոգևի կոչ ուղղված կռվող հայ մարտիկներին և սիփոփանք խուճապի ենթարկված, իր կորուստները սգացող հայ ժողովրդի համար» (տե՛ս Լ. Կարապետյան, Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը, Երևան, 1992):

«ՇՈՒԽ Է ԳԱԼԻՍ ՄԱՆՐ ՔԱՐԸ...»
(Լ, 294) (ԵԼԺ 1, Լ, 275)

Գրված է 1915 թ. հունիսի 14-ին, Վանում:

ԳԱԹ ԹՓ №257-ում պահվում է մեկ ինքնագիր: Նույն տեղում, №58 (71)-ում ուրիշի ձեռքով արտագրված մեկ օրինակ:

Առաջին անգամ տպագրվել է «Աշխատանք» (շաբաթաթերթ, Վան), 1915, 24 հունիսի №27, այնուհետև՝ ԵԺ I, 176:

Արտատպվում է «Աշխատանքից»:

Նկարագրելով Թումանյանի այցը Վան՝ Սողոմն Զրբաշյանը հիշում է տեղի երիտասարդ մտավորականների հետ բանաստեղծի հանդիպումը Սաֆրաստյանների այգում և ռուանավորի գրույցի հանգամանքների մասին հայտնում. «Այդ գիշեր, լսածի ու տեսածի ազդեցության տակ, նա գրավ ընդմիջման մի քանի րոպեներ, առանձնացավ ու գրեց երեք տնից բաղկացած մի ռուանավոր, կարդաց նույն երեկոյին: Հիշում եմ այդ

ոտանավորի մի տունը, որն այսպես էր.

Հե՛յ, ջան տղերք, ուս տվեք ո՛ւս.
Միահամուռ, միաբան,
Հե՛յ, ջան տղերք, ուժ տվեք, ո՛ւժ,
Քարը մուտ է գլորման» (տե՛ս ԹԺՀ, էջ 679):

Քանի որ հավաքույթը տեղի է ունեցել հունիս 18-ին, պետք է ենթադրել, որ Թումանյանն «առանձնացել է» ոչ թե ոտանավորը գրելու, այլ չորս օր առաջ գրածը նորից աչքի անցկացնելու համար:

ԱՂԹԱՄԱՐԻ ԿՂԶՈՒՄ

(«Սըրտիս խորքերեն...»)
(էջ 296) (ԵԺ 1, էջ 277)

Գրված է 1915 թ. հունիսի 16-ին, Աղթամար կղզում:

ԳԱՄ ԹՖ №58 (71)-ում պահվում է ուրիշի ձեռքով արտագրված մի օրինակ, որի 23-րդ տողն ուղղել է Թումանյանը. եղել է «Սերը որ մեռավ», դարձրել է «Սիրտը որ մեռավ»:

Առաջին անգամ տպագրվել է՝ «Աշխատանք» (շարաթաթերթ, Վան), 1915, 24 հունիսի №27, այնուհետև՝ ԵԺ I, 177-178:

Հղացման հոգեբանական ազդակը 24 տարի առաջ գրված «Ախթամար» բալլադն է. դրա ուղղակի վկայությունը մեջբերված «Թամա՛ր... ա՛խ Թամար...» տողն է:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

(«Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը հին...»)
(էջ 298) (ԵԺ 1, էջ 279)

Գրված է 1915 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ Հր. 1915, 15 նոյեմբերի, №258, այնուհետև ՀՀ, էջ 48-49, ԲՊ, էջ 37-38, ապա՝ ԵԺ I, 185-186:

Արտատպվում է ԲՊ-ից:

Բանաստեղծությունը նվիրված է ցեղասպանության զոհերի հիշատակին: «Հայոց մեծ եղեռնի զոհերի բանաստեղծական ոգեկոչումը

Թումանյանը ներկայացրել է որպես հավաքական մի հոգևհանգիստ, որով այս առեղծագործությունը մեծապես վերածվել է եկեղեցական ծեսի բանաստեղծական յուրահատուկ արտահայտության» (տե՛ս Վ. Գևորգյան, Թումանյանը և հայոց հոգևոր ավանդույթը, Երևան, 1910, էջ 83):

17-24 տողեր – «Ս. Պատարագի և Հոգեհանգստյան կարգի ժամանակ սարկավագները, եկեղեցու խորանին և գավիթում դնեց Ս. Սեղանն ու ժողովուրդը բնթանալով, խնկարկում են ու սաղմոսելգում: Ծեսի սարկավագական այս մասը «Հոգեհանգստում» ներկայացվում է հայոց խոսված բնաշխարհի խոլական բնթացքով, ուր գետերը «Թումանյանական վշվշոցով» սաղմոսելգում են, իսկ ամպերը տարածվում այրվող խնկի՝ բուրվառից ելնող թուխանների նման» (նույն տեղում, էջ 84-85):

25-26 տողերով բանաստեղծությունն ավարտվում է՝ հանգուցյալներին հանգստյան կոչելով (նույն տեղում, էջ 85):

ԲԱՐՁՐԻՑ

(«Իմ բարի սրբոի էն մեծ խոհերից...»)
(էջ 300) (ԵԼԺ 1, էջ 281)

Գրությանը թվականն ասույզ հայտնի չէ, բայց բովանդակությունը հուշում է, որ գրված պետք է լինի 1915 թ. «Հոգեհանգիստ» բանաստեղծության հետ միաժամանակ:

Առաջին անգամ տպագրվել է՝ Ամր, 1915, 20 դեկտեմբերի, №1, էջ 25-26, այնուհետև՝ ԵԺ I, 181-182:

Արտատպվում է Ամր-ից:

Բանաստեղծությունը ծրագրային նշանակություն ունի Թումանյանի առեղծագործական աշխարհի տիեզերային-կառուցվածքային հանգույցները ճանաչելու տեսանկյունից (տե՛ս Վ. Կիրակոսյան, «Թումանյանի «Բարձրից» բնաստեղծությունը. (տեքստային վերլուծության փորձ)», «Գրականագիտական հանդես», ԺԵ, 2014, էջ 118-138):

1916

«ՎԱՀԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻՆ»

(«Մեզ մոտ եք եկել ձյունի աշխարհից...»)
(էջ 302) (ԵԼԺ 1, էջ 283)

Գրված է 1916 թ. հունվարին՝ Վ. Բրյուսովի՝ հայոց բանաստեղծության

և պատմության մասին թիֆլիսյան դասախոսությունների օրերին: Բանաստեղծության մեջ արտահայտված մտքերն ու պաղափարները տարբեր ձևերով տեղ են գտել այդ առիթով Թումանյանի հոդվածներում և հրապարակային ելույթներում:

Ահա ինչպես է դիմում նա ռուս բանաստեղծին՝ հիշելով նրա այն խոսքերը, թե՝ «հայոց բանաստեղծությունը հայ ազգի ազնվության վկայականն է». «Այո՛, մեր թանկագին հյուր և ազնիվ բարեկամ, մենք միշտ ունեցել ենք էդ բարձր վկայականը: Բայց էդ վկայականը էն վկայականներից չի, որոնց վրա դրված է մարդկային իշխանության կնիքը, էդ էն վկայականներից է, որոնց վրա բնությունն ու աստված են դրել իրենց կնիքը և դրա համար էլ ինչքան դժվար է դրա ունենալը, նույնքան էլ դժվար է կարդալը: Ա՛ա էն գիրն է, որի մասին մեր Սայաթ-Նովան ասում է.

«Ամեն մարդ չի կանա կարդա, իմ գիրն ուրիշ գրեն է...»:

Դուք եղաք էն հազվագյուտ մարդկանցից մեկը, որ կարողացաք կարդալ էս կախարդական գիրը ամբողջ աշխարհի առջև: Մեզ էս կողմից քիչ են ճանաչում լուսավոր աշխարհքում, և մանավանդ Ռուսաստանում: Ռուսական նշանավոր գրողներից առաջինն եք դուք, որ հռչակավոր ընկերների հետ միասին մեր և մեր եղբայրակից ժողովուրդների ստեղծագործական կարողությունն ու գեղարվեստական գործերը հիացումով հանում եք լայն հրապարակ և փոխադարձ հարգանքի ու սիրո կապերով ժողովուրդները շաղկապում իրար հետ» (տե՛ս «Հորիզոն», 1916, հունվարի 17, №11):

ԳԱԹ ԹՖ №59(74)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ առանց վերնագրի:

Առաջին անգամ, <Վալերի Բրյուսովին> վերնագրով, տպագրվել է՝ ԳԹ, 1940, №18, այնուհետև՝ ԵԺ I, էջ 526:

Տպագրվում է ինքնագրից:

ԴԺՈՒՔԻ ՀԱՆԴԵՊ

(«Հո՛ւշ. հասավ օրը՝ վերջի՛ն, ահավո՛ր...»)
(էջ 303) (ԵԼԺ 1, էջ 284)

Գրված է 1916 թ. փետրվարին, հայկական կոտորածների ծանր ազդեցության տակ:

ԹԹԳԹ1079/36-7-ում պահվում է մեկ ինքնագիր-պատառիկ՝ «Արզրումի անկումից հետո» վերնագրով: Նույն տեղում՝ №1266-ում, պահվում է նաև Հր-ի կտրոնը, որտեղ Թումանյանը փոխել է 12-րդ տողը:

Առաջին անգամ տպագրվել է՝ Հր, 1916, 28 փետրվարի, №46, այնուհետև,

մանակի կրճատումներով ԵԺ I, 148։

Արտատպվում է Հր-ից, տեղինակի կատարած փոփոխություններով։

Ինքնագիր-պատռտիկի հաջորդ երեսին կա տեղինակի հետևյալ ծանոթագրությունը. «Տգամարդկանց կոտորել են, ջարդել կանանց տարել – մնում են պատառ մայրերը, որ հանում են գաշտում թափված իրենց որդիների դիակներին։ Մի-մի ճյուղ առած հետու են քշում գիշերը գիշատիչ գազաններին ու ցերեկը թռչուններին, որ չծվատեն, չուտեն նրանց մարմիններըր»։

Հր, 1916, №47-ում այս բանաստեղծության մասին տպագրվել է հետևյալ ծանոթությունը. «Հորիզոնի անցյալ համարում (№46) Հ. Թում.-ի բանաստեղծության տակ բաց է թողնված գրվելիք ծանոթագրությունը, որ բանաստեղծության մեջ ակնարկված երեխայի արյունը մորը խմեցնելու դեպքը վերջին օրերի իրականությունից է առած»։

Ժամանակակիցներից Արշակ Ջամալյանն իր հուշերում գրում է այս ոտանավորի ստեղծման չարժառիթների մասին. «Լավ հիշում եմ հետևյալ դեպքը... Երբ Մարաիրում վարժապետ սկսեց պատմել, թե ինչպես մեկ հայ կնոջ սոխակ էին խմել սեփական զավակի արյունը սուլթանի կենացը, Թումանյանը նյարդ տեղից և զոզոզոջ քայլերով մեկնեց նիստից։ Մի ամբողջ չորաթ նա հիմանդ էր։ Այս դեպքի ազդեցության տակ է գրված նրա մի ոտանավորը, որից հիշողությանս մեջ մնացել են միայն վերջին երկու տողերը.

Եվ մարդն ամաչի չնից ու գելից,
Որ մարդ է ծնած իրեն նմանից» («Վեմ», 1933, Ա, էջ 22)։

ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(«Բաբելոնի գետակերքին նրստել էին նրանք գերի...»)
(էջ 304) (ԵԼԺ I, էջ 285)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

ԳԱԹ ԹՖ №60 (75)-ում պահվում է մեկ սևագիր-ինքնագիր։

Առաջին անգամ, «Նմանություն» ենթավերնագրով, տպագրվել է՝ Հմբ, 1916, 10 ապրիլի, №16, էջ 507, այնուհետև՝ ԵԺ I, 183։

Արտատպվում է Հմր-ից։

Նմանություն է Բայրոնի անվերնագիր (հայերեն թարգմանությամբ՝ «Գերության մեջ» վերնագրով) մի բանաստեղծության՝ «Հրեական մեղեդիներ» շարքից։ Ինչպես նկատել է բանասեր Մ. Նարյանը (տե՛ս ԳԹ, 1967, 20 հունվարի, №4) երկու բանաստեղծներն էլ մշակել են

աստվածաշնչյան թեման՝ հիմք ունենալով Դավթի ճկզ սաղմոսը: Ահա այն. «Բաբելոնի գետերի մոտ՝ այնտեղ նստած լալիս էինք, երբ հիշում էինք Սիոնը: Նրանց ուռիներից էինք կախել մեր կտակարանները:

Այնտեղ մեզ գերեվարողները օրհնության խոսք էին պահանջում մեղանից, մեզ տարագրողներն ստիպում էին ասելով. «Երգեցե՛ք մեզ համար Սիոնի օրհներգերից»:

Իսկ մենք ինչպե՞ս երգենք Տիրոջ օրհներգերը օտար երկրում:

Եթե մոռանամ քեզ, Երուսաղե՛մ, թող իմ աջը մոռանա ինձ:

Թող լեզուս փիմփիս կպչի, թե քեզ չհիշեմ:

Եթե իմ ուրախության սկզբում նախ քե՛զ, Երուսաղե՛մ, չգովաբանեմ:

Հիշի՛ր, Տե՛ր, թե ինչ էին ասում եդոմացիները Երուսաղեմի օրերին. «Քանդեցե՛ք, քանդեցե՛ք, հիմնահատակ արեք»:

Ո՛վ Բաբելոնի ավերած դուստր, երանի՛ նրան, ով քեզ պիտի հատուցի այնպես, ինչպես դու մեզ հատուցեցիր:

Երանի՛ նրան, ով կբռնի քո մանուկներին ու կխփի քարին»:

Բայրոնն ավելի հարազատ է մնացել սկզբնաղբյուրին: Նրա բանաստեղծության մեջ գերի հրեաները չեն առնում տավիղները և չեն երգում, այլ պարզապես ցավով ու կարոտով հիշում են իրենց հայրենին ու լալիս՝ երանի տալով այն օրվան, երբ աստված կպատժի բաբելացիներին և իրենց կազատի անարդ գերությունից:

Թումանյանը, որ մշակել է աստվածաշնչյան թեման՝ աչքի առաջ ունենալով սեփական ժողովրդի վիճակը, այն էլ կոտորածներից հետո, այնուամենայնիվ, չի կորցրել հավատը հայության ապագայի նկատմամբ: Նրա բանաստեղծության մեջ գերիները երգում են: Նրանց երգը հայրենիքին հավատարիմ մնալու երգում է և վրեժի հրավեր: Այդ երգից հետո գերեվարողները զարմանքով ու վախով նկատում են, որ անկարող են եղել սպանել գերյալների ոգին:

Այս սաղմոսը, որ իր հայրենիքից վտարված հրեա ժողովրդի դառն ճակատագրի արտահայտությունն է, համահունչ լինելով հայ ժողովրդի ազատագրական տենչերին, ստեղծագործական լիցք է տվել նաև Րաֆֆուն և Ավ. Իսահակյանին: Րաֆֆին 1856 թ. գրել է. «Իսրայելը Բաբելոնում» բանաստեղծությունը (տե՛ս Րաֆֆի, Երկեր, հ 1, Երևան, 1983, էջ 44 45) և սաղմոսի խոսքերը դրել «Սամվել» վեպի հերոսներից մեկի հրեա երեց Զվիթայի բերանը: Իսահակյանը 1893 թ. Տգ. №25-ում տպագրել է «Իսրայելացիք Բաբելոնում» բանաստեղծությունը, որը հետագայում զետեղել է «Բանաստեղծություններ», Բաքու, 1903 թ. ժողովածուի մեջ (էջ 133-134):

Այս մասին տե՛ս է. Ջրբաշյան, Աստվածաշնչի մոտիվները Թումանյանի

առեղծագործության մեջ, «Թումանյանի արական ժառանգություն», Երևան, 2000, էջ 266-268:

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

(«Երբ խոսում են Վրաստանի...»)
(էջ 305) (ԵԼԺ 1, էջ 286)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Մոտավոր ժամանակը որոշելու հիմք տալիս է Թումանյանի «Ինչ են ասում...» հոդվածը (տե՛ս «Հորիզոն», 1916, հունիսի 8, №126): Հոդվածի գրության առիթը ոտա և վրաց մամուլում հանդիպող այն լուրերն են, թե իբր Թիֆլիսի հայոց թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը խմբեր է կազմում ու գնաց մատակարարում Անդրանիկին՝ Վրաստանի դեմ: Դա խորապես վշտացրել է բանաստեղծին. «Էս տեսակ հոդված կարդալուց հետո մարդ լցվում է մի անհուն ցավով ամեն անգամ, որ լսում է նրա՝ Անդրանիկի խոսքը, որ հաճախ կրկնում է. «Երբ իրիկունը պլսիներդ բարձին կդնեք, որ քնանաք, մի քիչ մտածեցեք ձեր ազգի մասին: Ախտիհետ մտածեցեք ձեր հարևանի մասին, հայ լինի նա, թե թուրք լինի, ոտա լինի, վրացի լինի, ով կուզե լինի և բարի մտածեցեք...»: Ահա այս ցավն է արտահայտվել բանաստեղծության հենց առաջին քառատողում:

Անկասկած, հոդվածը և բանաստեղծությունը գրված են նույն օրերին, իզուր չէ, որ բանաստեղծությունը տպագրվել է «Հոդվածի փոխարեն» ենթավերնագրով:

Առաջին անգամ տպագրվել է՝ Հր. 1916, սեպտեմբերի 18, №208, այնուհետև՝ ԵԺ 1, էջ 187-188:

Արտատպվում է Հր-ից:

ՆՎԱՐԴԻ ԱԼԲՈՄԻՑ

(«Լուսապրատակ...»)
(էջ 307) (ԵԼԺ 1, էջ 294)

Գրված է 1916 թ. հոկտեմբերի 27-ին:

ԹԹԳԳ860/2-ում պահվում է բանաստեղծի դուստր Նվարդի ալբոմը և դրա մեջ ինքնագիրը, վերնագրված՝ «Իմ Արուսյակին», հետևյալ ծանոթագրությամբ. «Ու աղջիկներից ամեն մեկը մի ասող ընտրեց կամ համաատեղություն. Նվարդն էլ ընտրեց Վեներան, Լուսաստղը, Արուսյակը»:

Նույն տեղում՝ բանաստեղծի դուստր Աշխենի արտագրած մեկ օրինակ։

Առաջին անգամ, «Նվարդի ալբոմից» վերնագրով, տպագրվել է՝ Գղ, 1921, №7, էջ 66, այնուհետև՝ ԵԺ I, էջ 189։

Արտատպվում է Գղ-ից։

1917

«ՇՆՈՐՀԱՎՈՐ...»
(էջ 308) (ԵԼԺ 1, էջ 288)

Գրված է 1917 թ. հունվարի 1-ին։ Նվիրված է բանաստեղծի դուստր Թամար Թումանյանին։

ԹԹԳԳ2207/3-ում պահվում է Թամարի ալբոմը և դրա մեջ ինքնագիրը։

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲԵՀ, 1972, №1, էջ 159-160, հրատարակել է Ա. Ինճիկյանը։

Տպագրվում է ինքնագրից։

ԱՆՈՒՇԻ ԱԼԲՈՄԻՑ

(«Երազեցի շարունակ...»)
(էջ 309) (ԵԼԺ 1, էջ 289)

Գրված է 1917 թ. հունվարի 5-ին։

ԹԹԳԳ860/3-ում պահվում է բանաստեղծի դուստր Անուշի ալբոմը և դրա մեջ սևագիր-ինքնագիրը, որ չի վերնագրված, նույն տեղում՝ բանաստեղծի դուստր Աշխենի արտագրած մեկ օրինակ։

Առաջին անգամ, «Անուշի ալբոմից» վերնագրով, տպագրվել է՝ Գղ, 1921, №7, էջ 66, այնուհետև՝ ԵԺ I, 190։

Արտատպվում է Գղ-ից։

ԳՐԱԴԱՐԱՆՍ

(«Բազմած են շուրջըս...»)
(էջ 310) (ԵԼԺ 1, էջ 290)

Գրված է 1917 թ. հունվարի 20-ին, ինչպես թվագրված են ինքնագրերը։

ԳԱՖ թֆ №216-ում պահվում է մեկ սևագիր-ինքնագիր, որի վրա

Թումանյանն ուղղումներ է կատարել: Նույն տեղում՝ №61 (76)-ում պահվում է երկրորդ ինքնագիրը՝ մաքուր գրված:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՆՈՒ, 1929, №1, էջ 8, այնուհետև՝ ԵԺ I, էջ 530:

Տպագրվում է Բ ինքնագրից:

1916 թ. օգոստոսի 24-ին Բորժոմից Յոլակ Խանզադյանին գրած նամակում Թումանյանը գրել է. «Գրագարանս շատ եմ կարոտել: Լավ բան է: Բեև չեմ կարոզանում կարդալ, բայց չարունակ ընկնում է ինձ, ին էն բոլոր լավ-լավ գրքերը մեծ մարդիկ են, ինձ իրենք ընկերակներն են չորս կողմս չարված ու անվերջ գրույց ենք անում» (տե՛ս ԵԺ V, 418): Սա ցույց է տալիս, որ բանաստեղծության նախնական մտահղացումը տևական ժամանակ խմորվել է ընկերակի ներսում՝ մինչև որ ստացել է իր պատշաճ գեղարվեստական մարմնավորումը:

ԱՐՓԵՆԻԿԻՆ

(«Հիշում ես Բորժոմն, այծամոներ, ժայռեր...»)
(էջ 311) (ելժ 1, էջ 291)

Գրված է 1917 թ. հունվարի 31-ին: Նվիրված է բանաստեղծի դուստր Արփենիկին:

ԹՊԳԳ2169/4-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՆՈՒ, 1929, №1, էջ 8, այնուհետև՝ ԵԺ I, 532:

Տպագրվում է ինքնագրից:

ԱՐՓԵՆԻԿԻ ԱԼԲՈՄԻՑ

(«Դու չգիտե՞ս...»)
(էջ 312) (ելժ 1, էջ 292)

Գրված է 1917 թ. փետրվարի 5-ին:

ԹՊԳԳ860/4-ում պահվում է բանաստեղծի դուստր Արփենիկի ալբոմը և դրա մեջ ինքնագիրը, վերնագրված՝ «Դու չգիտե՞ս»:

Առաջին անգամ, «Արփենիկի ալբոմից» վերնագրով, տպագրվել է՝ Գղ, 1921, №7, էջ 66, այնուհետև՝ «Դու չգիտե՞ս» վերնագրով՝ ԵԺ I, 191:

Արտատպվում է Գղ-ից:

«ՄԱՅՐՊԴ ԷՆ ՕՐՆ ԱՍՈՒՄ ԷՐ ԻՆՁ...»
(էջ 313) (ԵԼԺ 1, էջ 293)

Գրված է 1917 թ. հունիսի 17-ին:

ԹԹԳԳ860/1-ում պահվում է բանաստեղծի դուստր Աշխենի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը: Նույն տեղում՝ Աշխենի արտագրած մեկ օրինակ:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՍԳ, 1943, №3, էջ 89, այնուհետև ԵԺ I, էջ 533:

Տպագրվում է ինքնագրից:

«ԿԱՆՑՆԵՆ ՕՐԵՐՆ, ԱՆՈՒՇ ՋԱՆ...»
(էջ 314) (ԵԼԺ 1, էջ 295)

Գրված է 1917 թ. նոյեմբերի 7-ին: Նվիրված է բանաստեղծի դուստր Անուշին:

ԹԹԳԳ860/3-ում պահվում է բանաստեղծի դուստր Անուշի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը: Նույն տեղում՝ բանաստեղծի դուստր Աշխենի արտագրած մեկ օրինակ:

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հոկտեմբեր-նոյեմբեր» տարեգիրք, 1932, էջ 133, այնուհետև՝ ԵԺ I, 534:

Տպագրվում է ինքնագրից:

«ՔՈՇԱՔԱՐՈՒՄ ԵՍ ՎԱՋԵԼ ԵՄ...»
(էջ 315) (ԵԼԺ 1, էջ 296)

Գրված է 1917 թ. նոյեմբերի 20-ին:

ԹԹԳԳ860/3-ում պահվում է բանաստեղծի դուստր Անուշի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը: Նույն տեղում՝ բանաստեղծի դուստր Աշխենի արտագրած մեկ օրինակ:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՆՈՒ, 1929, №1, էջ 7, այնուհետև՝ ԵԺ I, էջ 536:

Տպագրվում է ինքնագրից:

«ԵՐԿԱՐ, ԵՐԿԱՐ ՄԱՆ ԵԿԱ...»
(էջ 316) (ԵԼԺ 1, էջ 297)

Գրված է 1917 թ. դեկտեմբերի 20-ին:

ԹԹԳԳ860/4-ում պահվում է բանաստեղծի դուստր Արփենիկի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը։

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հոկտեմբեր-Նոյեմբեր» տարեգիրք, էջ 133, այնուհետև՝ ԵԺ I, 537։

Տպագրվում է ինքնագրից։

1918

ԻՄ ԵՐԳԸ

(«Գանձեր ունեմ անտակ, անծե՛ր...»)
(էջ 317) (ԵԼԺ 1, էջ 298)

Գրված է 1918 թ. հունվարի 5-ին։

Մեկ ինքնագիր պահվել է Թրիլիսիի Վ. Գրիշաշվիլու գրադարան-թանգարանի ֆոնդում, թվային տարբերակը՝ ԹԹԳԳ-ում։

Առաջին անգամ տպագրվել է՝ ԺՋ, 1918, 6 հոկտեմբերի, №28, այնուհետև՝ ԲՊ, էջ 39-40, ապա՝ ԵԺ I, 192։

Արտատպվում է ԲՊ-ից։

Թումանյանի այս բանաստեղծության բառերով երգ է գրել սփյուռքահայ երգահան Գ. Ալեմշահը (տե՛ս ՈՒՀ 5, էջ 390-391)։

ՏԻԿԻՆ ՆԻՄՖԱ ԳՈՐՈԴԵՑԿՈՒՆ

(«Հյուսիսի կողմից...»)
(էջ 318) (ԵԼԺ 1, էջ 299)

Գրված է 1918 թ. հունվարի 29-ին, «Փարվանա» բալլադի ռուսերեն հրատարակության շապիկի վրա։ Նվիրված է ռուս բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկու կնոջը։

ԳԱԹ ԹՖ №62 (80)-ում պահվում է մեկ ինքնագիր։

Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ I, 539-540։

Տպագրվում է ինքնագրից։

ՊԱՏՐԱՆՔ

(«Վեր է կացել էն սարում...»)
(էջ 320) (ԵԼԺ 1, էջ 301)

Գրված է 1918 թ. սեպտեմբերի 9-ին։

ԳԱԹ Թֆ №63 (78)-ում պահվում է մեկ ինքնագիր, թվագրված «1918. սեպտ. 9»:

Առաջին անգամ տպագրվել է՝ Տգ, 1919, №5, էջ 38, նույն թվականի դեկտեմբերի 21-ին՝ «Բանակի օրը» միօրյա թերթում, այնուհետև՝ ԲՊ, էջ 419, ԵԺ I, 193:

Արտատպվում է ԲՊ-ից:

Քառյակներին նվիրված իր հոդվածում Էդ. Ջրբաշյանը, առանց աղբյուրը նշելու, մեջ է բերում Թումանյանի մի անտիպ գրառումը, որ լույս է սփռում նաև այս բանաստեղծության հղացման անձնական-հոգեբանական դրդապատճառների վրա. «1915 թ. սեպտեմբերին սպանվեց եղբայրս - Ռոստոմը: Ռոստոմը բնականից բանաստեղծ մարդ էր. շատ լավ գիտեր արևելյան նաղլները - պոեմները թուրքերեն - Ասլի Քյարամ, աշըղ Ղարիբ և այլն, և այլն և շատ բայաթի, ու միշտ նվագում էր ու երգում:

Մահից հետո զարմանալի կենդանի նրա ձենը մնաց ականջիս մեջ ու երգում էր շարունակ» (տե՛ս ԵԼԺ 2, էջ 503):

Այս խոստովանության հետ բանաստեղծության վերջին քառատողի ուղղակի կապն ակնհայտ է:

Ստեփան Զորյանը իր հուշերում հարազատորեն է ներկայացնում Թումանյանի այն հոգեվիճակը, որը բանաստեղծին մղել էր «Պատրանքը գրելուն». «Եվ նա սկսեց նկարագրել Լոռու սարերը՝ իրենց բինաներով ու որսերով, այս բոլորը կապակցված էր ծանոթների, մանկության ընկերների հետ, որոնք կենդանացնում ու խոսեցնում էին կարծես այդ բնությունը: Ես հիմա մոռացել եմ այդ պատմությունները, բայց հիշում եմ, որ դրանց ընդհանուր տպավորությունն այն էր, որ կարծես լսում էի «Անուշի», «Լոռեցի Սաքոյի» վարիանտները և մի ծանր տրտմություն՝ անցած-գնացած օրերի համար, որ այնպես դեղեցկորեն արտահայտված է չքնաղ «Պատրանքում», մի երգ, որի թախիծը խորապես կհասկանան միայն սարերում ապրած մարդիկ» (ԹԺՀ, էջ 133):

Ս. ՆՈՒՆԵԻ ՊԱՏԿԵՐԻ ԱՌԱՋ

(«Խունկի բուրյան մըշուշներում....)
(էջ 321) (ԵԼԺ 1, էջ 302)

Գրված է 1918 թ.:

ԳԱԹ Թֆ №64 (82)-ում պահվում է մեկ ինքնագիր, որը, հավանաբար, առաջին գրառումն է՝ վերնագրված՝ «Վրաստանի ոգին»: Նույն տեղում №64 (82ա)-ում կա ևս երկու սևագիր-ինքնագիր, որոնցից երկրորդը

համեմատաբար ավելի է մոտ տպագրվածին: Թվագրված է «1918», վերնագրված «Ս. Նունեի պատկերի առաջ»:

Առաջին անգամ, «Ս. Նունեի պատկերի առաջ» վերնագրով, տպագրվել է «Նոր աշխատասիրտ» (Բերլի), 1920, №27, այնուհետև՝ նաև I, 194-195: Այստեղ վերնագրված է «Վրաստանի ոգին»:

Ս. Նունե – վաճ. մոտ 340 թ., Վրաստանի լուսավորիչ: Հայոց եկեղեցում տիրապետական կատարվում է Ս. Մանե կույսի հետ միասին: Մենք է Հռիփսիմյանց կույսերից: Ըստ հայ եկեղեցական մատենագրության պատումների՝ Հռոմից Հայաստան եկած կույսերից առանձնացել է կամ վարագա լեռան մոտ և կամ էլ Վաղարշապատի հնձաններում:

Մովսես Խորենացին գրում է, որ խիստ ճգնությամբ բժշկության շնորհ է ձեռք բերում և շատ ախտավորների բժշկում Հայաստանում: Սրբուհի կույսը Մծխեթիում գործի է բերում վրաց արքունիքը և ժողովրդին: Տապալում է Արամազդի արձանը և տեղում կանգնեցնում փայտյա խաչ, որի վրա Աստված «երկնքից ամպի պատն իջեցրեց» (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխատ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1981, գիրք Բ, գլ. 86, էջ 283):

13-16 տողեր – նկատի ունի Ս. Նունեի մասին պատմվող այն ավանդությունը, ըստ որի մանուկ ժամանակ խաղողի որթից մի խաչափայտ է պատրաստել՝ երկու կտորներն իրար կապելով իր մազերով:

Հաքստհաուզենը այս մասին գրում է, որ Ս. Նունեն իր ձեռքում ուներ խաղողի որթից խաչ, որի բևեռն իրար էին կապված կույսի մազերով: Այս խաչով նա մեծամեծ հրաշքներ էր գործում (Բարոն ֆոն Հաքստհաուզեն, Ճանապարհորդություն յայսկոյս Կովկասու, այն է ի Հայս և Վիրս, Վաղարշապատ, 1872, էջ 160):

Հ. Ն. Ակինյանը վկայակոչում է այս ավանդության մի այլ տարբերակը, ուր ասված է, որ Մծխեթիում մորենու ճյուղերից հրաշագործ և բժշկարար խաչ է պատրաստել (Հ. Ն. Ակինյան, Քրիստոնեության մուտքը Հայաստան և Վրաստան, Վիեննա, 1949, էջ 314):

Արտատպվում է «Նոր աշխատասիրից»:

Խոսելով 1918 թ. դեպքերի մասին՝ Ս. Գորոդեցկին հիշում է. «Այդ ժամանակին Հովհաննես Թումանյանը գրեց այնպիսի մի աքանչելի բանաստեղծություն, ինչպիսին է «Վրաստանի ոգին»: Ապա մեջ է բերում բանաստեղծության առաջին վեց տողերը (տե՛ս Թ†Հ, էջ 889):

ԳՐԱՋ ԱՍՏՑՈ ԵՎ ՊՈԵՏԻ

(«Գըրագ եկան ու տվին...»)
(էջ 323)

Գրված է 1918 թ.:

Ինքնագիրը պահվում է ԹԹԳ-860/3-ում՝ Անուշ Թումանյանի ալբոմում:

Առաջին անգամ առանց վերնագրի տպագրվել է 1923 թ. Բեռլինի «Արեգ» (խմբ. հրատ. Սիմոն Հակոբյան) ամսագրի օգոստոսյան համարում (էջ 467)՝ հետևյալ ծանոթագրություններով. «Մեր նշանավոր բանաստեղծի որդին, Համլիկ Թումանեանը, ուղարկել է մեզ մի քանի էջ իր թանգագին հօր անտիպ գրուածքներից: Հորին շնորհակալութեամբ տպագրում ենք այն «Արեգ»ի էջերում: Էջատակին՝ «Յովհաննէս Թումանեանի մէկ ապրկայ անունն է Անուշ: «Անուշ» պօէմը գրուած է նրա անունով (հակառակը՝ բանաստեղծի դուստրը ծնվել է պոեմի առաջին տպագրությունից վեց տարի ուշ, և ինքն է կնքվել հերոսուհու անունով - խմբ.): Այս գեղեցիկ և սրամիտ քառեակը բանաստեղծը գրել է երկու Անուշների շուրջ»:

Տպագրվում է ինքնագրից:

1919

ՆՎԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻՆ

(«Չէ՛, չի լըռել մեծ Շոթայի...»)
(էջ 324) (ԵԼԺ 1, էջ 304)

Ըստ մեզ հասած միակ ինքնագրի, որ պահվում է Վրաստանի գրականության թանգարանում, գրված է 1919 թ. ապրիլի 16-ին: Սակայն Տիգիան Տաբիձեն իր հուշերում այս ոտանավորի գրության ժամանակը ետ է տանում 14 օրով: «Հիշում եմ,- գրում է նա,- իմ երեկոյին՝ 1919 թ. ապրիլի 2-ին, նա մի պոեմ կարդաց, որն ամբողջովին նվիրված էր Վրաստանին և վրաց բանաստեղծներին» (ԹԺՀ, էջ 729): Անշուշտ, Տաբիձեի խոսքը հենց այս բանաստեղծության մասին է: Մյուս կողմից դժվար թե վրաց բանաստեղծը շփոթեր իր մեծարման երեկոյի օրը: Այստեղից կարելի է ենթադրել, որ ոտանավորի առաջին գրառումը եղել է դեռևս ապրիլի 2-ին, իսկ մեզ հասած ինքնագիրը, որն, ի դեպ, մաքուր արտագրված է, պահպանվել է վերջնական մշակման թվագրությունը:

ԳԱԹ ԹՖ №65(83)-ում պահվում է ինքնագրի լուսապատճեն:

Առաջին անգամ տպագրվել է ռուսերեն Ս. Գորոդեցկու թարգմա-

նոյեմբեր՝ «Джейран» ժողովածուի մեջ, 1919, էջ 3-6:

Հայերեն առաջին անգամ տպագրվել է՝ Պր., 1929, №134, վրայ բանաստեղծ Ի. Գրիշաշվիլու հետևյալ ծանոթագրությամբ. «Հովհ. Թումանյանի «Նվեր վրաստանի բանաստեղծներին» այս բանաստեղծությունը թարգմանվել է վրացերեն և տպվել իշարս Թումանյանի ուրիշ գործերի («Անուշ», «Մի կաթիլ մեղրը», «Դիքոր» և այլն) 1924 թվին: Հայերեն դեռ լույս չի տեսել... Տեսնելով մեծ պոետի իդեաների կենսագործումը, անդրկովկասյան ժողովուրդների կուլտուրական կապի ստեղծումը, անհրաժեշտ եմ համարում տպագրության տալ այս բանաստեղծությունը»:

Այնուհետև տպագրվել է՝ ԵԺ I, 196-197:

Տպագրվում է ինքնագրի լուսապատճենից:

1920

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

(«Հայոց լեռներ սև-սև ամպեր...»)
(էջ 327) (ԵԼԺ 4, էջ 219)

Գրված է 1920 թ. փետրվարի 19-ին:

Տպագրվել է ԵԼԺ 4-ի հավելվածում էդ. Ջրբաշյանի հետևյալ ծանոթագրությամբ. «Տպագրվում է ըստ ինքնագրի, որ տասնամյակներ շարունակ Թումանյանի ընտանիքի արխիվում մնալուց հետո այժմ հանձնվել և պահվում է բանաստեղծի թանգարանում (ԹԹԳ 1079/36-6): Բանաստեղծությունը, ըստ ինքնագրի տակ կատարված նշումի, գրված է 1920 թ. փետրվարի 19-ին, Թիֆլիսում: Ըստ չհաստատված տվյալների՝ նույն ժամանակ էլ տպագրվել է «Բանակի օր» մեկօրյա թերթում (թերթը մեզ չի հասել):

Սույն հրատարակության առաջին հատորից բանաստեղծությունը դուրս է մնացել՝ խմբագրությունից անկախ պատճառներով: Շատ այլ նյութերի հետ միասին, ինքնագիրը թանգարանին հանձնելուց հետո, Թումանյանի դուստր Թամարի առաջարկով բանաստեղծությունը հրատարակել է Խ. Գյուլնազարյանը (տե՛ս «Հայրենիքի ձայն», 1989, 1 նոյեմբերի, №44):

Տպագրվում է ինքնագրից:

«ԶԼՎԱՐԹ ԵՐԱՄՈՎ ԴՈՒՔ ԵԿԱՔ ԻՆՁ ՄՈՏ...»
(էջ 328) (ԵԼԺ 1, էջ 306)

Գրված է 1920 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել: Նախորդ հրատարակության մեջ նշվում է. «ԹՀԱ-ում պահվում է հեղինակի դուստր Թամարի ալբոմը և դրա մեջ ինքնագիրը»: Վերահրատարակելիս նյութը թանգարանի ֆոնդերում չի գտնվել:

ԳԱԹ ԹՖ №66 (86)-ում պահվում է մեկ այլ սևագիր-ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է «Նորք», 1924, №4, էջ 63, այնուհետև՝ ԵԺ I, 548:

Տպագրվում է ԵԺ I-ից:

ՏԻԵԶԵՐՔԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

(«Ո՞ր հայացք ես ինձ տրվել վերամբարձ...»)
(էջ 329) (ԵԼԺ 1, էջ 307)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Ձեռագրից կարելի է ենթադրել, որ գրված է 1919-1920 թթ.:

ԹԹԳԳ1079/52-1-ում պահվում է մեկ ինքնագիր՝ հեղինակի ուղղումներով, վերնագրված՝ «Մեծ ընթերցումը», ապա «Տիեզերքի ընթերցումը»:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԳԵ, էջ 129, այնուհետև՝ ԵԺ I, 547:

Տպագրվում է ինքնագրից:

1922

ՍԻՐԻՈՒՍԻ ՀՐԱԺԵՇՏԸ

(«Սիրիո՛ւս, երկնից ահեղ անցվոր...»)
(էջ 330) (ԵԼԺ 1, էջ 308)

Գրված է 1922 թ. հունիսին: Գրելու ապդակր եղել է 14-ամյա Վիկտոր Համբարձումյանի այցը բանաստեղծին 1922 թ. ամռանը: Ջրույցի ժամանակ ապագա խոշորագույն գիտնականը Թումանյանին տեղեկություններ է հաղորդել Սիրիուսի մասին (տե՛ս Վ. Համբարձումյանի վկայություններ «Սովետական Հայաստան», 1988, 18 սեպտեմբերի, №227):

Ն. Թումանյանը ևս հիշում է, որ գրվել է 1922 թ. ամռանը. «Աստղերով էր հետաքրքրվում և այդ օրերին էլ գրեց «Սիրիուսի հրաժեշտը» (Ն.

Թումանյան, Հուշեր և դրույցներ, Երևան, 1987, էջ 263)։

ԳԱԹ ԹՖ №67(89)-ում պահվում է մեկ ինքնագիր, որ գրված է առաջին տպագրությունից հետո և ունի տեղինակային մշակման հետքեր։ Մեկ այլ ինքնագիր պահվում է ԳԱԹ ԹՖ №68 (13 թղթապիրակ)-ում հանված Մ. Գևորգյանի ֆոնդից, և ունի հետևյալ տեղինակային ծանոթագրությունը. «Սիրիուսի նախավերջին տան տակն էսպես է՝ «Հրաժեշտի շողերը հավետ»։ Չգիտեմ ճիշտ եմ արտագրել թե չէ, կասկածում եմ»։

Նախորդ հրատարակությունում նշված է. «ԹՀԱ-ում պահվում է բանաստեղծի դուստր Սեդայի ալբոմը և դրա մեջ մի տարբերակ, վերնագրված՝ «Սեդային», թվագրված՝ «14 հունիսի, 1922»։ Սակայն այժմ ալբոմը պահվում է Սեդայի դստեր Իրմա Աֆրիկյանի մոտ։

Առաջին անգամ տպագրվել է՝ «Նոր օր», 1922, գիրք I, էջ 93-94, տեղինակի հետևյալ ծանոթությամբ. «Սիրիուսը մեզանից հեռանում է անդադար օրական 2625000 վերստ արագությամբ։ Նա արևից ավելի մեծ է ծավալով 144 անգամ և ավելի պայծառ 88 անգամ»։ Ակնհայտ տպագրվել է՝ ԵԺ I, 198 199։

Տպագրվում է ՍՎ ինքնագրից։

ՄԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՏՎԱԾՆԵՐ

1882

ՕՐՈՐՔ

(«Քնե՛, քնե՛, իմ որդի...»)
(էջ 333) (ԵԺ 1, էջ 313)

Գրված է 1882 թ.։

ԳԱԹ ԹՖ №6(11)-ում պահվում է մեկ սևագիր-ինքնագիր, թվագրված՝ «1882 ամի (13 տարեկան)»։

Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ I, 428-429։ Այստեղ նույն են տրված վրիպակներ՝ 35-րդ տողն ունի «Թափառում են սար ու ձոր», իսկ 39-րդ տողը՝ «Որ քո դժբախտ հայ ազգիդ» տեսքը։

Տպագրվում է ինքնագրից։

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆ

(«Հայ վաճառական, հայ վաճառական...»)
(էջ 335) (ԵԼԺ 1, էջ 315)

Գրված է 1883 թ.:

ԳԱԹ ԹՖ №6(11)-ում պահվում է մեկ սևագիր-ինքնագիր, թվագրված «1883 ամի, Տփխիս»: Թվագրության կողքին, սակայն, Թումանյանը գրել է. «Դևս Թիֆլիս չէի եկած, որ Ջալալօղլի այս ուր անավորր կարդացի»:

Այս բանաստեղծության գրության մասին բանաստեղծի դասընկեր Ա. Հրովյանը գրում է. «Թումանյանը ականատես էր, թե ինչպես Ջալալօղլեցի առևտրականը խաբում էր ամենքին, ավելի ևս խեղճ գյուղացիներին, միամիտ գինվորներին, թե ինչպիսի ճարպկությամբ արշինը շրջելով կուլ էր տալիս վերշոկները, թե ինչպես գնելիս ծանր-ծանր, վաճառքի ժամանակ թեթև-թեթև էր կշռում, թե ինչպես օղու և գինու չափերի (տրիցատակաների) ծավալը իջեցնում էր, հատակը մոմ ու ձուլթի շերտով պատելով, թե ինչպես փտած ու փչացած ապրանքը գյուղացու վզին էր փաթաթում և թե ինչպես ծպրտածանակի առարկա էր դարձնում գյուղացուն:

Հազիվ 11 տարեկան լիներ Օհանեսը, երբ նա մեկ կարդաց իր ուսանավորը, ուր տալիս էր նկարագիրը կարճացած արշինի և մոմապատ տրիցատակալի» (ԹԺՀ էջ 214): Ինչպես նշված է հուշերի ծանոթագրության մեջ, հուշագիրը շփոթել է բանաստեղծության գրության ժամանակը: Թումանյանը այն գրել է 14 տարեկան հասակում (նույն տեղում, էջ 928):

Վերը բերված հատվածն են հիշեցնում բանաստեղծության հատկապես 15-16 տողերը:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ I, 430-431:

Տպագրվում է ինքնագրից:

«ԵՐԲ ՈՐ ԿԱՆՑՆԻ ՋՄԵՌՆ ՍԱՍՏԻԿ...»

(էջ 337) (ԵԼԺ 1, էջ 317)

Գրված է 1883 թ.:

ԳԱԹ ԹՖ №69(12)-ում պահվում է մեկ ինքնագիր, թվագրված՝ «83 թ.»:

Առաջին անգամ, ոչ լրիվ (1-12 տողերը) տպագրվել է՝ ԵԺ I, 432:

Տպագրվում է ինքնագրից:

Բանաստեղծությունը գրելիս պատանի Թումանյանը եղել է Ն.

Ռուսինյանի «Կիլիկիա» տարածված երգի ազդեցության տակ: Եգոր Անդրեասյանը, որը Ջալալօղլու դպրոցում եղել է Թումանյանի դասընկերը, վկայում է. «Թումանյանի սիրած երգերից մեկն էլ Ռուսինյանի «Կիլիկիան» էր» (տե՛ս ԹԺՀ, էջ 218):

1884

«ԻՆՉՈՒ ԵՍ ՏԽՈՒՐ...»
(էջ 338) (ԵԼԺ 1, էջ 318)

Գրված է 1884 թ.:

ԳԱՔ ԹՖ №69 (12)-ում պահվում է մեկ ինքնագիր, որի տակ Թումանյանը գրել է՝ «Դատաստանն»:

Առաջին անգամ մի հատված տպագրվել է՝ ԳԹ, 1948, №11: Հրատարակել է Ա. Ինճիկյանը: Ամբողջական բնագիրը տպագրվել է՝ ԵԺ I, 432:

Տպագրվում է ինքնագրից:

9-16 տողերում արևմուտքի մասին ակնարկն անշուշտ վերաբերում է բելինյան վեհաժողովին, որտեղ ի դերև ելան Արևմտահայաստանում Օսմանյան կայսրության բարենորոգումների բոլոր հույսերը:

1885

«ԹՈՂ ՓՉԵ ՔԱՄԻՆ» ԵՐԳԻ ԵՂԱՆԱԿԱՎ

(«Լուանկա գիշեր...»)
(էջ 340) (ԵԼԺ 1, էջ 320)

Գրված է 1885 թ. հոկտեմբերի 14-ին: Նվիրված է հայ ազատագրական շարժման առաջին գործիչներից մեկին՝ Վարդան (Ալեքսանդր) Գրիգորի Գոլոշյանին (1867-1889):

ԳԱՔ ԹՖ №70 (13)-ում պահվում է մեկ ինքնագիր, թվագրված՝ «1885 10/14», որի տակ Թումանյանը գրել է՝ «Դեռևս սևագրություն»: Ինքնագրի վրա ուրիշի ձեռքով գրված է՝ «Հով. Թումանյանի բանաստ.՝ նվիրված Վարդանին»: Նույն ձեռագրով կան նաև երեք քառատող, որոնցից երկուսն օգտագործված են առաջին հրատարակության և ԵԺ VI-ի մեջ:

Ահա այդ քառատողերը.

Լինեմ ամեն ժամ
Հրամայում է նա

Կատարել երդում
Թեկուզ ամեն բան (ԵԺ VI, տող 73-76):

Արև տեսնելիս
Առավոտյան ժամին
Քեզ կյանք է խնդրում,
Քեզ միտն է բերում(ԵԺ VI, տող 117-120):

Ասում է՝ այն աստղը
Է իմ որդունը,
Այնպես փայլուն է,
Որպես նրա աչեր (ԵԺ VI-ում չկա):

Այս հավելումների մասին ԵԺ VI, էջ 439-ում կարդում ենք. «Վարդան Գոլոշյանի քրոջ՝ Դարիա Թադևոսյանի բանավոր վկայությամբ, հիշողությամբ, ավելացրել է իր հայրը՝ Գրիգոր Գոլոշյանը»:

Առաջին անգամ տպագրվել է՝ 1924 թ. «Նորք» հանդես, №4, էջ 359-361, այնուհետև՝ ԵԺ VI, 11-15:

Տպագրվում է ինքնագրից:

«Թող փչև քամին» երգի խոսքերը րստ՝ Ռ. Պատկանյանի «Հույս» բանաստեղծության, երաժշտությունը ժողովրդական է:

1889 թ. գարնանը, երբ ստացվում է Գոլոշյանի խմբի զոհվելու լուրը, 20-ամյա Թումանյանը խոստովանում է կնոջը, որ ինքն էլ էր որոշել այդ խմբի հետ անցնել Արևմտյան Հայաստան:

Օլգա Թումանյանը հիշում է. «Մի օր էլ եկավ, թե՝ քեզ եմ պարտական, կյանքս ազատեցիր: Ասում եմ՝ ինչո՞ւ, ինչ է պատահել: Ասաց՝ - Ջեֆս իմանում, Ալեքսանդր Գոլոշյանի հետ որոշել էինք գնալ Տաճկաստան՝ հայրենինքն ազատելու, ես էլ իմ ամառային վերարկուն ծախեցի, մի ատրճանակ առա, պետք է գնայի: Մեր նշանվելու պատճառով իմ գնալը հետաձգվեց, իսկ գնացողները սպանվել են ճանապարհին» (տե՛ս ԹՏ (1869-1908), էջ 51-56):

1886

ՆԱՀԱՊԵՏԻ ՈՂԲԸ

(«Այս ինչ ձայն է գալիս բարձրից...»)
(էջ 345) (ԵԼԺ 1, էջ 325)

Գրված է 1886 թ.:

ԳԱԹ թֆ №71 (14)-ում պահվում է մեկ սևագիր-ինքնագիր, որի վրա

Թումանյանը կատարել է մեկ ուղղում և թվագրել «86»: Մակայն նույն տեղում պրել է նաև «1887 թ.»:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ I, 434-435:

Տպագրվում է ինքնագրից:

Ասանավարն արձագանքում է Տալ Ժողովրդի արևմտյան հատվածի 1894-96 թթ. կոտորածներին, որ կազմակերպել էր սուլթան Համիդը: Գրված է Գ. Ալիշանի (Նահապետի) հայրենասիրական երգերի խոր ազդեցությամբ: Այդ երգերից Թումանյանը նաև փոխ է առել առանձին բանաստեղծական ոճեր ու բառեր:

1887

«...ԵՍ ՈՒՋՈՒՄ ԵՄ ՍԵՐ ԵՐԳԵԼ...»
(էջ 348) (ԵԺ 1, էջ 328)

Գրված է 1887 թ. վերջերին:

ԳԱՔ ԹՓ №524 (18)-ում պահվում է 1890 թ. սեպտեմբերի 23-ից 25-ը բանաստեղծի Օլգա Թումանյանին գրած նամակը, որտեղ կա այս երեք քառատողի ինքնագիրը՝ հետևյալ ծանոթագրությամբ. «...Առավոտյան ինձ մեջ պատահմամբ գտա 87 թվականի վերջերին գրած մի բանաստեղծություն, որը գրել եմ քեզ վերա... Այնքան ինձ դյուր եկավ, որ հետս տարա կոնսիատոր, չգիտեմ այնտեղ մնաց, թե հետս բերեցի, վերջապես կորցրել եմ, վաղը կորոնեմ կոնսիատորում, բայց ահա նրա վերջին տողերը»:

Նույնը, համառոտման ծանոթագրությամբ, կա նաև 1890 թ. սեպտեմբերի 28-ին ԵՒն. Հրոմյանին գրած նամակում (տե՛ս ԵԺ V, 25-26):

Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ V, 26:

Տպագրվում է ինքնագրից:

1880-ական թվականներ

«ԵՍ ՄԵԼԻՔՆ ԵՄ ԼՈՌԵՅԻ...»
(էջ 349)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Գրված պետք է լինի 80-ական թվականների սկզբներին, երբ ժողովրդի մեջ տարածված էին ռուս-թուրքական պատերազմի հերոս Լոռիս Մելիքովի մասին հյուսված

երգերը: Թումանյանն ինքն է հիշում, որ վաղ պատանության տարիներին այդ երգերին տներ էր ավելացնում և երգում (տե՛ս «Հոդուս հատոր...» բանաստեղծության ձանոթագրություն):

Առաջին անգամ տպագրվել է Ա. Ինճիկյանի «Հովհաննես Թումանյան» (1969) ուսումնասիրության մեջ (էջ 109): Այնուհետև ոչ մի անգամ չի տպագրվել, դուրս է մնացել նաև ԵԼԺ-ի նախորդ տպագրությունից:

Արտատպվում է Ա. Ինճիկյանի գրքից:

Թումանյանի ստանավորի առաջին երկու տողերը նույնն են «Մշակի» 1882 թ. №175 -ում տպագրված ժողովրդական երգերից մեկի վերջին երկու տողերի հետ.

Ես Մելիքն եմ լոռեցի,
Մուխթար փաշին զոռեցի:*

ՄԻ ԽՈՍՔ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՑՈՒՆ

(«Երբ դուք կլսեք, որ ամբողջ աշխարհ...»)
(էջ 350)

Բանաստեղծությունն ամբողջությամբ մեջ է բերում Ա. Ինճիկյանն իր «Հովհաննես Թումանյան» (1969) ուսումնասիրության մեջ (էջ 176): Այնուհետև ոչ մի անգամ չի տպագրվել, դուրս է մնացել նաև ԵԼԺ-ի նախորդ հրատարակությունից:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Ա. Ինճիկյանը ենթադրում է, որ գրված պետք է լինի 1885-1886 թվականներին՝ «Ինչո՞ւ ես տխուր...» (1884) բանաստեղծությունից հետո՝ իբրև այնտեղ արտահայտված «Արևմուտքեն օգուտ չկա քեզ» մտքի զարգացում (տե՛ս Ա. Ինճիկյան, էջ 176):

4-5 տողեր – Նկատի ունի 1889 թ. Փարիզում կայանալիք համաշխարհային ցուցահանդեսը, որի վերաբերյալ մանրամասներ ու տեղեկություններ մամուլն սկսել էր հաղորդել 3-4 տարի առաջ:

Արտատպվում է Ա. Ինճիկյանի գրքից:

**) Մուխթար (Մուհտար) փաշան 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ թուրքական բանակի զորահրամանատարներից էր:*

«ՓԱՅԼՈՒՆ ԱՍՏՂԻԿ ԵՐԿՆԱԴԻՏԱԿ ...»
(Լ, 351) (ԵԼԺ 1, Լ, 329)

Գրված է 1890 թ. մայիսի 8-ին:

ԳԱՔ ԹՖ №433 (266)-ում պահվում է 1890 թ. մայիսի 8-ին Թումանյանի՝ Ան. Արամյանին կամենեց-պոդոլսկ ուղած նամակը և դրա մեջ ինքնագիրը՝ հետևյալ ծանուցումով. «Մի ժամ առաջ (ժամը 11-ն է) լուսամուտից նայում էի երկնքին, մի վառ աստղի, և մտքիս մեջ ասում, արդյոք դուն էլ ես նույն ժամին նույն աստղին նայում...»:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ V, 13:

Տպագրվում է ինքնագրից:

«ՈՂՋ, ԹՈՂ ՍԵՐ ԻՄ, ՀՐԱՓԵՏՈՒՐ ...»
(Լ, 352) (ԵԼԺ 1, Լ, 330)

Գրված է 1890 թ. հուլիսի 6-ին:

ԳԱՔ ԹՖ №435 (268)-ում պահվում է 1890 թ. հուլիսի 6-ին Թումանյանի՝ Ան. Արամյանին ուղած նամակը և դրա մեջ ինքնագիրը՝ հետևյալ ծանուցումով. «Ախտեղ անհնար է սիրել. ում սիրես: Իսկ առանց սեր կյանք չկա. դուն սիրո ծնունդ և սիրո երգիչ, սիրո երկրպագու ես, դուն հասկանում ես՝ որն է սերը. ես այստեղ սիրել չեմ կարող»:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ V, 18:

Տպագրվում է ինքնագրից:

«ԱՅՍՏԵՂ ԱՀԱ ԻՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ...»
(Լ, 353) (ԵԼԺ 1, Լ, 331)

Գրված է 1890 թ. հուլիսին:

ԳԱՔ ԹՖ №72 (270)-ում պահվում է մեկ սևագիր-ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՈՒՀ 1, Լ, 291-297: Հրատարակել է Պ. Սիմոնյանը հետևյալ ծանոթագրությամբ. «Այս գրվածքը բովանդակում է Թիֆլիսի Կոնսիստորիայում Թումանյանի պաշտոնավարության հետ կապված տևած ու անշահավետ պարտականությունների նկարագրությունները, հոգևկան ապրումների անմիջական արտահայտությունը: Ստանավոր-նամակը հիշեցնում է «Պռնատ ու Մուսան» պոեմը: Շատ

հավանական է, որ սա հենց այդ պոեմի սկզբնական շրջանի սևագիր մտորումներն են, սևագիր հատվածներ, որ հետագայում հեղինակը մշակել է»: Նույն տեղում ոտանավորի գրության մասին ասվում է. «Ոտանավոր-նամակը գրված է Թումանյանի՝ Թիֆլիսի հոգևոր կոնսիստորիայում գրա գրի պաշտոն կատարելու շրջանում, այսինքն՝ 1890 թվականի հուլիսին, ինչպես երևում է Ան. Արովյանին 1890 թվականի օգոստոսի 27-ին գրած նամակից, որտեղ գրված է. «Քեզ վրա անցյալ ամսին մի ոտանավոր-նամակ էի գրել, բայց կորցրել էի, այս օրերս գտա, պատռվել է, կարտագրեմ կուղարկեմ» (տե՛ս ՈւՀ 1, 396, Թումանյանի նամակը տե՛ս ԵԺ V, 20-23):

Ոտանավորի «Ինձ ասում են, թե սարսաղ ես, //Որ չես ուզում տերտեր դառնալ» տողերով Թումանյանն ակնարկում է, թե ինչպես Հովհաննես ք. Մարտիրոսյանը, որի որդեգրուհին էր իր ապագա կինը՝ Օլգա (Մարիամ) Մաճկալյանը, իբրև նշանադրության պայման՝ պահանջում էր իրենից հետագայում ձեռնադրվել քահանա: Կնքվում և հաստատվում է մի պայմանագիր, որով Հովհ. Մարտիրոսյանը պարտավորվում էր նորապսակներին պահել իր մոտ և «խնամք տանել նոցա վերա և աշխատել մեր փեսա՝ հիշյալ Հովհաննես Թումանյանցին, հասցնել իր նպատակին, այն է՝ քահանայության սուրբ աստիճանին»: Իր հերթին նորափեսան պարտավորվում է «իբրև որդի միշտ հնազանդ լինել Հովհաննես քահանային» (տե՛ս ԹՏ (1869-1908) էջ 49): Հարկադրական այդ պայմանն ընդունելով՝ բանաստեղծը երբեք չի համակերպվել քահանա դառնալու մտքի հետ: Այդ հարցի շուրջ ընտանեկան տհաճ վեճերը շարունակվում են, մինչև որ լույս է տեսնում բանաստեղծությունների առաջին ժողովածուն: «1890 թվականին, երբ Օհանեսի գիրքը լույս տեսավ, մերոնք նոր հասկացան, որ սա բանաստեղծ է»,- հիշում է Օլգա Թումանյանը (տե՛ս ԹԺՀ, էջ 333):

Տպագրվում է ինքնագրից:

«ՆԱ ՄԻ ՏԳԵՏ, ԱՂՔԱՏ ՄԱՐԴ ԷՐ ...»
(էջ 360) (ԵԼԺ 1, էջ 337)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Դատելով ձեռագրից ու բովանդակությունից, պետք է գրված լինի «Ախտեղ ահա ինչ են ասում» ոտանավորի հետ, 1890 թ. հուլիսին:

ԹԹԳ 1079/2-5-ում պահվում է մեկ ինքնագիր: Ինքնագրի թերթիկի հակառակ էջում մոտավորապես նույն թեմայով կես արձակ, կես չափածո գրեթե անընթեռնելի մի շարադրանք:

Առաջին անգամ տպագրվել է «Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, №1, էջ 30-31:

Տպագրվում է ինքնագրից:

«Օ՜, ՅԱՆ ԽՈՍՔԵՐՈՎ ԱՆԴՈՒՄԻՆ ԲԵՐԱՆԻ...»
(էջ 361) (ԵԼԺ 1, էջ 338)

Գրված է 1890 թ. նոյեմբերի 1-ին:

ԳԱԹ ԹՖ №441(272)-ում պահվում է 1890 թ. նոյեմբերի 1-ին Թումանյանի Ան. Ախվլանին գրած նամակը և դրա մեջ՝ ինքնագիրը:

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ V, 31:

Տպագրվում է ինքնագրից:

«ԼՆԴՈՒՆԻՐ, ԻՄ ՔՈՒՅՐ...»
(էջ 362) (ԵԼԺ 1, էջ 339)

Գրված է 1890 թ. դեկտեմբերի 6-ին:

ԹՊԳԴ-437/1-ում պահվում է ԻՄ 1-ի մի օրինակ, որ Թումանյանը նվիրել է Գարյա Գոլոշյանին՝ անվանաթերթի վրա «Յուր Քալինկա (Գարյա) Գոլոշյանին Հովհաննես Թումանյանից» բնծայականով և հաջորդ էջի վրա՝ այս վեց տողը:

Առաջին անգամ հրատարակել է Ա. Ինճիկյանը (տե՛ս Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 201-202):

Տպագրվում է ինքնագրից:

1891

«ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ...»
(էջ 363) (ԵԼԺ 1, էջ 340)

Գրված է 1891 թ. հունվարի 1-ին:

ԳԱԹ ԹՖ №443 (274)-ում պահվում է 1891թ. հունվարի 1-ին Թումանյանի Ան. Ախվլանին գրած նամակը, որն սկսվում է այս ոտանավորով:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԳԹ, 1938, №13, այնուհետև՝ ԵԺ V, 39 և ԵԺ I, 442:

Տպագրվում է ինքնագրից:

ՄԱՐԾ

(«Կեցցե՛ «Մշակ» և ժողովուրդ...»)
(Լ 364) (ԵԼԺ 1, Լ 341)

Գրված է 1892 թ. մարտի 14-ին:

ԳԱՖ ԹՖ №73 (26)-ում պահվում է մեկ ինքնագիր, որտեղ վերնագրից հետո կան հետևյալ տողերը. «Մարտի 8-ին Թիֆլիսի Թեմական պատգամավորի ընտրություն», «խոսք X-ի, երաժշտությունը Չուխաջյանի»: Ինքնագրի տակ Տ. Փիրումյանը գրել է՝ «Միանգամայն համաձայնիմ եմ Տ. Փիրումյանց»: Դրանից հետո Թումանյանի ձեռագրով կա նաև հետևյալը «Կորչի Մ. [կորչի] - հիմար [ընկերներով] ընտրյալներով»:

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ VI, 21:

Տպագրվում է ինքնագրից:

Ոտանավորը գրելու առիթը կաթողիկոսական ընտրությանը մասնակցելու համար Թիֆլիսի Թեմի պատգամավորի ընտրությունն է 1892 թ. մարտի 8-ին: Գ. Արծրունին իր կողմնակիցներով բոյկոտել է ժողովը և հեռացել: Նրա հեռանալուց հետո Վրաստանի և Իմերեթի Թեմի առաջնորդ Մամբրե եպ. Սանասարյանը շարունակել է ժողովը: Պատգամավոր է ընտրվել «Արձագանքի» խմբագիր Աբգար Հովհաննիսյանը: Ոտանավորի մեջ ակնարկվում է այս դեպքը, որի մասին մարտի 24-ին Ան. Աբովյանին ուղղած նամակում բանաստեղծը գրում է. «Մի օր, մոտ օրերս, անգամ տեր Գևորգն ու տեր Աշոտը և կոնսիստորիայի ծառայողները շրջապատել էին ինձ և առավել ոգևորված, որովհետև Արծրունին լուր խմբով դուրս էր եկել, բողոքելով Մամբրեի բոնության դեմ, որի դեմ ես ոտով գլխով բողոք էի դարձել: - Այստեղ Աստծո մատն է խառը, շուտ-շուտ կրկնում էին տերտերները, իրականությունից խույս տալով. եթե Աստծո մատը խառն լիներ, դուք քահանաներ չէիք լինիլ, ասացի ես, այստեղ էլ չխոսեցին, այլ մի բան որոճալով լուռ ցրվեցին» (տե՛ս ԳԱՖ ԹՖ №280):

Հետագայում Սինոդն ընտրությունը չեղյալ է հայտարարել և նոր ընտրություն նշանակել ապրիլի 22-ին: Այս անգամ պատգամավոր է ընտրվել Գ. Արծրունին:

13-րդ տողում ակնարկվում է քվեարկության կարգը, ըստ որի՝ ձօգուտ պատգամավորի տրվում էր սպիտակ, դեմ՝ սև քվե:

«[ՄԻԱՄԻՏ] ԸՆԿԵՐ, ԴՈՒ ՄԻ ՋԱՐՄԱՆԱՐ...»
(էջ 365) (ելժ 1, էջ 342)

Գրված է 1892 թ., ինչպես թվագրված է ինքնագիրը:

ԹԹԳԳ1079/17-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ 1, էջ 304, Ա. Ինճիկյանի հետևյալ ծանոթագրությամբ. «Գրել է 1892 թ. «Դևպի հայրենիք» անավարտ վեպի սկզածքը պարունակող մատյանում, վեպի ֆրագմենտներին հաջորդող ազատ էջի վրա: Անգրություն է» (ՈՒՀ 1, 397):

Տպագրվում է ինքնագրից:

«ԴԻՇԵՐԸ ԲԱՋՄԵՑ ԼԵՌՆԵՐԻ ՎՐԱ...»
(էջ 366) (ելժ 1, էջ 343)

Համանարար «Լռաու Ձորում» բանաստեղծության տարբերակներից է: Ինքնագրերից մեկը պահվում է ԳԱՖ ԹՖ №18(9 լրացուցիչ)-ում: Մեկ այլ ինքնագիր պահվում է ԹԹԳԳ1036 ծոցատետր 10-ում, որի մեջ եղած նյութերը վերաբերում են 1891-1892 թթ.: Այստեղից կարելի է ենթադրել, որ սա ևս գրված պետք է լինի նույն ժամանակ:

Առաջին անգամ տպագրվել է՝ «Էրեբեր», 1979, №1, էջ 35:

Տպագրվում է Բ ինքնագրից:

Ինքնագրում Թումանյանը «Թանձր մռայլը» բառերի տակ գրել է՝ «Նրա սառրատում»:

«ԵԹԵ ԴԻՏԵՆԱՍ ԻՄ ՅԱՎԸ, ՀՈԳԻՍ...»
(էջ 367) (ելժ 1, էջ 344)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Մեզ հասած երկու ինքնագրերը պահվում են ԹԹԳԳ1037 ծոցատետր 11-ում, որի նյութերը վերաբերում են 1891-1892 թթ.: Այստեղից կարելի է ենթադրել, որ այս բառատողը ևս գրված է նույն ժամանակ:

Առաջին անգամ տպագրվել է՝ «Էրեբեր», 1979, №1, էջ 34:

Տպագրվում է Բ ինքնագրից:

«ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐՈՒՄ ՎԱՂՈՒՑ ՀԱՆԳՉՈՒՄ ԵՆ...»
(էջ 368) (ելժ 1, էջ 345)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Մեզ հասած երկու ինքնագրերից մեկը պահվում է ԹԹԳԳ1036, ծոցատետր 10-ում, որի նյութերը վերաբերում են 1891-1892 թթ: Այստեղից կարելի է ենթադրել, որ այս բանաստեղծությունը ևս պետք է գրված լինի նույն ժամանակ:

ԳԱԹ ֆ. №74 (100 ա)-ում պահվում է ևս մեկ ինքնագիր, որն, ըստ երևույթին, արտագրված է առաջինից:

Առաջին անգամ տպագրվել է՝ «Լրաբեր», 1979, №1, էջ 36:

Տպագրվում է Ա ինքնագրից:

«ՔԵԶ, ԳՈՎԱԾ ՄՈՒՍԱ, ԵՍ ՉԵՄ ՃԱՆԱՉՈՒՄ...»
(էջ 369) (ելժ 1, էջ 346)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը պահվում է ԹԹԳԳ1036, ծոցատետր 10-ում, որի նյութերը վերաբերում են 1891-1892 թթ.: Այստեղից կարելի է ենթադրել, որ այս բանաստեղծությունը ևս գրված պետք է լինի նույն ժամանակ:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲԵՀ, 1972, №1, էջ 154: Այստեղ հրապարակող Ա. Ինճիկյանը գրության հավանական թվականը համարում է 1895-ը:

Տպագրվում է ինքնագրից:

1893

ՕՐ. Ն. Ս.-ԻՆ

(«Ալբոմիդ մեջ մի քանի տող...»)
(էջ 370) (ելժ 1, էջ 347)

Գրված է 1893 թ. հունվարի 14-ին:

ԳԱԹ ֆ. №3020 (636 լրացուցիչ)-ում պահվում է Նունե Սողալյանի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը, թվագրված՝ «93 I/14»:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲԵՀ, 1972, №1, էջ 152: Հրապարակել է Ա. Ինճիկյանը հետևյալ ծանոթագրությամբ «Ն. Սողալյանը 90-ական թվականներին Թիֆլիսում աչքի ընկնող հայ մտավորական կանանցից է

եղել, մանկավարժ, հարել է Հնչակյան կուսակցությանը, բարեկամական կապեր է ունեցել ժամանակի հայ գրողների, մասնավորապես Ղազարոս Ագայանի և Թումանյանի հետ»:

Տպագրվում է ինքնագրից:

«ԵՍ ՎԻՇՏ ՈՒՆԵՄ ԲԵՐԱՆ ԵՐԿՐԻՑ ՀԱՅՐԵՆԻՍ...»
(էջ 371) (ԵԼԺ 1, էջ 348)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

ԳԱՄԹ ԲՖ №20 (32)-ում պահվում է մեկ սևագիր-ինքնագիր՝ գրված նույն թղթի վրա, որտեղ «Հոսիր արտասուք անկեղծ սիրուհյան» բանաստեղծությունն է, որը թվագրված է «21 հունիսի 93»: Այստեղից կարելի է ենթադրել, որ գրված պետք է լինի նույն ժամանակ:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՄԳ, 1941, №3, էջ 3, այնուհետև՝ ԵԺ I, 454:

Տպագրվում է ինքնագրից:

Ինքնագրում 3-4-րդ և 7-12-րդ տողերը ջնջված են:

«ՀԱՆԿԱՐՄԱԿԻ ՍԻՐՏՍ ՏԽՐԵՑ...»
(էջ 372) (ԵԼԺ 1, էջ 349)

Գրված է 1893 թ. նամակախտի ժամանակ:

ԳԱԹ, Պերճ Պռոշյանի ֆոնդ №140/54-ում պահվում է մատիտով գրված մեկ ինքնագիր, թվագրված՝ «1893»: Բնագրի տակ Պերճանուշ Պռոշյանը գրել է. «Հովհաննես Թումանյանից ինձ»:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՀԳ, 1935, №4, էջ 77-78, այնուհետև՝ ԵԺ I, 453:

Տպագրվում է ինքնագրից:

Ինքնագրի 7-րդ տողում «Դատարկ ձայներ գլխից վերից», վրիպակ է:

«ԱՅԴՊԻՍԻ ԱՂՔԵՐ ԵՍ ԴԵՌ ՉԵՄ ՏԵՍԵԼ...»
(էջ 773) (ԵԼԺ 1, էջ 350)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Ա. Ինճիկյանը ենթադրում է, որ պիտի գրված լինի 1893 թ.:

ԹԹԳԳ1036 ծոցատետր 10-ում պահվում է մեկ սևագիր-ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲԵՀ, 1972, №1, 153: Հրատարակել է Ա. Ինճիկյանը:

Տպագրվում է ինքնագրից:

«ՀԱՅՈՑ ՎԱՐԺՈՒՀԻ, ՈՂՋ 10-Ը ՏԱՐԻ...»
(էջ 374) (ԵԼԺ 1, էջ 351)

Գրված է 1894 թ. հունվարի 14-ին:

ԳԱՖ ֆ№3020 (636 լրացուցիչ)-ում պահվում է Ն. Սոդալյանի ալբոմը և դրա մեջ ինքնագիրը՝ հետևյալ ընծայականով. «Որ. Նունե Սոդալյանին վարժուհության տասնամյակին, 1894 թ. 14 հունվ.»:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲԵՀ, 1972, №1, էջ 155: Հրապարակել է Ա. Ինճիկյանը:

Տպագրվում է ինքնագրից:

«ԱՅՍ ՏՈՂԵՐԸ ԳՈՒՅԵ ՉՆՉՎԵՆ...»
(էջ 376) (ԵԼԺ, էջ 353)

Գրված է 1894 թ. հունիսի 2-ին:

Հնարավոր չեղավ պարզել, թե ում է ուղղված:

ԹԹԳԳ1030 ծոցատետր 4-ում պահվում է ինքնագիրը:

Առաջին անգամ տպագրվել է՝ «Լրաբեր», 1979, №1, էջ 29:

Տպագրվում է ինքնագրից:

Ո՛Չ, ԷԼ ԵՐԳԵԼ ՉԵՄ ԿԱՐՈՂ ԵՍ
(«Անմիտները մտան պարտեզ...»)
(էջ 377) (ԵԼԺ 1, էջ 354)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը պահվում է ԹԹԳԳ1038 ծոցատետր 12 -ում, որի մեջ եղած նյութերը վերաբերում են 1893-1894 թթ.: Այստեղից կարելի է ենթադրել, որ այս ոտանավորը ևս գրված պետք է լինի նույն ժամանակ:

Առաջին անգամ տպագրվել է՝ «Լրաբեր», 1979, №1, էջ 35:

Տպագրվում է ինքնագրից:

ՀՈՒՅՍ

(«Մթնեց... Ինչո՞ւ ես տխուր, իմ ընկեր...»)
(էջ 378) (ելժ 1, էջ 355)

Գրված է 1896 թ. հունվարի 14-ին:

ԹԹԳԳ-1079/1-3-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԲԲՀ, 1972, №1, էջ 156: Հրապարակել է Ա. Ինճիկյանը՝ այս և «Քնիլ, գոված մուսա, ես չեմ ճանաչում» ոտանավորների մասին տալով հետևյալ ծանոթագրությունը. «Արտահայտում են ազգային մեծ բանաստեղծի միանուիյուններ հայրենիքի քաղաքական ճակատագրի հետ, նրա հոգու անվհատությունը և աննկուն հավատը տառապող ժողովրդի՝ «պայծ օրերին» - լուսավոր ապագայի նկատմամբ» (նույն տեղում, էջ 151):

Տպագրվում է ինքնագրից:

«ԵՐԲ ԹՈՒՅԼ ԵՔ ՏԱԼԻՍ, ՈՐ ՁԵՐ ԱԼԲՈՄՈՒՄ...»
(էջ 379) (ելժ 1, էջ 356)

Գրված է 1896 թ. մարտի 24-ին: Նվիրված է Մարիամ Վարդազարյանին:

ԳԱԹ փվֆ №413-ում պահվում է Մ. Վարդազարյանի ալբոմը և դրա մեջ ինքնագիրը՝ թվագրված «96 III/24 Զատիկ»:

Առաջին անգամ տպագրվել է՝ եժ I, 464:

Տպագրվում է ինքնագրից:

«ԿԱՐԾԵՍ ԹԵ ՔԻՉ ԷՐ, ԻՆՉ ՈՐ ԱՐԵՑԻՆ...»
(էջ 380) (ելժ 1, էջ 357)

Գրված է 1896 թ.:

ԳԱԹ փվֆ №413-ում պահվում է Մ. Վարդազարյանի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը:

Առաջին անգամ տպագրվել է՝ «Լրաբեր», 1979, №1 էջ 27:

Տպագրվում է ինքնագրից:

Գրված է 1896 թ. մարտի 24-ին Մ. Վարդազարյանի ալբոմում Թումանյանի գրած «Երբ Քույլ եք տալիս, որ Ձեր ալբոմում...» ոտանավորը

(տե՛ս նախորդ ծանոթագրությունը) փոքր-ինչ վրդովել է նրա մտերիմներին Փ. Վարդազարյանին և Մխ. Տեր-Անդրեասյանին: Ալբոմի երկու էջի վրա նրանք առանձին-առանձին պատասխանել են բանաստեղծին: Մխ. Տեր-Անդրեասյանը գրել է. «Միայն բանաստեղծներն են, որ պատասխանատու չեն իրանց գրածների համար»: Իսկ Փ. Վարդազարյանը՝ «Արձակ գրողները ներքուստ համոզված են լինում և երբեմն իսկ ստիպված են լինում օրը ցերեկով խոստովանելու, որ իրանք իրանց բանաստեղծներ համարողների ահագին մեծամասնությունը լոկ նախալներ են»: Ի պատասխան Թումանյանը գրել է այս ոտանավորը:

Չորրորդ տողի կետերի վրա բանաստեղծը աստղանիշ է դրել, ապա տողատակ գրել՝ «Մանոթ.», բայց այդպես էլ չի ծանոթագրել:

«ՀԵՅ, ԱՓՍՈՍ ԷՋԵՐ...»
(էջ 381) (ԵԼԺ 1, էջ 358)

Գրված է 1896 թ. :

Վերաբերում է այն «վեճին», որ Մ. Վարդազարյանի ալբոմում սկսել է Թումանյանը՝ ալբոմային նյութերը արձակ թե չափածո գրելու մասին (տե՛ս նախորդ երկու ծանոթագրությունները):

ԳԱԹ ՓՎՖ №413-ում պահվում է Մ. Վարդազարյանի ալբոմը և դրա մեջ ինքնագիրը:

Առաջին անգամ տպագրվել է՝ «Լրաբեր», 1979, №1 էջ 28:

Տպագրվում է ինքնագրից:

6-8 տողերում ակնարկում է «Հորիզոն» գրական հանդեսի հրատարակությունը: 1893 թ. հոկտեմբերին Հովհ. Թումանյանը, Փ. Վարդազարյանը և Ա. Բարխուդարյանը հիմնադրել են մի հրատարակչական ընկերություն, որը պետք է կոչվեր «Խրճիթներ և միայն խրճիթներ» կամ «Ժողովուրդ»: Հոկտեմբերի 26-ին Փ. Վարդազարյանի տանը տեղի է ունեցել ընկերության անդրանիկ խմբագրական ժողովը, որ 1894 թ. լույս է ընծայել հանդեսի առաջին և միակ համարը: Նկատի ունի այս «խմբագրական ժողովը», և ոտանավորն էլ ստորագրել է «ժողովի անդամներից մեկը»:

«Ա՛Յ, ՄԻՇԵՌՆԱԿ...»
(էջ 382) (ԵԼԺ 1, էջ 359)

Գրված է 1896 թ., ինչպես թվագրված է ինքնագիրը:

ԳԱԹ ԹՖ №75-ում պահվում է մեկ սևագիր-ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է՝ ՈՒՀ 2, 239-240։
Տպագրվում է ինքնագրից։

1897

ԼՔՍՊՐՈՄՏ

(«Երբևմն իմ մուսան՝ յուր խելքը կորցրած...»)
(էջ 384) (ԵԼԺ 1, էջ 361)

Գրված է 1897 թ. հունվարի 4-ին։
ԳԱԹ ԲՖ №3010-ում պահվում է Օ. Իրգիրյանի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը, վերնագրված՝ «Экспр.», թվագրված՝ «97 1/4»։
Առաջին անգամ, «Լքսպրոմտ» վերնագրով, տպագրվել է՝ ԵԺ I, 465։
Տպագրվում է ինքնագրից։

ՄՐՏԻՍ ԽՈՍՏՈՒՄԸ

(«Դաշնակահար պոետն էրթար...»)
(էջ 385) (ԵԼԺ 1, էջ 362)

Գրված է 1897 թ.։
ԳԱԹ ՓՎՖ №413-ում պահվում է Մ. Վարդազարյանի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը։
Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ I, 466։
Տպագրվում է ինքնագրից։
1-2 տողերում ակնարկում է իր «Դաշնակներ» (1893) և «Դաշնակներ փոփոխած» (1896) ժողովածուները։

1898

1 ՀՈՒՆՎԱՐԻ

(«Շնորհավոր Նոր տարի...»)
(էջ 386) (ԵԼԺ 1, էջ 363)

Գրված է 1898 թ. հունվարի 1-ին։
ԳԱԹ ՓՎՖ №413-ում պահվում է Մ. Վարդազարյանի ալբոմը և դրա մեջ՝

ինքնագիրը, թվագրված՝ «98»։

Առաջին անգամ տպագրվել է՝ ԳԹ, 1938, №13, այնուհետև՝ ԵԺ I, 469։

Տպագրվում է ինքնագրից։

ՊԱՉՈՏՆՈՒ ՏՐՏՈՒՆՋԸ

(«Առաջ մեր գյուղում պաչոտնի մարդը...»)
(էջ 387) (ԵԼԺ 1, էջ 364)

Գրված է 1898 թ. օգոստոսին, Շուլավերում, ինչպես պարզվում է հեղինակի՝ Փիլիպոս Վարդազարյանին և Արիստակես Զարգարյանին գրած նամակներից (տե՛ս ԵԺ V, 141-143)։

ԳԱԹ ԹՖ №76 (40)-ում պահվում է մեկ սևագիր-ինքնագիր։

Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ I, 471-473։

Տպագրվում է ինքնագրից։

Ոտանավորի ստեղծման շարժառիթի մասին Թումանյանը գրում է. «Ներկայացման համար – կարդալու ինձանից անտիպ ոտանավոր խնդրեցին, ես էլ այսօր մի ոտանավոր գրեցի (երգիծական) հատկապես շուլավերցիների այդ ներկայացման համար «Պաչոտնու տրտունջը» (տե՛ս ԵԺ V, 141)։

Ոտանավորը, սակայն, ներկայացման ժամանակ չի կարդացվել։ Այդ մասին կա Թումանյանի հետևյալ վկայությունը. «Այնպիսի մի աղմուկ, խռովություն ընկավ, որ ներկայացման երեկոյան եթե նայեիր փողոցները, կկարծեիր, թե մի կարևոր բունթ կա գյուղում։ Ծիծաղելին այն էր, որ ամբոխը, պաչոտնիների ոտնատակած ամբոխն ավելի խիստ էր հուզվել։ Սպառնալիքն այնպես մեծ եղավ, որ երիտասարդները պատրաստած ոտանավորը հանեցին ցուցակից, վախենալով, որ ինձ հետ անախորժություն պատահի, ինչպես նամակներով ու պատգամավորների բերանով սպառնում էին» (տե՛ս ԵԺ V, 141-143)։

«ԻՄ ՍԻՐԵԼԻ ԱՍԼԱՆ-ԱՊԵՐ...»
(էջ 390) (ԵԼԺ 1, էջ 367)

Գրված է 1898 թ. դեկտեմբերի 27-ին մի բացիկի վրա, որը Թիֆլիսից Թումանյանն ուղարկել է Նոր Նախիջևան՝ Ղ. Աղայանին։

Ոտանավորում խոսքը Ղ. Աղայանի՝ էջմիածնից ստանալիք նպաստի մասին է։

Վերջին երկու տողերը գրված են որպես ծանոթություն։

ԳԱԹ Ղ. Ալպոյանի ֆոնդ, №333-ում պահվում է մեկ ինքնագիր։

Առաջին անգամ տպագրվել է՝ ԳԹ, 1932, №27, այնուհետև՝ ԵԺ V, 145, տպա՝ ԵԺ I, 474։

Տպագրվում է ինքնագրից։

«ԱՅՍՕՐԻՑ ԱՀԱ ԱՆՈՒՄ ԵՄ ԵՍ ՈԽՏ...»
(էջ 391) (ԵԼԺ 1, էջ 368)

Առաջին երկու տողը գրված են 1898 թ. նոյեմբերի 26-ին, երկրորդ երկու տողը՝ դեկտեմբերի 24-ին, վերջին քառատողը՝ դեկտեմբերի 28-ին։

ԳԱԹ ՓՎՖ №413-ում պահվում է Մ. Վարդազարյանի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը։

Առաջին անգամ տպագրվել է՝ «Լրաբեր», 1979, №1 էջ 28։

Տպագրվում է ինքնագրից։

«ՍԻՐԵՑԻ, ԿՈՆՈ, ՔՈ ԱՆՈՒՇ ԵՐԳԸ...»
(էջ 392) (ԵԼԺ 1, էջ 369)

Գրված է 1898 թ.։ Վահան Միրաքյանը կարդալու համար Թումանյանին է տվել իր «Վալվարի որսը» պոեմի նախնական տարբերակը, որի առաջին էջում գրված է «Նվեր» («Մեզ բաժանում են սարեր ու ձորեր, //Մոռալ ու մի՛ին, սև անդունդներով...» և այլն, ընդամենը 16 տող)։ Թումանյանն իր այս երկու տողը գրել է այդ էջի ձախ լուսանցքի երկարությամբ։

Ինքնագիրը պահպանվել է ԳԱԹ վ. Միրաքյանի ֆոնդ №7-ում։

Առաջին անգամ հրապարակել է վ. Միրաքյանը «Վալվարի որսի» 1929թ. հրատարակության իր «Երկու խոսքում»։

Տպագրվում է ինքնագրից։

Կոնո - վ. Միրաքյանի կեղծանունն է (Միր-Կոնո)։

1899

«ԷՎ ՉԵՄ ԿԱՐՈՂ ԳՐԵԼ «ՉԵՌԱՅ»...»
(էջ 393) (ԵԼԺ 1, էջ 370)

Գրված է 1899 թ. ապրիլի 18-ին։

ԳԱԹ ԹՖ №3010 (260)-ում պահվում է Օ. Դիրգիդյանի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը, թվագրված՝ «18 ապրիլ (Զատիկ)»։

Առաջին անգամ տպագրվել է՝ Պր, 1929, 20 փետրվարի, №41, այնու հետև՝ ԵԺ I, 476։

Տպագրվում է ինքնագրից։

1890-ական

«Օ՛, ՍԻՐՏ ԻՄ, ՍԻՐՏ ԻՄ, ՏԱԿԱՎԻՆ ՄԱՏԱՂ...»
(էջ 394) (ԵԼԺ 1, էջ 372)

Հավանաբար սկիզբն է մեզ չհասած մի բանաստեղծության, որ գրված պետք է լինի մինչև 1900 թ. հոկտեմբերը։

ԳԱԹ ՓՎՖ №413/7-ում պահվում է Թումանյանի՝ 1900 թ. հոկտեմբերի վերջին Փ. Վարդազարյանին ուղղած նամակը, որտեղ մասնավորապես ասված է. «Քո նոր նյութը «Ես ու իմ սիրտը», Ճիշտ որ լավ նյութ է։ Ես մի քանի անգամ գրել եմ այդ նյութով. հիշում ես անշուշտ «Դաշնակների» ոտանավորը «Կասկած» վերնագրով «Ո՞վ ես, չար ոգի, դո՛ւ, որ իմ սրտում» և այլն (տե՛ս սույն հատորը, էջ 131)։ Մի ուրիշն էլ ունեմ, նույնպես առաջուց գրած»։ Եվ բերվում է ինքնագիրը։

Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ V, էջ 162։

Տպագրվում է ինքնագրից։

(ՀԱՏՎԱԾ)

(«...Ամեն բան երկրում ունի մի սահման...»)
(էջ 395) (ԵԼԺ 1, էջ 373)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։ Կարելի է ենթադրել, որ գրված պետք է լինի 1890-ական թվականներին։

ԳԱԹ ԹՖ №3010 (260)-ում պահվում է Օ. Դիրգիդյանի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը։

Առաջին անգամ տպագրվել է՝ Պր, 1929, 20 փետրվարի, №41, այնու հետև՝ ԵԺ I, 516։

Տպագրվում է ինքնագրից։

«ԻՆՉ Է ԲԱՒՅՐ ԾԱՂԻԿԻ...»
(Լ 396) (ԵԼԺ 1, Լ 374)

Գրութեան թուականն առայժմ տալանի չէ: Կարելի է ենթադրել, որ գրուած պիտի լինի 1890-ական թուականներին:

Առաջին անգամ, որպես «Գեպի Անհունը» պոեմի սևագիր տատուածներից մեկը, տպագրուել է ՈՒՀ 2, Լ 211:

Այս տարբերակը պահւում է ԳԱԹ ԹՓ №3010 (260)-ում Օ. Գիրգիրեանի արխիւում, որտեղից և տպագրում ենք:

«ԼՅ, ԳԻՀ ՋԱՀԵԼՆԵՐ, ՎԱՒ-ՎԱՒ ԾԱՂԻԿՆԵՐ...»
(Լ 397) (ԵԼԺ 1, Լ 375)

Գրութեան թուականն առայժմ տալանի չէ: Չնոագրից կարելի է ենթադրել, որ գրուած է 1890-ական թուականներին:

ԳԱԹ ԹՓ №29 (47)-ում պահւում է մեկ սևագիր-ինքնագիր:

Առաջին անգամ տպագրուել է ԳԾ, Լ 115, այնուհետև ԵԺ I, 486:

Տպագրում ենք ինքնագրից:

ՋՈՆԳՈՒԻՐԻՍ

(«Քո պատմածներն, այդ ձայները արտուրյան...»)
(Լ 398) (ԵԼԺ 1, Լ 376)

Գրութեան թուականն առայժմ տալանի չէ: Հաւանաբար գրուած է 1890-ական թուականներին:

ԳԱԹ ԹՓ №77 (11 լրացուցիչ)-ում պահւում է մեկ ինքնագիր:

Տպագրում է առաջին անգամ:

«ՀԱՅՈՑ ԱՊԱՔԱՒԱՏ ԳԼՈՒԽԸ ՆՀՍՏԱԾ...»
(Լ 399) (ԵԼԺ 1, Լ 377)

Դատելով ձեռագրից և բովանդակութիւնից՝ պետք է գրուած լինի 1890-ական թուականների վերջերին, նոյն ժամանակ, երբ Թումանեանը գրում էր «Պռեան ու Մուսան»:

ԳԱԹ ԹՓ №78 (43)-ում պահւում են երկու ինքնագիր, որոնցից մեկը

նախնական պրառումն է, իսկ մյուսն արտագրված է դրանից, բայց 43-64 րդ տողերը չունի։

Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ I, 489-490։

Տպագրվում է Բ ինքնագրից, 43-64-րդ տողերը՝ Ա ինքնագրից։

«ԱՅԺՄ ԱՀԱ ԱՋԱՏ ԵՄ ԵՍ...»
(էջ 401) (ԵԼԺ 1, էջ 379)

Հավանաբար գրված է 1890-ական թվականների վերջերին՝ «Պոետն ու Մուսան» պոեմի ստեղծման շրջանում։ Բովանդակությամբ կապվում է այդ պոեմի հետ ու, թերևս, նրա սևագիր հատվածներից է։

Ինքնագիրը պահվում է՝ ԳԱԹ ԹՖ №79 (114)։

Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ I, էջ 491։

Տպագրվում է ինքնագրից։

«ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐ, ՈՐ ՊԱՏԱՀԵՑԻՐ...»
(էջ 402) (ԵԼԺ 1, էջ 380)

Ձեռագրից և բանաստեղծության բնույթից դատելով՝ պետք է գրված լինի 1890-ական թվականների վերջերին, երբ Թումանյանը գրում էր «Պոետն ու Մուսան»։

Բանաստեղծն ազատ թարգմանել է Մարիա Կոնոպնիցկայայի «Պրոմեթեոս ու Սիզիֆ» դրամատիկական երկի մի հատվածը (մեկ էջ) և այս ոտանավորի հետ նվիրել Փ. Վարդազարյանին։

ԳԱԹ ԹՖ №80 (167)-ում պահվում է մեկ սևագիր-ինքնագիր։

Առաջին անգամ «Վեճ» վերնագրով տպագրվել է՝ ԵԺ I, 487։

«Վեճ» վերնագիրը վերաբերում է ոչ թե բանաստեղծությանը, այլ Կոնոպնիցկայայից կատարած թարգմանությանը, որ մեջ ենք բերում ամբողջովին.

ՎԵՃ

[Նվեր] Ֆ-ին
Սիզիֆն ու Պրոմ<եթեոսը> զրույց էին անում
Սիզիֆ
Բախտավո՞ր է քո ցեղը.

Պրոմ<եβեռս>
Օ՛, ո՛չ, անրախտ է մեր ցեղը
Սիզ<իֆ>
Նա էլ է քարեր շպրտում դեպի բարձր
Պրոմ<եβեռս>
Քարերից էլ վատ: Նա յուր
Մարքերն է ձգում դեպի բարձր,
Իսկ այն մարքերն [բնկնում են] գլորվում են ցած:
Նա բարձր է ձգում յուր կամքը,
Ու կամքը գլորվում է ցած,
Նա բարձր է ձգում յուր հոգին,
Եվ հոգին գլորվում է ցած:
Սիզ<իֆ>
Եվ չի հոգնում:
Պրոմ<եβեռս>
Չի հոգնում:
Սիզ<իֆ>
Ուրեմն նրանք մարդիկ չեն,
Նրանք հսկաներ են,
Արձագանք...
Հսկաներ...
(Պրոմ<եβեռս> և Սիզ<իֆ>, Կոնոպնիցկայա)

Տպագրվում է ինքնագրից:

5-րդ տողում «տրտում էջ» ասելով նկատի ունի ոչ թե իր բանաստեղծություններ, այլ թարգմանած հատվածը:

20-րդ տողը եժ-ի կազմողները կարդացել են. «Թեև շատ անշուք, թեև ... ու կարճ»:

Նախորդ հրատարակության առաջին հատորում այս բանաստեղծությունից հետո կա «Ես քո լեզվով եմ ուզում քեզ սիրել...» սկզբնատողով մի սևագիր ոտանավոր, որ բերում ենք ամբողջությամբ.

Ես քո լեզվով եմ ուզում քեզ սիրել,
Քո լեզվով ասել քեզ սիրո խոսքեր...

Երգել եմ ուզում աչքերդ կապույտ,
Աչքերդ կապույտ, որպես հանդարտ ծով,

Մազերդ ոսկի, հայցքդ հանդարտ,
Մեղմ ու կախարդիչ, քողարկված լույսով։

Օ՛, Վրաստանի դու չքնաղ հոգի,
Ես քեզ եմ տեսնում, թե՛ քուն, թե՛ արթուն,
Թովչասնքով դու լի, չքնաղ վիրուհի,
Հեքիաթ . . . . . աչքերի մեջ դու։

Քո շարժումները եղնիկի նման,
Հեքիաթների մեջ թագուհու նման,
Նայվածքդ բարի, մի քիչ վախվորած,
Որսորդից փախած [եղնիկի նման]։

Կազմողները «ուրիշի ձեռքով, ըստ երևույթին ինքնագրից, արտագրված» այս ոտանավորը համարել են Թումանյանինը՝ միայն այն հիմնավորմամբ, թե՝ «բնույթով հիշեցնում է Թումանյանի 1890-ական թվականների բանաստեղծությունները»։ Սակայն ոտանավորի լեզվի, ոճի, բառապաշարի ուշադիր զննությամբ հեշտ է համոզվել, որ այստեղ ոչ մի բան չի հիշեցնում Թումանյանի՝ թեկուզև ամենավաղ շրջանի բանաստեղծական լեզուն։

Իրականում այս սևագիր ոտանավորը Արտավազդ Թումանյանինն է՝ նրա իսկ ձեռագրով, մի թղթակտորի վրա։

Կազմողները հավանաբար նկատի են ունեցել նաև այն, որ Թումանյանի թղթերում իրոք հանդիպում են «ուրիշի ձեռքով», հատկապես նրա դուստրերի կողմից ինչ-ինչ նպատակներով արտագրված ոտանավորներ։ Բայց դրանք սովորաբար բանաստեղծի ավարտուն, վերջնական տեսքի բերված գործերից են՝ ընդօրինակված խնամքով ու մաքուր ձեռագրով։ Կազմողները գոնե պիտի կասկածեին, թե ինչու ինչ-որ մեկը պիտի արտագրեր բանաստեղծի սևագիրը, այն էլ հագիվ ընթեռնելի ձեռագրով։ Նրանք պարզապես չեն իմացել, որ ձեռագիրը Արտավազդ Թումանյանինն է, այլապես այդ թյուրիմացությունը տեղի չէր ունենա։

ԱՆՈՒՇ ԸՆԿԵՐ

(«Անցել են օրերն այն Երանելի...»)
(էջ 403) (ԵԼԺ 1, էջ 382)

Անավարտ է։ Գրության թվականն ստույգ նայտնի չէ. նավանաբար

գրված է 1890-ական թվականներին:

Ինքնագիրը չի պահպանվել: Նախորդ հրատարակության մեջ նշված է. «ԹՊՄ-ում պահվում է մեկ ինքնագիր, որից և ապագրվում է»: Վերահրատարակվելիս նշումը Մանգարանի ֆոնդերում չի գտնվել:

Առաջին անգամ ապագրվել է՝ ԵԺ I, էջ 76:

Տպագրվում է ԵԺ I-ից:

1900

«ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ԿԱԼԱՆԴ...»
(էջ 404) (ԵԼԺ 1, էջ 383)

Գրված է 1900 թ. սարեմուտին:

ԳԱԹ ՓՎՖ №413-ում պահվում է Մ. Վարպազարյանի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը, թվագրված «1900 պիշ. ժ. 1»:

Առաջին անգամ ապագրվել է՝ ՀԳ, 1935, №4, էջ 79, այնուհետև՝ ԵԺ I, էջ 498:

Տպագրվում է ինքնագրից:

«ԵՍ ՊԱՏՎԵՐ ՈՒՆԵՄ...»
(էջ 405) (ԵԼԺ 1, էջ 384)

Գրված է 1900 թ. ապրիլի 2-ին:

ԳԱԹ ՓՎՖ №413-ում պահվում է Մ. Վարպազարյանի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը:

Առաջին անգամ ապագրվել է՝ ԵԺ I, էջ 494:

Տպագրվում է ինքնագրից:

«Եկավ նոր «Մուրճ»» ասելով նկատի ունի ամսագրի, այսպես կոչված, «նոր շրջանը», երբ 1900 թ. 5-6 համարից հետո հրատարակությունն անցել է Կոստանդին Կրասիլնիկյանին:

ՍԻՐԵԼԻ

(«Հորն է քո հոգին երկրնքի նման...»)
(էջ 406) (ԵԼԺ 1, էջ 371)

Գրված է 1900 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին:

ԳԱԹ փվֆ №413/7ա-ում պահվում է 1900 թ. սեպտեմբերի 27-ին Փ. Վարդազարյանին ուղղած նամակը և դրա մեջ՝ ինքնագիրը։

Նամակում Թումանյանը հետաքրքիր մտքեր է հայտնում բանաստեղծության մասին առհասարակ։ Մասնավորապես Վարդազարյանի բանաստեղծությունների մասին գրում է. «Քո այս նյութերը ինձ հարկադրում են ոտանավորներ թխելու, և ես որը նյութ կառնեմ ուզածիդ, որը միտս մի ուրիշ բան է գցում, որին էլ կպատասխանեմ։ Ահա, այսօր գտա առաջին գրածիդ պատասխանը, որով քո սիրելիին առաջարկում էիր քո հոգուդ գաղտնարանը՝ խորքը»։ Եվ բերվում է բանաստեղծության ինքնագիրը։

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ V, էջ 154։

Տպագրվում է ինքնագրից։

ԵԼԺ-ի նախորդ հրատարակության մեջ թվագրված է՝ 1899 թ., սեպտեմբերի 27։ Բայց Թումանյանի՝ Փ. Վարդազարյանին հասցեագրած այդ նամակը, որտեղ է նաև բանաստեղծության ինքնագիրը, գրված է ոչ թե 1899, այլ 1900 թ. սեպտեմբերի 27-ին. 1899-ից բանաստեղծի Փ. Վարդազարյանին ուղղած ոչ մի նամակ մեզ չի հասել։ Ինչու՞ևեւ նամակից մեջբերված հեղինակային վկայությունից հետևում է, որ բանաստեղծությունը գրված է եղել որպես պատասխան Վարդազարյանի առաջին գրածի։

Ինչպես երևում է Թումանյանի պատասխաններից՝ Վարդազարյանը նամակով նրան իր բանաստեղծություններն ուղարկել է 1900 թ. օգոստոս, սեպտեմբեր ամիսներին։

Այս ամենը նկատի ունենալով էլ ճշտել ենք Թումանյանի բանաստեղծության գրության ժամանակը։

«ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐ ՃՈՒՂՈՒՐՈՎ...»
(էջ 407) (ԵԼԺ 1, էջ 385)

Գրված է 1900 թ. Հարություն Ճուղուրյանի դստեր՝ Արուսյակի ծննդյան առթիվ։

ԳԱԹ Հարություն Ճուղուրյանի ֆոնդ, №191-ում պահվում է մեկ ինքնագիր, նույն էջում նաև մի թերի տարբերակ։

Առաջին անգամ տպագրվել է՝ Զ. Ավետիսյան, Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան, Երևան, 1973, էջ 41։

Տպագրվում է ինքնագրից։

ՀԱՆԵԼՈՒԿ

(«Հապա գաՒք, էն ո՞վ էին...»)
(էջ 408) (ԵԼԺ 1, էջ 386)

Գրված է 1900 թ. դեկտեմբերի 31-ի գիշերը, Մ. Վարդազարյանի ամուսնության կապակցությամբ:

ԴԱՄ փվֆ №413/7ա-ում պահվում է Մ. Վարդազարյանի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը, որը նախ թվագրված է եղել «1900 հունվարի 1», ապա Թումանյանը փոխել է թվագրությունը՝ գրելով «1900 դեկտ. 31 ժ. 12 գիշերվա»:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ I, էջ 497:

Տպագրվում է ինքնագրից:

1901

1901-Ի ՏԱՐԵՄՈՒՏԻՆ

(«Խոսքս, տեսաք, որ կատարվեց...»)
(էջ 409) (ԵԼԺ 1, էջ 387)

Գրված է «Շնորհավոր նոր կաղանդ» քառատողից ուղիղ մեկ տարի հետո՝ 1901 թ. տարեմուտին, և «Խոսքս» ասելով, Թումանյանը նկատի ունի հիշատակված քառատողը:

ԴԱՄ փվֆ №413/7ա-ում պահվում է Մ. Վարդազարյանի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը, թվագրված՝ «գիշ. ժ. 12»:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԽԳ, 1935, №4, էջ 79, այնուհետև՝ ԵԺ I, էջ 500:

Տպագրվում է ինքնագրից:

18-րդ տողում հիշատակվող Դավիթը Մ. Վարդազարյանի ամուսինն է՝ Դավիթ Միքայելյանը:

ԱՋՆԻՎ ՏԻԿՆԱՅՔ, ՋԱՀԵԼ ՀՅՈՒՐԵՐ
(էջ 410) (ԵԼԺ 1, էջ 388)

Գրված է 1901 թ. օգոստոսի 6-ին Ուրավելում, Հարություն Հարությունյանի տանը բանաստեղծի պատվին կազմակերպված խնջույքի ժամանակ, Մարիամ Տեր-Հովհաննիսյանի (հետագայում Տեր-Գրիգորյան)

ալբոմում:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԳԹ, 1933, №22, խմբագրության հետևյալ ծանոթագրությամբ. «Մեր մեծ բանաստեղծի այս անտիպ էջը մեզ տրամադրեց ընկ. Ստեփան Կանայանը, որ բնագիրն ստացել է 1928 թվին Կիսլովոդսկում, Մարիամ Տեր-Հովհաննիսյանից (Տեր-Գրիգորյան): Բանաստեղծությունը գրված է Ուրավել ամառանոցում (Ախալցխայի մոտ), հանպատրաստից, հիշյալ Մ. Տեր-Հովհաննիսյանի ալբոմում»:

Այնուհետև տպագրվել է՝ ԵԺ I, 502, որտեղից և արտատպվում է:

«ՀԱՅՐ ԳԱՐԵԳԻՆ, ՄԵՆՔ ԵՐԵՔՈՎ...»
(էջ 411) (ԵԼԺ 1, էջ 389)

Գրված է 1901 թ. նոյեմբերի 19-ին:

ԳԱԹ ԹՖ №81(92)-ում պահվում է մեկ ինքնագիր, թվագրված՝ «19/XI, Թիֆլիս»:

Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ I, էջ 504-505:

Տպագրվում է ինքնագրից:

Ղ. Ալիշանի մահից հետո (որ տեղի է ունեցել 1901 թ. նոյեմբերի 19-ին) Թիֆլիսի հայ հոգևորականությունը հրաժարվել է այդ առթիվ հոգեհանգիստ կատարել՝ պատճառաբանելով, թե բանաստեղծը ոչ թե Հայոց եկեղեցու հետևորդ, այլ կաթոլիկ է եղել: Թումանյանն այս բանաստեղծությունը գրել է այդ կապակցությամբ:

Գարեգին վարդապետը, հետագայում եպիսկոպոս և ապա Կիլիկայի կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանն է (1867-1952), որն այդ ժամանակ եղել է Վրաստանի և Իմերեթիայի հայոց թեմի առաջնորդի տեղակալ: «Մենք երեքով» ասելով Թումանյանը նկատի ունի իրեն, Շիրվանզադեին և իրավաբան ու լրագրող Գևորգ Մելիք-Ղարագյոզյանին, որոնք հայ համայնքի կողմից պատգամավորներ են ընտրված եղել թեմի առաջնորդին համոզելու, որ հոգեհանգիստ կատարվի Ղ. Ալիշանի համար:

1902

«ԹԱՓԱՌԵԼՈՎ ԲՈՐԺՈՄ-ՊԱՐԿՈՒՄ...»
(էջ 414) (ԵԼԺ 1, էջ 392)

Գրված է 1902 թ. սեպտեմբերի 8-ին՝ Մարիամ Թումանյանին ուղղած

բացիկի վրա:

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ Մ. Վարպետարյանի ֆոնդ, №293-ում: Առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ V, էջ 215, այնուհետև՝ ԵԺ I, 506: Տպագրվում է ինքնագրից:

«ՄՂՆԱՎ ԲԱՐՈՎ, ՈՒՂՏ ԲԱՐԵԿԱՄ...»
